

«ՄԱՏԱԴՐԱՄ»

ՄԵԽՐՈՊ ՄԱՇՏՈՅԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ԶԵԽԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՐԱԶՅԱ ԹԱՄՐԱԶՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻՆ ԵՎ ՆԱՐԵԿՅԱՆ
ԴՊՐՈՑԸ

ԳԻՐՔ Գ



ԵՐԵՎԱՆ 2017

**Տպագրվում է Մաշտոցի անվան Մատենադարանի գիտական
խորհրդի որոշմամբ**

ՀՏ 821.19.0:1/14

ԳՄԴ 83.3(5Հ)+87

Թ 207

**Հատորը հրատարակության պատրաստեց
Արուսյակ Թամրապյանը**

Թամրապյան Հրաչյա

Թ 207 Գրիգոր Նարեկացին և Նարեկյան դպրոցը / Հ. Թամրապյան. Եր.: Նաիրի, 2017: Գիրք Գ., 427 էջ:

Սույն հատորում ներկայացվում է Սուրբ Գրիգոր Նարեկացու կյանքը և ստեղծագործությունը: Քննության են ենթարկվում Գրիգոր Նարեկացու ստեղծագործության ենթաշերտերը՝ բառաստեղծման տարերքը, տեսիլները, «Մատենանի» Հղացքի հիմքում ընկած Անանիա Նարեկացու մշակած բանաստեղծական արվեստի տեսությունը: Նարեկյան դպրոցի Հոգեւոր-միստիկ կենցաղավարության համատեքստում վերականգնվում են աղոթքի տեսության, աստվածացման, աստվածային խոսքի, նրա ստեղծաբանական տիրույթներում շրջանառվող մարդկային աղոթքի ներընկալումները: Ներկայացվում է տաղերում արտացոլված թվի գոյաբանական նորայութագործունական-նորապատոնական տեսությունը: Գրիգոր Նարեկացին իր ստեղծագործական-գեղագիտական խոր Հղացքների աշխարհ է ներմուծում Դիոնիսիոս Արենպագացու աստվածաբանության չորս՝ մերձակա, նշանական, էքստատիկ, խորհրդական փուլերի փորձառությունը՝ նոր հնչողություններ ու տարածություններ բացելով գիտնիուսույան բնագրերի համար և այս ներթափանցումներով լիովին բարեշրջելով Հոգեւոր արվեստների համակարգը: Նշված աղերսների վերհանումը բոլորովին նոր ոլորտներ է բացում Նարեկացու ստեղծագործության մեջ:

ՀՏ 821.19.0:1/14

ԳՄԴ 83.3(5Հ)+87

ISBN 978-5-550-01818-7

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

«Գրիգոր Նարեկացին և Նարեկյան դպրոցը» (Գիրք Գ) ուսումնասիրությունը Նարեկյան դպրոցին նվիրված Հրաչյա Թամրազյանի մտահղացած եռագրության ամփոփումն է: Այն ներառում է դպրոցի գործունեության, Գրիգոր Նարեկացու կյանքի, ստեղծագործության հեղինակի տասնամյակների ուսումնասիրությունները, որոնք ընդգրկված չեն Ա և Բ հատորներում:

Առաջին հատորը (Գրիգոր Նարեկացին և Նարեկյան դպրոցը, Գիրք Ա)¹ բնագրագիտական ուսումնասիրությունների շարք է, որի առանցքում վերականգնվում են Նարեկյան դպրոցի երեք ներկայացուցիչների ստեղծագործական առնչությունները: Այս համատեքստում ճշգրտվում են հեղինակային պատկանելության հարցեր, ի հայտ են գալիս մի շարք բնագրեր, որ ընդլայնում, նոր տարածական խորքեր են հաղորդում այս դպրոցի գրական ժառանգությանը՝ «համարնագրի», ներքին ու արտաքին աղերսների, ստեղծագործական փոխանցումների տիրույթում վերականգնելով դպրոցի հոգևոր դիմագիծը:

Երկրորդ հատորը (Գրիգոր Նարեկացին և Նարեկյան դպրոցը, Գիրք Բ)² նվիրված է Նարեկյան դպրոցի երկու խոշորագույն ներկայացուցիչների՝ Խոսրով Անձևացու և Անանիա Նարեկացու կյանքին ու գործունեությանը, աշխատությունների վերլուծությանը:

Երրորդ հատորը ներկայացնում է Գրիգոր Նարեկացու

¹ Հ. Թամրազյան, Երևան, 2013:

² Հ. Թամրազյան, Երևան, 2015:

կյանքն ու ստեղծագործությունը։ Այն կազմելիս օգտվել ենք հեղինակի «Նարեկյան դպրոցը»³, «Գրիգոր Նարեկացին և նորավատոնականությունը»⁴, «Սուրբ Գրիգոր Նարեկացու կյանքը» մենագրություններից⁵։ Որպես վերջաբան օգտագործված է հեղինակի՝ Գրիգոր Նարեկացուն նվիրված վերջին ուսումնասիրությունը («Նարեկացիական ընթերցումներ» միջազգային գիտաժողովի գեկույց և հոդված, որոշ հավելումներ⁶), որ նրա բազմամյա ուսումնասիրությունների մի բանաստեղծական ամփոփում է՝ Նարեկացու բնագրերի հոգեոր հեռանկարի, «Մատեանի» մտահղացման բանալիի և լեզվի հոլովույթներում հոգեոր փոխակերպությունների ուրվագեծքում։

Աշխատանքի ընթացքում փորձել ենք առաջնորդվել հեղինակի Ա և Բ, նրա նախաձեռնած Գ հատորի կազմման սկզբունքներով։

Արդյունքում առաջացել են կառուցվածքային փոփոխությունների և բնագրային տեղաշարժերի անհրաժեշտու-

³ Հ. Թամրապյան, Երևան, 1999:

⁴ Հ. Թամրապյան, Երևան, 2004:

⁵ Հ. Թամրապյան, Երևան, 2005, վերահրատ. Երևան, 2015, նաև Մատենագիրք Հայոց, ԺԲ Հատոր. Գրիգոր Նարեկացի, Հ. Թամրապյան, «Սուրբ Գրիգոր Նարեկացու կյանքը», Անթիկաս-Լիբանան, 2008, էջ 9-46: Տե՛ս նաև «Դիոնիսիոս Արեոպագացին և Գրիգոր Նարեկացին» հոդվածը (Բանքեր Մատենադարանի 21, Երևան, 2014, էջ 15-34):

⁶ Հ. Թամրապյան, «Բանաստեղծության հարակայության խորհուրդն ըստ Գրիգոր Նարեկացու», Բանքեր Մատենադարանի 22, Երևան, 2015, էջ 31-53. տե՛ս նաև Նարեկյան դպրոցը՝ «Գրիգոր Նարեկացին իր «Մատեան ողբերգութեան» երկի հարակայության և հոգեոր հետանկարի մասին» (էջ 172-180), Գրիգոր Նարեկացին և նորավատոնականությունը՝ «Բանաստեղծությունն իբրև աստվածային ներշնչանք և խոսքի գորության արվեստ»։

թյուններ։ Հստ սրա՝ համեմատելով հեղինակի աշխատությունները՝ մեկ միասնական բնագիր ստեղծելու միտումով երբեմն միավորվել են առանձին գլուխներ նոր ընդհանրական խորագրի տակ։ Միավորելիս երբեմն միայն համադրվել են տարբեր ուսումնասիրություններ կամ մեկ ուսումնասիրության տարբեր գլուխներ⁷, երբեմն էլ՝ ներհյուսվել տարբեր գլուխներ կամ սրանցից առանձին հատվածներ⁸ միմյանցով լրացվելով⁹, երբեմն միայն հիմնական

⁷ Տե՛ս «Մատեանի» պատկերային համակարգը, տեսիլքները, բառաստեղծության շերտերը»։ (Հմմտ. Նարեկյան դպրոցը՝ «Գրիգոր Նարեկացու ստեղծագործության պատկերային համակարգը և պոետիկան»՝ էջ 105-112, «Գրիգոր Նարեկացու տեսիլքները և աստվածացման գաղափարը նրա «Մատեանում»՝ էջ 156-164), «Աղոթքը՝ որպես հոգեփիգիկական միասնական գործողությունն, ներանձնական ծես և բառային տեսիլք» (Հմմտ. Նարեկյան դպրոցը՝ «Հոգեսր կենցաղավարությունը և աղոթքի նշանակությունը նրանում»՝ էջ 133-143, «Բանաստեղծական արվեստի խնդիրները Գրիգոր Նարեկացու ստեղծագործության մեջ»՝ էջ 113-116), «Պատկերապրությունը» պատկերի տեսությունն...» (Հմմտ. Գրիգոր Նարեկացին և նորպատոնականությունը՝ համանուն գլուխը՝ էջ 149-164, «Պանթեիստական աշխարհընկալման արձագանքները Գրիգոր Նարեկացու տաղերում, բանաստեղծն՝ իբրև Աստծո քնար և բնության տարփերգոր»՝ էջ 218-224):

⁸ Տե՛ս «Բանաստեղծական արվեստի տեսությունը. «Ընտրութեան արուեստ» և «Դատումն ընտրութեան» (Գրիգոր Նարեկացին և նորպատոնականությունը՝ «Ընտրութեան արուեստ» և «Դատումն ընտրութեան»՝ էջ 269-317, Նարեկյան դպրոցը՝ «Բանաստեղծական արվեստի խնդիրները Գրիգոր Նարեկացու ստեղծագործության մեջ»՝ էջ 113-132, «Սաղմոսների մեկնությունները Նարեկյան դպրոցի գրական ավանդույթում»՝ էջ 181-197), «Ներքին մարդու փիլիսոփայությունը Գրիգոր Նարեկացու «Մատեանում»։ Աստվածացման ուղին» (Գրիգոր Նարեկացին և նորպատոնականությունը՝ հատվածներ համապատասխան բաժնի [Գլուխ I, էջ 17-75] առանձին ենթագլուխներից)։ «Աղոթքն՝ իբրև «Մերձակա աստվածաբանություն»։ Օրէնքանությունն՝ իբրև Դիոնիսիոսի երկերի խորքային հղացք» (Գրիգոր Նարեկացին և նորպատոնականությունը՝ «Աղոթքն՝ իբրև «մերձակա աստվածաբանու-

գլխի մեջ որոշ հավելումներ կամ կրծատումներ են կատարվել¹⁰: Այստեղ յուրաքանչյուր գլխի հետ կապված հղում ենք օգտագործված հիմնական աղբյուրին (աղբյուրներին) և ոչ առանձին մասնավոր լրացումներին: Երբեմն՝ բացառիկ դեպքերում, օգտվել և հավելել ենք հեղինակի անտիպ նշումները:

Կրկնությունների դեպքում (որոնք երբեմն անխուսափելի են) կամ մանրամասների համար հղում ենք հիմնականում միայն վերջին աշխատություններին՝ այս հատորին նախորդող երկու հատորներին (Գիրք Ա, Գիրք Բ):

Կառուցվածքային փոփոխությունների արդյունքում անհրաժեշտ ենք համարել կազմել ողջ ուսումնասիրության, առանձին գլուխների առաջաբաններ՝ օգտագործելով հեղինակի բնագրերը¹¹: Սույն հատորում որոշ հարցեր՝ ինչ-

թյուն՝ էջ 157-164, Հոգկածներ՝ «Դիոնիսիոս Արեոպագացին և Գրիգոր Նարեկացին» [Էջմիածին, 2010, թիվ 11, էջ 50-73], «Դիոնիսիոս Արեոպագացին և Գրիգոր Նարեկացին» [Բանբեր Մատենադարանի 21, Երևան, 2014, էջ 15-34]:

⁹ Այսպես օրինակ՝ երբեմն հեղինակը միայն հակիրճ նշում է որևէ երեսույթի մասին, որ մանրամասնորեն ներկայացված է այլ աշխատության մեջ: Այս դեպքում, բացելով փակագծերը, ներբերվում է համապատասխան հատվածը (այդպես «Ընտրության արվեստ և դատումն ընտրության» գլխում այս տեսությունը քննելիս ներմուծված են նարեկացու «Մատենադարան» սաղմոսների, հարասությունների կիրառության օրինակներն այլ աշխատությունից):

¹⁰ Տե՛ս «Սուրբ Գրիգոր Նարեկացու կյանքը» և համանուն ուսումնասիրությունը, «Աստվածանմանության տեսությունը» (հմմտ. Գրիգոր Նարեկացին և նորազատոնականությունը՝ Գլուխ Ի.Ի «Հոգեկոր մաքրագործման խնդիրները և աստվածացման գաղափարը Նարեկյան դպրոցի բարյոյագիտության մեջ», էջ 17-41) և այլն:

¹¹ Տե՛ս օրինակ «Դիոնիսիոս Արեոպագացուն վերագրվող երկերի ազդեցությունը հայ միջնադարում»՝ հատվածներ ուսումնասիրությունից՝

պես օրինակ լեզվի, բանաստեղծական արվեստի ընկալումը, տեսիլները նարեկացու ստեղծագործական փորձառության մեջ, արծարծվում են աշխատության և՝ առաջին, և՝ երկրորդ հատվածներում՝ բուն «Մատեանի» հղացքի և արեոպագիտյան բնագրերի տեսական համակարգի համատեքստերում։

Աշխատանքի ընթացքում առաջնորդվել ենք երեք հիմնական սկզբունքով՝ ա. չհավելել հեղինակի բնագրին ոչինչ (բացառություն են կազմում վերակազմված գլուխների խորագրերը, որոնք, սակայն, բխում են հեղինակային բնագրից, ինչպես նաև նախորդ հատորներին կամ սկզբնաղբյուրների նորագույն հրատարակություններին հղումները), բ. չխախտել նրա բնագրի ամբողջականությունը, գ. հնարավորինս օգտագործել հեղինակի բոլոր ուսումնասիրությունները տվյալ խնդրի շուրջ՝ խմբավորել-կրծատելով, համալրելով իր իսկ բնագրերով։ Իր իսկ բնագրերի հետ երկխոսության արդյունքում այսպես առաջացել է նոր «համարնագիր»՝ եզրույթ, որ հեղինակի առանցքային բառապատկերներից է։

«Դիոնիսիոս Արեոպագացին և Գրիգոր Նարեկացին», Բանքեր Մատեանագրանի 21, Երևան, 2014, էջ 15-34, «Գրիգոր Նարեկացին և նորպալատոնականությունը» ուսումնասիրության Վերջաբանից, էջ 347-364։

Ա.ՌԱ.ԶԱ.ԲԱՆ

Նարեկյան դպրոցը բնորոշվում է զարգացման երեք փուլով՝ կապված դպրոցի երեք նշանավոր ներկայացուցիչների՝ Խոսրով Անձևացու, Անանիա Նարեկացու և Գրիգոր Նարեկացու հետ։ Այս դպրոցի մատենագրությունը շուրջ կեսդարյա ներքին խմորման և կուտակումների, հոգեոր և բանական մեծ խտացումների, խաչասերումների արդյունք է, որից հետո սկսվում է հոգեոր բանաստեղծության մի նոր շրջափուլ։

Այն ձեռք է բերում զորեղ զգայական և բանական լիցքեր, կանոնիկ բանաստեղծության շրջանակներից դուրս գալով՝ մտնում է լայն աշխարհ, ավանդական պատկերաշարքից ու կաղապարված լեզվից՝ դեպի լեզվական անկաշկանդ, անսանձ մի ընթացք, աննախադեպ զարգացումներ, լեզվաստեղծական մի տարերք, որտեղ գերիշխող են բառային գյուտերը, նորակազմությունները, խոսքի ազատության բացարձակացումը։ Առհասարակ բառաստեղծման տարերքը, ճարտասանական խաղացկուն ոճը միշտ հատուկ է եղել հայ մատենագիրներին, բայց Նարեկյան դպրոցում այն հասնում է աննախադեպ չափերի՝ ընդգծվելով իբրև երկույթ և դառնալով բանաստեղծական արվեստի հիմնական սկզբունքներից և բացառիկ արտահայտություններից մեկը։

Նարեկյան դպրոցի ներկայացուցիչները հանդես են գալիս իբրև խոշոր նորարարներ նաև տեսական գիտելիքների և հոգեոր արվեստների մեջ։

Նախորդ ուսումնասիրություններում մենք անդրադարձել ենք նրանց ստեղծագործության ժառանգական կապին՝ փորձելով վերակերտել գրական այս ընտանիքի պատկերը, բնագրերի ներքին շերտերի փոխներթափանցումը ստեղծաբանական կենդանի ընթացքի մեջ։ Նարեկյան դպրոցն իր գիտական-կրթական համակարգով, աստվածաբանական-դավանաբանական մեկնություններով, արվեստաբանության և հատկապես բանաստեղծական արվեստի տեսության նոր ու աննախաղեպ մակարդակով հայ գրական միտքն ու գեղարվեստական փորձը տարավ թոիչքային զարգացումների՝ նախատիպ և ուղենիշ դառնալով հետագա շրջանների հայ գեղագիտական-գեղարվեստական մտքի և գրականության զարգացման համար։

Դպրոցի ներսում, սուրբքրային ժառանգությունից և հայրաբանական գրականությունից բացի, ուսումնասիրման, ստեղծագործական յուրացման առարկա են դառնում նաև «արտաքին» աղբյուրները, «հեթանոս» իմաստասերները, տեսական և գործնական փիլիսոփայությունը, «յոթազատ արվեստները», որոնք զորեղ ազդակ են դառնում և՝ տեսական հայացքների զարգացման, և՝ հոգևոր արվեստների աննախաղեպ զարթոնքի համար¹²։ Այստեղ հատկա-

¹²Տե՛ս Հ. Թամրապյան, Գրիգոր Նարեկացին և Նարեկյան դպրոցը, Գիրք Բ (այսուհետև Հ. Թամրապյան, Գիրք Բ), էջ 183-259, 393-435, Գրիգոր Նարեկացին և Նարեկյան դպրոցը (բնագրագիտական հետազոտություններ), Գիրք Ա (այսուհետև Հ. Թամրապյան, Գիրք Ա), էջ 3-12, Նարեկյան դպրոցը, Երևան, 1999, էջ 198-214։ Գիտությունների համակարգի՝ քերականական, ճարտասանական, տրամաբանական գի-

պես առանձնանում են նորպլատոնական աղբյուրները, որոնցով ներթափանցված է Նարեկյան դպրոցի գիտական ողջ համակարգը¹³ գոյաբանական, իմացաբանական, գեղագիտական և բարոյագիտական ուսմունքները, հոգևոր արվեստների տեսությունը։ Այս ամենը, միանալով տեսական աշխատանքներում և ստեղծագործության մեջ արտացոլված պլատոնյան-պյութագորական գոյաբանական, իմացաբանական, ինչպես նաև բարոյագիտական և գեղագիտական համակարգերին, ստեղծում է մի տեսական հենք, որ թույլ է տալիս Նարեկյան դպրոցի մատենագրությունն ու բանարվեստը դիտել իբրև նորպլատոնականության ծաղկման մի նոր շրջափուլ միջնադարյան հայ մշակույթի պատմության մեջ։

Տեսական զարգացման այս ընթացքը Գրիգոր Նարեկացու ստեղծագործության մեջ փոխակերպվում է բանաստեղծական պոռթկուն տարերքի, վիթխարի սլացքի, թռիչքածե անցումների՝ թափանցելով միանգամայն նոր ոլորտներ, բառաշխարհներ, ուր ամեն ինչ շարժման մեջ է, հղի է գյուտերով։

Առանց նշված աղբյուրների հետ ունեցած առնչությունների հետազոտության՝ անհնար է մեկնաբանել Գրիգոր Նարեկացու բարդ ու բազմաշերտ ստեղծագործական աշխարհը, որն իր մի շարք դրսելորումներում մանվածա-

տելիքների հնարանքների կիրառության մասին դպրոցի գործիչների մեկնողական երկերում անհնար է մեկնաբանել Գրիգոր Բ, Էջ 158-180, 184-211, 236-257 եւ այլուր։

¹³ Տե՛ս Հ. Թամրապյան, Գրիգոր Նարեկացին և նորպլատոնականությունը, Երևան, 2004։

պատ ու անվերծանելի է թվում: Մինչդեռ այդ ազդեցությունների ու ներքին աղերսների ուսումնասիրությունը աննախաղեղ արդյունքներ է տալիս՝ զգալիորեն մեծացնելով հոգեւոր այն տեսադաշտը, որ սնել է Գրիգոր Նարեկացու ստեղծագործությունը, հնարավորություն տալով վերածանել նրա բանաստեղծական աշխարհը:

Գրիգոր Նարեկացին նորպլատոնական փիլիսոփայության, հատկապես գեղագիտության սոսկ հետևորդը չէ. իր ուսուցչի՝ Անանիա Նարեկացու նման նա զարգացնում է այդ գեղագիտությունն իր երկերում՝ հանդես գալով իրուսկագրնավորող և նորարար, որն առավել արտահայտված է ստեղծագործության, բանաստեղծական խոսքի գոյաբանական նշանակության, նրա աստվածային, արարչական իմաստի բացարձակացման նարեկացիական գաղափարների մեջ:

Այստեղ առանձնահատուկ դեր են խաղում Դիոնիսիոս Արեոպագացուն վերագրվող երկերը, որոնց գորեղ ազդեցությունն առկա է Նարեկյան դպրոցի տեսական համակարգում և բուն ստեղծագործության մեջ: Գրիգոր Նարեկացին, սակայն, առաջինն է իր երկերում՝ հատկապես տաղերգության մեջ, ստեղծաբանական ոլորտ մտցրել Դիոնիսիոս Արեոպագացու գեղագիտական խոր հղացքները՝ ըստ էության, լիովին բարեշրջելով հոգեւոր արվեստների համակարգը:

Հենվելով իր մեծ նախորդների՝ Խոսրով Անձեացու և առավելապես ուսուցչի՝ Անանիա Նարեկացու փորձի վրա՝

Գրիգոր Նարեկացին զարգացնում և հաճախ բացարձակացնում է նրանց միստիկ հայացքները բանաստեղծի և բանաստեղծության, հոգեոր արվեստների և հոգեոր կենցաղավարության մասին:

Ազատ արարման պաշտամունքը դառնում է այն ազդակը, որն առաջ է շարժում դպրոցի ստեղծագործական լիցքերը: Աստված ինքը իր պայծառ, հորդաբուխ, կենսատու ստեղծագործական լիցքերով կապվում է բանաստեղծի հետ: Արվեստներն, առնչվելով բանական մարդու և բանական տիեզերքի անխպելի կապի գաղափարի հետ, դիտվում են իրեւ մարդկային ստեղծաբանություն, որը միախառնված է, միեղեն է աստվածային արարչագործության տարերքի հետ, արվեստագետն արարում է Աստծո՝ գերագույն արվեստագետի հետ միասին՝ մասնակցելով նրա տիեզերական անվերջ հղացումների շրջապտույտներին:

Նոր ու աննախադեպ է հենց Գրիգոր Նարեկացու ծրագիրը՝ ստեղծել մի երկ, որ խտացնի իր մեջ համաշխարհը, մարդկային ամբողջ հոգեոր պատմությունն ու ներքին փորձը: Գրիգոր Նարեկացին գոյավորում, շնչավորում է մի խորհրդավոր բառաշխարհ, ուր աներեւութն, անտեսանելին ներկայանում է մարմնառյալ, բառային կերպարանքով, խոսքի հսկայական, զանդվածեղ տեսիլադաշտով: Գրիգոր Նարեկացին ստեղծում է մի գերլեզու, մի յուրատեսակ միջնաշխարհ իր հոգու և արտաշխարհի, միկրոտիեզերքի և մակրոտիեզերքի միջև, որ կապող օղակ է հանդիսանալու բոլոր մահկանացուների և գալիք սերունդների համար:

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ ԿՅԱՆՔԸ

Նարեկացիագիտության մեջ կարծիք է ձևավորվել, որ Գրիգոր Նարեկացու մասին քիչ կենսագրական տվյալներ են պահպանվել¹⁴: Սակայն եղած ուշագրավ կենսագրական փաստերը, համարյա անխաթար պահպանված նրա գրական ժառանգությունը բավական խոսուն են և վկայում են գրական բուռն գործունեության և ստեղծագործական կյանքի մասին:

Գրիգոր Նարեկացու կյանքի հիմնական փաստերը հայտնի են, սակայն, մեր կարծիքով, դրանք կարիք ունեն նոր մեկնաբանությունների ու շեշտադրումների¹⁵: Դրա հետ մեկտեղ կան նաև նորահայտ փաստեր, կենսագրական կարեոր մանրամասներ և դրագներ, որոնք լույս են սփռում նրա ուսումնառության շրջանի և ստեղծագործության չուսումնասիրված շերտերի վրա, երևան հանում նրա ժառանգական կապը Նարեկյան դպրոցի նախորդ նշանավոր ներկայացուցիչների հետ, լուսաբանում նրա երկերի իմաստասիրական տարերքը, տեսական գիտելիքների և ստեղծագործական ակունքների համակարգը, որը,

¹⁴Տե՛ս Հ. Թամրապյան, Սուլբ Գրիգոր Նարեկացու կյանքը, Երևան, 2005, նաև՝ «Սուլբ Գրիգոր Նարեկացու կեանքը», Մատենագիրք Հայոց, ԺԲ հատոր, Ժ դար, Գրիգոր Նարեկացի, Անթիլիաս-Լիբանան, 2008, էջ 9-46:

¹⁵Այստեղ օգտագործված են նախորդ շրջանի ուսումնասիրությունները՝ հատկապես Նարեկացիագիտակիտության մեծ երախտավոր Պ. Խաչատրյանի «Գրիգոր Նարեկացին և Հայ միջնադարը» ուսումնասիրությունը (Ս. Էջմիածին, 1996), ուրիշ մի են բերված և ամբողջացված սկզբնաղբյուր՝ ներից քաղված և Գրիգոր Նարեկացու մասին գիտական շրջանառության մեջ դրված կենսագրական տվյալները:

ինչպես նշեցինք, սուրբգրային, հայրաբանական-աստվածաբանական գրականության և արևելաքրիստոնեական միստիկ տեսությունների հետ, ընդգրկում է նաև անտիկ գիտության և փիլիսոփայության, հատկապես նորավառունականության շրջանի տեսական մի շարք կարևորագույն աղբյուրներ, որոնցից են Դիոնիսիոս Արեոպագացու անունով հայտնի և V-VIII դարերի հայ նորավառունական-հունաբան դպրոցի ներկայացուցիչների տեսական երկերը¹⁶:

Գրիգոր Նարեկացու ստեղծագործության ներքին ընթացքն ու պատմությունն իր իսկ բանաձևումներով ներկայանում են իբրև նրա կենսագրության գերագույն փաստեր՝ կապվելով մեծ բանաստեղծի միստիկ աշխարհայցքի, բանաստեղծական խորհրդավոր հղացքների, աստվածացման ձգտող անհատի վերակերպավորումների ու վերամարմնավորումների, աստվածային ներշնչանքի ու տեսիլքների հետ, որի ընթացքում բանաստեղծությունը դառնում է հոգեկոր կենսագրության փաստ, «ներքին մարդու» պատմություն, որն ընթանում է արտաքին կյանքի, կենսագրության, «արտաքին մարդու» հետ համաժամանակյա, սակայն վերժամանակյա խորհուրդ ունի:

Այդ կենսական գաղափարները հոգեկոր սկիզբներ ու նպատակներ էին միստիկ բանաստեղծի համար, որոնց շուրջ հյուսվում էր նրա ներքին և արտաքին կյանքի ներանձնական պատմությունը՝ հաճախ բացվելով կենսական մեծ տա-

¹⁶ Այս մասին տե՛ս Հ. Թամրապյան, Անանիա Նարեկացի. կյանքն ու մատենագրությունը, Երևան, 1986, Նարեկյան գպրոցը, Երևան, 1999, Գրիգոր Նարեկացին և նորավառունականությունը, Երևան, 2004, Գրիգոր Նարեկացին և նարեկյան դպրոցը, Գիրք Բ, Երևան, 2015:

րերքի առջև, իր մեջ ներառելով խոռվահույզ դարի ներքին ցնցումներն ու ողբերգական համայնապատկերները:

*

Գրիգոր Նարեկացու կյանքի և ստեղծագործության տարիները կապված են Վասպուրականի Ոշտունյաց, Մոկաց և Անձևացյաց գավառների հետ: Նրա պահպանված երկու վարքերից Գրիգոր Ծերենցի (1349-1425 թթ.) խմբագրած տարբերակում որպես ծննդավայր նշվում է Անձևացյաց գավառը, որի թեմի առաջնորդ է եղել նրա հայրը՝ Խոսրով Անձևացին¹⁷: Ավանդությունը Խոսրովի անվան հետ է կապում Անձևացյաց Ս. Նշան կամ Ս. Աստվածածին վանքի կառուցումը, որը կոչվել է նաև Խոսրովային Ս. Նշանի վանք¹⁸:

Ուսումնասիրողները տարբեր կարծիքներ են հայտնել Գրիգոր Նարեկացու ծննդյան թվականի մասին: Գերիշխող և հավաստի է այն տեսակետը, որ Գրիգոր Նարեկացին ծնվել է 950 թվականից առաջ, քանի որ Խոսրով Անձևացին այդ թվականին, ըստ իր «Մեկնութիւն ժամակարգութեան» երկի հիշատակարանի, Անձևացյաց թեմի եպիսկոպոս ձեռնադրվելու առթիվ ձեռնարկում է գրել իր «Մեկնութիւն ժամակարգութեան» երկը, ուստի՝ այդ ժամանակ արդեն նաչէր կարող կանամբի լինել¹⁹: Խոսրովն իր հիշատակարա-

¹⁷Տե՛ս Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետ՝ Մատենադարան), ձեռ. N 7379, թերթ 353ա, տե՛ս նաև Պ. Խաչատրյան, Գրիգոր Նարեկացին և Հայ միջնադարը, Էջմիածին, 1996, էջ 22-23:

¹⁸Տե՛ս Հ. Թամրապյան, Գիրք Բ, «Խոսրով Անձևացի. Կենսագրական տվյալներ», էջ 46:

¹⁹Այս մասին տե՛ս Գ. Տեր-Մկրտչյան, Անանիա Մոկացի, Հայագիտական ուսումնասիրություններ, Ս. Էջմիածին, 1998, էջ 81-83:

նում գրում է. «Համարձակեցայ առ այս յանդնաբար՝ ի հարկէ եւ ոչ զի անձին փառս ստացայց, այլ զի զեպիսկոպոսութիւն վիճակեցայ, եւ ի վիճակեն՝ տգիտութիւն ի յուլովս վարկայ, եւ բանիւ ամենայն ումեք զբովանդակ զայս ծանուցանել՝ անհնար գիտացի, պատշաճ համարեցայ ի գրի հարկանել, զի թերեւս այսպէս դիւրին առ ուսանել արարից կամողաց...»²⁰:

Մեկնության գրման տարեթվի մասին մի արժեքավոր վկայություն է թողել Գրիգոր Նարեկացին, որը Խոսրով Անձեւացու երկի ընդօրինակողներից ու տարածողներից էր. «Ծնորհիւն Աստուծոյ եղեւ մեկնութիւն այսմ գրոց՝ ի ձեռն Խոսրովայ Անձեւացեաց եպիսկոպոսի՝ յոյժ հետեւողի պատուիրանացն Աստուծոյ, զոր մեզ եւ գովել անձահ է, զի մի՛ գայթակղեսջիք ի նոյն, վասն գոլոյ նորուն հայր իմ ըստ մարմնոյ, որոյ չեմ արժանի կոչիլ որդի եւ կամ վարձկան՝ ըստ գրեցելումն. այլ ի գրելոցդ լինիցին հասու խնդրաւղքն վասն նորա, որք սրտի մտաւք ունկն դնիցեն, որք եւ աղաւեթիւք փոխադարձել պարտին ընդ տուիցելոյս, եւ հասարակացն տուաւղն Աստուծած եւ ձեզ հայցողացդ ձիրեսցէ զիւրականն պարգեւ: Այլ յոյժ ամաչեցեալ եւ տարակոյս գտանիմ ես՝ Գրիգոր, պարտաւոր պատուիրանաց Սուրբ Գրոց:

Արդ առաջին սուրբ գրոցս այսորիկ գծագրութիւն եղեւ ձեռամբ Սահակայ՝ որդւոյ տեառն Խոսրովու՝ սոյն սուրբ

²⁰ Մատենագարան, ձեռ. N 1329, թերթ 1ա-2թ (Հմմտ. «Բացայայտութիւն կարգաց եկեղեցւոյ քարոզութեանց եւ աղաւեթից ըստ իւրաքանչիւր ժամուց Խոսրովից Անձեւացեաց եպիսկոպոսի [Մեկնութիւն ժամակարգութեան]», Մատենագիրք հայոց, Ժ Հատոր, Անթիւիաս-Լիբանան, 2009 [այսուհետև՝ ՄՀ Ժ Հանագիրը], էջ 227):

գրոցս մեկնողի, երեք հարիւր իննսուն եւ ինն թուականութեան Հայոց (950 թ.)»²¹:

Բնականաբար, նման մի մեծածավալ մեկնություն գրելու համար տևական ժամանակ էր հարկավոր. այս փաստը վկայում է, որ Խոսրովը եպիսկոպոս է ձեռնադրվել 940-ական թվականների վերջերին, որից առաջ ծնվել էր Գրիգոր Նարեկացին: Սա հիմք է տվել մասնագետներին եզրակացնելու, որ Գրիգոր Նարեկացու ծնունդը պետք է լինի 947-949 թվականների միջակայքում (Մ. Աբեղյան, Պ. Խաչատրյան և ուրիշներ)²², թեև չի բացառվում, որ նա կարող էր ավելի վաղ ծնված լինել:

Գրիգոր Նարեկացին ծնվել, հասակ է առել գրական մի ընտանիքում, որ նախապատրաստել է նրա գրական մուտքն ու նախանշել նրա ստեղծագործական աշխարհի ձևավորման ընթացքը: Նա մի քանի հիշատակություններ ունի իր հոր՝ Խոսրով Անձեւացու, Եղբայրների՝ Սահակի և Հովհաննեսի, և ուսուցչի՝ Անանիա Նարեկացու մասին, որոնք որոշ կողմերով ուրվագծում են նրա հոգեոր կենցաղավարության և գրական կյանքի պատկերն ու միջավայրը: Գրիգոր Նարեկացու մայրը Անանիա Նարեկացու հորեղբոր դուստրն էր²³: Այս փաստն է շեշտում Գրիգոր Նարեկացին «Պատմութիւն Ապարանից Սուրբ Խաչին», «Ներքող ի Սուրբ Խաչն» և

²¹Տե՛ս Խոսրով Անձեւացի, «Բացայայտութիւն կարգաց եկեղեցւոյ», ՄՀ Ժ, էջ 227:

²²Այս մասին տե՛ս Պ. Խաչատրյան, Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը, էջ 23-26:

²³Տե՛ս Հ. Թամրապյան, Գիրք Բ, «Անանիա Նարեկացու կյանքն ու գործունեությունը», էջ 119-120:

«Ներբողի Սուրբ Կոյսն» եռագրությանը կցված հիշատակարանում. «Ես՝ Գրիգոր, յետին վարժապետաց և կրտսեր բանասիրաց, որդի դստեր եղբաւը հաւը Անանիայի հոգեգարդ եւ մտավարժ փիլիսոփայի, եւ ըստ վարուց մաքրութեան կրաւնից գովելոյ եւ հոչակելոյ»²⁴:

Նույն ձեռվ է փաստն արձանագրված Գրիգոր Նարեկացու Հնագույն վարքում (1173թ.), որի հեղինակն է Ներսես Լամբրոնացին. «Սուրբ հայրս մեր և աստուածաշնորհ քահանայս և կրաւնաւոր Գրիգոր էրի ի Նարեկայ վանից ի Հայու՝ ի գաւառն Վասպուրականի... և էր սա որդի դստեր եղբաւը հաւը Անանիա ճգնաւոր վարժապետի և Նարեկայ վանից առաջնորդի»²⁵: Այս փաստն է շեշտվում նաև Գրիգոր Նարեկացու վարքի երկրորդ տարբերակում, որն ավելի մանրամասն և ընդարձակ է նախնական տարբերակից. «...Երիցս երանեալ սուրբ հայրս մեր և աստուածաշնորհ մեծ վարժապետս Գրիգորիոս, գոլով ի գաւառէն Վասպուրականի, որդի տեառն Խոսրովու Անձևացեաց եպիսկոպոսի, որդի դստեր եղբաւը հաւը Անանիայի հոգեգարդ և հմտաւարժ փիլիսոփայի և Նարեկա վանից առաջնորդի»²⁶:

Հետագա տարիներին, ինչպես նշել ենք, գրական այս մեծ ընտանիքին վերապահված էր ստեղծել գրական-իմաստասիրական մի դպրոց՝ միստիկ աստվածաբանության և

²⁴ Տե՛ս Գրիգոր Նարեկացի, «Ներբողի Սուրբ Կոյսն», Մատենագիրք Հայոց, ԺԲ Հատոր [Գրիգոր Նարեկացի], Անթրիփաս-Լիբանան, 2008 (այսուհետև ՄՀ ԺԲ, բնագիրը), Էջ 974:

²⁵ Մատենագարան, ձեռ. N 1568, թերթ 119ը:

²⁶ Տե՛ս Գրիգոր Նարեկացի, Մատենան ողբերգութեան, քննական բնագիր, աշխատասիրությամբ Պ. Խաչատրյանի և Ա. Ղազինյանի, Երևան, 1985, Էջ 172-173:

նրա մեջ ներթափանցած նորպլատոնականության խոշոր կենտրոն, որը նախատիպ հանդիսացավ հայ միջնադարի բարձրագույն դպրոցների համար, կանխորոշեց նրանց ձևավորման և զարգացման ընթացքը²⁷:

Սկզբնաղբյուրներում դպրոցի քերթողական-բանաստեղծական ձեռքբերումների հետ շեշտվում է նրա գիտափիլիսոփայական, արվեստաբանական, գրական-գրականագիտական ուղղվածությունը: Նրա նշանավոր ներկայացուցիչներ՝ Անանիա, Հովհաննես և Գրիգոր Նարեկացիները, Հիշատակվում են առաջին հերթին իբրև մեծ փիլիսոփաներ:

Այս ընտանիքը վայելում էր արքունիքի, իշխանավորների և բարձրագույն հոգևորական դասի հովանավորությունը: Ինչպես նշել ենք, Անանիա Նարեկացու կյանքի նախանարեկյան շրջանն անցել է Հայաստանի Արշարունյաց և Հավնունյաց գավառներում, երբ Արշարունյաց գավառի եպիսկոպոսն էր Խաչիկ Արշարունին, հետագայի Խաչիկ Ա Արշարունի կաթողիկոսը (972-992 թթ.)²⁸: Խաչիկի եպիսկոպոսության շրջանում Անանիան նրան է նվիրում մի ամբողջական խրատագիրք, իսկ հետագայում՝ կաթողիկոսության տարիներին, «Հաւատարմատ» հակաճառականդավանաբանական կոթողային աշխատությունը, ինչպես ժամանակին Անանիա Մոկացի կաթողիկոսին (941-965) էր նվիրել իր հանրահայտ «Ընդդէմ թոնդրակեցւոց» երկը²⁹:

²⁷ Տե՛ս Հ. Թամմրազյան, Գիրք Բ, էջ 8:

²⁸ Տե՛ս Հ. Թամմրազյան, Գիրք Բ, էջ 115-117:

²⁹ Տե՛ս Հ. Թամմրազյան, Գիրք Բ, էջ 128-132: Այս երկուսի հետ Անանիա Նարեկացու ազգակցական հարաբերությունների մասին տե՛ս նույն տեղում, էջ 139-141:

Նարեկյան դպրոցի ներկայացուցիչները, իբրև դարի խոշոր մտածողներ, բարենորոգիչներ ու արվեստագետներ, իրենց ազատախոհության համար հալածվել են եկեղեցու կողմից՝ մեղադրվելով աղանդավորության մեջ. Գրիգոր Նարեկացու հայրը՝ Խոսրով Անձեացին, բանադրվեց Անանիա Մոկացի կաթողիկոսի կողմից, Անանիա Նարեկացին Խաչիկ Ա Արշարունի կաթողիկոսի կողմից մեղադրվեց թոնդրակեցիներին հարելու մեջ³⁰: Հստ Գրիգոր Խլաթեցու խմբագրած վարքի, պահպանված ավանդապատումների և հիշատակությունների՝ իր բարենորոգչական ձեռնարկումների համար նման մեղադրանքների է արժանացել նաև Գրիգոր Նարեկացին³¹:

Գրիգոր Նարեկացին Խոսրով Անձեացու կրտսեր որդին էր: Ավագը Սահակն էր, որը հոր՝ Խոսրով Անձեացու «Մեկնութիւն ժամակարգութեան» երկի առաջին գրառողն էր³²: «Հստ երեսույթին, հայրը թելադրել է, իսկ որդին՝ գրել: Դեռևս 13-րդ դարում Նարեկացու հիշատակարանի միտքն այդպես է ընկալել մատենագիր Մխիթար Այրիվանեցին, որն իր ժամանակագրության մեջ նշել է. «Խոսրով Անձեացեաց եպիսկոպոս արար զմեկնութիւն Աղօթամատուցին, զոր գրէր Սահակ որդի իւր»³³: Գրիգոր Նարեկացին իր

³⁰ Տե՛ս Հ. Թամբապյան, նշվ. աշխ., էջ 139-145, 308-310:

³¹ Տե՛ս Մատենագարան, ձեռ. N 7379, թերթ 353ա, Պ. Խաչատրյան, Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը, էջ 52-53:

³² Տե՛ս Հ. Թամբապյան, Գիրք Բ, «Խոսրով Անձեացի. Կենսագրական տվյալներ», էջ 45-46:

³³ Տե՛ս Պ. Խաչատրյան, Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը, էջ 22-23, տե՛ս նաև Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն ժամանակագրական, Ս. Պետերբուրգ, 1876, էջ 71:

նշված հիշատակարանում շեշտում է այս փաստը և հորդուրում այլ գրիչներին ընդօրինակել և տարածել իր հոր այս նշանավոր երկը։ Այս մեծարժեք հիշատակարանը հուշում է, որ Գրիգորը ևս Խոսրով Անձեացու մեկնության առաջին ընդօրինակողներից է եղել։ Կենսագրական այլ փաստեր Սահակի մասին չեն պահպանվել։

Նարեկա հոչակավոր վանքի կառուցումից տարիներ անց, երբ վանքի առաջնորդն ու ուսուցչապետը՝ Անանիա Նարեկացին, Պետրոս վարդապետի հետ այնտեղ նշանավոր դպրոց էր Հիմնադրել, Խոսրով Անձեացին իր միջնեկ և կրտսեր որդիներին՝ Հովհաննեսին և Գրիգորին, դնում է Անանիա վարդապետի խնամակալության տակ։ Հավանաբար, այստեղ դեր է խաղացել այն հանգամանքը, որ Խոսրով Անձեացին սուր հակամարտության մեջ էր եկեղեցական բարձրագույն իշխանությունների հետ, որն ավարտվեց նրա բանադրությամբ։ Այդ են վկայում Անանիա Մոկացի կաթողիկոսի՝ Խոսրով Անձեացու դեմ գրված թղթերը (954-965 թթ.)³⁴։

Գրիգոր Նարեկացու կյանքի և ստեղծագործության պատմությունն այնուհետև կապվում է Նարեկյան դպրոցի հետ։ Նա՝ իբրև Փիլիսոփա և բանաստեղծ, ձեւավորվել է Նարեկյան դպրոցում։ Խոշոր տեսաբան Փիլիսոփա էր նաև Գրիգոր Նարեկացու միջնեկ եղբայրը՝ Հովհաննես Նարեկացին, որ Անանիա Նարեկացու մահից հետո ստանձնում է վանքի առաջնորդությունը։

³⁴ Տե՛ս Գ. Տել-Մկրտչյան, Անանիա Մոկացի, Բ, Գ, Դ թղթեր, էջ 124-152։

Այս մասին են վկայում Գրիգոր Նարեկացու երկու կարևորագույն հիշատակարան-վկայությունները, որոնց մենք դեռ կանդրադառնանք:

Հակառակ արտահայտված կարծիքների, որ Գրիգոր Նարեկացին մեկուսացած ճգնավորական կյանք է վարել, որն անցել է արտաքին անխոռով ու հանգիստ պայմաններում, փաստերը վկայում են, որ նրա կյանքը հարուստ է եղել նշանավոր իրադարձություններով և դրամատիկ, ողբերգական անցքերով ու դարձերով, որոնք իրենց դրոշմն են դրել նրա ստեղծագործության վրա: Նա իր համայնապատում «Մատեանի» մեջ է ներառել ոչ միայն դարի խռովքներն ու հուզումները, որի ուղղակի անդրադարձները կան «Մատեանում», այլև իր անձնական ողբերգական ներապրումները՝ միախառնելով այն համընդհանուր մեղսաքավության իր հավերժող դողանջներին: Ձերմեռանդ և անկեղծ այդ ինքնախոստովանանքներն անձնական սկիզբ ունեն, որոնք նա, իբրև «մշտնջենավոր ձայնարկու», վերընծայում է Աստծուն:

*

Գրիգոր Նարեկացին ստեղծագործական առաջին տարիներից ունեցել է բանաստեղծի ու գիտնականի մեծ համարում: Իր ուսուցչի՝ Անանիա Նարեկացու նման նա ևս գրական մեծ կտավի երկերի պատվերներ է ստացել արքունական և եկեղեցական բարձրագույն իշխանություններից:

Դեռևս իր կյանքի օրոք Գրիգոր Նարեկացին սրբի, մեծ առաջնորդի և վարժապետի համբավ էր վայելու³⁵.

Պետ վարժից կոչեցայ...

Ռաբբի ռաբբի անուանեցայ...

Սուրբ վկայեցայ ի մարդկանէ...

(ՀԲ, Դ)

Գրիգոր Նարեկացու՝ մեզ հասած առաջին թվագրված երկը «Երգ Երգոցի» մեկնությունն է, որ նա գրել է Արծրունի Գուրգեն թագավորի (968-1003 թթ.) պատվերով 977 թվականին: Գուրգեն Արծրունու տիրույթում էր գտնվում Անձևացյաց գավառը, և նա, հավանաբար, վաղ տարիներից արդեն քաջածանոթ էր Խոսրով Անձևացուն և նրա ընտանիքի անդամներին:

Գրիգոր Նարեկացին այդ առթիվ մեկնության սկզբում և վերջում թողել է ուշագրավ հիշատակարաններ: Վերջին հիշատակարանից պարզվում է, որ նա, ելնելով գործի դժվարությունից, հապաղել է կատարել արքունական պատվերը, և թագավորը երկրորդել է իր հրամանը:

«Հրաման քո աստուածասէր թագաւորութեանդ, ո՞վ տէր արքայ, բուռն եւ աւելի էր քան զկար մեր. զի այդապիսի խնդիր՝ մեկնել զԵրգ Երգոց՝ այնոցիկ էր, որ ըստ Սողոմոնին են հոգւով»³⁶:

«Ի ՆԻԶ թուականութեանս Հայոց (=977թ.) հարկեցայ եւ՝ Գրիգոր քահանայ ի Նարեկայ, որդի տեառն Խոսրո-

³⁵Տե՛ս Հ. Թամբաղյան, Գիրք Ա, էջ 284:

³⁶Տե՛ս Գրիգոր Նարեկացի, «Մեկնութիւն Երգոց Երգոյն Սողոմոնի», ՄՀ ԺԲ, էջ 760:

վայ Անձաւացեաց եպիսկոպոսի, ի Գուրգենայ աստուածամէր քրիստոսապսակեալ արքայէ՝ յորդւոյ Աբուսահլի Համազասպ թագաւորի, առ ի մեկնութիւնս ահաւոր բանիցն Սողոմոնի եւ բացայայտել զիսորին ծածուկսն, որ ի նոսա, որ են քաղցր առ ի լսել: Վասն զի զփեսայէ եւ զհարսնէ ասէ, որ եւ զստեանց եւ զկարմրացեալ շրթանց եւ զայտից գեղեցկութենէ եւ զաշաց ցանկալեաց եւ զքեռ եւ զեղբաւրորդւոյ եւ զաւրիորդաց եւ զայլն ամենայն այսպիսեաց բանից տոփականաց եւ սրտից խտղտանաց, սեռն սիրոյ շաղկապ միաւորութեան, զոր լուեալ մարդկան անիմանալեաւք մտաւք՝ յայլ եւ յայլ իրս իմանային: Ապա ի հոգս եղեալ թագաւորին այսպիսի իրի՝ յղէ առ իս մի անգամ եւ երկիցս, որում ոչ իշխեցի ընդդիմանալ, զի ծանեայ, եթէ աստուածահաճոյ է հրամանն, եւ մեկնեցի զերգս երգոցն նորին հրամանաւ»³⁷:

Գրիգոր Նարեկացու գրական ժառանգության կարևոր մասն են կազմում «Ապարանից Ս. Խաչի պատմութիւնը» և չորս ներբողները: «Ապարանից Ս. Խաչի պատմութիւնը» և ներբողներից երկուսը՝ Ս. Խաչի և Աստվածածնի ներբողները, ամբողջանում են իբրև յուրատեսակ եռապատկեր-եռերգություն՝ տրիպտիխ: Դրա հիմքում մի պատմամշակութային խոշոր իրադարձություն է, որի մանրամասն գեղարվեստական շարադրանքը ճարտասանական և քերթողական բարձրարվեստ ոճով տալիս է Գրիգոր Նարեկացին: Այն կապված է 983 թվականին Վասպուրականի Մոկաց գավառի Ապարանք գյուղի վանական համալիրի՝ Ս. Կարապետ

³⁷ Նույն տեղում, էջ 882-883:

Եկեղեցու հարեանությամբ Ստեփանոս նախավկայի և Ս. Աստվածածնի Եկեղեցիների կառուցման հետ՝ իրադարձություն, որը նշանավորվեց նաև այդ առթիվ բյուզանդական Վասիլ և Կոստանդին կայսրերի նախկինում ընծայաբերած սուրբ մասունքների՝ Ս. Կարապետ Եկեղեցուց Ս. Աստվածածնի Եկեղեցի փոխադրումով:

Դա համաժողովրդական տոնակատարություն էր, որին մասնակցում էր ողջ արքունիքը, Հոգևորականությունը, ժողովուրդը, Արծրունի երեք թագավոր եղբայրները՝ Աշոտ-Սահակը, Գուրգեն-Խաչիկը, որը պատվիրել էր Գրիգոր Նարեկացուն գրել «Երգ երգոցի» մեկնությունը, և Սենեքերիմ-Հովհաննեսը:

Պատմական այս իրադարձության առթիվ ստեղծված Գրիգոր Նարեկացու եռագրությունը, որը նրա մեծ կտավի երկրորդ գործն է, գրվել է Ստեփանոս Մոկաց եպիսկոպոսի պատվերով: Գրման տարեթվի մասին արտահայտվել են տարբեր կարծիքներ: Եռագրության մեջ հիշատակված մի շարք փաստեր, որ կատարվել են նշված տարեթվից հետո, այն է՝ երկրաշարժը և Ս. Սոֆիայի տաճարի վերականգնումը (ըստ բյուզանդագիտության մեջ գերիշխող տեսակետի՝ երկրաշարժը տեղի է ունեցել 989 թ., իսկ Ս. Սոֆիայի վերականգնման տարեթվիը 993 կամ 994 թվականն է), Վասիլ և Կոստանդին կայսրերի օրոք կայսրության ներսում ապստամբած զորքերի (նկատի ունի 980-ական թթ. վերջերում Վարդ Փոկասի և Վարդ Ալեքրոսի ապստամբությունները) և բուլղարների դեմ մղած հաղթական պատերազմը, որ կապվում է 991-995 թվականների հետ, ուսում-

նասիրողներին թույլ են տվել եզրակացնել, որ պատմական նշանավոր այս իրադարձությանը նվիրված գործը, իրադարձություն, որի մասնակիցն է եղել նաև Գրիգոր Նարեկացին, գրվել է դրանից մեկ-երկու տարի անց՝ Ստեփանոս Մոկացի եպիսկոպոսի պատվերը ստանալուց հետո, այնուհետեւ հարստացվել, լրամշակվել և միասնական կառույցի է բերվել 990-ական թվականներին:

Գրիգոր Նարեկացու կոթողային աշխատություններից է «Գանձտետրը»՝ տաղերի և գանձերի ժողովածուն, որ նորամուծություն էր եկեղեցական ծիսակարգային երգերի և երաժշտության բնագավառում։ Իբրև նորարարական մի ձեռնարկ՝ այն քերթողական և երաժշտական բարձրագույն արվեստների, քրիստոնեական աստվածաբանության, նորապլատոնական գեղագիտության և ժողովրդական բանահյուսության տարրերի մի զարմանալի համադրություն է, որ նպատակ ուներ հոգեսոր և գեղարվեստական հզոր լիցքեր հաղորդելու եկեղեցական տոնակատարություններին։

Այս տաղերը և գանձերը, ինչպես «Մատեանի» ողբերը, հավանաբար, գրվել են տարիների ընթացքում և հետագյում ամբողջացվել մի ժողովածուի մեջ, որ եկեղեցական ձեռնարկ է հանդիսացել։ Ուսումնասիրողները չեն որոշակիացրել «Գանձտետրի» ստեղծման տարեթվերը։ Մեր կարծիքով, այն կազմվել է դարի 90-ական թվականների վերջերին՝ նշված եռագրությունից և մյուս ներբողներից հետո և «Մատեան ողբերգութեան» երկի ամբողջացումից առաջ, քանի որ կյանքի վերջին տարիներին Գրիգոր Նարեկացին ամբողջովին տարված էր «Մատեանի» հրաշակերտումով։

Բանասիրության մեջ հատուկ քննարկման առարկա է դարձել «Մատեան ողբերգութեան» երկի ստեղծման տարեթիվը: Հստ գերիշխող տեսակետի, որ հենվում է «Մատեանի» հեղինակային հիշատակարանի վրա, Գրիգոր Նարեկացին իր այս կոթողային երկը սկսել, ավարտել և ամբողջացրել է 1000-1003 թվականներին: Ի մի բերելով բոլոր նախորդ կարծիքները՝ այս եզրակացությանն է հանգում հմուտ նարեկացիագետ Պ. Խաչատրյանը: Այս հարցին անդրադարձել ենք «Մատեանի» տեսական-գրական նախահիմքերը քննելիս³⁸:

Վերջին շրջանի ուսումնասիրությունները թույլ են տալիս համալրել Գրիգոր Նարեկացու տեսական ժառանգությունը նոր գործերով, որոնք նարեկացիագիտության մեջ թեական են համարվել («Բան խրատու վասն ուղիղ հաւատոյ և մաքուր վարուց առաքինութեան», «Ճառ սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ ասացեալ», «Կարգ և կանոն աղաւթից», «Գրիգոր Նարեկացւոյ ասացեալ վասն վարդապետաց և իմաստուն քահանայից վախճանի բան գովութեան և մխիթարութեան», «Մեկնութիւն Ո՞վ է դա»-ի): Սրանց ևս անդրադարձել ենք առանձին բնագրագիտական քննությամբ³⁹:

*

Բանասիրության մեջ առանձին քննության առարկա է եղել նաև Գրիգոր Նարեկացու մահվան տարեթիվը: Ըն-

³⁸ Տե՛ս Հ. Թամրապյան, Գիրք Բ, «Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» երկի խորագրի» հարցը», էջ 297-305:

³⁹ Տե՛ս Հ. Թամրապյան, Գիրք Ա, էջ 213-315:

դունված ավանդույթով, որ գալիս է Գրիգոր Խլաթեցու վարքից, նրա մահվան տարին է Համարվել 1003 թվականը, երբ նա ավարտեց իր «Մատեանը»⁴⁰: Հետագա ուսումնասիրողները (Ա. Զամինյան, Մ. Աբեղյան, Մ. Մկրյան) կրկնել են վարքում նշված տարեթիվը, ոմանք էլ (Գ. Զարբհանալյան, Ե. Դուրյան, Կ. Քիպարյան և ուրիշներ) նրա մահվան թվականը դրել են ավելի ուշ՝ շրջանում՝ 1010-1011 թթ.: Սակայն առ այսօր գերիշխող է մնում առաջին տեսակետը⁴¹, ըստ որի, հին ավանդույթով, Գրիգոր Նարեկացու մահը կապվել է նրա «Մատեանի» ավարտի հետ: Նրա առաջին վարքագիրը՝ Ներսես Լամբրոնացին, որ պահպանված հնագույն ձեռագիրը Նարեկի (1173թ.) պատվիրատուն է, նշում է, որ նա մահացել է երիտասարդ տարիքում, և նրա մարմինն ամփոփվել է Նարեկա վանքում՝ Ա. Սանդուխտ եկեղեցու մոտ.

«Զայսոսիկ թողեալ յեկեղեցի Քրիստոսի կենդանի՝ յետիւր յիշատակ, ինքն գնաց միշտ կենդանեացն քաղաք աստի փոփոխմամբ... յերիտասարդական աստիս վախճանեալ, որոյ պատուական մարմինն եղեալ կայ ի նոյն Նարեկայ վանս՝ հուպ եկեղեցւոյն սրբուհոյն Սանդիմոյ»⁴²:

Այստեղ շեշտենք, որ այս բացառիկ ձեռագրով, որ պահպում է Մաշտոցի անվան Մատենադարանում, նրանում զետեղված Գրիգոր Նարեկացու այս վարքով, Ներսես Լամբրոնացին սրբացրեց Գրիգոր Նարեկացուն՝ վերսկսելով

⁴⁰Տե՛ս Մատենադարան, ձեռ. N 7379, թերթ 354ա:

⁴¹Այս մասին տե՛ս Պ. Խաչատրյան, Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը, էջ 52-55, տե՛ս նաև Հ. Թամբաղյան, Գիրք Ա, էջ 250:

⁴²Մատենադարան, ձեռ. N1568, թերթ 119բ:

Նրա «Մատեանի» ոչ միայն ընդօրինակման ու տարածման գործը, այլև սկիզբ դնելով նրա մեկնաբանության, վերլուծության ավանդույթին: Իր աշխատանքներն այս ուղղությամբ նա խորացրեց 1177 թվականին գրած իր առաջին ծավալուն «Խորհրդածութիւնք ի կարգս եկեղեցւոյ և մեկնութիւն խորհրդոց պատարագին» երկում, ուր տեղ է գտել Գրիգոր Նարեկացու Սուրբ Հոգուն ուղղված աղոթքի խորագնին մեկնությունն ու նրա անձի ու գործի բացառիկ գնահատականը⁴³:

Այդ մեկնության մեջ Ներսես Լամբրոնացին բացում է իր մեծ նախորդի ստեղծագործության միստիկ խորքերը: Սուրբ Հոգուն ուղղված «Երանելի» Գրիգոր Նարեկացու աղոթքի զորությունն այն է, ըստ մեկնության հեղինակի, որ զգացմունքն ու խոսքն այստեղ գործում են ներդաշնակ: «Այսպէս կանխէ երանելիս առ Հոգին եւ այսու ըղձիւքս, եւ ոչ սոսկ բանիւքս հաւատայ վերահայեցութիւն Հոգւոյն ի յանձն տանել»⁴⁴:

Ըստ Լամբրոնացու՝ այս «բարձրագոյն հայցուածով» երանելին խնդրում է միանալ ընդ Հոգին», «Աստուծոյ ընդ մարդկան խառնել»: Այս աղերսով Սուրբ Հոգին իմաստությամբ է լուսավորում «ներքին մարդուն»⁴⁵:

Լամբրոնացին այս «Խորհրդական» աղոթքն իր զորությամբ համեմատում է Աստվածաշնչի գրքերի հետ⁴⁶:

⁴³Տե՛ս Վենետիկ, Ա. Ղազար, 1847, էջ 195-197, 250-260:

⁴⁴Նույն տեղում, էջ 255:

⁴⁵Նույն տեղում, էջ 257-258:

⁴⁶Նույն տեղում, էջ 259:

Առաջին անգամ Ներսես Լամբրոնացին է նաև շեշտում Գրիգոր Նարեկացու ստեղծագործության գիտական-փիլիսոփայական խորքը, որն ընդգծված է նրա պատվիրած այս ձեռագրի առաջին մանրանկարում՝ խորագրված ՍԲ ԳՐԻԳՈՐ ՓԻԼԻՍՈՓԱՅ, և նրան զուգադիր կիսախորանում, ուր նշված է. «Գրիգորի Նարեկայ վանից վանականի հոգեմատեան հոետորի եւ Հայոց փիլիսոփայի ի խորոց սրտի խաւսք ընդ Աստուծոյ»⁴⁷: Նրա ստեղծագործության գիտական ուղղվածությունն է ընդգծված նաև Լամբրոնացու հեղինակած Գրիգոր Նարեկացու վարքում.

«Սուրբ Հայրս մեր, աստուածաշնորհ քահանայս եւ կրաւնաւոր Գրիգոր... եւ վախճանեալ եղբաւրն մնաց Գրիգոր միայնակ յերկս առաքինութեան եւ յաշխատութիւն ընթերցման անյագ բաղձանաւք. որ եւ եղեալ Հոգւոյ Սրբոյ ընդունարան եւ գերազանց շնորհաւք գիտութեան»⁴⁸:

Արանում է Ներսես Լամբրոնացու հոգեոր սխրանքի խորհուրդը. նա կորստից փրկեց և սերունդներին հասցրեց Հայոց միջնադարի թերևս ամենաթանկ գանձը՝ Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» երկը՝ Գրիգոր Նարեկացու իր հեղինակած վարքով և նշված մեկնությամբ սրբացնելով նրան ու սկիզբ դնելով նարեկացիագիտությանը:

Զեռագրում գետեղված Գրիգոր Նարեկացու վարքն ավարտվում է Ներսես Լամբրոնացու աղերսով, ուր արտահայտվում է «Մատեանի» բուն խորհուրդը՝ այն միջնորդ ու

⁴⁷ Մատենադարան, ձեռ. N1568, թերթ 8թ:

⁴⁸ Նույն տեղում, թերթ 129ա:

բարեխոս է Աստծո և մարդկանց միջև, և հետագա սերունդներն այսպես են ընկալել և ընկալում Գրիգոր Նարեկացու «Մատեանը»:

«Զմաղթանս սորա, զոր արծարծեալ ի հուր սրտիս, խնդրեմ քեզ, Քրիստոս, ընկալ բարեխաւսութեամբ սուրբ Հաւրս Հաշտութեամբ, եւ քեզ փա՛ռք յաւիտեանս. ամէն»⁴⁹:

Հստ էության՝ Գրիգոր Նարեկացու երկրային կյանքն ավարտվում է իր կյանքի գործի՝ «Մատեան ողբերգութեան» երկի ավարտից հետո, թեպետ որևէ ստույգ հիշատակություն այդ մասին չկա:

*

Գրիգոր Նարեկացու կյանքը, ինչպես վկայում են փաստերը, չի անցել վանական ներանձնության և մեկուսացման մեջ, առանց կենդանի աշխարհիկ շփումների: Ինչպես դարի շատ ազատախոհ մտածողներ ու գործիչներ, նաև հոգեստ խոր տագնապներ ու ցնցումներ է ապրել: Դարին՝ հոգեստ զարթոնքին և քաղաքական-տնտեսական բուռն վերելքին զուգահեռ, Հատուկ էր նաև խոր հակասությունների և հակամարտության ոգին: Եկեղեցական գործիչներն ու նշանավոր վարդապետները ստիպված էին պայքար մղել մի կողմից բյուզանդական եկեղեցու նվաճողական քաղաքականության, մյուս կողմից՝ թոնդրակյանների հզոր աղանդավորական շարժման դեմ, որն ալեկոծել էր ողջ Հայաստանը⁵⁰:

Այն թափանցել էր Հասարակության բոլոր խավերի

⁴⁹ Նույն տեղում, թերթ 129թ:

⁵⁰Տե՛ս Հ. Թամրապյան, Գիրք Բ, էջ 10-19:

մեջ. նրան էին հարում իշխանավորներ, եկեղեցական թեմեր ու վանքեր: Այն իր անդրադարձն է ունեցել նաև Նարեկյան վանքի մատենագրության մեջ, որի ներկայացուցիչները փորձում էին հակազդել այդ շարժմանը: Վանքի ուսուցչապետը՝ Անանիա Նարեկացին, գրում է իր նշանավոր «Ընդդիմ թոնդրակեցոց» հակաճառական երկը⁵¹: Թոնդրակյաններին հակազդելու նպատակով են գրվել «Մատեանի» որոշ գլուխներ, օրինակ՝ մեռոնին, կոչնակին, եկեղեցուն նվիրված գլուխները, «Գանձտետրի» որոշ գանձեր, ինչպես նաև Կճավա վանքի վանահորն ուղղված թուղթը: Դա չի խանգարել, սակայն, որ բարդ և հակասական այդ ժամանակաշրջանում դպրոցի ներկայացուցիչները մեղադրվեն աղանդավորության մեջ և ենթարկվեն հալածանքների: Դրա պատճառները պետք է փնտրել նրանց միստիկ աշխարհայացքի, ազատախոհության և եկեղեցական ծիսակարգի բարենորոգչության փորձերի մեջ⁵²:

Գրիգոր Նարեկացու հոր՝ Խոսրով Անձեւացու բանադրությունը 960-ական թվականներին, ուսուցչի՝ Անանիա Նարեկացու՝ աղանդավորության մեջ մեղադրվելը կյանքի վերջին տարիներին և Կճավա վանքում մենանալը, նաև իր համարձակ բարենորոգչությունները եկեղեցական ծիսակարգի և ձեռնարկների մեջ չէին կարող ծանր մթնոլորտ չստեղծել բանաստեղծի շուրջ և չխռովել նրա հուզաշխարհը: Հստ պահպանված ավանդությունների՝ նա ևս մեղադրվել է աղանդավորության մեջ:

⁵¹ Տե՛ս Հ. Թամրապյան, Գիրք Բ, էջ 157-182:

⁵² Տե՛ս Հ. Թամրապյան, Գիրք Բ, էջ 47-51:

Հավանաբար, այս տագնապալի հոգեվիճակի և իրադրության արդյունքում է ծնվել ինչպես Անանիա Նարեկացու «Գիր խոստովանութեան»-ը, որը նզովք է հերձվածողների հասցեին, այնպես էլ Գրիգոր Նարեկացու՝ Կճավավանքի վանահորն ուղղված թուղթը՝ գրված ուսուցչի մահից հետո. թուղթ, որում նա փորձում է հերքել իր և իր ուսուցչի հասցեին անհարկի մեղադրանքները⁵³: Դրանով նա իր ուսուցչին կարծես տարանջատում է Կճավավանքի իր համախոհներից, որոնց հետ կապված էր նրա կյանքի վերջին՝ ողբերգական շրջանը: Թուղթը գրվել է, հավանաբար, 990-ական թվականների երկրորդ կեսին: Դրանից պարզ վում է, որ հոչակավոր Կճավավանքի վանականները հանդուրժող վերաբերմունք ունեին թոնդրակյանների նկատմամբ, և նրանցից ոմանք, ինչպես, օրինակ, Մուշեղ գիտնականը, հարում էին թոնդրակյաններին: Գրիգոր Նարեկացու այս թուղթը թոնդրակյանների մասին տեղեկություններ տվող եղակի հուշարձաններից է: Այս թղթից ակնհայտ է դառնում, որ թոնդրակյանները մերժում էին ձեռնադրության, հաղորդության, մկրտության, խաչի, պսակի, ծնրադրության խորհուրդները, իրենք էին ընտրում քահանաներին և իրենց առաջնորդներին պաշտում էին իրենց

⁵³ Թուղթը մեզ է հասել միակ ձեռագրով (1298թ.): Ամբողջական խորագիրն է՝ «Թուղթ ամենաշնորհ վարդապետին Գրիգորի Նարեկացւոյ, զոր գրեաց ի հոյակապ և յականաւոր ուխտն Կճաւայ վասն կարծեացն անիծելոց Թոնդրակեանց Յանեսի և Յամբեսի, որ եկն զգեստիւ ոչխարաց և ի ներքոյ գայլ յափշտակող, որ և ի պտղոյն ծանուցաւ ամենից, զոր լուեալ սուրբ վարդապետին գրեաց սակա ազատութեան ի չարկարծեաց» (տե՛ս «Գիրք թղթոց» Թիֆլիս, 1901, էջ 498-502, նաև՝ ՄՀ ԺԲ, էջ 1087-1089):

Քրիստոսի: Նրանք ազատ սեր էին քարոզում, քանի որ «Աստված ինքը սեր է», և միավորվում էին սիրով, այլ ոչ պսակով: Առաջին անգամ Գրիգոր Նարեկացին է հիշատակում նաև նրանց գրվածքների մասին, որոնք շարժել են Կճավա վանքի վանահոր և նրանց համախոհների զարմանքն անգամ. «Այլ եթէ ընդ գրաբանութիւն նոցին զարմանայք, գիտեմք եւ զսատանայ սաղմոս ասացեալ յաւր փորձութեան Ամենափրկչին»⁵⁴:

Թղթի մեջ Գրիգոր Նարեկացին երեք անգամ հիշատակում է իր ուսուցչին՝ Անանիա վարդապետին և շեշտում է թոնդրակյանների դեմ գրած նրա «Հնդկէմ թոնդրակեցւոց» հակածառական-դավանաբանական երկի նշանակությունը՝ հորդորելով Կճավա վանքի վանականներին ընդօրինակել, ուսանել և ուսուցանել, և ոչ թե գրաբանություն համարել այն:

«Եւ թէ յո՞ր գիրս հրամայէ նզովել զոք, եւ զերջանիկ տեառն մերոյ զԱնանիայի զզարմանագիծ հակածառութիւն նամակին՝ զրաբանականս ասել կամ անպատեհս, կամ ոչ Աստուծով խաւսեցեալ»⁵⁵:

Քիչ հավանական է, որ Կճավա վանքի գիտական շրջանակներում, որտեղ այդ տարիններին կենցաղավարել էր Անանիա Նարեկացին, թոնդրակյանների դեմ գրված նրա գործը զրաբանություն համարվեր, քանի որ նա մեծ փիլիսոփայի համբավ ուներ, և վանականներին քաջ հայտնի էր նրա՝ թոնդրակեցիության մեջ մեղադրվելու փաստը, մանավանդ՝ «Հնդկէմ թոնդրակեցւոց» գործի պահպանված

⁵⁴ Նույն տեղում, էջ 501, ՄՀ ԺԲ, էջ 1089:

⁵⁵ Նույն տեղում, էջ 498, ՄՀ ԺԲ, էջ 1087:

Հատվածը վկայում է, որ դրան հատուկ է ոչ թե ժխտման, եղծի կիրքը, ինչպես նրա «Գիր խոստովանութեան» երկում է, այլ տրամաբանական-վերլուծական ոգին, փիլիսոփայական տարերքը⁵⁶:

Գրիգոր Նարեկացին իր ուսուցչին անվանում է Աստծու ջատագով, իմաստուն նախամարտիկ, որն իր երկով տապալել է թոնդրակյանների ուսմունքը. «Արդ՝ զայսոսիկ հաւրեղբայրն մեր եւ վարդապետ, մեծաւ քննութեամբ խնդիրս արարեալ իբրեւ զԱստուծոյ ջատագով, եւ անդստին իբր զիմաստուն նախամարտիկ տապալեաց զառասպելաբան հայՀոյութիւն անաւրինելոցն թոնդրակեանցն, թէ ոչ մեք զանուն պղծոցն ի համբաւոց ի սակաւ ինչ լրոյ դիմէաք»⁵⁷:

Եվ, վերջապես, Թղթի վերջում Գրիգոր Նարեկացին խնդրում, Հորդորում է Կճավա վանքի վանահորն ընդօրինակել և տարածել Անանիա Նարեկացու՝ «Հերձվածողների դեմ գրված մատյանը». «Եւ արդ, տեր հայր. մի՛ դժուարիք ընդ բանս գրոյդ եւ զանխարդախ սէրդ ատելութիւն վարկանիք, զի սէրն Քրիստոսի ստիպէ զմեզ յայսոսիկ, եւ կամիմք զձեզ անբիծս լինել, եւ զհաւրն Անանիայի զլիագիտութեամբ զմատեանսն, որ ընդդէմ հերձուածողացն հոգս տարեալ գրեաց, զոր եւ դուք գրել հրամայեցէք»⁵⁸:

Այս հատվածն, ահա, ցույց է տալիս, որ երկու վանքերը սերտ հոգեոր կապեր էին պահպանում, որ դարձյալ առնչվում է Անանիա Նարեկացու անվան հետ: Թուղթը վկայում է նաև Գրիգոր Նարեկացու՝ որպես եկեղեցական

⁵⁶Տե՛ս Հ. Թամբաղյան, Գիրք Բ, էջ 178-179:

⁵⁷«Գիրք թղթոց», էջ 500, Մշ ԺԲ, էջ 1088:

⁵⁸Նույն տեղում, էջ 502, Մշ ԺԲ, էջ 1089:

գործչի, մեծ հեղինակության մասին՝ առավել կամ առնվազն համապատիվ կճափա վանքի վանահորը, որին ուղղված է, քանի որ պարունակում է խրատական-ուսուցողական շեշտեր:

Գրիգոր Նարեկացին, կարծես, տարանջատում, պատնեշում է Նարեկյան դպրոցն աղանդավորական ազդեցությունների ոլորտում լինելու մեղադրանքներից: Հիշենք Անանիա Նարեկացու խոստովանագրի ընդարձակ խորագիրը. «Անանիայ Նարեկացւոյ Գիր խոստովանութեան յաղագս սուտ կարծեացն որ վասն նորա»⁵⁹: Նման արտահայտություն կա նաև կճափա վանքի վանահորն ուղղված թղթի ծավալուն խորագրում, որ դարձյալ հեղինակային չէ և ուր կարծես ակնարկվում է նաև Գրիգոր Նարեկացու հանդեպ նման մեղադրանքների գոյության փաստը. «Թուղթ ամենաշնորհ վարդապետին Գրիգորի Նարեկացւոյ, զոր գրեացի հոյակապ եւ յականաւոր ուխտն կճաւայ, վասն կարծեացն անիծելոց թոն[դ]րակեանց... զոր լուեալ սուրբ վարդապետին գրեաց սակա ազատութեան ի չար կարծեացն»⁶⁰:

Ինչպես տեսնում ենք, թոնդրակյան շարժումը չի շրջանցել Նարեկյան դպրոցը՝ մեծ հուզումներ ու ներքին խոռվքներ առաջացնելով նրանում, բանսարկության, հակամարտության, անհիմն մեղադրանքների պատճառ դառնալով նրա գլխավոր ներկայացուցիչների հանդեպ, հաճախ խաթարելով դպրոցի զարդացման բնականոն ընթացքը:

⁵⁹ Այս թուղթը XIXդ. վերջին հայտնաբերել և հրատարակել է Գ. ՏերՄկրտչյանը (տե՛ս Գ. ՏերՄկրտչյան, Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան, 1979, էջ 224-234, նաեւ ՄՀ Ժ, էջ 649-657):

⁶⁰ «Գիրք թղթոց», ՄՀ ԺԲ, էջ 1087:

Դպրոցի ներկայացուցիչները ստիպված էին հերքել այդ մեղադրանքները՝ նզովելով թոնդրակյաններին։ Այս ամենը ծանր հետք է թողել նրանց կյանքի և ստեղծագործության վրա, և այդ հետքերը նկատելի են ինչպես նշված երկերում, այնպես էլ Գրիգոր Նարեկացու «Մատեանի» ռուղ գլուխներում։

Գրիգոր Նարեկացու՝ աղանդավորության մեջ մեղադրվելու մասին, ինչպես նշել ենք, ակնարկվում է նաև նրա վարքի՝ Գրիգոր Ծերենցի խմբագրած տարբերակում և նրա մասին պահպանված ավանդություններում։

*

Կարեոր նշանակություն ունեն, իբրև կենսագրական փաստեր, Գրիգոր Նարեկացու ստեղծագործության նախահիմքերի ձևավորման խնդիրները։ Եվ այստեղ ընդգծվում է նրա հոր՝ Խոսրով Անձեւացու (որի մեկնությունը նա ընդօրինակել է), ուսուցչի՝ Անանիա Նարեկացու և եղբոր՝ Հովհաննես Նարեկացու դերը։ Վերջին երկուսը կարեւոր դեր են կատարել Գրիգոր Նարեկացու «Մատեանի» ստեղծման գործում։ «Մատեանը» ստեղծվել է Հովհաննես Նարեկացու գործակցությամբ և Անանիա Նարեկացու խրատներով ու հորդորներով, և, ըստ մի պահպանված տեղեկության, ընծայվել է վերջինիս։

Ստեղծագործական սերտ առնչությունները, գրական նախասիրությունները, ուսուցիչ-աշակերտ հարաբերությունները, որոնք միջնադարում որոշակի սահմանված կանոնակարգ, էթիկետ էին ենթադրում, և երկարամյա համատեղ կենցաղավարությունը հուշում են Անանիա Նարեկացու

առնչությունը Գրիգոր Նարեկացու ոչ միայն ուսումնառության, այլև ստեղծագործական հասունացման շրջանին, բուն երկերի հղացման ընթացքին: Այս հարցին մենք անդրադարձել ենք ուսումնասիրության նախորդ հատորների համապատասխան բաժիններում⁶¹:

«Մատեանի» խորագրում արտահայտված է Անանիա Նարեկացու «Խրատագրքի» և «Յաղագս զղման և արտասուաց» երկի խտացված բովանդակությունը: Գրիգոր Նարեկացին իր վարդապետի հետ է կապում «Մատեանի» ստեղծման գաղափարը, որն իրեն ուսուցանել է խոստովանության արվեստը⁶²: Իր հերթին Անանիա Նարեկացու «Յաղագս զղման և արտասուաց» երկի նախադրություն-ընծայականից և բովանդակության մեջ տեղ գտած հեղինակային դիմումներից պարզվում է, որ այն ուղղված է իր աշակերտին՝ Գրիգոր Նարեկացուն, և որ վերջինս սրա պատվիրատուն է⁶³: Այս երկով, որ «Մատեանի» տեսական նախահիմքն է և նախագաղափարը, Անանիա Նարեկացին ուսուցանում է իր աշակերտին բազում մարդկանցից ծածուկ բանաստեղծական արվեստի գաղտնիքները, որ նա

⁶¹Տե՛ս Հ. Թամրապյան, Գիրք Բ, «Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» երկի խորագրի հարցը», էջ 297-305, Գիրք Ա, «Անանիա վարդապետի անունով հայտնի խրատները նոր փաստերի լույսի տակ», էջ 205-212: Տե՛ս նաև՝ Հ. Թամրապյան, Նարեկյան դպրոցը, էջ 94-105: Առհասարակ Անանիա Նարեկացու ստեղծած դպրոցի, ծավալած մանկավարժական գործունեության մասին վկայում է նրա աշակերտներից Ուխտանես Պատմիչի «Հայոց պատմության» ընծայական-առաջաբանը, ըստ որի՝ Ուխտանեսն իր «Պատմությունը» ևս գրել է Անանիա Նարեկացու պատվերով՝ պատմագրության արվեստի նրա մշակած սկզբունքներով (Գիրք Բ, էջ 129-132, Գիրք Ա, էջ բ211-212):

⁶²Տե՛ս Հ. Թամրապյան, Գիրք Ա, էջ 206-207, Գիրք Բ, էջ 300-302:

⁶³Տե՛ս Հ. Թամրապյան, Գիրք Ա, էջ 195-205:

անվանում է «զղջման և արտասուաց արվեստ», «ընտրության արվեստ», «ներքին մարդու արվեստ»: Այս արվեստի հմտություններն ու նրբությունները ի հայտ են գալիս «Մատեան»-ի ներքին կառուցյում և բովանդակության մեջ⁶⁴: Խրատներում և բանաստեղծություններում, որտեղ գուգորդված են տեսությունն ու ստեղծագործական փորձը, Անանիա Նարեկացին խոսում է ներանձնական աղոթքների ու բանաստեղծական մենախոսությունների կառուցման արվեստի, նրանցում անձնական սկզբի ու փորձի բացարձակացման, ստեղծագործական ազատության սկզբունքների մասին, որոնք ուղեկցվում են այս սկզբունքներով ստեղծված բանաստեղծական բացառիկ նմուշներով. սրանք ևս նախօրինակ են հանդիսացել Գրիգոր Նարեկացու համար իր «Մատեանը» ստեղծելիս⁶⁵:

Հստ վերոնշյալ փաստերի՝ «Մատեանը» կառուցվել է Հեղինակի կյանքի վերջին տարիներին, բայց մտահղացվել է դեռևս ուսուցչի կենդանության օրոք, արարվել նրա ողջ ստեղծագործական կյանքի ընթացքում: Սա ցույց է տալիս ոչ միայն դեռ վաղ շրջանի գործերում նշմարվող «Մատեանի» ստեղծման ծրագիրն ու նախագաղափարը, այլ նաև «Մատեանի» կառուցվածքի, ենթաշերտերի ուսումնասիրությունը, ուր միեղեն հղացքի մեջ իրար են միահյուսված հոգեսոր գրականության տարբեր ժանրեր. այստեղ կարելի է հանդիպել աղոթքի, ներքին մենախոսության, ներ-

⁶⁴Տե՛ս Հ. Թամրապյան, Գիրք Ա, էջ 201-202, Գիրք Բ, էջ 297-305:

⁶⁵Տե՛ս Հ. Թամրապյան Գիրք Ա, էջ 200, Հավելյալ փաստերի՝ Հակոբ Պատկանցի հաղորդած տվյալների մասին տե՛ս Հ. Թամրապյան, Գիրք Բ, էջ 134-138, Գիրք Ա, էջ 208-210: Վարդապետ-աշակերտ աղերսների մասին տե՛ս Գիրք Ա, էջ 195-205:

բողի, մեկնության, ստուգաբանության, խրատի, ժողովրդական բանահյուսության, նույնիսկ առակի նմուշների⁶⁶: Այս առումով «Մատեանը» բաց կառուցվածք է, և բանաստեղծական հզոր տարերքն այնտեղ պայմանականություններ ու կաղապարներ չի ընդունում⁶⁷:

*

Անանիա և Գրիգոր Նարեկացիների ազգակցական և ստեղծագործական կապերի արձագանքները կան նաև Գրիգոր Նարեկացու մասին պահպանված միջնադարյան ավանդություններից մեկում, որն ամբողջական շարքի հետ սերում է գեռևս XIII դարում գրառված և գեղարվեատական մշակման ենթարկված աղբյուրից⁶⁸: Հատկանշական է, որ այդ առնչությունները կենտրոնանում են դարձյալ Անանիա Նարեկացու «Յաղագս զղման և արտասուաց» խրատի վրա: Ըստ այդ ավանդության, Գրիգոր Նարեկացին գաղտնի գնում է Բգնունյաց՝ Արծկեի Ներքին Գազախ գյուղը, ուր մի աղքատ մարդու մոտ երեք տարի հոտաղություն անելով՝ ազատում է նրան իր պարտքերից: Անանիա Նարեկացին երեք տարի փնտրում է նրան.

⁶⁶ Տե՛ս ստորև:

⁶⁷ Տե՛ս Հ. Թամրապյան, Գիրք Բ, էջ 305:

⁶⁸ Տե՛ս Ա.Ղանալանյան, Ավանդապատում, 774, Գրիգոր Նարեկացի, ԺԳ, էջ 312-313: Ավանդագրույցը քաղված է Մատենադարանի N 9861 ձեռագրից (1837թ., 5թ-7ա) և նրանում գետեղված Գրիգոր Նարեկացու «Վարք և պատմութիւն» զրույցների և սքանչելագործությունների շարքի մի դրվագ է ներկայացնում: Այս ավանդապատումի գաղափար օրինակը գալիս է XIII դարերից, որն իր ուսումնասիրության մեջ ապացուցում է հմուտ նարեկացիագետ Պ. Խաչատրյանը (տե՛ս «Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը», էջ 182-189):

«Եւ Անանիայ քեռին իւր լալով կտուտէր Գրիգոր յամենայն տեղիս: Եւ շրջելով գնացեալ եհաս ի գիւղն Գազոխ. և յերեկոյին քարոզ ասաց ժողովրդեանն. և զբնաբանն եղեր զքերականն, և զհետ քերականի ոճին ոչ գնաց, այլ ասէր վասն խոստովանութեան և զղջման: Եւ յաւարտել քարոզին ելին ի դուրս և մարդիկքն ասեն թէ՝ լաւ քարոզ ասաց. իսկ Գրիգոր ասէ. Բարի էր, բայց ըստ առաջին քերականին որ եղ զբնաբանն ոչ գնաց: Եւ այն մարդն որ մօտ մշակին էր, գնաց առ վարդապետն և ասէ. Ճշմարիտ է, որ հրամանքդ քարոզ ասացիր, զքերականն բնաբան դրիր և ի հետ նորա ոչ գնացեր: Եւ նա հիացեալ զարմացաւ, թէ զայս բանս ով իմացաւ: Եւ նա ասէ. Մշակ իմ: Եւ նա ասէ. Քո մշակն ուստի⁶⁹ իցէ: Եւ ասէ. Օտար է և ոչ ճանաչեմ: Եւ ասէ. Զի՞նչ անուն է նրա: Եւ նա ասէ. Գրիգոր: Եւ այնու իմացաւ, թէ իւր քեռ որդին էր: Եւ ասէ. Ցոյց ինձ գնա: Եւ նա տարեալ եցոյց նմա: Եւ տեսեալ զնա ծանեաւ և լալով համբուրեաց զնա և առեալ տարաւ յեկեղեցին և ուրախանայր ի վերայ նորա»⁶⁹:

Հետագա ուսումնասիրողն ավանդապատումի այս հատվածի մասին իրավամբ նշում է. «Այստեղ վարքի հեղինակը քերական ասելով նկատի ունի Դիոնիսիոս Թրակացուն և կամ էլ նրա հայ մեկնիչներից մեկին, իսկ խոստովանության և զղջման մասին քարոզով ակնարկվում է Անանիա Նարեկացու «Վասն զղջման և արտասուաց» խրատը»⁷⁰:

⁶⁹ Նույն տեղում:

⁷⁰ Տե՛ս Վ. Դերիլյան, Նարեկյան Էջեր Սուրբ Էջմիածնի ձեռագրերից, Ս. Էջմիածնին, 2003, էջ 27-28:

*

Մի առանձին խնդիր է Գրիգոր Նարեկացու հետ իր ավագ եղբոր՝ Հովհաննես Նարեկացու համագործակցությունը «Մատեանի» ստեղծման գործում, որի մասին Գրիգորը գրում է «Մատեանի» հանրահայտ հիշատակարանում:

Հովհաննես Նարեկացին Նարեկյան դպրոցի նշանավոր ներկայացուցիչներից էր, այնքան հեղինակավոր, որ Անանիա Նարեկացու մահից հետո նրան է վստահվում այդ մեծ դպրոցի առաջնորդությունը: Նա հիշատակվում է նաև իրրե մեծ գիտնական-փիլիսոփա. սա նշանակում է, որ Հովհաննեսն ունեցել է նույնատիպ երկեր, որոնցից ոչինչ չի պահպանվել: Նրա մասին սակավաթիվ տեղեկությունները քաղված են Գրիգոր Նարեկացու երկու հիշատակարաններից, որոնցում նա բարձրագույն գնահատանքի է արժանացնում այս նշանավոր գործչին: Առաջինը հայտնի եռագրությանը կցված հիշատակարանն է՝ ուղղված պատվիրատուին՝ Ստեփանոս Մոկաց եպիսկոպոսին. «Ես՝ Գրիգոր՝ յետին վարդապետաց եւ կրսեր բանասիրաց. որդի դստեր եղբաւը հաւը Անանիայ հոգեզարդ եւ հմտավարժ փիլիսոփայի, եւ ըստ վարուց մաքրութեան կրաւնից յոյժ հռչակելոյ... եւ յիշատակեացես զանուն իմ զտրուպի ի գաւիթ սենեկի անձկութեան սրտիդ... զիս եւ զեղբայր իմ զանդրանիկ զթովաննէս՝ ցանկալի անուն, հանճարեղ գիտական եւ իմաստասէր առաւել, քան զիս... եւ յամենայնի կեցցեն մեր անձինք ընդ քեզ, որպես եւ քոյդ Հոգի միացեալ ընդ մեզ...»⁷¹:

Երկրորդը «Մատեանի» հիշատակարանն է, որում խոս-

⁷¹ Գրիգոր Նարեկացի, «Ներբողի Սուրբ Կոյսն», ՄՀ ԺԲ, էջ 963::

վում է այս երկի ստեղծմանը Հովհաննեսի մասնակցության մասին. «Ես՝ Գրիգոր կրաւնաւոր քահանայ, յետին բանահիւսաց եւ կրտսեր վարժապետաց, գործակցութեամբ եղբաւը իմոյ ընտրելոյ՝ Յովհաննէս կոչեցելոյ, Նարեկայ մեծափառ եւ բարձրապատիւ ուխտի վանականի, որք իբրեւ զմի մարմին բանական ի յերկուց առ մի կերպարան շինելոյ դիմաց կենցաղակցելով, ոչ միայն հարազատք, այլ եւ միաշունչք, միակրաւնք, համապատիւք, զուգահաւանք, ի քանից աչաց առ մի եւ նոյն շաւիդ խորհրդոյ տեսեալք»⁷²:

Համագործակցության մասին այս հիշատակությունը հիմք է տվել «Մատեանի» նշանավոր մեկնաբան Գ. Ավետիքյանին ենթադրելու, որ որոշ դեպքերում Հովհաննեսը համահեղինակ է հանդիսացել՝ հորինելով «Մատեանի» մի քանի հատվածներ (օրինակ՝ Իջ. 78-85 [Դ.] տողերը), որոնք գրված են ոչ թե հեղինակի, այլ ընթերցողների անունից՝ իբրև բանաստեղծին երանելիների պսակին և անարատների դասին արժանացնելու աղերս՝⁷³:

Ահա «Մատեանի» նշված հատվածը.

Նոյն ինքն, որ զայս բան տպաւորեաց,
ընդ երջանկացն պսակեսցի,
Ակնարկելով քո ողորմութեան՝
անարատիցն հաղորդեսցի,
Վասն զենման Աստուծոյ Բանիդ՝
բարեգործեալ քեւ կենդանացի,

⁷² Գրիգոր Նարեկացի, «Մատեան ողբերգութեան», ՄՀ ԺԲ, էջ 605:

⁷³ Գ. Ավետիքյան, Նարեկլուծ, էջ 125, ծնթ. 24: Այս մասին տե՛ս Պ. Խաչատրյան, Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը, էջ 106-107:

Աւրհնութիւն գովեալ քո շրթանց՝
ի գլուխ բաշխողի այսր մատենի,
Հաստատեսցի ընձականութիւն
սողոմոնեան բանիս առակի,
Նկարագրեա՛ Հոգւով քո, բարձրեալ,
ի նորոգումն անեղծանելի,
Զի դու միայն ես երկայնամիտ, ներող,
Եւ քեզ փառք յամենայնի:
Ամէն:

Այս հատվածը հիշեցնում է «Մատեանում» տեղ գտած
Անանիա Նարեկացուն նվիրված մաղթանք-հիշատակարա-
նը (իշ. Զ)⁷⁴: Մեր կարծիքով, մենք այստեղ գործ ունենք
գրական հնարանքի հետ: Գրիգոր Նարեկացու ակնարկն իր
եղբոր հեղինակային մասնակցության մասին չէ: Հավանա-
բար, ինչպես Անանիա Նարեկացին, Հովհաննես Նարեկա-
ցին ևս «Մատեան ողբերգութեան» երկն ստեղծելիս Գրի-
գորի աջակիցն ու խորհրդատուն է եղել և, անշուշտ, մաս-
նակցել է նրա ամբողջական կառույցի ձևավորման, մշակ-
ման և խմբագրման աշխատանքներին, գիտական-փիլիսո-
փայական հենքի ստեղծման՝ իբրև «գիտնական և հանճա-
րեղ իմաստասեր»: Այս հարցը, սակայն, լրացուցիչ փաս-
տարկման կարիք ունի:

*

Սրանք են հիմնականում, Գրիգոր Նարեկացու կյանքի և գիտական-գրական միջավայրի մասին պահպանված հին և նորաշայտ տվյալները:

⁷⁴ *Տե՛ս Հ. Թամրապյան, Գիրլը Բ, էջ 302-304:*

Սակայն միստիկ բանաստեղծի կենսագրությունը պետք է փնտրել ոչ միայն նրա արտաքին կենսագրական տվյալների, դեպքերի և իրադարձությունների շարքի մեջ, այլև ներքին հոգեոր ընթացքի, ստեղծագործական հղացք-ների մեջ։ Այն ունի «ներքին մարդու» պայծառացման ու վերառաքման, հոգեոր մաքրագործման ու աստվածացման իր սրբագործված հանգրվանները, որը հոգեոր ճանապարհ և գերագույն նպատակ էր միստիկ բանաստեղծի և նորապլատոնական փիլիսոփայի համար։ Հստ Նարեկյան դպրոցի միստիկ աստվածաբանության՝ մարդու կյանքն ու կենսագրությունը կայանում են երկու տիրույթում՝ ներքին մարդու և արտաքին մարդու, և գերագույն նշանակություն է տրվում մարդու հոգեոր ընթացքին, հոգու պատմությանը, որ գոյանում էր ներքին մարդու ծիրում։ այնտեղ էր կայանում մարդու կենդանի առնչակցությունն Աստծո հետ։ Բանաստեղծն արարում և ինքնարարվում է այդ տիրույթում՝ աստվածային ներշնչանքով ու ներգործությամբ, որ հասցնում են միստիկին պայծառատեսության ու լուսավորում նրա կյանքի ուղին։ Էքստատիկ արարման այս մշտատես ընթացքը ևս ունի իր բռնկումները և կիզակետերը, որոնք բանաստեղծի համար դառնում են կենսագրական գերագույն փաստեր։ Այդպիսիք են բանաստեղծությունների գարմանահրաշ հղացումները, որոնց մասին բանաստեղծը խոսում է իր տաղերում, այդպիսիք են նրա խորհրդավոր տեսիլքները, որոնց մասին բանաստեղծը հիշատակում է իր «Մատեանում»։ Այս բոլորը միահյուսվում և դառնում են ստեղծագործական կենսագրություն, որի խտացումներն են

նրա մեծ կտավի գործերը՝ նշված եռագրությունը, «Գանձտետրը», «Մատեան ողբերգութեան» երկը, որոնք ամբողջանում և ավարտուն տեսքի են հասցվում երկարատև աշխատանքով, հոգեմտավոր լարմամբ և վարժանքով, և այստեղ ներքին և արտաքին մարդը գործում են համատեղ և ներդաշն⁷⁵:

* *

Գրիգոր Նարեկացու ողջ ստեղծագործությունը պետք է դիտարկել իբրև ամբողջական հղացք: Եվ, իրոք, նրա ստեղծագործության ներքին աղերսները քննելիս մենք նկատում ենք նրանց մեջ եղած ներքին օրգանական կապը, որը նրա ստեղծագործությունը վերածում է պատճառաշհետեանքային մի ամբողջական կառույցի: Դա գալիս է բանաստեղծական խոսքի նրա ըմբռնումից. նա բանաստեղծությունն ընկալում է իբրև արարչագործ տարերք, իբրև բանական մարդու ճամփորդություն էությունների վերին աշխարհում: Այն հավասարազոր է աստվածային ներշնչանքին ու ներգործությանը, որ բանաստեղծական պատկերահոսքերի մեջ վերածվում է միստիկ էքստազի, հիացումի, սիրազեղության՝ ինչպես տաղերում, և բանական խոռվքի ու արարման խոլ տարերքի՝ ինչպես «Մատեանում», որին հետևում է հոգեոր վերառաքումն ու մաքրագործումը անիմանալիի ոլորտներում:

Կարծես ստեղծագործական այս մղումներին են ենթարկվում նրա ողջ հոգեոր ընթացքն ու կենսապատումը.

⁷⁵ Տե՛ս ստորև:

ըստ իր միստիկ տեսության՝ նա այսպես է պատկերացնում բանական, աստվածակերպ մարդու հոգևոր ընթացքը՝ «արտաքին մարդուց» դեպի «ներքին մարդ» և «ներքին մարդուց» դեպի աստվածակերպություն՝ աստվածացում՝ ըստ մարդկային կարողությունների։ Այսպես է նա ստեղծագործ ուժով թափանցում վերին՝ աստվածային ոլորտները՝ այդ կայաններում փորձելով մաքրագործել իր անձը և մարդկային հոգևոր պատմության ողբերգական շղթան։ Նա միաժամանակ արարում է այդ պատմությունը՝ հոգևոր հեռանկարի խորքում ներթափանցելով գալիք սերունդների հոգևոր կենսագրության մեջ, հավերժական և մշտահոլով այդ հղացումներում հարակայելու հավատով։

Իր ստեղծագործության ծիրում նա խորացրել ու բացարձակացրել է նորպլատոնականներ Դավիթ Անհաղթի, Դիոնիսիոս Արեոպագացուն վերագրվող երկերի հեղինակի, նախորդ շրջանի եկեղեցու հայրերի և միստիկ աստվածաբանների տեսություններ՝ թափանցելով ստեղծաբանության բոլորովին նոր, անիմանալի ոլորտներ։ Հոգևոր վերառաքման, «բանական ճամփորդության» այդ ծիրը, որով նա անցնում է, հետևելով Դիօնիսիոսին, հղի է անվերջ գյուտերով և ներկայանում է իրքեւ ոգու արարման պատմություն։

Այս խորքով դիտարկելու դեպքում տեսանելի են ստեղծաբանության՝ իբրև ներքին ամբողջական հղացքի ձևավորման ընթացքը, շարժումը, աստիճանական անցումներն ու զարգացումները Գրիգոր Նարեկացու առաջին գործերից մինչև նրա գլուխգործոցները՝ «Գանձտետրը» և

Մատեան ողբերգութեան» երկը: Նրա «Մատեանում» գեղարվեստական մարմնավորում են ստացել «Բան խրատու վասն ուղիղ հաւատոյ եւ մաքուր վարուց առաքինութեան» գործում արծարծված գաղափարները բանական մարդու կատարելագործման և աստվածանմանության մասին: Մարդն իր բանական-խոհական տարերքով, արարչագործ ոգով է նմանվում վերնայիններին՝ իբրև «Նախատիպ պատկերի լուսանկար գեղեցկություն»⁷⁶, և «գաղափարում իր հրաշազարդ նմանությունը նախատիպին».

«զբանական իւր ոգի, որ է պատկեր Աստուծոյ, իւրական առաքինութեամբքն զարդարեացէ. որով յառաջինն փայլեացէ լուսատիպ կերպարան եւ զնախատպին հրաշազարդապէս յինքեան գաղափարեացէ նմանութիւն»⁷⁷:

Ասվածը վերաբերում է նաև «Կարգ ու կանոն աղաւթից» խրատին, որն, ինչպես նշել ենք, մեր կարծիքով, պատկանում է Գրիգոր Նարեկացու գրչին⁷⁸: Նրանում քննվում են միստիկ հոգեւոր կենցաղավարության, ներքին և արտաքին մարդու, առանձնական աղոթքի տեսության հարցեր, և կարեւոր տեղ է հատկացվում անձնական փորձին: Այս խրատները գրվել են, հավանաբար, 970-980-ական թվականներին՝ տեսական նախահիմք հանդիսանալով նրա բանաստեղծական քերթվածների և «Մատեանի» համար:

Գրիգոր Նարեկացու տաղերում նկատելի է «Երգ երգոցի» մեկնության և ներբողների պոետիկայի աղուցությու-

⁷⁶ Գրիգոր Նարեկացի, «Բան խրատու վասն ուղիղ հաւատոյ եւ մաքուր վարուց առաքինութեան», ՄՀ ԺԲ, Էջ 1081:

⁷⁷ Գրիգոր Նարեկացի, «Վասն ուղիղ հաւատոյ», ՄՀ ԺԲ, Էջ 1047:

⁷⁸ Տե՛ս Հ. Թամրազյան, Գիրք Ա, Էջ 276-291:

նը: Սակայն մենք ուզում ենք կանգ առնել հատկապես «Մատեանի» հղացման պատմության վրա, որում խտացված է Գրիգոր Նարեկացու ողջ ստեղծագործությունը: Այն եղել է Գրիգոր Նարեկացու կյանքի գործը, որի վրա, ըստ էության, նա աշխատել է իր ստեղծագործական կենսագործության ողջ ընթացքում, թեև ամբողջացրել ու ավարտին է հասցրել կյանքի վերջին տարիներին:

«Մատեանի» ստեղծման նախագաղափարը կա արդեն «Ապարանից Խաչի պատմության» և նրան կից Ս. Խաչին և Աստվածածնին նվիրված ներբողներում, ինչպես նաև մյուս ներբողներում:

Գրիգոր Նարեկացին իր եռերգության հղացման և կառուցվածքի մասին գրում է.

«Եւ արդ զգիր ընթացից պատմութեան բանիս աստուստ կնքեսցուք. Եւ փոխատրեալ այլաբանեսցուք ի զանազան բարեբաստութիւնս ներբողական արհեստահիւսակ առասացութեամբ, պատեհ պատշաճողութեամբ, սկզբնաւորեալ ի պրակապատճէն պիտառութեան ի պարս կարգի բանիս հոլովման՝ զի ի հաւասարութիւն հարթութեան միամասնեայ նկատման խառնեալ միասցին:

Եւ արդ, ահա սկսցուք զկնի գծագրութեան գումարահոլով պատմաբանութեանս խառնել դուն ինչ գրութիւնս համառաւտագիր դրուատից, նախ նմին իսկ կենդանաբարն տեառնագրութեան աստուածեան խաչին, եւ զկնի սորին՝ սրբոյ Տիրուհւոյն եւ Աստուածածնին, ընծայ մատուցեալ

պտուղ հաճութեան կամացն էութեան անճառն իսկութեան՝
գշոփչ շնորհաց բերկրալից շրթանց, ի հոտ անուշից»⁷⁹:

Հիշենք Գրիգորի՝ իր ուսուցչին նվիրված հիշատակա-
րանի համապատասխան հատվածը.

Ակիզբն առաքողի ողբերգութեան ձայնի այսմ
այտաւսրածին նուագի,

Որ զայս դեղ փրկութեան կենաց մեզ
յարմարեցոյց...

Որ յետս ելից խոստովանութեան մեզ
նկատեցոյց

Այսու պայմանաւ պատշաճականաւ...

(ԻՌ, Զ)

Այս հիշատակարանը ոճական առնչություն ունի նաև
«Մատեանի» վերջին հիշատակարանի հետ, ուր Գրիգոր
Նարեկացին խոսում է իր «Հրաշակերտ» կառույցի ամբող-
ջացման, հղկման և մշակման մասին. «Հիմնեցի, կառուցի,
կարգեցի, կուտեցի, արձանացուցի, դիզի, բարդեցի, կացու-
ցի, ցուցի՝ հաստատելով ի հրաշակերտութիւն միագոյ իրի
բազմաստեղնեան դրուագս գրութեան այսմ սովերի արգա-
սավորի»:

Սրանից բացի, նկատելի են և այլ խորքային կապեր, ո-
րոնք վկայում են, որ այս եռագրությունը նախագաղափար
է հանդիսացել Գրիգոր Նարեկացու «Մատեանի» համար:
Նախ՝ Գրիգոր Նարեկացին իր եռագրությունն անվանում է

⁷⁹ Գրիգոր Նարեկացի, «Պատմութիւն Ապարանից Սուրբ Խաչին», ՄՀ
ԺԲ, էջ 928-929:

«Համառոտագիծ մատեան», որի շնորհիվ «անթիվ օրեր և հազարավոր տարիներ» հարակայելու են ներբողվող անձը՝ Ստեփանոս եպիսկոպոսը և Գրիգոր Նարեկացին իր ուսուցչի՝ Անանիա Նարեկացու, և իր եղբայր Հովհաննեսի հետ, որը, ինչպես «Մատեան ողբերգութեան» երկի դեպքում, ամենայն հավանականությամբ, համագործակցել է նրա հետ եռերգությունը կազմելիս: Ահա քերթողական արվեստով գրված այդ հիշատակարանը, որն ուղղակի առնչվում է «Մատեան ողբերգութեան» երկի հարակայության և նրա հեղինակի անմահության մասին հայտնի հատվածին.

«Եւ գրութեան նամակի ձերում պատճենի, յաւրինեալ շարադրեցի զպատմութեանն գովեստ եւ զնառքս ներբողենի: Նկարեալ հաստատեալ ի գեղ պատկերի դիմաց սովեստի սպիտակափայլ լուսափառ դաշտի քարտենիդ, մտրակեալ յընթացս սորա ասպարիսի զշրժունս գրչիս, անշունչ խաւսողիս, անքայլ ընթացողիս, անձայն հնչողի, անդուլ պատմողի եւ անսայթաքելի քարոզչի: Եւ արձանացուցի սմին անջինջ յիշատակ զանուն տենչալի ձերումդ կոչման, աէք Ստեփանոս՝ լերինդ Մոկաց հզոր դիտապետ: Որպէս զի մնացես յարակայ ի սոյն համառօւտագիծ մատենի յաւուրս անթիւս եւ յամս հազարաւորս իմով սակաւամասնեայ իմաստիւ:

Ես՝ Գրիգոր, յետին վարժապետաց եւ կրտսեր բանասիրաց, որդի դստեր եղբաւը հաւը Անանիայի հոգեզարդ եւ մտաւարժ փիլիսոփայի, եւ ըստ վարուց մաքրութեան կրաւնից գովելոյ եւ հոչակելոյ: Եւ ընծայեցի քումդ եկեղեցեաց զայս նուէր բարեաց բանից ցանկալեաց, յորոյ

պտուղ վայելեսցես ախորժ բերկրանաց ճաշակմամբ՝ յամեալ եւ յարակայեալ ի հոգեւոր հրճուանս աղաւթից։ Եւ ընկալեալ խառնեսցես ի յոքնահամբար զարդս ամենագեղս երկնային գանձուցդ՝ զտարազ տեսակի տառիդ։ Նոյն եւ յիշատակեսցես զանուն իմ տրուալ ի գաւիթ սիրոյ անձկութեան սրտիդ սենեկի, միշտ նորոգ մտածեալ զմեզ ի ձեռումդ սուրբ խորանի աստուածաբնակի հանդէպ սեղանոյդ արարչընկալի, զիս եւ զեղբայրն իմ զանդրանիկ զթովհաննէս ցանկալի անուն ի միում կարգի, որ գիտնականն է եւ հանճարեղ իմաստասէր, քան զիս առաւել յամենայնի։ Եւ յամենայնի կեցցեն մեր անձինք ընդ քեզ, որպէս եւ քոյդ ոգի միացեալ ընդ մեզ միջնորդաւ էութեան բանի...»⁸⁰։

Գրիգոր Նարեկացին «գրչի շուրթերով» քարոզում է իր երկի հարակայության խորհուրդը՝ հավերժացնելով իր հետ նաև Ստեփանոս եպիսկոպոսի, Անանիա Նարեկացու և իր եղբոր՝ Հովհաննեսի անունները։ Վերջինների մասին Գրիգորը հիշատակում է նաև իր «Մատեան ողբերգութեան» երկում։ Ինչպես տեսնում ենք, եռագրության մեջ արդեն բարձրացվում է բանաստեղծական խոսքի՝ իբրև Աստծո և մարդկանց միջև միջնորդի էական գաղափարը, որն ընկած է «Մատեանի» հղացքի հիմքում։ Այդ երկի «Հարակայությամբ» և «խոսքի միջնորդությամբ», ահա, հավերժանալու են նրանց անձերը։

Ընդհանրապես, Գրիգոր Նարեկացին իր ստեղծաբանությունը, իր «Մատեանները» հարաբերում է աստվածա-

⁸⁰ Գրիգոր Նարեկացի, «Ներբող ի Սուրբ Կոյսն» (տարբ. Բ), ՄՀ ԺԲ, էջ 974-975։

յին խոսքի, «աստվածային մատեանի» հետ՝ հավերժության հեռանկար նշելով նրանց համար։ Այս իմաստով բնորոշ է «Մատեան ողբերգութեան» երկի հայտնի հատվածը. «Մատեանը», ըստ բանաստեղծի, Աստծո կողմից սրբագործված՝ հավիտյան բարբառելու է նրա առջև.

**Եւ աւրհնեալ սրբեա՛ զտառ մատենի այսր
ողբերգութեան,**

Եւ գրեալ դրոշմեսցես յարձան յաւիտեան...

Կացցէ՛ առաջի քո մշտնջենաւոր

Եւ յիշատակեսցի՛ ի լսելիսդ Քոյ հանապազ,

Բարբառեսցի՛ շրթամբք ընտրելոց Քոց

Եւ խաւսեսցի բերանովք հրեշտակաց Քոց,

Տարածեցսի՛ հանդէպ աթոռոյ Քոյ

Եւ ընծայեսցի՛ ի սրահ սրբութեան Քոյ,

Խնկեսցի՛ ի տաճար անուան Քոյ

Եւ բուրեսցի՛ ի սեղան փառաց Քոց,

Պահեսցի՛ ի գանձարանի Քում

Եւ համբուրեսցի՛ ի ստացուածս Քոյ,

Պատմեսցի՛ ի յականջս ազգաց

Եւ քարոզեսցի՛ ի լուր ժողովրդոց,

Նկարեսցի՛ ի դրունս իմաստից

Եւ տպաւրեսցի՛ ի սեամս զգայութեանց...

Եւ թէպէտ վախճան ընկալայց իբր մահացու,

Այլ յարակայութեամբ բանի այսր սովերի

Գրեցա՛յց կենդանի:

(ԶԼ, Բ)

Ինչպես տեսնում ենք, Գրիգոր Նարեկացու «Համառոտագիծ մատեանն» ու «Մատեան ողբերգութեան» երկը ստեղծաբանական ներքին աղերսներ ունեն միմյանց հետ: Այդ են վկայում մեջբերված հատվածները, որոնց կապն ակնառու է նաև «Մատեանի» իջ, Դ և իլ, Զ հատվածների հետ: Նրանց հիմքում միևնույն նախագաղափարն է: «Մատեան ողբերգութեան» երկի մեջ բանաստեղծը բացարձակացրել է եռերգության մեջ արտահայտված իր «Համառոտագիծ մատեանի» հարակայության գաղափարը: Բանաստեղծական իր խոսքի աստվածային առնչակցության մասին Գրիգոր Նարեկացին գրում է նաև իր ներբողների և «Մատեանի» այլ հատվածներում՝ երեսն հանելով այդ երկերի միջև եղած կենդանի կապը:

Նա իր ողջ կյանքն ու կենսագրությունը ընկալում է իբրև հղացք, ստեղծագործություն՝ աստվածային զորությամբ ու ներշնչանքով արարում: Աստվածածնին նվիրված ներբողում նա իր մարմինը՝ իբրև հոգու գործիք, համարում է «մրաշար գիծ», զգայական չունչը՝ «պատկեր բանիս» (խոսքի պատկեր): Ահա, իր այդ զգայական չնչով ու մարմնով է ստեղծվում Աստվածամոր ներբողը, «գովեստի երգագրությունը», և նրանցով կենդանացած, գոյավորված իր անունը, իր ստեղծագործությունն է, որ Աստվածամայրը պիտի «վերանկարի իր վերին դպրոցում գրված մատյանում»: Այսպես է պատկերացնում բանաստեղծն իր ստեղծագործության հարակայությունը՝ նրա Մատյանը, որի մասն է կազմում նշված ներբողը, «վերանկարվում» է աստվածային Մատյանում:

Վերանկարեա զառ յաւազանէն անախտ արգանդէ
Զկարդացեալս անուն ի գիր մատենի վերնում

դպրոցիդ:

Եւ զերգագրութիւն սակաւամասնեայ այսը գովեստի՝
Արձան հաստատեա միշտ անկործան սրբոյդ առաջի.
Հնծայեալ մարմնոյս զմրաշարս գիծ
Եւ զգայական չնչոյս զպատկեր բանիս:

(«Ներքող ի Սուրբ Կոյսն»⁸¹)

Տարբեր ձեակերպումներով այս միտքն արտահայտված է «Մատեանի» իջ, Դ հատվածում և հայտնի հիշատակարանում.

Նոյն ինքն, որ զայս բան տպաւորեալ...
Նկարագրեա՛ Հոգւով քո, բարձրեալ,
ի նորոգումն անեղծանելի...
(իջ, Դ)

Եւ աւրհնեալ սրբեա՛ զտառ մատենի այսը
ողբերգութեան,
Եւ գրեալ դրոշմեսցե՛ս յարձան յաւիտեան...
Նկարեսցի՛ ի դրունս իմաստից
Եւ տպաւորեսցի ի սեամս զգայութեանց...
(ԶԼ, Բ)

Իր ստեղծագործության աստվածային նշանակության այս խոր հղացքի յուրատեսակ անդրադարձը կա «Մատեան ողբերգութեան» երկի մեկ այլ հատվածում. բանա-

⁸¹ Գրիգոր Նարեկացի, «Ներքող ի Սուրբ Կոյսն», ՄՀ ԺԲ, էջ 974:

ստեղծն իրեն համարում է «ոսկեղեն խոսուն տախտակ», ո-
րի վրա Աստված գրում է իր մատներով:

Որ ինձէն իսկ զիս՝
Ոսկեղէն տախտակս խաւսուն,
Նուիրեալ քումդ պատգամի,
Զգրեալսն մատամբն Աստուծոյ...
Եւ ես զիւրատեսակ մըով
Զերկրորդն նմանութիւն առեալ հայթայթեմ:

(Լ.Դ, Ժ)

Բանաստեղծը, փաստորեն, իր ստեղծագործությամբ երկրորդում է Աստծուն, որ գրում է նրա հոգու ոսկեղեն տախտակի վրա. դա աստվածային ներշնչանքի մարմնավոր արտահայտությունն է՝ գրված «իւրատեսակ մըով», որ իր մարմինն է: Այս պատկերը, ինչպես տեսանք, առավել բացվում է Աստվածամորը նվիրված ներբողում: Բանաստեղծը երկրորդում է իր հոգում գրված Աստծո ոսկետառ գրերը, ինչպես Աստվածամայրն է վերանկարում բանաստեղծի «Համառոտագիր մատեանը»՝ եռերգությունը, «վերին դպրոցի իր «Մատեանում»: Այսպես միախառնվում են աստվածային խոսքն ու բանաստեղծի ստեղծաբանությունը: Բանաստեղծն «աստվածանում» է արվեստի հրաշքով՝ «ըստ մարդկային կարողությունների»:

Աստվածային խոսքի և բանաստեղծության միախառնության նման բազմաթիվ հատվածներ կան «Մատեանում»: Ահա նմանատիպ մի նմուշ.

Արդ կացցէ սահման յանձնառական խոստովանութեան
Մշտնջենաւոր ձայնարկու առաջի քո, ամենակալ,

**Զոր գիրդ՝ ընդ մարմնոյս եւ բանդ՝ ընդ հոգւոյս
Ձանսահմանելիդ միշտ թախանձեսցէ...**

(ԾԴ, Ա)

Հետաքրքիր է, որ նշված հատվածին նախորդող մեկ այլ հատվածում փոխաբերական նման պատկերներով է ներբողվում նաև Աստվածամայրը, ինչպես առաքյալներին նվիրված ներբողում՝ առաքյալները, և այս զուգագրությունների մեջ շեշտվում է բանստեղծի աստվածացման, նրա ստեղծագործության աստվածային առնչակցության հղացքը:

Աստվածամոր «գերանունությունների» թվարկման շարքում են նաև հետեւյալները. «Կտակ մակագիծ անեղծ պայմանաւ արձան հաստատեալ... վեհին պատկեր կերպիւ կշռորդեալ... տառ տարբերական տողիւ ձեւացեալ, տումար տենչալի անսխալ դրոշմեալ, մատեան մեծութեան շնորհիւ նկարեալ, նամակ ընտրութեան բանիւք բարդեցեալ, արձան անձնական իմաստիւք զաւդեալ, կնիք մատանւոյ տերամբ կերպագրեալ»⁸²:

Առաքյալներին նվիրված ներբողում կարդում ենք.

Սոփերք հոգեմատեանք ծածկութեան խորհրդոց էին,

Տառ ամանակաց ծննդոց մարդկութեան նուագք,

Տախտակք տիրագիծք եւ աստուածագրոշմք⁸³...

Եւ նկարագրեալ դրոշմեցան

Ի գիր մատենի վերին դպրութեան⁸⁴:

⁸² Գրիգոր Նարեկացի, «Ներբողի Առւրբ Կոյսն», ՄՀ ԺԲ, էջ 970:

⁸³ Գրիգոր Նարեկացի, «Ներբողի սուրբ առաքեալսն», ՄՀ ԺԲ, էջ 979:

⁸⁴ Նույն տեղում, էջ 988:

«Մատեանի» զուգադրությունը «վերին դպրության մատյանի» հետ առկա է նաև այն եզրափակող հիշատակարանում.

«Արդ, հայցեմք ի ճաշակողացդ յայսմ սեղանոյ յոդ-նաւրէն եւ ախորժահամ հանդերձելոյ՝ յիշատակել զմեզ ի մաղթանս ուղիղս եւ ի պատկանաւոր խնդրուածս՝ սեռն սիրով ի միտս բարիս, որով եւ դուք եղիջիք գրեալ ի մատեանս կենաց վերին դպրութեան»⁸⁵:

«Մատեանի» նախագաղափարը նշմարելի է նաև Հակոբ Մծբնեցուն նվիրված ներբողում: Այստեղ հանդիպում ենք աշխարհի, մարդկային կեցության՝ իբրև ծփացող ծովի պատկերին, որ կրկնվում և ծավալվում է «Մատեանում»՝ ներառելով հանճարեղ մանրամասներ:

«Ի դէմս առեալ խորհուրդն՝ իմաստապէս տպաւորեցոյց՝ զաշխարհ իւրայովքս պատկեր ծովու ծփեալ ի բազմաց...

Այս ծով մեծ լիածիր եւ յոքնատարած, տիեզերագրաւ բոլոր էից գոդ...»⁸⁶:

Երկնային և երկրային այդ ծովը ծփում է Սուրբ Հոգու ծիրում: Սուրբ Հոգին փառաբանվում է իբրև «երկնային-ների հավիտենական մանկավարժ, ապագաների դաստիարակ, բանականների ասպարեզ, էության ծովի ճանապարհ», որն իր մեջ է առել նաև երկրային ծովը: Այնուհետև նարեկացին մի խորհրդավոր, հանճարեղ հղացքի մեջ է առնում «երկնային և երկրային լինելության և կեցության այդ ծո-

⁸⁵ Գրիգոր Նարեկացի, «Մատեան ողբերգութեան», ՄՀ ԺԲ, Էջ 605:

⁸⁶ Գրիգոր Նարեկացի, «Ներբող ի սուրբ Յակոբ Մծբնայ բան նուիրական գովեստի», ՄՀ ԺԲ, Էջ 996-997:

վը»՝ երկիրը՝ մարդկային անցավոր կյանքը, հար և նման է աստվածային ծովին, որոնց խորքերը աստվածային քերթության, հագներգության հայելիով արտացոլում է Սուրբ Հոգին:

Եւ են միանգամայն յամենից ըղձից զատուցեալ,
Տրոհեալ, հեռացեալ ի հրաշիցն ծայրս.

Ծնող անշնչական՝ Հոգւով տնաւրինեցելոց.

Մայր, որ զ’ի հարուստ դարուց ամբարեալսն՝
ի քթթել ական արտադրէ,

Եւ երկնայնոցն՝ յաւիտենիւս մանկավարժէ,

Եւ առ ապագայսն ստացողապէս դաստիարակէ:

Ունի մշտածին ինքնաւոր անարաւրադիր
Բոյսս բիւրաստեղունս եւ ծառս զանազանս.

Սերք սերմանց անճառից ընդգոգեալ ի մի,
Բանականաց տոհմից ասպարէզ

Եւ ճառք զանդէիցն աստուստ ընթեռնու:
Աստուածութեանն ոտին հետարան.

Են եւ ի ծովու էին ճանապարհք,

Եւ շաւիդք նորա ի ջուրս,

Որ զանհասութեանն ճառ առակէ.

Այլ յաւէտ քատակ զնմանն ունի երկիր զծովու,
Եւ են ընդ բնաւին հագներգութեանն հայելի
Ստորին խորինս անցաւոր մարդկան...⁸⁷

Այս տարողունակ, գերխիտ պատկերի մեջ ևս նշմարվում է «Մատեանի» նախագաղափարը: Լստ Գրիգոր Նա-

⁸⁷ Նույն տեղում, էջ 977 (տողատումը մերն է՝ Հ. Թ.):

րեկացու՝ Աստված գերազույն արարիչ է, գերազույն արվեստագետ, որ ոչ միայն նախախնամում է իր արարչագործության ծիրը, այլև արտացոլում, տպավորում, արձանագրում այն: Սուրբ Հոգին ընկալվում է իբրև աստվածային քերթության խորունկ հայելի, որը հղանում, արվեստագործում նաև արտացոլում, պատկերում է մարդկային անհուն լինելությունը, մարդկային կեցության անհատակ ծովը:

Ի՞նչ պիտի աներ աստվածային ներշնչանքով ստեղծագործող, աստվածանմանության ձգտող բանաստեղծը, եթե ոչ ձգտեր ընդօրինակել «ամենարվեստ» արարչին, միախառնվել նրա արարչագործ տարերքին, «աստվածային հագներգությանը»: Աս մի մեծ, համապարփակ կերտվածքի գեղարվեստական ծրագիր է, մի գերգաղափար, որ կատարելապես մարմնավորվել է «Մատեանում»: Նրանում Գրիգոր Նարեկացին հագներգում է մարդկային կեցության անհատակ, փոթորկուն ծովը, մատենագրում մարդկային համընդհանուր հոգեսոր պատմությունը՝ ընծայաբերելով այն Աստծուն:

*

Այսպես միախառնվում, մեկտեղվում են Գրիգոր Նարեկացու կյանքի և ստեղծագործության ուղեծիրները, բանական մարդու ընթացքը, ճամփորդությունը աստվածային, բանական տիեզերքում, որ նա տպավորում, մարմնավորում է իր խորհրդափոր, անվերջ հղացող, մշտահոլով բառաշխարհով: Անվերջ հղացման, հանապազ ինքնարարման այս կերպը, զարմանահրաշ գյուտերի, խտացումների, բառաստեղծման ու պայծառատեսության այս աշխարհը,

ինչպես նշել ենք, լիովին վերափոխեց հոգեոր արվեստների ձևավորված համակարգը՝ բանաստեղծական արվեստի ընկալումն առհասարակ՝ նորարարական տարերք ներմուծելով նրանում⁸⁸:

Գրիգոր Նարեկացին բացարձակացնում է իր խոսքի, ստեղծագործության նշանակությունը՝ նրան վերագրելով աստվածային իմաստ, էություն, որին ձգտում է իր ողջ հոգեոր ուժերով։ Ստեղծագործությունը նա պատկերացնում է իբրև «ներքին մարդու» աստվածացման ընթացք. դա նրա հոգեոր կենսագրության ուղին է, որն իր մեջ ամբողջացնում է մարդկային ողջ հոգեոր փորձը։ Այստեղ է միստիկ բանաստեղծի կյանքի և ստեղծագործության կիզակետը, որը, սկիզբ առնելով և ծավալվելով նրա ներբողներում, գանձերում և տաղերում, «Մատեան ողբերգութեան» երկի մեջ հասնում է անընդգրկելի խորությունների։ Պատահական չէ, որ իբրև գերագույն կենսագրական փաստ, որ լիովին վերափոխել է իր կյանքը, Գրիգոր Նարեկացին բացարձակացնում է իր տեսիլները՝ նշելով, որ նրանց առաջ ավելի պատասխանատու է, քան ողջ Ավետարանի։

**Զքեզ իսկ տեսի հոգացեալ վասն իմ,
Զոր չէ աստ գըելի, եւ ոչ պատկառեցի։**
(ի, բ)

**Առ յայտնութիւնսն աստուածայինս,
Առ երեւմունսն արարչագիրս...**

⁸⁸Տե՛ս ստորև՝ «Բանաստեղծության հարակայության, հոգեոր հեռանկարի խորհուրդն ըստ Գրիգոր Նարեկացու»։

Առ այն, զոր տեսի աչաւք իսկ իմովք,
Առ որ մեծ է պատամխանատրութիւնս,
Քան առ համաւրեն Աւետարանին...

(հԷ, Զ)

Բանաստեղծի երկրային կենսագրությունը, որն անցողիկ է ու երևութական, գտնվում է «արտաքին մարդու» տիրույթում, իսկ «արտաքին մարդը», ըստ Նարեկյան դպրոցի միստիկ տեսության, որ սերում էր նորպլատոնական ակունքներից և քրիստոնեական միստիկ աստվածաբանությունից, պետք է ներդաշն լինի «ներքին մարդու» հետ⁸⁹: Սակայն այդ ներդաշնությունը հաճախ խախտվել է, երբ դարի ցնցումները, խռովքները ներթափանցել են վանքի պատերից ներս՝ ազդակներ դառնալով ստեղծագործական պաթոսի և հոգեսոր խոյանքների համար. հանուն հանուր մարդկության փրկության բարբառող բանաստեղծն իր այրող ինքնախոստովանանքների մեջ է ներառել իր ներքին կյանքի և իրականության ողբերգական համայնապատկերը, որ խաղարկվում է համաշխարհային պատմության ետնախորքի վրա՝ մշտահոլով և անվախճան:

Իսկ զառիթսն մահու դիպուածս
Դժոխսարմատ ծառոյս դառնութեան պտուղք՝
Հնտանիք թշնամիք, հարազատք
Հակառակք եւ որդիք դաւաճանողք...
Աւագակ ծովակուր, զինուոր նենդաւոր,

⁸⁹Տե՛ս ստորև՝ «Ներքին մարդու փիլիսոփայությունը Գրիգոր Նարեկացու «Մատեանում», աստվածացման ուղին»:

Մարտիկ անպատճաստ, սպառագէն անժուժկալ,
Մշակ հեղգացեալ, աղաւթական անխրախոյս,
Բեմական ստորնաքարչ, քահանայ անկնդրուկ,
Աւրինական աննուէր, դպիր կշտամբեալ,
Իմաստակ խելագար, ճարտասան անձունի...
Անպատսպար անկեալ, սնապարծ յուսահատ,
Անհամոզելի նզով, անհաշտական բաժանեալ,
Ունայնաբան շաղակրատ, պաճարամիտ գոռող,
Անասնաւրէն ապիրատ, դժոխային ագահ,
աներասան յանդուզն,
Մոլեգնութիւն անաստուած, ձեռնաձգութիւն
սպանող...

Մատակարար կամակոր, խորհրդակից նենգաւոր,
բարեկամ հատուածեալ,
Հազարապետ գոռոզամիտ, մերձաւոր կծծի,
Բաշխող ժլատ, վերատեսուչ կարկամ...
Վաճառական վատնիչ, շահարար շուայտեալ,
Պաշտաւնեայ արբեցող, գանձուց ոստիկան երկմիտ,
Պատգամաւոր բանսարկու, դռնապան քնչած,
Աղքատ հպարտ, մեծատուն ժխտող,
Դիւանապետ անաւրէն, պահապան մատնիչ,
ընակակից չարախաւս,
Սուրհանդակ անժաման, թղթաբեր պարտաւոր,
Առաքեալ խոռվարար, միջնորդ անիմաստ,
Արքայ արտալած, թագաւոր թարմատար,
կայսր ոգեկործան,
Իշխան տիրագաւ, գաւրավար զրկող,

Դատաւոր ակնառու, ռամիկ ինքնագործ...

Բանագրի՝ դսրով, հանդիմանչի՝ դատախազութիւն:

(ԾԶ, Ա)

*

Գրիգոր Նարեկացու կենսագրության գերագույն փաստը նրա ստեղծագործությունն է, առավելապես նրա «Մատեանը», որ հայտնատեսական սկիզբ ունի: Նա իր ստեղծագործությունն ընկալում է իբրև ոչ միայն իր, այլև անցյալ ու գալիք սերունդների հոգեսոր կենսագրություն: Նրա անձն ու կենսագրությունը միաձուլվել ու տարրալուծվել են Աստծո զորեղ ազդեցությամբ ու ներշնչանքով գրված նրա ստեղծագործության մեջ՝ վերածվելով «երկնային մատյանի», որի թերթերին, բառ-գաղափարների հետ, կենսագրական հանգույցներ են դրվագվում. նա մի «ոսկեղեն, խոսուն տախտակ է, Աստծո մատներով գրված» (Լ.Դ, Ժ):

Նրա կենսագրությունը տյառնագրված է: Այդ բնագիրն է, որն ուղղորդում է նրան, դառնում հոգեսոր կենսագրություն, որ պիտի թափանցի նաև սերունդների կենսագրույան մեջ՝ դառնալով հոգեսոր փաստ և առնչակցություն Անիմանալիի հետ, գոյավորելով նրա ընթացքը, միջնորդ դառնալով նրանց և Աստծո միջև, քանզի այդ բնագիրն աստվածաշունչ է, այն արարվել է Աստծո հետ «համաշնչապես»:

Գրիգոր Նարեկացին իր ստեղծաբանությունն ընկալում է իբրև գերագույն կենսագրական փաստ, իբրև էքստատիկ տարրալուծում աստվածային արարչագործության ծիրում, բանական աշխարհներում, իբրև շրջապտույտ ու վերադարձ երկնային հիերարխիկ համակարգե-

րով։ Նա բացարձակացրել է արևելաքրիստոնեական միստիկայի և նորպլատոնականության այդ գաղափարները, որոնք նոր իմաստավորում և արտահայտչականություն են ստանում նրա ստեղծագործության ծիրում⁹⁰։

Նրա կենսագրությունը, իբրև մարդկային ներքին հոգեւոր պատմությանն «Էակցված» հանգույց, կայանում է ներքին մարդու տիրութում՝ մարմնավորվելով իբրև «Աստծուն համացեղ» բանական մարդու ստեղծագործական տարերք և ընթացք։ Սրանից են ածանցվում անձի, պատմության և ժամանակի նարեկացիական ըմբռնումները, որոնք գտնվում են մշտնջենական արարչագործության հղացման ծիրում։

Սրանով է պայմանավորված ստեղծագործ անհատի, «Աստծուն համացեղ» մարդու նարեկացիական ըմբռնումը.

**Ահա ի յոտս տանողականս
Կրողաց երկուց միակցորդ խորհրդականաց,
Հստ ձեւոյ հրեշտակի կառուցար,
Իբր թռիչս թեւոց կրկնաբարձ բազկաց վերատանողաց՝
Յաշխարհն հայրենական հայել...
Իբր գճրագ բազմաբերանեան
Ի յաշտանակի մարմնիդ հաստատեցաւ**

գլխոյդ բոլորութիւն,
**Զի եւ այսու յաւրինակէն չնորհէ մի՛ աւտարասցիս
ԶԱստուած տեսանել եւ զմնացականացն
իմաստասիրել:**

⁹⁰Տե՛ս ստորև՝ «Ներքին մարդու փելիսոփայությունը Գրիգոր Նարեկացու «Մատեանում», աստվածացման ուղին» և «Բանաստեղծությունն իբրև աստվածային ներշնչանք և խոսքի գորության արվեստ»։

Բանականութեանն յարգանաւք կրկին ճոխացար,
Զի զյաղթանակ բարեմասնութեանն, որ առ քեզ եղեն,
Անարգել լեզուով խաւսեցիս,
Զեռինդ հաստմամբ յարմարութեան մատանցդ
շառաւիղաւք՝
Զգործնականացն տնաւրինել զտնտեսութիւն,
Իբր կցորդ համացեղութեամբ ամենաբաշխ
աջոյն Աստուծոյ՝ աստուած կոչեցար:

(ԽԶ, Բ)

Եւ արդ, այսպիսեաւք եւ եւս բազում
անզուգական հրաշակերտութեամբ
եղական պատկեր Աստծոյ...

(ԽԶ, Գ)

Բանաստեղծն, ահա, իր ստեղծագործությունն, իր «Մատեանը», որ արարվել է Աստծո հետ «Համաշնչապես», համարում է «Համացեղությամբ ամենաբաշխ աջոյն Աստուծոյ» Նրան կցորդվելու, միանալու, աստվածանալու արդյունք: Ահա նման մի պատկերավոր օրինակ ես.

Ուղղեա՛ Հոգւոյդ Քոյ իմաստութեամբ
Զյաջողուած ձեռինս գործոյ՝
Ընդ հեծութեան ձայնիս մաղթանաց,
Զաւրացո՛, Տէր, ի հանդէս բարի
Ճգնաւորական արի վաստակոյ,
Կցո՛րդ լեր կարեացս տկարութեան:
Թեթե՛ւս կացո զաշխատութեանս այս սկիզբն,
Արագեա՛, միշտ կարող, զյառաջադրեալ ձեռակերտս,

Դիւրաւո՛րս ընթացո ի յաւարտումն լրմանն,
ի վախճա՞ն իրին բերկրութեան զիս հասո,
ժամա՞ն կացուսցես ի հանդիպումն յուսոյն,
Կցո՛րդ լեր ուղւոյն ճանապարհիս ընթացից,
ի թռիչս ամբարձման փութացուսցե՛ս յաւգտակարն:
Ընդ աշմէ՛ իմ լիցիս ի վտանգի ծանրութեանն,
Զձայն Քո լուո՛ ի յանձկութեանն պահու,
Զեռամբ Քո կեցո՛ ի կորստեանն ժամու,
Մատամբ Քո ազդեա՛ ի սահմանին անձկութեան...

(ԶԵ, Ա)

Աստված բանաստեղծի հետ է ստեղծագործության ողջ ընթացքում: Այս կապն անխգելի է, այն ամբողջովին աստվածայինի ծիրում է՝ նրա ներգործության և ներշնչանքի արդյունք է:

Հստ Նարեկացու՝ արարել նշանակում է կայանալ աստվածային տիեզերքում, միախառնվել նրա հավերժական հոլովույթին, ժամանակների հավիտենական փոխկանչին:

Սա մշակույթի պատմության մեջ այն եղակի դեպքերից է, երբ ներքին խոսքը, իբրև հոգեկոր ընթացք, համընկնում է անհատի կենսագրության հետ:

Ամեն մի առանձին բնագիր, ստեղծագործություն՝ անկախ ժանրից, ձեռք է բերում ուղենշային, բացառիկ արժեք մարդու աստվածացման ճանապարհին, արտաքին կենսագրությունը դառնում է ներքին կենսագրություն՝ ընդգրկվելով ստեղծաբանական ընթացքների, հոգեկոր վերառաքման շղթայի մեջ: Անգամ պատմական միջավայրը, իրադարձային ետնախորքերը, թափանցելով հոգեկոր այդ

ընթացքի մեջ, դառնում են ներքին կենսագրության փաստեր և իբրև այդպիսիք՝ վերարթնացնելով ու բորբոքելով ներքին մարդու հուզական շերտերը, «զղջման և արտասուաց» շնորհը, վերածվում են պատկերաշարերի, փոխաբերությունների, վերառաքվող խոսքի, բանաստեղծության, որն այս գեպքում դառնում է նրանց գերագույն իմաստը:

Գրիգոր Նարեկացու ողջ ստեղծագործությունը պետք է դիտարկել իր կենսագրության համատեքստում և հակառակը, քանի որ դրանք ներհյուսված են իրար՝ իբրև հավիտենական հարասություն և հոգեոր կենսագրություն, որ վերածվում է վերժամանակյա բնագրի և անանձնական համայնապատում մի ողբամատյանի, որն արարել է աստվածացման ձգտող, «Աստծուն համացեղ» բանաստեղծը:

**«ՄԱՏԵԱՆԻ» ՀՂԱՑՔԸ ԵՎ
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՑԻՆ ԵՆԹԱՇԵՐՏԵՐԸ**

«ՄԱՏԵԱՆԻ» ՊԱՏԿԵՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ, ՏԵՍԻԼՔՆԵՐԸ, ԲԱՌԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ՇԵՐՏԵՐԸ

Գրիգոր Նարեկացու բանաստեղծական արվեստի մասին շատ է խոսվել, քննության առարկա են եղել նրա պատկերամտածողությունը, լեզվական տարերքը⁹¹, որ ներհյուսված է նրա ստեղծագործության հոգեոր խորքին, նրա բառեղեն արտահայտությունն է:

Գրիգոր Նարեկացու ստեղծագործության «մարմնավորված», արտաքին շերտը նրա լեզուն, բառաշխարհն ու պատկերային համակարգերն են՝ ճյուղավորված, հսկայածավալ մի աշխարհ, խոսքի ճարտարապետական մի կառույց, որ անհարաբերելի է հայ միջնադարյան որևէ երկի հետ և եզակի է ողջ միջնադարյան գրականության մեջ։ Նա ինքը բազմիցս նշում է իր երկի մոնումենտալ, հոյակերտ, միակառույց լինելու հանգամանքը։ Այդ կերտվածքի մեջ իր նշանակությունն ունի ամեն հատված, ամեն բառ, և այստեղ է, որ իր ճշգրիտ կիրառությունն է գտնում բանարվեստի այնպիսի եզր, ինչպիսին բառի ճարտարապետությունն է։

«... Ստացեալ հիմնեցի, կառուցի, կարգեցի, կուտեցի, դիզի, բարդեցի, կացուցի, ցուցի, հաստատելով ի հրաշակերտություն միագոյ իրի բազմաստեղնեան դրուագս դրութեան այսմ սովերի արգասաւորի...»։

⁹¹ Գրիգոր Նարեկացու ստեղծագործության պատկերային համակարգը, մասնավորապես, քննության է առնվում Ա. Ղազինյանի «Գրիգոր Նարեկացի. բանաստեղծական արուեստը» գրքի մեջ (Անթիլիաս, Լիբանան, 1995, էջ 195-203):

Իր արվեստը, որ նա անվանում է «արվեստ բարձրության», «արվեստ զորության», «հրաշալի բարբառ» (ՀԲ, Գ), միախառնված է աստվածային բարբառի հետ, կնքված և օծված է նրանով:

Իր խնդրի համեմատ՝ Նարեկացին կերտում է իր բառաշխարհը, նա մեծ նորարար է, նրա լեզվական տարերքն անընդհատ հղացման, խմորման մեջ է. դրա ապացույցն են հարյուրավոր նորակազմությունները, լեզվի անսովոր կառույցները, բառային զարմանալի, հաճախ պարագործականագույն համադրությունները: Այս շղթայի մեջ բառը կենդանի է՝ «շնչավոր», «հոգեկիր»: Մենք առնչվում ենք բառ-պատկերի, բառ-նշանի, բառ-առեղծվածի հետ, որոնք անվերջ նոր հոգեւոր խորքեր ու տարածություններ են ստեղծաբանում: Հեղինակի պատկերային համակարգը ճյուղավորվում է՝ խոսքը տանելով խտացումների ու թանձրացումների, վերածվելով տարածական պատկերաշարքերի:

Այս հարահոս պատկերաշարքերը, ագուցվելով իրար, շաղկապվածության, անընդհատության, հարակցվածության մի խորապատկեր են ստեղծում, «Մատեանի» ու նրա ստեղծողի «հարակայության» բառեղեն հենք, որ բանաստեղծի գերխնդիրն է:

Իր գերխնդիրը հեղինակը փորձում է լուծել հոգեւոր լարման հասցնող զուգորդությունների կուտակումներով:

Անկեալ կամ չարեաւք ի մահիճս ախտից
ընկողնոց մեղաց,
Դի կենդանի և խաւսուն մեռեալ.
Կարեկցեալ իմումս թշուառութեան ողբականաւք
քքուանաց ձայնից,

Ո՞վ բարերար Որդի Աստուծոյ,
Աւրհնաբանեալ աչացդ ցաւդով վերականգնեսցե՛ս ի
կենդանութիւն՝
իբր զսիրելին ի յանշնչական մեռելութենէ:
Ստոյգ դառնացողս ի գրի մեղաց կամ տարակուսեալ.
Զեռն մատուցեալ, արեւ անստուեր, Որդի բարձրելոյ,
Հանցե՛ս զիս ի լոյս քումդ նշուլից…

(ՃՀ, Է)

Բնակութիւն՝ կաւեղեն, եւ անձրեւք՝ ուժգնակիք,
Կարիք՝ անթուելիք, եւ պատահարք՝ ամենագրաւք…
Կեանք՝ առաւրեայք, եւ զմբաղք՝ սակաւաւորք,
Խաբմունք՝ յիմարութեան, եւ խաղալիք՝ տղայականք,
Աշխատութիւնք՝ ընդունայնք, եւ վայելմունք՝
երազականք,
Համբարք՝ ոչնչից, եւ պահեստք՝ հողմոց,
Նմանութիւնք՝ ստուերաց, եւ կերպարանք՝ ծիծաղելիք։

(ԾԴ, Ե)

Խոսքն «արտահոսում» է դեպի արտաքին աշխարհ՝
երեսույթները հուզականորեն վերապրելու ու աղոթքի մի-
ջոցով վերառաքելու համար։

Ինչպես իր ուսուցչի՝ Անանիա Նարեկացու աղոթքնե-
րում, կյանքն իր բազմաթիվ դրսեորումներով մտնում է
բանաստեղծական հորձանքի մեջ և վերաիմաստավորվում՝
վերամարմնավորվում զորեղ պատկերների, դեպի երկինք
միտված բառեղեն հոսքի, որի հենքը կյանքն է՝ իր թանձ-
րամած պատկերներով, որոնք գտնում են իրենց բառեղեն
հանճարեղ արտահայտությունը։

Հնդ այսակիր անզգայելոցն, դիւալլուկ
 եւ քարակոշկոճ,
 Հեղձամղձուկ, եղկելի անձանցն, քստմնելի,
 գիսախոփիւ հերացն,
 Վայրեներես բանդագուշելոցն, ի քէն ողորմեալ,
 Փրկիչ բոլորից, իբրեւ զնոսին առ քեզ դիմեցից՝
 Հերքեալ մերժեսցե՛ս զգունդս չարացն ապականողաց
 ի քո խորանէս,
 Զի ժամանեալ Հոգիդ քո բարի՛ այսրէն հանգիցէ,
 Լցեալ զմարմինս մաքրութեամբ շնչոյս,
 զգեցմամբ անդամոցս՝
 Զգա՛ստ արասցես զիսելագարեալս ամենաթշուառ:
 (*ԺՀ, Թ*)

Հեղինակը ձգտում է տարածական, զանգվածեղ պատկերների. նրա հայացքն ընդգրկում է ողջ բնաշխարհը՝ իր հոգու խորքերը, անդունդները, վիճերը, ասպարեզները, իր խորին ապրումները չափելու համար: Բանաստեղծական խոշոր գյուտերից է մեղքերի ծանրության համեմատությունը Լիբանանի մայրիների ու Արարատ լեռան հետ.

Զի եթէ զլիճ մի ծովուց ի յորակութիւն դեղոյ
յեղեղեցից,
Եւ զդաշտս ասպարիսաւք բազմաւք սահմանեալ՝
Ի տարածումն լայնութեան քարտենի չափեցից,
Եւ զպուրակս յոգունց անտառաց շամբից եղեգանց
Ի հատուածս գոյութեան գրչաց կազմեցից,
Եւ ո՛չ զթիւ մի բարդելոցն անաւրէնութեանց

Զաւրեցից ընդ գրով սահմանի դրաւել.
Նա զի թէ զմայրս Լիբանանու ի մի լուծ կշռոց
զաւրեցից,

Եւ կամ զլեառն Արարատեան
ի կէտ ամբարձման նժարի միոյ
Արդարութեան միջնորդ կացուցից,
Ոչ հաւասարէ այնր հարթութեան համազուգակցել:
(Թ, Ա.)

Գրիգոր Նարեկացու լեզուն, պատկերամտածողությունը անընդհատ շարժման մեջ են, տանում են անընդհատ բառային գյուտերի, հանճարեղ մետափորների, Նարեկացին, իր իսկ խոսքերով, «ստեղծաբանում» է, ստեղծագործում է իր լեզուն և առնելով իր հոգեզգայական աստվածահղորդության մեջ՝ ծիսականացնում է խոսքը:

Ամբարտաւանեցայ փոշիս շնչաւոր,
Ամբարհաւաճեցայ կաւս ձայնաւոր,
Հպարտացայ հողս անարգութեան,
Ի վեր ամբարձայ մոխիրս մերժելի,
Բազուկ կառուցի բաժակս մանրելի...
Բարկութեան բոցով ցոլացայ տիղմս բանաւոր,
Իբր զանմեռ ոք մեծամտեցի,
Որ ընդ քառոտանեաց մահու եմ փակեալ...
Զանարատ հոգիս մարմնոյս փափկութեամբ
յաւէտ վտտեցի...
(Ի, Ե.)

Բանաստեղծը հանճարեղ գյուտարար է՝ խոսքը վերա-

բերում է և՝ նորակազմություններին, և՝ բառ-պատկերների ծավալվող կառույցներին, որ առաջ են շարժվում դանդաղ կուտակումներով՝ գետնամած, գերխիտ պատկերներից մինչև ներշնչանքի մաքուր ոլորտներ:

Բանաստեղծը, որ հենվում է սուրբգրային հենքի և, բնականաբար, նախորդ շրջանի հայ հոգեոր բանաստեղծության, իսկ ավելի ուղղակի ու անմիջականորեն՝ իր ուսուցչի՝ Անանիա Նարեկացու տեսական և բանաստեղծական փորձի վրա՝ խորանալով իր միստիկ փորձի մեջ, ստեղծում է բոլորովին նոր բանարվեստ: Նրա լեզուն կանոն և կաղապար չի ընդունում, ներքին տարերքով նա հաղթահարում է ավանդական բառաշերտերը և ինքնարարիչ հղացման մեջ գոյավորում է իր «խորին խոսքը» բոլորովին նոր հոգեոր տարածքներում:

Լեզուն ճյուղավորվում է, բացում է նոր հուներ, ստեղծում է նոր կառուցվածքներ, վերածվում է ինքնարարիչ ուժի, ստույգ գիտելիքը, ներքին հսկումը, ներքնատեսությունը տարրալուծվում են կարծես զանգվածեղ կառույցների մեջ, բանական, ուսցիոնալ տարերքը զուգակցվում է հուզական տարերքի, էքստազի, լեզվական հափշտակության հետ:

Այս իմաստով՝ հենված լինելով ավանդույթի վրա, այն դուրս է գալիս ավանդույթից:

Հնդ գերեցեալ դժոխաբնակաց վտարանդելոց հոգւոցն
արգելեալ՝ կամ ի վտանգի...

Գաղտնորոգայթ, աներեւութերակ, վրիպակ արահետ,
Գարշութեամբ մեղացս ջրգողեցեալ՝
Ոգւոյս կերպարան կայ ի տագնապի...

Քո ինքնաւորդ զաւրեղութեամբ,
Որդի Աստուծոյ, գթածաբար առողջացուսցե՛ս:
Զբազմազան տարազս ցեղիցն զանազանից
ախտաւորութեանց մահացուցողաց
իւրականաւք կորստեան բերիւք, դժնդակարմատն
շառաւիդաւք,
Հաստատեցելովք ի յանդաստանի անաւրէն մարմնոյս,
Տարակորզեսցե՛ս ի ձեռն ձեռինդ ամենակալի,
Որ արաւրադրեալ միշտ եւ մշակես զսահմանս հոգւոց՝
Առ բանիդ կենաց արդիւնատրութիւն:

(ԺԸ, Ժ)

Հաճախաղեալ են բառերի անսովոր կուտակումները,
նորակազմությունները և բառաբարդումները, ամբողջության մեջ, ընդհանուր հյուսվածքի ու խորքի վրա՝ խոսքի անսովոր գալարքները, ոգորումներն ու բռնկումները, որ տանում են պարագոքսալ համադրությունների ու ճյուղավորումների՝ շեշտելու համար մարդկային գոյության առեղծվածայնությունը և պառակտվածությունը, գերագույն իմաստի, աստվածայնության և չնչինության, անիմաստության, անհեթեթության դրաման...

Եւ ի թառանչ սրտին՝ հագագին դուռն հրդեհեալ,
Եւ խոնաւ զաւրութիւն քմացն՝ ամենայն
ուրեք տոչորեալ,
Եւ անարեւ միգով՝ յամենայն մասանց պարփակեալ...
Եւ եղկութիւն կորստեանն՝ ի յուշ անդ եկեալ...
Եւ լոյսն բնութեամբ՝ զանգուածոյ հողոյս զայրացեալ,
Եւ ահաւորութիւն էին՝ ընդ փոքրկութիւն բնութեանս
ընդհարեալ,

Եւ միշտ որոտմամբ բանից՝ բանաւոր մոխրոյս
 բարկացեալ,
 Եւ իրաւանցն վիմաւ-ք՝ զարժանիս մահու կոչկոճեալ...
 Եւ իբր զ'ի բաց բարձեալ նշմարան ճրագի՝ չերեւեալ,
 Եւ պատասխանարան լեզուիս՝ յիրաւանցն աւտար՝
 կարկեցեալ,
 Եւ անհամբոյր շրթանցս դրութիւն՝ աւրինաւոր
 դատմամբ պապանձեալ,
 Եւ յուզմունք մտացս՝ ի զանազան մասունս ցնդեալ...
 (Ի՞՞ Բ)

Ընդհանրապես, «Մատեանի» ողջ կառույցի համար բնորոշ է ասոցիատիվ-պատկերային կապը, երբ բառը, բանաստեղծական հյուսվածքը, խոսքի մի դրվագը, որ հանդիպում է որևէ հատվածում, հանկարծ բացվում է, միանգամայն նորովի է հնչում նոր համատեքստում։ Այսպիսի պայծառացումների, բռնկումների հյուսվածք է ողջ «Մատեանի» «միեղեն» կառույցը։

Դրա բնորոշ օրինակներից է, ահա, խորտակված նավի՝ իբրև հոգու նավաբեկության այլաբանական պատկերը, որ հանդիպում է «Մատեանի» երկու գլուխներում⁹². սկզբում այն աննկատելիորեն ձուլված է ընդհանուր պատկերաշարքին (Ի՞՞ն, Գ):

Այս պատկերը ծավալվում է «Մատեանի» հաջորդ

⁹² Այս մասին խոսվում է «Մատեանի» քննական բնագրի ծանոթագրություններում (տե՛ս Գլիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, աշխատասիրությամբ Պ. Խաչատրյանի և Ա. Ղազինյանի, Երևան, 1985, ծնթ. 2, էջ 1012-1013):

գլխում՝ «փոխելով խոսքի եղանակը»։ Նույն գլխի հաջորդ հատվածում բանաստեղծը հանձարեղ մանրամասներով «բացում» է այն, խորտակված նավի՝ իբրև խորտակված հոգու, մանրամասն նկարագրությամբ։ Այս պատկերը շատ է վկայաբերվել՝ իբրև հանձարեղ մանրամասների հատված, առանց շաղկապելու նախորդների հետ։ Սակայն, ըստ էռլթյան, դրանք պատկերային-լեզվական մի ամբողջություն, միասնական կառույց-համապատկեր են ներկայացնում։

Զմեռն յամարայնի բքաբեր հողմով ժամանեալ՝
Երեքալեանն դիմակցութեամբ ամբոխեաց
գհանդարտութիւնն,
Ուստի նաւն ի բախմանէ վայրենի ալեացն
խորտակեցաւ։

Թեւոցն ձեռնարկութիւն քայքայեցաւ,
Կայմն ամբարձման ի կայից իւրոց խլեցաւ,
Առագաստին թռչարան յանկարկատելի
ծուէնս պատառեցաւ,

Ծինուածոյն շուք անզարդեցաւ,
Առասանք ձգողականացն խզեցաւ,
Տեսարան գլխոյն դիտական խոնարհեցաւ,
Ապաւանդակին պարան կտրեցաւ,
Ապաւինութիւն խարսխին լուծաւ,
Լուծք ստուարք ամոլիցն կցորդութեան բաժանեցան,
Սամիք ուղղչացն հետոց գալարեցան,
Լաստ հիմանն հաստարանի ընկղմեցաւ,
Ղեկացն կառուցմունք անդրէն սուզան,
Չուոցն յարմարութիւնք պակասեցան,

Ողնափայտին պատսպարան իսկոյն բեկաւ,
Կապարանք զստին հաստուածոյ յաւշատեցաւ,
Գոգք ամփոփման ծոցոյն կազմածոյ անարգեցան,
Խելք շրթանցն եզերաց խախտեալ ոստեաւ,
Պաղպաջունք բազմականացն անկեալ բարձաւ,
Վանդակապատին վայելչութիւն յատակեցաւ,
Գահաւորակին հանգստարանն շփոթեցաւ,
Մածմունք տախտակաշարք ի միաբանութեանց
միմեանց անջատեցան,
Հեղոսյք պնդման բեւեռացն քարշեցան:

(հԵ, Բ)

Այս հատվածին հետեւում է մեկնությունը, առակավոր օրինակի բացատրությունը, որ «Մատեանի» գեղեցիկ կտորներից է: Ընդհանրապես, պատկերային համակարգի, լեզվական կառուցվածքի և խոսքի ուժգնության ու բառային տարերքի մասին խոսելիս այս հատվածը չի կարելի շրջանցել (հԵ, Գ):

Հստ էության, այն ծավալվելով, չափածո առակի ժանրային առանձնահատկություններ է ձեռք բերում, ուր այլաբանական օրինակին հետեւում է նրա մեկնություն-բարոյախոսությունը:

Բանաստեղծը ձգտում է պաթետիկ հզոր հոսքերի, նառանի այն գիտակցությունը, որ ստեղծում է բոլոր ժամանակների համար: Նա տալիս է կյանքի ողբերգական ընկալման հավերժական պատկերներ.

Ահա ես ինքն ինձն կամաւորապէս անձնամարտն
եւ մարմնակործան,

Հոգեկորոյս եւ միշտ մտախար,
Կամակոր իսկ եւ սրտաբեկ,
Ուշամոռաց եւ հանճարազրաւ,
Զգայազիրկ եւ իմաստասպառ,
Ցայրատատես եւ եղեռնալուր:
Եւ աստուստ եւ անդուստ բանիւք բորբոքմամբք
Մահաբեր երկամբք վնասեալ,
Ոչ միով իւիք տեսութեամբ
Ի գործ ընտրութեան քեզ պիտանացուս, տէրդ բոլորից:
Ողբա՛մ զորովայնն, որ երկնեացն զիս,
Աշխարե՛մ զստինսն, որ դիեցուցին.
Ընդէ՞ր ոչ մաղձ մակարդեալ ընդ կաթին ձգեցի,
Եւ զիա՞րդ ոչ դառնութիւն ինձ ընդ քաղցրութեան
Ճամբեալ մատուցաւ:

(իԲ, 9)

Այստեղ մեծապես աճում է բառ-պատկերի, հնչերանգի,
տողի, ոիթմավորման, երաժշտականության նշանակութ-
յունը:

Գրիգոր Նարեկացին ձգտում է բանաստեղծական խոս-
քի ոգեղենության, մերկ տեսիլքի, մինչև վերջ աստվածա-
յինով ներթափանցած գերլեզվի: Իբրև միստիկ բանա-
ստեղծ, նա ձգտում է Աստծո հետ կապվել արվեստի հրաշ-
քով: Աստվածայինը նրա մեջ ներկա է իբրև ներշնչանք,
խոսքի զորություն, լեզվական տեսիլք ու հափշտակութ-
յուն:

Գրիգոր Նարեկացու՝ իրրև միստիկ բանաստեղծի ներքին հոգեւոր փորձը շատ ծալքեր ու գաղտնիքներ է պարունակում, որ թաքնված, անտեսանելի են մնացել բառային կեղեկի տակ: Գաղտնիքի, գաղտնատեսության այդ խորհրդավոր հանգամանքը բանաստեղծը նշում է «Մատեանի» մի շարք տեղերում: «Մատեանի» ստեղծման ճանապարհին նա բազմաթիվ ուղենիշներ, նշաճողեր, նշաններ ու բանալիներ է թողել սրբազն բնագրերի մեջ թափանցելու համար՝ հաճախ նաև խոսքը սքողելով մանվածապատ ու խրթին հատվածներով, հաճախ բուն ասելիքը տարրալուծելով ընդհանուր հյուսվածքում, բայց հաճախ էլ բացելով խորքերը, բացարձակացնելով գաղափարը, դիմելով մերկ ու անսքող պատկերների, որ ասելիքի համարձակության և հղացման ահազնության տեսակետից ցնցող տպավորություն են թողնում: Դրանք «Մատեանի» հոգեւոր հոսքի այն կիզակետերն են, որ լույս են սփռում բանաստեղծության ողջ ներքնատարածության վրա:

Բանաստեղծական ողջ հյուսվածքում հանգուցային տեղ են գրավում բանաստեղծի տեսիլքները, որ հանդես են գալիս իբրև ստեղծագործության հղացման գաղափար ու սկզբնապատճառ: Գրիգոր Նարեկացին շեշտում է նրանց նշանակությունը, գերազույն արժեքն իր հոգեւոր փորձի մեջ:

Ո՛չ կիզեր զբերանս, լցեալ նանրութեամբ,
ի ժառանգակիցն կարդալ զքեզ,
Ո՛չ կշտամբեցեր զյանդգնեալս ի քո կցորդութիւն,
Ո՛չ ստուերացուցեր զտեսիլ աչացս
ի քումդ ակնարկութիւն...

Ո՛չ խորտակեցեր զդաստակ բազկիս, որ
անմաքրապէս առ քեզ համբառնայր,
Ո՛չ մանրեցեր զոստս իմոց մատանց
ի շաւշափելն զբանդ կենաց,
Ո՛չ պատեցին զինեւ մառախուղք ի ձաւնելն
զքեզ, ահաւոր,
Ո՛չ փշրեցեր զպարս ատամանցս յըմբոշխնելն զքեզ,
անսահմանելի...
(Ե, Գ)

Բանաստեղծի տեսիլքները «Մատեանի» խորապատկերի կիզակետերն են՝ խորին խորհուրդներ՝ նրա խորքը կերպածեող: Բառեղեն հոսքի մեջ դրանք նմանում են գաղտնագրության: Դրանք ներանձնացյալի համար բանալիներ են – բուն բնագրի մեջ թափանցելու համար:

Մի դրվագում Գրիգոր Նարեկացին ուրվագծում է տեսիլքին մերձենալու ներանձնական պահերը.

Նորոգեա' զպատկեր լուսոյ պաշտեցեալ փառաց
մեծութեան անուան եւ հզաւրիդ՝ յոդիս,
Զորացո' զշնորհիդ փայլումն ի գեղ դիմացս եւ
ի կերպարան տեսութեան մտացս հողեղինիս,
Յարմար յերիւրմամբ կացո' յարդարեալ, որ
զքոյդ բերէ նկատումն՝
Նշողազարդ մաքրութեամբ զտեալ մռայլս մեղաւորիս,
Աստուածային կենդանի, անեղծ, երկնաւոր լուսով քո
ծածկեալ յաւրինակս երիս:
(Խ, Գ)

Բանաստեղծի տեսիլքները նույնպես աստվածային ներգործության արդյունք են, կապված են աստվածային լույսի ներկայության, մարդկային հոգում նրա ճառագում-ների հետ.

Եւ փոխանակ զի ես ոչ խնդրեցի հետեւել լուսոյդ,
Դո՛ւ ելցես ինձ յայց, ճառագայթ ծագման
հայրենի կերպիդ...
(ՀՀ, Բ)

Մի այլ հատվածում բանաստեղծությունը պայծառատեսության, էքստազի ելևէջներ, ցոլացումներ է արտածում: Այստեղ տեսական հասկացությունները փոխարինվում են բանաստեղծական զեղումներով ու պատկերներով, որոնց շնորհիվ բառը մոտենում է «անմատույց լույսին»: Եվ այստեղ դարձյալ գունախաղերի մեջ առաջ է մղվում մերկ տեսիլքի գաղափարը.

Եւ քանզի, ըստ բանին Յոբայ, շուրջ պատեալ են
չարեացն հնարք,
Հնդ որ ոչ կարացից անցանել,
Իսկ եթէ լոյս ողորմութեան բարերար կամաց
քոց ցուցցի,
Գթութեան քոյ դուռն բացցի,
Ճառագայթ փառաց քոց ծաւալեսցի,
Խնամք ձեռին քոյ յայտնեսցի,
Արեգականդ կենաց աւր տարածեսցի,
Առաւաւտիդ ըղձալի տեսիլ մերկասցի,
Առատութիւն քաղցրութեան քոյ աղբիւրասցի,
Վտակ արարչիդ կողից հոսեսցի,

**Ծորումն անապական սիրոյ քոյ հեղցի,
Ծագումն աւետեաց շնորհի քոյ երեւեացի,
Պարգեւիդ քոյ ծառ ծաղկեացի,
Համառաւտեալն ակնկալութիւն հանդիպեացի
Հատուածեալ ձայն ողջունի քոյ, Տէր, լուիցի,
Հեռացեալդ խաղաղութիւն մերձեացի,-
Յայսոսիկ յաւէտ սովին սահմանաւ երանականաւ
Հաւատ ընկալեալ յուսոյ հաստատնոյ,
Ապաւինեալ ի Հոգիդ քո Սուրբ,
Որ ընդ Հաւը քում պաշտի ձայնիւ քաղցրութեան՝
Ընդ քեզ փառաւորեալ ի լոյս անմատոյց,
Որով կեանք եւ երանութիւն քաւութեամբ
հանդերձ ընծայեալ ինձ՝ մեղապարտիս:
Յաւանդ անկորուստ ընդ իս պահելով
Առհաւատչեայ ճշմարիտ յիշատակի
ի ձիր անեղծութեան...
(հԵ, Ե)**

Բանաստեղծը բացում է արարման միստիկ խորքերը, որ հասցնում է նրան զգացմունքային էքստազի, հոգեոր հիացման ու տեսիլքների – տանում է այն «անչափելի խորքերը», որոնք հասու են միայն «անըմբոնելի մտքի արագությանը»:

Անխզելի կապ, հրաշալի բարբառ...
Խտրոց ահաւոր, արուեստ բարձրութեան...
Խորութիւն անչափ, հիացման տեսիլ,
Խորհուրդ կնքեալ, ընդ որ չիք ումեք անցանել,
Եթէ ոչ անըմբոնելի մտաց արագման զսա ծանիցէ:

Զայն բարեպատեհ հրաշաւորական...

Զարդ փառաց մեծութեան,

Որով նոյն ինքն աստուածութիւնն

պսակեալ բարդաւաճի:

(ԻԵ, Գ)

Ահա հեղինակի միստիկ փորձի մի նկարագրություն,
ուր դարձյալ պատկերվում են հոգեոր առնչակցության
գերզգայական վիճակներ: Թվում է՝ հեղինակը պախարա-
կում է իր անձը, հակադրում է աստվածային շնորհներին,
սակայն մի ցցող խոստովանությամբ բացահայտում է իր
առնչակցությունն այդ ամենին՝ աստվածային հայտնու-
թյուն, պայծառատեսություն, հիացում ու մի խորհրդավոր
տեսիլքի հիշատակություն, որին դարձյալ հետևում է մերկ
ինքնախոստովանանքը, ինքնախարազանումը. տեսիլքը
հեղինակը նորից ծածկում, թաքցնում է սեփական մեղքե-
րի, ինքնաձաղկման շերտերի տակ:

Զի անձամբ զանձն անարգեցի...

Զի զիս ունին, առ որ չեմ...

Զլոյս ի մռայլ շրջեալ...

Զջահս փառաց շիջեալ,

Զամենայնիւս յամենայնի ամենայն

իրաւք վնասակարս՝

Առ տնաւրինականսն տէրունականս,

Առ յայտնութիւնսն աստուածայինս,

Առ երեւմունսն արարչագիրս,

Առ խոնարհութիւնսն սարսափելիս,

Առ այն, զոր տեսի աչաւք իսկ իմովք,

Առ որ մեծ է պատասխանատրութիւնս,
 Քան առ համաւրեն Աւետարանին,
 Զարմանս, Հիացմունս,
 Հոգս հալողականս, անդաճմունս անհնարաւորս,
 Թուականութիւնս մտաց անբարդելիս,
 Ելմունս անկատարս, իջմունս անհաստատս,
 Յուսահատութիւնս յարմարականս...
 Նզովս իրաւացիս, անէծս արժանահատոյցս:
 Արդ այսոքիկ են մեղաւորիս իմ կշտամբութիւնք
 Եւ ինքնահարուած տանջանաւորութիւնք:

(Իէ, Զ)

«Մատեանի» միջնադարյան և նոր շրջանի մեկնիչները հատկապես կանգ են առել այս տողերի վրա՝ գտնելով, որ հեղինակն այստեղ խօսում է Աստծո հետ իր ունեցած տեսանելի, կենդանի հաղորդակցության մասին՝ վկայակոչելով բանավոր և գրավոր ավանդությունը Գրիգոր Նարեկացու տեսիլքի մասին⁹³:

⁹³ «Մատեանի» քննական բնագրի ծանոթագրություններում այս խնդրի շուրջ կարդում ենք.

«Առ այն, զոր տեսի աչաւք իսկ իմովք» - այս տողին «Մատեանի» մեկնիչները հատուկ ուշագրություն են դարձրել՝ շեշտելու համար, որ Նարեկացին, սուրբ լինելով, «կենդանի հաղորդակցություն» է ունեցել Աստծո հետ. «Ասեն, թէ սուրբս այս ետես զՔրիստոս գէմ յանդիման», - գրում է միջնադարյան մեկնիչը (Ճեռ. 5650, Էջ 363թ): «Ասի յաւանդութեան, թէ սուրբս Գրիգոր ետես զՔրիստոս մանկաձեւ ի գիրկ կուսին յառաւօտեան ժամուն ի վանս Նարեկայ, ի ծագիլ արեգական...», - հարում է նրան Հ. Նալյանը («Գիրք մեկնութեան», Էջ 189): «Այսու յայտնապէս ծանուցանէ զտեսանել իւր մարմնոյ աչօք զՔրիստոս, որով եւ հաստատի աւանդութիւն, որ կայ յազգի մերում...», - իր հերթին հավաստում է Գ. Ավետիքյանը («Նարեկլուծ», Էջ 132, ծնթ. 16): Այս բացատրություններից երեսում է, որ ոչ միայն Նալյանն ու Ավետիքյա-

Հեղինակն իր տեսիլքը բարձր է դասում ողջ Ավետարանից, կենդանի հաղորդակցությունը՝ սուրբքրային ավանդությունից: Ներքին փորձը վեր դասելով հավատի ամեն արտաքին դրսեորումներից՝ նա բացարձակացնում է իր ուսուցչի՝ Անանիա Նարեկացու տեսությունն ու փորձն այդ ասպարեզում: Հիշենք վերջինիս կարեորագույն կանխադրույթները՝ ստեղծագործության ընթացքում գլխավո-

նը, այլև հին մեկնության հեղինակը ծանոթ են եղել Նարեկացու մասին միջնադարում ստեղծված ավանդությանը, որը պահպանվել ու մեզ է հասել ինչպես բանավոր ճանապարհով, այնպես էլ գրավոր ձեռք՝ իբրև նրա զրուցապատում վարքի մի դրագագ: Այդ ավանդության մի տարբերակի համաձայն, Նարեկացուն հեռվում, Առոտեր կղզու վրա, երեացել է Տիրամայրը՝ մանուկ Հիսուսը գրկին և ձայն տվել: «Ա՛ռ զՏէր քո» (Ընդունի՛ր քո Տիրողը), ու գրանից էլ մնացել է կղզու անունը՝ Առոտեր (հմմտ. Ա. Ղանալանյան, Ավանդապատում, Երևան, 1969, էջ 84): Ավանդության գրավոր տարբերակում Առոտեր կղզու մասին խոսք չկա: Պատմվում է, որ Նարեկացին գնում է Ռշտունիք և յոթ տարի մարդկանցից թաքուն առանձնանում, գնում իր քեռու (իմա՝ մոր Հորեղբայր Անանիա Նարեկացու) վանքի հանդեպ գտնվող մի այրում: Այստեղ նրան երեսում է Մարիամը՝ ասելով. «Ես եմ մայրն Յիսուսի»: Նարեկացին կասկածում է: Մյուս օրն առավոտյան նա նորից է երեսում՝ «ունելով ի գիրկն զմանկացեալն Աստուած»: Այդ տեսիլից ներշնչված՝ Նարեկացին ծնկաչոք ասում է. «Աչքն ծով...» երգը, այսինքն՝ «Մեղեդի ծննդյան»-ը (տե՛ս նույն տեղում, էջ 319): Տիպիկ միջնադարյան այս ավանդությունը, որը սերունդների հարգանքի ու գնահատանքի տուրքն է մեծ բանաստեղծին ու նրա ստեղծագործությանը, կարծես առարկայական ընկալումն է ինչպես «Առ այն, զոր տեսի աչաւք իսկ իմովք» տողի, այնպես էլ «Մատեանի» այլ գլուխներում նույն եղանակով Նարեկացու արտահայտած մտքերի, որոնցից հիշենք, մանավանդ, հետելյալը.

Զքեզ իսկ տեսի հոգացեալ վասն իմ,

Զոր չէ աստ գրելի, եւ ոչ պատկառեցի:

(ի, Ե. 70-71):

(Տե՛ս Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, աշխ. Պ. Խաչատրյանի և Ա. Ղազինյանի, էջ 1026):

բապես սեփական փորձին ու ներշնչանքին ապավինելու, աղոթքի բոլոր պատճառ-օրինակները, բառ-պատկերները ներքին հուզական տարերքին ենթարկելու վերաբերյալ, որով ընտրականության սկզբունքը տարածվում էր նաև սուրբրային ավանդության, հոգեոր տեքստերում հաճախակի կիրառվող ավանդական պատկերների վրա՝ աղոթողին մղելով կենդանի ստեղծագործության ու հաղորդակցության⁹⁴:

Բանաստեղծը կենդանի հաղորդության, էքստազի, հիացատեսության իրեն վիճակված պահի շնորհն է ակնարկում նաև «Մատեանի» մի այլ հատվածում: Նա չի բացում ընթերցողին իր ներքին փորձը, այլ խորհրդավոր, երկյուղած նշաններ է ցուցանում նրան՝ կարծես վախենալով խոսքի գայթակղությունից և ինքնամեծարման որոգայթներից.

Ամբարտաւանեցայ փոշիս շնչաւոր,
Ամբարհաւաճեցայ կաւս ձայնաւոր,
Հպարտացայ հողս անարգութեան,
Ի վեր ամբարձայ մոխիրս մերժելի...
Տարածեցայ առաւել իբր վիհ...
Իբր զանմեռ ոք մեծամտեցի...
Ի թռիչս մտաց ընդ խաւար խորհրդոց սլացայ...
Զքեզ իսկ տեսի հոգացեալ վասն իմ,
Զոր չէ աստ գրելի, եւ ոչ պատկառեցի:

(հ, Ե)

⁹⁴ Տե՛ս Հ. Թամրապյան, Գիրք Բ, էջ 342-347, 350-364:

Բանաստեղծը մինչև վերջ չի բացում իր հոգու դաղտնիքը, իր ամենանվիրական ապրումը «չէ աստ գրելի»:

Մի այլ գեղքում նա խոսում է հայտնատեսության, աստվածատեսության իր բուռն տենչանքի մասին, որ նաև Աստծո հետ անմիջնորդ, անխզելի, կենդանի կապը նշող ընդարձակ հատվածներից է.

Իսկ ես ոչ միայն կարդամ,

Այլ նախ հաւատամ մեծութեան նորին,

Ոչ եթէ վասն պարզեւաց նորա դարձեալ

մատուցեալ յողոք գեղերիմ,

Այլ իբր զկենդանութիւն իսկապէս

եւ զշնչոյ տուրեւառութիւն հաւաստի,

Առանց որոյ ոչ է շարժողութիւն

կամ ընթացութիւն,

Զի ոչ այնքան յուսոյն հանգուցիւ,

Որքան սիրոյն կապանաւք բերիմ,

Ոչ ի տուրսն, այլ ի տուրողն յաւէտ կարաւտիմ,

Ոչ փառքն են ինձ անձկալի,

Այլ փառաւորեալն է համբուրելի,

Ոչ կենացն փափագանաւք,

Այլ կենարարին յիշատակաւն միշտ ճենճերիմ,

Ոչ վայելիցն տարփանաւք հեծեմ,

Այլ հանդերձաւղին տենչանաւք՝

յերիկամանց աստի կականիմ,

Ոչ զհանգիստն խնդրեմ,

Այլ զհանգուցչին երեսս աղաչեմ,

Ոչ հարսնարանին խնջոյիւք,

Այլ փեսային անձկութեամբ մաշիմ:

Ի ձեռն որոյ զաւրութեան
վստահապէս ակնկալութեամբ,
Վերագրեցեալդ յանցանաւք բեռանց,
Աներկմիտ յուսով հաւատամ՝
Ի կարողին ձեռն ապաստանեալ.
Ոչ քաւութեան միայն հասանել,
Այլ զնոյն ինքն տեսանել՝
Յողորմութիւն եւ ի գթութիւն
Եւ երկնիցն ժառանգութիւն,
Թէպէտ եւ յոյժ եմ տարագրելի:

(ԺԲ, Բ)

Իսկ ահա «Մատեանի» խորհրդավոր խտացումներից
մեկը, ուր առավել ամբողջական է արտահայտված բանա-
ստեղծի՝ ըստ մարդկային կարողության աստվածանալու
հավատը⁹⁵:

Կեանս կրկինս եւ անմահականս՝
Ծնորհաց մկրտութեան, յարութեան, նորոգութեան,
Առ քեզ ընտանութեան ընդ Հոգւոյդ Սրբոյ միութեան,
Քաւութեան, ազատութեան, լուսաւորութեան,
Մշտնջենաւոր մաքրութեան, իսկապէս երանութեան,
Ընդ վերնայնոցն կցորդութեան, անկապուտ փառաց,
Ի շրթունս մեր ձայնիւ բարձրելոյն
Հաշտեցուցիչ բանից աղաչանք:
Եւ զոր ահաւորն է ասել, կարգեմ աստանաւր,
Ցիշատակ եղեալ մեծիդ երախտեաց՝
Աստուած իսկ լինել ընտրութեամբ շնորհին

⁹⁵ Տե՛ս ստորև՝ «Աստվածանմանության տեսությունը»:

Եւ ընդ հաստողիդ միանալ՝ տէրունի
մարմնոյդ ճաշակմամբ
Եւ ընդ լուսոյդ կենաց խառնութեամբ...
(ԾԲ, գ)

Այս և նման հատվածները ուղենիշեր, խտացումներ, կիզակետեր են հեղինակի և ընթերցողի հոգեոր ճանապարհն:

Մի դեպքում Նարեկացին իր տեսիլքն է բացարձակացնում՝ իբրև գերագույն հոգեոր փաստ, մյուս դեպքում՝ հոգեոր վերառաքման գերզգայական վիճակների հաջորդական շղթայի շնորհիվ աստվածանալու դադափարը: Սրանք ահա վերջին աստիճանները, վերջին օղակն են երկնային սանդուղքի, նրա գերզգացողության, գերպաշտամունքի: Դրանից այն կողմ նա միախառնվում է աստվածային էության հետ, ողջ հացումը վերածվում է բառային տեսիլքի և աստվածային ներշնչանքի:

«Մատեանը», իբրև կյանքի ու արվեստի փաստ, հեղինակի համար հիմնված է առաջին հերթին իր միստիկ փորձի վրա և հանճարեղ ներշնչանքի հայտնատեսական սկիզբ ունի: Իզուր չեն միջնադարյան գրիչները Գրիգոր Նարեկացու երկը կոչել «Հոգենուագ մատեան», «աստուածախօս մատեան», «Հոգեշունչ մատեան», «աստուածային մատեան», «աստուածապատում մատեան», «աստուածաքնար մատեան», «սուրբ գիրք» և այլն⁹⁶:

⁹⁶ Տե՛ս նաև Հ. Թամրապյան, Գիրք Բ, էջ 179:

Միջնադարյան ոչ մի երկ այսպես չի ընկալվել և չի սրբացվել հետագա բանաստեղծների, մատենագիրների, կրոնավորների և ժողովրդի կողմից:

«Մատեանի» այս միեղեն, բացառիկ հղացքի հիմքում, բառաշխարհների, տեսիլաշղթաների հոսքերի ետնախորքում ընկած է բանական հսկումը. բանաստեղծական քերթվածի, ներքին աղոթքի կառուցման սկզբունքները մշակված են դեռևս Նարեկյան դպրոցի ծիրում և շարադրված Անանիա Նարեկացու «Յաղագս զղջման եւ արտասուաց» երկում:

**ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ
«ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԱՐՈՒԵՍՏ» ԵՎ «ԴԱՏՈՒՄՆ
ԸՆՏՐՈՒԹԵԱՆ»**

Նարեկյան դպրոցի ներկայացուցիչները հոգևոր արվեստների համակարգում առաջ են քաշում արվեստաբանական-գրականագիտական խնդիրներ՝ կապված ստեղծագործական ընթացքի, նրա՝ իբրև ամբողջական կառույցի և առանձին տարրերի, բանաստեղծական երկի առանձնահատկությունների, ստեղծագործական ազատության, հուզական ներգործության հետ:

Գրիգոր Նարեկացու ողջ հոգևոր կենցաղավարության և ստեղծագործական փորձի մեջ առանձնահատուկ դեր է վերապահվում ընտրության արվեստին: Այս տեսությունը հանգամանորեն մշակված է Անանիա Նարեկացու «Ձաղագս զղջման և արտասուաց» երկում⁹⁷:

Գեղարվեստական երկի կառուցվածքը քննելիս բանաստեղծական արվեստի տեսության մեջ, իբրև հիմնարար սկզբունք, Անանիա Նարեկացին առաջ է քաշում ընտրություն եղբարարություն, որ տարբեր ձևակերպումներ է ստանում:

Ստեղծագործության ըուն ընթացքում, իբրև միստիկ ծես, Անանիա Նարեկացին տարբերում է ներանձնական աղոթքը հասարակաց աղոթքներից ու սաղմոսներից՝ քննելով այն իբրև ստեղծաբանություն, բանաստեղծություն: Հստ Անանիա Նարեկացու՝ ընտրության արվեստը ներ-

⁹⁷ Այս տեսության, Գրիգոր Նարեկացու ստեղծագործության մեջ սրա արձագանքների մասին տե՛ս Հ. Թամրապյան, Գիրք Բ, էջ 342-364:

Հմտությունների մի արվեստ է, որ վերաբերում է մարդու հոգեսոր ոլորտին, ներանձնական կյանքին: Այս էսոտերիկ բնույթ ունի և ծածուկ է շատերից. «Արդ, ո՞վ եղբայր պատուական, ըստ խնդրոյ քում արժան է ինձ տալ պատասխանի, վասն զի վերագոյն խնդրեցէր գտանել զարտասուս, վասն որոյ ոչ էր պիտոյ գրել առ քեզ, եթէ յաղաւթս կաց կամ սաղմոսեա յաճախ, զի այդ հասարակաց է, եւ դու զայդ հանապազ առնես, այլ ես զընտրութիւն արուեստին ցուցից քեզ, զոր ի բազմաց ծածկեալ է»⁹⁸:

Հստ սրա՝ Անանիա Նարեկացին զարգացնում է մի ամբողջական տեսություն բանաստեղծության, աղոթքի կառուցման սկզբունքների, նրա կարեռագույն մասերի, բաղդրիչների մասին: Դրանք հանդես են գալիս իբրև խոսք ու պատկերի միասնություն՝ աղոթքի օրինակ, նմուշ, որոնք հեղինակը զզջման և արտասուքի պատճառներ է համարում. այդ պատճառները ծառայում են մի նպատակի՝ նրանք ուժին զգացմունքներ պետք է արթնացնեն ներքին աղոթքի պահին, հասցնեն զգացմունքի խոտացման և ուժգնացման, հուղական հագեցվածության, վերապրումի խորության, որ բարոյական մաքրագործման ճանապարհն է, հոգեսոր արվեստի խնդիրը⁹⁹:

⁹⁸ Անանիա Նարեկացի, «Յաղագս զզջման և արտասուաց», ՄՀ Ժ, Էջ 373:

⁹⁹ Հիշեցնենք, որ ըստ Անանիա Նարեկացու, գեղարվեստական երկը կառուցվում է Աստվածաշնչից կամ արտաքին աշխարհից վերցված պատկերներից՝ «պատճառներից» կամ օրինակներից: Այս պատկեր-օրինակները պետք է մարդու հուղաշխարհում դրական և բացասական՝ այս ամենի հիմքում ընկած զզջման զգացմունք արթնացնեն: Այդ պատճառով անվանվում են զզջման պատճառներ (տե՛ս Հ. Թամրաղյան, Գիրք Բ, Էջ 342-364):

Այդ նպատակին հասնելուն օգնում է ընտրության արվեստը, որը գործում է ստեղծագործության ընթացքում՝ իբրև բանաստեղծական ներքին փորձառություն, ներքին և արտաքին կառույցի գոյավորման նախապայման։ Զղջման և արտասուքի շնորհին արժանանալու համար յուրաքանչյուր ոք ինքը պիտի ընտրի իր զղջման օրինակները՝ նաև աստվածաշնչյան պատկերների մեջ գտնելով այն պատճառ-օրինակները, որ զղջման զգացմունք են առաջացնում։ Այսպես բանաստեղծին ընտրության իրավունք է տրվում ստեղծագործության ընթացքում ըստ իր անհատականության, բնության. «Եւ փորձեա՛ զբնութիւնդ, թէ յորպիսի պատճառէ գայ զղջումն, եւ յայն յաճախեա, եւ դարձեալ՝ միտ դիր, թէ յորպիսի պատճառէ շիջանի եւ զայն իբա՛ց ընկեա...»¹⁰⁰:

Էական է, որ Նարեկյան դպրոցի ներկայացուցիչները պատկեր հասկացության փոխարեն՝ իբրև բանաստեղծական կառույցի էական բաղադրիչ, օգտագործում են պատճառ եզրը, քանի որ բանաստեղծության մեջ պատկերը կատարում է զգացմունքային գործառույթ, այն արթնացնում, մաքրում է զգացմունքները, մղում հուզականորեն ընկալելու աշխարհը – յուրաքանչյուր պատկեր, բառ, պոետիկայի, տաղաչափության յուրաքանչյուր միջոց, խոսքն ինքն ամբողջությամբ իբրև միասնական կառույց՝ ծառայում են նույն նպատակին՝ հոգևոր վերառաքմանն ու մաքրագործմանը, ուստի հոգեզգայական կապի մեջ են մարդու

¹⁰⁰ Անանիա Նարեկացի, «Յաղագս զղջման և արտասուաց», ՄՀ Ժ, էջ 364. տե՛ս Հ. Թամրազյան, նույն տեղում, էջ355:

ներաշխարհի հետ՝ արտացոլելով արտաքին աշխարհը, որն իր մեջ այս դեպքում ներառում է նաև սուրբգրային ժառանգությունն ու կանոնացված գրական ավանդությունը: Հնդ որում՝ քնարական այդ հոսքերի մեջ բանաստեղծը ձգտում է խոհի և հույզի ներդաշնակության՝ ստեղծագործում է հուզական խոկման կամ խոհական հուզման պահին: Այդ ներդաշնության գեղեցիկ նմուշ է Անանիա Նարեկացու «Վասն անցաւոր աշխարհիս» բանաստեղծությունը, ինչպես նաև Գրիգոր Նարեկացու «Մատեանի» սուրբգրային հարասություններն ու մի շարք խոհախրատական հատվածներ:

Այս արվեստով ստեղծված երկն է, որ կարող է ներագեցության ուժ ունենալ, և արվեստի նման նմուշներ է Անանիա Նարեկացին ներկայացնում իր խրատաշարքի պատվիրատուին:

Նա հոգեոր արվեստների մեջ է ներմուծում ստեղծագործական ազատության, անձնական փորձի գերազույն նշանակության, խոսք ու պատկերի զգացմունքայնության, ընտրողականության, բանաստեղծական կշռույթների ու կառուցվածքի մեջ դրանց խաղացած դերի էական սկզբունքները՝ հոգեոր մաքրագործության մեջ կարեռագույն տեղ հատկացնելով ներքին «հանապազ» աղոթքին՝ ընդգծելով ստեղծագործական ընթացքի անընդհատականության գաղափարը:

Այս դեպքում աղօթքի կողքին շեշտվում է ներքին մենախոսության, խոհաքնարական բանաստեղծության կերպը: Այդ անընդհատ, ամենօրյա մտորումների, ներապրումների և անվերջ հոլովվող ներքին խոսքի, հարասության գեղար-

վեստական արտահայտման, վերամարմնավորման միջոցով է, ահա, արվեստի շնորհն արմատանում ստեղծագործողի մեջ¹⁰¹:

Անանիա Նարեկացին իր այս տեսությունը մշակելիս, ինչպես նշել ենք, հենվել է հարուստ ավանդույթի վրա, օգտվել է հատկապես Դավիթ Անհաղթի և V-VII դդ. հայ քերականների երկերից¹⁰²: Խոսքը հատկապես ընտրություն, ընտրության արվեստ եզրաբառերի, նրանց մեկնաբանությունների ու ընդգրկման շրջանակների մասին է, որոնք, պարզվում է, առնչվում են քերականության մի կարևորագույն մասի՝ դատումն քերդածացի հետ: Սա բավական տարողունակ մի հասկացություն է, որ զարգացում է ապրել քերականների երկերում և այնուհետև Նարեկյան դպրոցում՝ կապվելով քննադատությունից մինչև բանաստեղծելու արվեստի, ընտրողական ներհմտության, ներշնչանքի հետ:

*

Գրիգոր Նարեկացին ևս հիշատակում է զղման, արտասվելու շնորհի մասին, արվեստի, որ աղոթքի կառուցման ընտրականության, հուզականության սկզբունք է ենթադրում, և միաժամանակ բանաստեղծության պատճառն ու նպատակն է. բուռն զղմանն հետևում է հուզական զեղումը՝ արտասվախառն աղոթքը, որ մաքրագործում է աղոթողին՝ հոգեսոր բերկրանք ու պայծառություն շնորհելով նրան¹⁰³:

¹⁰¹Տե՛ս Անանիա Նարեկացի, «Յաղագս զղման և արտասուաց», ՄՀ Ժ, էջ 392:

¹⁰²Տե՛ս Հ. Թամրապյան, Գիրք Բ, էջ 412-413:

¹⁰³Նույն տեղում, էջ 348-350:

Ահա մի հատված,ուր արտասպելու շնորհն առնված է
բանաստեղծական պատկերի մեջ:

Այլ ազդեա՛ վերստին...

Ի կարծրացեալս մեղաւք անբեր անդաստան՝

Երիկամանց յիմարութեան եւ անպտուղ

Արտիս լքութեան,

Զի առեալ նպաստ աւժանդակութեան ի գթութենէ

կամաց ամենակալիդ՝

Որոտացէ, բղինեցէ Հոգիս՝ ընծայեալ աչաց

Վշտագնեցելոյս

Վտակս արտասուաց արբուցանողաց,

Ինձ՝ ի փրկութիւն եւ ի մաքրութիւն,

Եւ քեզ՝ ի հաճութիւն ընդունելութեան...

(ԿԴ, Դ)

Այժմ անդրադառնանք ընտրութիւն եղրաբառին, որ
Գրիգոր Նարեկացու մոտ դատման ընտրութիւն¹⁰⁴ անվա-
նումն է ստացել՝ առավել ընդգծելով կապը նախորդ դարե-
րի հայ քերականների տեսությունների հետ:

Գրիգոր Նարեկացու «Ի գալուստ Սուրբ Հոգւոյն» քա-
րոզում այս եղրաբառը հանդես է գալիս հետաքրքիր գու-
գորդությամբ՝ Սուրբ Հոգու գերագույն շնորհների շար-
քում՝ հյուսված «էքստատիկ աստվածաբանության» օ-
րենքներով.

¹⁰⁴ Այս բառակապակցությամբ է Մովսես Քերթողը ձեակերպում քերա-
կանության վերջին՝ կարևորագույն՝ գրական երկերի քննադատու-
թյան, ընտրության ու գասակարգման մասը (Դիոնիսիոս Թրակացու
թարգմանության մեջ այն ձեակերպվում է «դատումն քերդածաց»,
տե՛ս Հ. Թամրազյան, Գիրք Բ, էջ 413):

Ամբարձելոց ձեռացն աղերսիւ՝ արագ յայտնեցար,
Պաղատանաց ձայնից հեծութեան՝ փոյթ ժամանեցեր...
Առ քեզ պաղատիմք՝ Աստուած անսկիզբն...
Որով լնուն ի տուրս պարգեւի անաչառ բաշխմամբ՝
բարձունք եւ ստորինք.
Հնկալցիս գքո ընտրեալսն եւ զաւրացուացես ի հանդէս
քոց պատուիրանացդ
Զքահանայապետն մեր դիտողութեան քոյինսակրաւն
պատուոյդ սրբութեան՝
Զհայրապետն մեր զտէր [այս անուն],
Զայցելուն դատման ընտրութեան, որ ընդ
քեզն է կցորդութիւն,
Զպէտս վարժից կրթութեան, որ ընդ
քեզն է դաւանութիւն.
Զքազմամասնեայ գումարս դասուց՝
յանուն քո ժողովելոցս...
(«Ի գայուստ Սուրբ Հոգւոյն»)¹⁰⁵

Դատման ընտրությունը կրթության վարժանքի հետ հանդես է գալիս իբրև Սուրբ Հոգու գերագույն շնորհ և դիտվում է իբրև Կցորդություն Սուրբ Հոգուն: Հատկանշական է, որ այդ հմտությունները կապվում են աղերսի, պահատանքի, աղոթքի շնորհների հետ:

Սա վկայում է, որ դատման ընտրության տակ հեղինակը նկատի ունի աղոթքի, քերթության արվեստը, որն, իրոք, հասկացվում է իրբեկ կցորդություն Սուրբ Հոգուն, և

¹⁰⁵ Գրիգոր Նարեկացի, «Ի դայլստ Առաքք Հոգւոյն», ՄՀ ԺԲ, էջ 671-672:

որը ձեռք է բերվում կրթությամբ և վարժանքով։ Հոգեոր արվեստների, մարդկային իմաստության և հանճարի՝ իրրև Սուրբ Հոգու շնորհների նմանատիպ հիշատակումները հաճախ են նաև «Մատեանում» (տե՛ս, օրինակ, Լ.Դ, Բ. Լ.Դ, Է)։

Գրիգոր Նարեկացու ճառերում և ներբողներում դատումն ընտրությանը կրթության վարժանքի հետ դիտվում է Սուրբ Հոգու շնորհած վարդապետական առաքինությունների ու բարձրագույն գիտությունների շարքում։ Այսպես, Ապարանից Սուրբ Խաչի պատմության մեջ Գրիգոր Նարեկացին այն դարձյալ կապում է կրթության և վարժանքի, գիտնականների և արվեստագետների հմտությունների հետ։

«Որ նկարագրեաց իբր զտարացոյց գեղոյ պատկերի ձեւոյ տեսակի՝ զնմանութիւն նորին ի յանձին գեղեցկապէս հետեւեալ նախնեացն։ Իսկ ի դատումն ընտրութեան վարժից... գիտութեանց եւ այլոց բազմաց սովիեստից, վայելչապէս՝ համբուրիւ պատահեալ»¹⁰⁶։

Հակոբ Մծբնեցուն նվիրված ներբողում ևս այն համարվում է Սուրբ Հոգու վարդապետական շնորհ։ «Նա եղ զոմանս առաքեալս՝ առ ի յինքենէ, զոմանս մարգարէս գուշակս ապառնեացն, զոմանս աւետարանիչս կենացն բանի... զոմանս վարդապետս՝ առ դատումն վարժից...»¹⁰⁷։

«Մատեանի» ՀԵ գլխի Զ հատվածում, օրինակ, մարդարեական, առաքելական շնորհների հետ ընդգծվում է նաև

¹⁰⁶ Գրիգոր Նարեկացի, «Պատմութիւն Ապարանից Սուրբ Խաչին», ՄՀ ԺԲ, Էջ 917։

¹⁰⁷ Գրիգոր Նարեկացի, «Ներբող ի սուրբ Յակոբ Մծբնայ բան նուիրական գովեստի», ՄՀ ԺԲ, Էջ 991-992։

վարդապետական գերագույն շնորհը, որը «կրթության վարժանքով» զորացնում է մարդկային հանճարը:

«Աւրհնաբանեմք ընդ Հաւը եւ Որդւոյ եւ զանբաժանելի բղխումն՝ նոցին փառակից Հոգւոյն տէրութեան, որ ստեղծ զբնաւս եւ կենդանածնէ զամենայն... Նախ արար եւ այժմ գործէ, գոյացոյց եւ միշտ կատարէ արուեստս, սքանչելիս, նախատեսութիւնս սրբասնելոց, ազդմունս աստուածաւրէնս, զաւրութիւնս զարմանաւորս, մարդարէս, առաքեալս, վարդապետ՝ վարժողս կրթութեան հանճարոյ»:

Այսպիսով, ընտրության արվեստը, որ Գրիգոր Նարեկացու մոտ հանդես է գալիս դատումն ընտրության, դատումն ընտրության վարժից ձևակերպումներով, ընդլայնում է իր իմաստային դաշտը, հմտություններից բացի կապվելով հոգեւոր արվեստների, ընդհանրապես բարձրագույն աստվածային գիտելիքների ձեռքբերման հետ, որոնց կարող է մարդը հասնել իր աստվածատուր ձիրքով և հանճարով:

*

Բանաստեղծական արվեստի այս սկզբունքներն ու խնդիրներն, իբրև ստեղծագործական ընթացքի ուղենիշներ և բաղադրիչներ, ընկած են Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» երկի կառուցվածքի հիմքում: Նա իր տաղերն ու «Մատեան ողբերգութեան» մոնումենտալ երկն ստեղծել է այս տեսության համաձայն՝ մեծապես հարստացնելով այն իր ստեղծագործական փորձով¹⁰⁸:

¹⁰⁸Տե՛ս նաև Հ. Թամրապյան, Գիրք Բ, էջ 412-413:

Իր ուսուցչի՝ Անանիա Նարեկացու նման Գրիգոր Նարեկացին ստեղծագործությունն ընկալում է իբրև մի ամբողջություն, որ բաղկացած է բազմաթիվ մասերից, հատկություններից, հանգամանքներից, պատճառներից, որոնք փոխկապակցված են, տանում են ստեղծագործողին ընտրության, ներշնչանքի, զգացմունքային լարման ճանապարհով: Բանաստեղծի բուն խնդիրն է՝ հասցնել ներաշխարհը զգացմունքային այդ լարման կիզակետին, էքստատիկ հոգեվիճակին, որն արվեստի մաքրագործության էությունը, խորհուրդն է:

Երկի՝ որպես բազում պատճառներից կազմված միեղեն կառույցի տարբեր մասերը, միանալով դատման և ընտրության օրենքներով, ներքին կապի մեջ են միմյանց հետ:

Բանաստեղծական քերթվածի այս ընկալումը գեղեցիկ արտահայտություն է գտել «Մատեանի» արդեն մեջբերված հիշատակարանում, այստեղ նկարագրված է ստեղծագործության դժվարին ընթացքը, ուր իրար են միացած դատման ընտրությունն ու կրթության վարժանքը.

«Մտացեալ հիմնեցի, կառույցի, կարգեցի, կուտեցի, արձանացուցի, դիզի, բարդեցի, կացուցի, ցուցի, հաստատելով ի հրաշակերտութիւն միագոյ իրի զբազմաստեղնեան դրուագ դրութեան այսմ սովիերի արգասաւորի...»¹⁰⁹:

Գրական երկի՝ իբրև ամբողջական կառուցվածքի մասին իր պատկերացումներն է Գրիգոր Նարեկացին արտահայտում նաև «Պատմութիւն Ապարանից Սուրբ Խաչին»

¹⁰⁹ Գրիգոր Նարեկացի, «Մատեան ողբերգութեան». «Յիշատակարան մատենիս դրութեան», ՄՀ ԺԲ, Էջ 605:

ներբողատիպ ճառի մեջ: Նա իր երկն համարում է «արվեստահյուսակ առասացություն», որ կառուցված է ըստ մասերի իմաստային-պատճառական կարգավորության՝ «պրակապատճեն պիտառության», և համամասնության՝ իբրև միակառույց հորինվածք՝ «խոսքի հոլովույթի միամասնյա հավասարության հարթություն»: Այդպես է նա կառուցում իր երկը՝ «գումարահողով պատմաբանությունը», որի համամասնությունները ենթարկվում են երկի հիմնական գաղափարին, ներքին պատճառական կառույցին. «Եւ արդ, զգիր ընթացից պատմութեան բանիս աստուստ կնքեսցուք. Եւ փոխատրեալ այլաբանեսցուք ի զանազան բարեբաստութիւնս ներբողական արհեստահիւսակ առասացութեամբ, պատեհ պատշաճողութեամբ, սկզբնաւորեալ ի պրակապատճէն պիտառութեան ի պարս կարգի բանիս հոլովման, զի ի հաւասարութիւն հարթութեան միամասնեայ նկատման խառնեալ միասցին: Եւ արդ, ահա սկսցուք զկնի գծագրութեան գումարահողով պատմաբանութեանս խառնել դուն ինչ գրութիւնս համառաւտագիր դրուատից...»¹¹⁰:

Հեղինակի նորարարությունն արտահայտված է նաև «Մատեանի» բանաստեղծական ներքին կառույցում, ուր հերթագայում են իրար բանաստեղծական ժանրային տարբեր գրակառումներ: Բանաստեղծի խոսքը, ձգտելով նոր հղացումների ու ոլորտների, հաճախ ծավալվելով, դուրս է գալիս աղոթքի ժանրային հսկողությունից, որ ենթադրում է դիմումի կաղապարի մեջ առնված հնարավոր սեղմ ու դինամիկ պարբերությունների հաջորդականություն:

¹¹⁰ Գրիգոր Նարեկացի, «Պատմութիւն Ապարանից Սուրբ Խաչին», ՄՀԺ ԺԲ, էջ 928-929:

ինչպես նշել ենք, համեմատությունն Անանիա Նարեկացու բանաստեղծական նմուշների հետ ցույց է տալիս, որ դրանք, «Մատեանը» ստեղծելիս, նախաձեռ են հանդիսացել Գրիգոր Նարեկացու համար։ Այն, ինչ Անանիայի մոտ հանդես է գալիս առանձին՝ իբրև ժանրային ենթաբաժանում՝ աղոթք և ներքին մենախոսություն, որ զերծ է աղոթքի կաղապարից, Գրիգորի մոտ համակցվել է՝ ստեղծելով բանաստեղծական նոր որակ, որին մենք պայմանականորեն համադրական աղոթք անվանումն ենք տվել¹¹¹։ Սրանից զատ՝ «Մատեանի» ընդհանուր հորինվածքի, հղացման ներքին անհրաժեշտությամբ, նրանում միահյուսված են, ինչպես նշել ենք, բանաստեղծությունն, ներքող, աստվածաբանական-ճառապատիպ քերթվածներ, բանաստեղծական մեկնություններ ու ստուգաբանություններ, որոնք հիմնականում կապվում են սաղմոսների հետ։ Բերենք մի քանի օրինակներ։

*

Գրիգոր Նարեկացու որոշ մեծածավալ ողբերում դիմումի կաղապարն հաճախ կիրառվում է մեկ-երկու անդամ, և բանաստեղծական կառույցը ճյուղավորվում է նրանից անկախ։ Որոշ հատվածներ ընդհանրապես զերծ են աղոթքին հատուկ դիմումի կաղապարներից, ինչպես, օրինակ, Զևս գլուխները, որոնք յուրահատուկ են նրանով, որ ժանրային տարբեր ենթաբաժանումներ են։ Առաջինը ներկա-

¹¹¹ Տե՛ս Հ. Թամրապյան, Գիրք Բ, էջ 382:

յանում է իբրև խոհափիլիսոփայական և դիդակտիկ բանաստեղծական հյուսվածք, քանի որ, ինչպես պարզվում է վերջին տողերից, ուղղված է ընթերցողներին՝ վանականներին, մենակյացներին և այլոց:

Եւ արդ, եթէ ոք զանձն ոչ խարեսցէ,
Եւ առ երեսս ոչ կերպարանեսցի,
Եւ կեղծաւորաբար ոչ անհաւատեսցէ,
Եւ մարդ զինքն ծանիցէ,
Եւ հասարակաց բնութեամբ վարեսցի,
Եւ երկրածին զանձն դիտեսցէ,
Եւ ի չափ իւրում կանոնին կացցէ,
Իմասցի, ծանիցէ զնախաթիւ մասունս արկածիցդ
վերագրելոց,

Թէ ոչ ընդունայն ինչ գրեցի
Եւ կամ զբնաւ իսկութիւնն սահմանեցի,
Որ ի մերս բնութեան պտուտկի ազգի
ազգի վրիպականութիւն,
Այլ ի բիւրուցն արգասեաց չարեաց չափ
մի երեւեցուցի,

Զի նոքաւք եւ զայլսն իմաստասիրեսչիք,
Թէպէտ եւ ոչ բովանդակապէտ:

(Զ, Ե)

Հ գլուխը ևս շնչում է խոհափիլիսոփայական տարերքով
և զերծ է աղոթքի կաղապարից: Այստեղ, ինչպես և շատ
հատվածներում, բանաստեղծը խոսքն ուղղում է ինքն իրեն,
ինքնասույզ հայացք է նետում իր բնությանը, ներաշխար-
հին.

Եւ արդ, զի՞նչ գործեցես, անձն իմ կորուսեալ,
Կամ ո՞ւր թաքիցես, կամ զիա՞րդ ապրեցիս,
Կամ որպե՞ս ելցես ի մեղացդ բանտէ...
(Ը, Ա)

«Մատեանի» կառուցվածքի մեջ էական դեր կատարող
ներքին մենախոսությունը հաճախ հանդես է գալիս իբրև
ինքնուրույն արժեք:

Հաճախ կրկնվում է նույն պատկերը, հեղինակը քնարա-
կան մենախոսության է դիմում՝ իրեն նախապատրաստելով
բուն աղոթքին, զորացնելով զղական լիցքերը: Այդ են վկա-
յում Զից ԺԱ գլուխները, որոնք մենախոսության
սկզբունքով կառուցված քնարական-խոհական, դիդակտիկ
բանաստեղծություններ են:

Սրանից հետո, զղական լիցքեր կուտակելուց հետո,
բանաստեղծն անցում է կատարում աղոթքին, ինչպես
ինքն է վկայում.

Եւ արդ, քանզի յաւէտ յառաջնում զղմանն
Յուսահատութեանն բանիւ լքայ
Եւ տարակուսանաց հեծանաւն ի մահ ձաղկեցայ,
Աստանաւր ի յուսոյն կերպարան փոխեալ՝
յարգահատել համարձակեցայ՝

Զերբորդութիւնն Սուրբ կարդապով
յաւզնականութիւն ինձ՝ մեղաւորիս:
Որ եւ անդստին իսկ յաւրհնաբանելն
Եւ ի դաւանելն զկենդանարարն բնաւից Աստուած,
իսկոյն եւ կոչումն ընտանի ձայնի
Ահաւորութեան անուան շնորհաձիրն բարերարի,

Մահացելոյս է կենդանութիւն,
Հստ մարգարէին նախաճառութեան...

(ԺԲ, Ա)

Հատկանշական է իլ գլուխը, որ ներքին մենախոսություն, խոստովանաք է և աղերսներ ունի Հոբի գրքի հետ.

Եւ արդ, զո՞րս յայտնեցից,
Եւ յաղագս ո՞յց նշանակեցից,
Եւ վասն որպիսեա՞ց ճառեցից,
Եւ զորքա՞ն ծածկեալս մերկացուցից,
Եւ կամ վասն որո՞ց խոստովանեցայց.
Զներկայի՞ցս, զոր արդէն ունիմ,
Թէ՞ զանցելոցն, զոր մթերեցի,
Զապագայի՞ցն, յորոց կասկածեմ...
Զփո՞քն ինձ համարեալ, որ է Աստուծոյ մեծ գրեցեալ,
Թէ՞ զանկերպագրելին չյիշատակելի...
Զհոգեկանա՞ցն կրից կորուսչաց,
Թէ՞ զմարմնականաց ախտից սպանողաց...
Զաներեւութի՞ցն, թէ՞ զտեսականացն,
Զառ ձեռն հպաւորութի՞ւն,
Թէ՞ զառ նոյն ինքն շունչ հեռաւորութիւն,
Զլայնակա՞նն դիւրին խածմունս,
Թէ՞ զերկարաւորն նետաձգութիւն,
Զխորութեա՞նն զանչափութիւն,
Թէ՞ զամենածախն յայտնատեսիլ...
Զխնամո՞վն հանդիսանալ յոչ ախորժելիսն Աստուծոյ,
Թէ՞ զբոնաղատութեանն տոռամբ ձգիլն
ի նոյն մոլեգնութիւն...

(ԻԼ, Ա)

*

Գրիգոր Նարեկացին, Անանիա Նարեկացու նման, ներսուզված, կենտրոնացած է Աստվածաշնչի պատկերային համակարգի և բանաստեղծական շերտերի վրա, որոնք վերապրվում, վերարթնանում են նրա բանաստեղծական հյուսվածքում իրեն կարեոր հանգույցներ։ Ահա մի համար ամահունչ է Անանիա Նարեկացու «Վասն անցաւոր աշխարհիս» բանաստեղծությանը։

Հստ Երեմիայ բանին խրատեցեալ,
Պակասեալ աւուրցս ի հեծութենէ, եւ ընթացք ամացս՝
ի հառաջմանէ,

Հստ նուագարանաց երգողին։
Իբր ասուի՝ ի ցեցոյ, եւ փայտ՝ ի յորդանէ,
Հստ իմաստնոյն բանի, ի խիթմանէ սրտիս հալեցայ,
Իբր զոստայն սարդից մաշեցայ, ըստ սաղմոսողին,
եւ խոտան գտայ,
Իբր զամակ առաւաւտեայ եւ զցաւդ վաղորդայնի,
Հստ մարգարէութեանն ձայնի, սպառեցայ։

(ԻԱ, 6)

Հնտրվում են սուրբգրային այն տեղիները, պատկերներն ու օրինակները (սաղմոսների և մարգարեությունների, Ժողովողի, Հոբի գրքերի), որոնք առավել հուզական-հոգեբանական լիցքեր են խտացնում իրենց մեջ՝ ընդգծելով հոգեսոր երգի երկնային իմաստը, որ հոգեսոր հափշտակության է հասցնում աղոթողին, տանում նրան երկնային առնչակցության։ Նման հատվածները Գրիգոր Նարեկացու ստեղծագործության կարեոր աղերսաշերտերից են, ուր ի-

րար են միացած ռացիոնալ-վերլուծական և հուզական տարերքները:

Դրանք բազմաթիվ տարբերակներով առկա են «Մատեանի» կ-կԲ գլուխներում, որոնք վերածվել են զուգակշիռ տեքստի, երբ սաղմոսն ու Հեղինակային խոսքն ընթանում են զուգադիր, կամ համամասնությունը խախտվում է Հեղինակային խոսքի ծավալման հաշվին: Այսպիսով՝ Հեղինակի խոսքը վերածվում է սաղմոսի հարասության կամ գեղարվեստական մեկնաբանության:

Դեռևս Խոսրով Անձևացին քննության է առնում սաղմոսների մի շարք նման սկսվածքներ ու բանաձևեր¹¹²:

«Ողբամատեանի» կԲ գլխում Գրիգոր Նարեկացին պարզում է իր նպատակը. նա դիմում է սաղմոսներին՝ նրանց զգացմունքային ծալքերը բացելու, նրանց իր բանաստեղծական խոսքին «Հոգելու», «Մատեանի» զղջական ոգին զորացնելու նպատակով.

Այլ արդ, ընդէ՞ր ոչ ի վերագրեցեալն սաղմոս
նախաճառական

Եւ յայլ մարդարէիցն մասն ինչ յաւդեցից:

Քանզի զի՞նչ վայելումն իցէ կերակրոյն,

Եթէ անգգայեալ ցաւովք ուտիցեմ,

Եւ կամ զո՞ր շահ սաղմոսն ունիցի,

Եթէ ոչ ի միտ առնուցում:

Քանզի նզովեմ զիս ինքն ի նոսին, եւ ոչ իմանամ,

Լուացեալ լինիմ, եւ ոչ պայծառանամ,

¹¹² Տե՛ս Հ. Թամրազյան, Նարեկյան դպրոցը, էջ 186-189:

Արեւու ծագեալ, եւ ոչ լուսաւորիմ,
Մեղր ճաշակեմ, եւ ոչ քաղցրանամ,
Ուետնիւ լնանիմ, եւ ոչ բժշկիմ,
Միշտ կանխեմ ի նոյն, եւ դատարկ երեւիմ,
Հանապազ ձաղիմ, եւ ոչ երբէք խրատիմ,
Ողոքիմ դարձեալ, եւ ոչ զգաստանամ:

(ԿԲ, Ա)

Մատեանի նշված գլուխներում ընտրաբար ներկայաց-
վում են սաղմոսներից զանազան քաղվածքներ: Կ գլխի ա-
ռաջին հատվածում հեղինակը, պատկերավոր մի նախաբա-
նից հետո, այդ վկայությունները շարակարգում է առանց
հեղինակային միջամտության: Այնուհետև այդ մեջբե-
րումներն ընդմիջարկվում են հեղինակի զուգաղիր տողե-
րով, ուր հեղինակն հակադրում է իր անձը Դավիթ մարգա-
րեին և խոսքն հյուսում սաղմոսներից քաղված տողերի ու
արտահայտությունների շուրջ.

Եւ արդ, որպէս զի ոչ վայել է աւրհնաբանութիւն
ի բերան մեղաւորի,
Ի ճշմարիտն առակէ կանխաւ իսկ ուսայ,
Զիա՞րդ յաւելից կրկնել զնոյն գովութիւն
աղաչաւորս բազմապատկառ,
Որ հանապազ ընդունիմ անէծս ի սաղմոսիս
բարեբաստութեան:
Զի ի՞բր երգեցից ինձ վտանգս եւ արձանացուցից
նախատինս
Եւ ի մերկութեանս գրկի փուշս ընդ շուշանաց
ժողովեցից:

Զիա՞՞րդը ընդ Դաւթի համարձակեցայց ասել,
թէ՝ Զատամունս մեղաւորաց փշրեսցես (Սաղ. Գ, 8),
Զիա՞՞րդ դարձեալ, թէ՝ Մի՛ անաւրէնք բնակեսցեն
առաջի աչագ քոզ (Սաղ. Ե, 6),

Զիա՞րդ, թէ՝ Դատ արա ինձ, Տէ՛լ,
Հստ արդարութեան քո, ըստ անքծութեան իմոյ,
որ յիս (Սաղ. է, 9):

Զիա՞րդ, թէ՝ կատարեսցին չարիք ի կերպ մեղաւորաց (Սաղ. է, 10)

*Զիա՞րդ, թէ՝ Խորտակեցին բազուկք
մեղալորի եւ չարի (Սաղ. Թ, 15), -*

Եւ զայլն, որ զկնի...

*Զիա՞րդ, թէ՝ Փորձեցեր զսիրտ իմ եւ
ոչ գտեր անիրաւութիւն (Սաղ. ԺԶ, 3):*

Զիա՞րդ զյաջորդն սմին, թէ՝

Ես պահեցի զՃանապարհս խիստս (Սաղ. ԺԶ, 4),

Զիա՞րդ զեւսն, թէ՝

Ես արդարութեամբ երեւեցայց

Երեսաց քոց... (Սաղ. ԺՂ, 15)

Զիա՞րդ անձամբ ինձէն զստութիւն իմ ծանակեցից՝
Ասել ընդ սրբոյն, թէ՝

Հուացայց սրբութեամբ զձեռս իմ (Սաղ. ԻԵ, 6):

**Զիա՞րդ ի մէջ նանըութեան զամբարչտացն աթոռա
բամբասեցից,**

**Զիա՞րդ զերջանկին պարծանս թշուառացելումս
կերպաւորեցից,**

Թէ՛ Դատ արա ինձ, Տէր, զի ես
յանբժութեան իմում գն

Զիա՞րդ աւտարս ի բարեաց գիտողիդ գաղտնեաց
արգահատեցից,

Թէ՛ Մի՛ Համարիր ընդ ամբարիշտս
զանձն իմ (Սաղ. Իէ, 3):

Զիա՞րդ ես ինքն գոլով՝ զայլս անիծեցից,
Թէ՛ Տո՛ւր նոցա, Տէր, ըստ գործս նոցա (Սաղ. Իէ, 4), -
Եւ ի կարգ բանին Համարձակեցայց:

(Կ, Ա)

Ինչպես մեջբերվող Հատվածի երկրորդ կեսում, սաղմոնի տողն ու Հեղինակի տողը զուգահեռ են ընթանում նաև նույն՝ Կ գլխի Գ, Դ, Ե Հատվածներում, ԿԱ գլխում, բացի Դ Հատվածից, ԿԲ և ԿԴ գլուխների Բ և Գ Հատվածներում։ Այստեղ Համամասնությունը Հաճախ խախտվում է, ինչպես նշեցինք, Հեղինակային խոսքի ծավալման հաշվին։

Եւ ընդե՞ր է ինձ բնաւն, որ ի սաղմոսին,
Այսպիսեաց բանիցն ի կիր արկանել,
Որ ի նախատինս միանգամայն
Եւ ի նզովս ինձ յարակային,
Հանապազ երգել իմովքս տաւղաւք։
Քանզի զիա՞րդ արդեւք զշուք երջանկին
Ինձ՝ դատապարտելոյս նմանեցուցից՝ ասել ընդ նմին,
Թէ՛ Ոչ մերձեցաւ առ իս թիւրեալն սրտիւ։
Զիա՞րդ գկարգաղբութիւնս տանցն
Ի յայսմանէ զկնի թուելոցն զարհուրեցուցչաց,
Ընդակից կայից կանոնաց աւրինաւորին,
Զինուորին եւ թագաւորին եւ մարմնական
Հրամանատուին,

Որք եւ երկնայնոցն են համբուրելիք,
Ասելով՝ Ոչ յուսահատ եղէց ի կենաց
Պատմողս աւետեացս եւ նորոյս աշակերտ,
Անմասն յամենուստ բարեկարգութեանց:
Զիա՞րդ, ըստ իրաւախորհ արդարոյն,
Հնդդէմ մեղաւորացն մահու զինեցայց

առակաւ առաւաւտին
ի սկիզբն արթնութեանն միշտ պատրաստական
լինելոյ,

Որ եւ ոչ զանդամս մարմնոյս գանեալ խրատեցի:
Զիա՞րդ մասնակցեալ մեծին արութեան՝
Սատակեցից ի քաղաքի տեառն զանաւրինեալսն,
Որ եւ ոչ զբուսեալ բիծս հոգւոյս իմոյ մեռուցի:
Զիա՞րդ ստեցից գրողին չեւ յայտնեցելոցն,
Թէ՛ Զմոլիքր որպէս հաց կերայ (Սաղ. Ճ, 3-4):
Զիա՞րդ, որ ոչ միացուցի յիմոցս կրից
կաթիլ մի պղտոր

Հնդ յստակ արտաւսր աղբերց երգողին, ասեմ
ընդ նմին,
Թէ՛ Զըմպելի իմ արտասուաւք խառնեցի (Սաղ. ՃԱ, 10),
Եւ՝ Արտասուաւք իմովք զանկողինս իմ
թացի (Սաղ. Զ, 7):

Զո՞րս ինձ գրեցից մեղաւք մահացեալս,
Յորժամ սիրողն Աստուծոյ ի բոլոր սրտէ՛
Զյանցմունս նախնեացն իւր վարկանիցի,
Թէ՛ Մեղաք մենք ընդ հարս մեր,
անաւրինեցաք եւ յանցեաք (Սաղ. ՃԵ, 6),-

**Եւ որ ի վախճանն յանգի սաղմոս՝
Իրաւամբք առ իս, քան առ հսրայէլ:**

(ԿԱ. Ա)

Գրիգոր Նարեկացու համար սաղմոսների այդ տողերը նախօրինակի նշանակություն ունեն: Բանաստեղծը հենց վում է նրանց վրա իր այս գլուխները հյուսելիս, որ սաղմոսների հարասություններ լինելուց բացի՝ նրանց գեղարվեստական մեկնություններ են: Ընդ որում՝ մեկնության սովորական համամասնությունը փոխվել է, սկզբում տրվում է յուրատեսակ հուզական մեկնությունը, որ նաև սաղմոսի համապատասխան հատվածին հարաբերվող հոգեբանական ինքնավերլուծության փորձ է: Այս հատվածները, փաստուեն, սաղմոսների սուբյեկտիվ ընկալումներ, հուզական զգայական վերապրումներ ու իմաստավորումներ են և պատկերում են նրանց անդրադարձը անհատի հուզաշխարհում, մեկնում հուզական ազդեցության ուժը: Այս երեսութն արտահայտություն է գտել բանաստեղծական մի զորեղ պատկերում, ուր բանաստեղծն իրեն հարաբերում է հսրայելի ողջ ժողովրդի հետ. «Եւ որ ի վախճանն յանգի սաղմոս՝ / Իրաւամբք առ իս, քան առ հսրայէլ»: Սաղմոսի տողերն առավել վերաբերում են բանաստեղծին, քան ողջ հսրայելին: Սաղմոսները, ինչպես և սուրբգրային ողջ պատկերաշարքը և խոսքաշխարհը բանաստեղծն առավել առնչում է իր ներանձնական ապրումներին: Մեկնության այս սկզբունքն ու բնականոն համամասնությունը պահպանված է ԿԴ գլխի Բ և Գ մասերում:

Այստեղ էլ նա ներմուծում է սաղմոսների և մարդարեռությունների առավել հուզական, զգացմունքային լիցքեր պարունակող և պատկերավոր հյուսվածքներ, որոնք քաղվածաբար համադրում է իրար՝ գուգաղրելով իր բանաստեղծական խոսքի հետ, ստանալով մի բոլորովին նոր բնագիր (Հարասություն), ուր խոսքն ունի ուրույն շեշտադրություն և կրում է բանաստեղծի ինքնության կնիքը:

Ասացեր անաւրինիս, թէ՛ Մի՛ անաւրինիր (Սաղ. ՀԴ, 5),

Եւ ես ի նոյն չարիս պնդեցայ,

Մեղաւորիս, թէ՛ Մի՛ ամբառնար եղջիւր ի

բարձունս (Սաղ. ՀԴ, 5-6),

Եւ ես զընդդէմսն քեզ գործեցի,

Եւ ոչ զգացի երբէք զառածեալս,

Թէ ի ձեռին քո են եղջիւրք արքայութեան հպարտից

ամբարձելոց

Խոնարհեցուցանել եւ բարձրացուցանել...

Եւ զտեղին՝ յաւիտենից, եւ զաւրինակ նմին՝ սոսկալի,

Եւ ես ո՛չ իմացայ, ըստ սաղմոսողին, եւ ո՛չ

մտառեցի (Սաղ. ԶԱ, 5),

Այլ ի մռայլ մտաւորական կուրութեան գնացի:

(ԿԴ, Բ)

Գործում է նույն ընտրության, դատման սկզբունքը. բանաստեղծը, յուրացնելով, հուզական ընտրության ենթարկելով սուրբգրային ժառանգությունը՝ սաղմոսներն ու մարդարեռությունները, ներմուծում է դրանք իր խոսքի մեջ՝ լինի այն ներքին մենախոսություն, թե աղոթքի սկզբուն-

քով կառուցված բանաստեղծություն։ Այս առումով կատարյալ նմուշ է նաև ԿԲ գլխի Գ հատվածը։

Ո՞ղբք ինձ կարդացէք առ ձայնն,
Թէ՛ Զոր աւրինակ վառի եղէզն ի կայծականց հրոյ,
Այնպէս այրեսցին մեղաւորք ի բորբոքեալ
բոցոյն (Ես. Ա, 20):

Լացէ՛ք առ սաղմոսն,
Թէ՛ Արկցե՛ս ի վերայ նոցա կայծակունս
հրոյ (Սաղ. ՃՂԹ, 11):

Աշխա՛րհս պատմեցէք ի բանս աստուածեան վճռին՝
Մարդարէիւն ազդեցեալ՝
Թէ ոչ կամիցիք լսել ինձ, սուր կերիցէ

զձեզ (Ես. Ա, 20):

Կոծեցարո՛ւք առ սաղմոսն,
Թէ՛ Մահ, Հովուեսցէ զնոսա (Սաղ. ԽԸ, 15):
Աղի արտասո՛ւս ողորմ հառաչմամբ ընդ
հեծութիւնս իմ յարմարեցէք,
Յորժամ բարձրեալն ընդ հսրայելի եւ ինձ
ասասցէ բանիւ սաղմոսին,
Թէ՛ ժողովուրդ իմ ոչ լուաւ ձայնի

իմում (Սաղ. Բ, 12)...

Այսօրինակ մեկնությունները, ներհյուսվելով բանաստեղծական կառույցին, գեղարվեստական խնդիր են հետապնդում՝ միջոց դառնալ առավել ինքնարտահայտման։

Իր այս գեղարվեստական-ոճական հնարանքին, երբ միաձուլվում են բանաստեղծությունն ու գեղարվեստական մեկնությունը, գեղեցիկ ձևակերպում է տվել ինքը՝ Գրիգոր

Նարեկացին «Մատեանի» ՂԲ և ՂԳ գլուխների խորագրերում՝ նվիրված ժամհարի կոչնակին և մեռոնին. «Ի փայտն երջանիկ բարեբաստութեան ժամահարին խորհրդածութեան, աղաչանս եղեալ ընդ կերպարանս թարգմանութեան», «Աղաւթք թարգմանաւրէն վասն սրբալոյս իւղոյն միւռոնի»:

Ուրեմն հեղինակը գիտակցաբար է գնում ժանրերի այս ներթափանցմանը, լեզվաոճական և իմաստային այս բազմաշերտությանը՝ ծառայեցնելով այս ամենն իր գերխնդրին՝ «Մատեանի» հուզական-խոհական տարերքին՝ նրա զգացմունքային խոռվքը սնելով նաև բանական խորքերով:

Ժանրերի ներթափանցման այս երևույթը ևս եղակի չէր Նարեկյան դպրոցի ավանդույթում: Դրա օրինակները տվել է Անանիա Նարեկացին մեկնողական իր երկերում: Ուրեմն, այստեղ մենք գործ ունենք այս դպրոցի մատենագրության համար տիպական ևս մի երևույթի հետ:

Գրիգոր Նարեկացու «Մատեանի» ԿԱ գլխում հանդիպում ենք սաղմուների մեկնության առավել անխառն նմուշների, որոնք առավել մոտենում են նրա հոր՝ Խոսրով Անձեւացու նման օրինակներին¹¹³: Այսպես.

¹¹³ Խոսրով Անձեւացին այսպես, հենվելով սաղմուների բնորոշ տեղիների վրա, մեկնում է փառատրությունը, հոգեոր երգը՝ որպես առ Աստված տածած սիրո, «Ճերմ փափազի», «սաստիկ ցանկության» արտահայտություն, կաթողին բաղձանք, կարոտ, ծարավ, որից նվազում են հոգին ու մարմինը. «Քանզի որպէս սասացի՝ այս պատիւս քան զամենայն պատիւ գերազանց է և քան գերկնից եւս արքայութիւն: Որում պատուի մեծն Դաւիթ տենչացեալ, կաթողին բաղձանօք ասէր զԱստուած. «Զի՞նչ կայ իմ բնաւ յերկինս. կամ ի քէն զի՞նչ եւս խնդրեցից յերկրի» (Սաղ. ՂԲ, 25): Եւ արդ ասա՛, ո՛վ երանելի մարգարէ. զի թէ

Բարեբանեալ է եւ այս իմաստ հոգեւոր
Եւ տէրունի գործոյն նմանի,
Որ զփորձիչն պատկառեցոյց,
Յորժամ զամենայն արհամարհեսցէ
Եւ զսկզբնապատճառն եղելոց միայն ընտրեսցէ՝
Ասելով, թէ՝ Երանի՛ ժողովրդեան, որոյ տէր
Աստուած է նոցա (Սաղ. ՃԽԴ, 15):

Մեծ է եւ այս բարձրութիւն շնորհի
Եւ զգուշական համարձակութիւն՝ լցեալ
Երանութեամբ,
Թէ՝ Սուլըք քո աւրհնեսցեն զքեզ (Սաղ. ՃԽԴ, 10):
Հղձալի է եւ այս ընտանութիւն մերձաւորական
Հոգեւոր հաղորդութեան...

ՅԱստուած յուսալ եւ ի նոյն արձանանալ,
Բանիւ սաղմոսին բերկրեալ,
Թէ՝ Զկամս երկիւղածաց իւրոց առնէ
Տէր (Սաղ. ՃԽԴ, 19),-

չունիս ինչ պէտք իրաց յերկրէ, ապա զինչ է որ քեզ փափագելին է: «Նուաղեաց, ասէ, սիրտ իմ եւ մարմին իմ» (Սաղ. ՀԲ, 26): Աստանօր սիրտ զոգին ասէ, եւ զոգւոյ եւ զմարմնոյ ջերմ փափագն առ Աստուած յայտ առնէ, որպէս թէ նուաղիլ ի սաստիկ ցանկութենէն: Փանզի կարօտութիւն հացի եւ ջրոյ նուաղէ զմարմինն, այսպէս եւ իմ կարօտութիւնս առ քեզ՝ նուաղէ զիմ հոգի եւ զմարմին: Զոր եւ յայլում սաղմոսի ծարաւ իսկ կոչէ: «Ծարաւէ՛, ասէ, առ քեզ հոգի իմ» (Սաղ. ԿԲ, 2). Քանի՞ պատիկ եւս եւ մարմին իմ: Եւ դարձեալ. «Որպէս փափագէ եղ՝ ջերու յաղբիւրս ջուրց, այնպէս փափագէ անձն իմ առ քեզ, Աստուած (Սաղ. ԽԱ, 2): Եւ որպէս անդ ասաց՝ «Նուաղեաց սիրտ իմ», զնոյն օրինակ ասէ եւ յայլում սաղմոսի...» (Խոսրով Անձեւացի, Մեկնութիւն ժամակարգութեան, Կ. Պոլիս, Օրթագյուղ, 1840, էջ 28-29, հմմտՄՇ Ժ, էջ 92-93):

Եւ զկարգ բանին կատարէ,
Մինչեւ զողբալին եւ զզուարճալին ազդեսցէ,
Թէ՝ Պահէ Տէր զամենեսեան, որ սիրեն զնա,
Եւ զամենայն մեղաւորս սատակէ

Տէր (Սաղ. ՃԽԴ, 20),-

Ի գլուխս լրման գրոց նուագարանաց սաղմոսիս,
Իբր թէ զաւրինակն իսկ եցոյց վերջին հատուցման
արդարոց եւ մեղաւորաց:

Զուգակցորդք են միմեանց եւ զկնի երգեցեալքս,

Զի թէ՝ Ընդունի զհեզս Տէր,

Եւ խոնարհ առնէ զամբարտաւանս մինչեւ

յերկիր (Սաղ. ՃԽԶ, 6)...

(ԿԱ, Գ)

Ինչպես տեսնում ենք, այս հատվածում արդեն պարզ
մեկնությունն է միացել բանաստեղծական կառույցին:

Այսպիսով՝ սաղմոսների մեկնության՝ իբրև բանաստեղ-
ծական արվեստի տեսության դրսեորումներից մեկի մեջ է-
ական է հոգեբանական-հուզական վերլուծությունը: Հեղի-
նակը կանգ է առնում նրա առավել պատկերավոր, դրա-
մատիկ-հոգեբանական, խորքային-ողբերգական շերտերի
վրա: Աս է առհասարակ նարեկյան դպրոցի ուղենիշային
սկզբունքը՝ սուրբգրային բնագրերին հուզական-խորքային
մոտեցում, քննական հայացք, «դատում և ընտրություն»:
Այն դառնում է դպրոցի բանարվեստի տեսության անկյու-
նաքարը, որն իր բոլոր դրսեորումներով հարաբերվում է
սուրբգրային ժառանգության խորին շերտերի հետ:

Գրիգոր Նարեկացին, դպրոցի գրական ավանդույթին հավատարիմ, ստեղծագործությունը համարում է պատճառ-հետևանքային մի ամբողջություն։ Նա ծավալում ու մոնումենտալության է հասցնում Անանիա Նարեկացու՝ աղոթքի կառուցման ընտրականության, հուզական լիցքերի կուտակման սկզբունքը՝ տարածելով այն ոչ միայն առանձին վերցրած որևէ աղոթքի, այլև ողջ «Մատեանի» վրա։

«Մատեանի» բոլոր գլուխներն ու դրվագները աղերսված են իրար. զգացմունքային լարումը պահպանելու, պաթետիկ հոգեսոր հոսքերը ներքին հսկողության ու չափի ենթարկելու մղումով է գոյանում երկի ներքին, հոգեսոր կառույցը։

Գրիգոր Նարեկացին համաշխարհը բանաստեղծական խոսքի մեջ ներառելու և ներաշխարհն՝ իբրև նրա հոգեսոր համարժեք ներկայացնելու իր նախագաղափարով խոսքի տարածական նոր ընդգրկումների հասնելու համար իր երկի մեջ ներառել է ժանրային նոր դրսերումներ, աղոթքին զուգաշավիղ կամ նրանից անկախ ճյուղավորվող հատվածներ։ Այստեղ կուր մի կառույցի մեջ են առնված երկի նախագաղափարն ու այն մարմնավորող պոետիկայի տարրերի ամբողջությունը։

Այս իմաստով, իր հոգեզգայական ներքին հոսքերով, հաճախ տարերային և ինքնաբուխ թվացող խոսքի արտահեղումներով հանդերձ բանաստեղծի բառաշխարհը լիովին կառավարվող տարերք է, ուր չափակշռված ու չափաբերված են բառն ու բանը, խոսքի «պատճառներն ու հանգամանք-

ները», այն լուսավորված է ներքին տեսողությամբ, հսկվում և ուղղորդվում է ներհմտությամբ և բանականությամբ:

Ներքին մարդը՝ բանաստեղծը, կառավարում է աղոթա-սացությունը՝ ստեղծաբանությունը:

Երկի ներքին կառույցում՝ իբրև կազմավորող հանգա-մանքներ և ներհմտություններ, գործում են ընտրականու-թյան, անհատական փորձի՝ իբրև ազատ ստեղծագործու-թյան ազդակները:

Դրանց հետ են սերտորեն առնչվում նաև բանաստեղ-ծական երկի զգացմունքային հագեցվածության, դատման և ընտրության սկզբունքներն ու դրույթները, ինչպես նաև աստվածային ներշնչանքի, հոգեզգայական միստիկ արարո-ղակարգի նրա տեսությունը, որոնք կոչված են հարաբերե-լու, չափակշռելու զգայական և բանական հզոր տարերք-ները:

Նրա ստեղծած պատկերները կոնկրետ են և առարկա-յական, ավանդական խորհրդանիշները՝ ստեղծաբանութ-յան կենդանի ընթացքի մեջ ձեռք են բերում նոր, անմիջա-կան հնչողություն ու երանգավորումներ։ Նարեկացու խոսքը, առաջին հերթին, ձեռք է բերում հոգեվիճակի կոնկրետություն, նա կարողանում է ըստ ամենայնի զննել, հետազոտել նյութը և հասնում է հոգեոր պատկերի ճշգրտության։ Առ է նրա ինքնության շերտերից մեկը, և այստեղ ևս նա նախօրինակ չունի։ Այստեղ միավորվում են հոգեոր փորձը՝ հոգեոր կենցաղավարության սկզբունք-ներն ու բանարվեստի տեսությունը։

«Մատեանի» բազմածավալ ճյուղավորումները, «բազմաստեղնեան դրուագ»-ները կառուցված են այդ կենտրոնաձիգ սկզբունքով, որին ենթարկվում է ողջ պատկերային համակարգն ու բառաշխարհը՝ միահյուսելով ողբերգության առանձին դրվագները «ի հրաշակերտութիւն միագոյիրի»:

Եվ ինչպես ինքն է հանձարեղորեն եզրափակում իր դրվագներից մեկը՝

Ունիմ զամենայն երկրի
Եւ եմ պատգամաւոր աղաւթանուէր
ամենայն աշխարհի:
(ԻՇ, Բ)

**ՀՈԳԵՎՈՐ ԿԵՆՑԱԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ
ՆԱՐԵԿՅԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ ԵՎ ՆՐԱ
ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ «ՄԱՏԵԱՆՈՒՄ»**

ՆԵՐՔԻՆ ՄԱՐԴՈՒ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ
ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅՈՒ «ՄԱՏԵԱՆՈՒՄ»
ԱՍՏՎԱԾԱՅՄԱՆ ՈՒՂԻՆ

Նարեկյան դպրոցի ներկայացուցիչները՝ իբրև միստիկ աստվածաբաններ, արտաքին պաշտամունքից՝ եկեղեցական ծեսերից, արարողակարգից, պահքից, արտաքին կենցաղավարության համընդհանուր նորմերից բացի, մեծ ուշադրություն էին դարձնում մարդու հոգեոր մաքրագործությանը, ինքնակատարելագործման տևական ընթացքին, ուր կենտրոնանում էին հոգեմտավոր, զգացմունքային-բանական, ինչպես նաև ստեղծագործական ունակություններն ու կարողությունները¹¹⁴: Մաքրագործության կարևորագույն օղակը միստիկ հայեցողի հոգեոր վերառաքման շղթայի մեջ ներքին աղոթքն է, բանաստեղծությունը, հոգեոր երգը: Ներքին մարդու աստվածացման հղացքը, որ նորպլատոնական բարոյագիտական ուսմունքներից ներմուծվել էր քրիստոնեական միստիկ աստվածաբանության մեջ, ընկած է դպրոցի բարոյագիտության հիմքում: Այն Նարեկյան դպրոցի ներկայացուցիչների հոգեոր իդեալն է:

Արևելաքրիստոնեական միստիկայի առանցքային՝ ներ-

¹¹⁴ Տե՛ս Հ. Թամրապյան, Գիրք Բ, էջ 200-207, 229-232, 234-243, Գիրք Ա, էջ 216-233: Ինչպես ցույց է արվել նախորդ ուսումնասիրություններում, Անանիա Նարեկացու և Գրիգոր Նարեկացու երկերում շոշափվում են նաև փիլիսոփայական, գոյաբանական, իմացաբանական, քերականական, տրամաբանական, բնագիտական, երկրաչափական, մարդակաղմական, բժշկագիտական, արվեստաբանական բազմաթիվ հարցեր և խնդիրներ, որոնք նույնպես սերում են անտիկ և նորպլատոնական շրջանի սկզբնաղբյուրներից (տե՛ս Հ. Թամրապյան, Գրիգոր Նարեկացին և նորպլատոնականությունը):

քին մարդու գաղափարը էական նշանակություն ուներ միստիկի համար և գտնվում էր նրա ողջ բարոյահոգեբանական համակարգի կիզակետում։ Ներքին մարդու մաքրագործման հետ էր կապվում աստվածանմանության, աստվածացման գաղափարը։ Խորհրդապաշտի ողջ արտաքին կյանքը, հոգեոր կենցաղավարությունը, վարքն ու բարքը, հոգեմտավոր դրսեռորումներն ուղղված են դեպի խորքը, դեպի հոգին, դեպի ներքին մարդը, ամեն ինչ կատարվում է ըստ ներքին մարդու, հանուն ներքին մարդու։

Միստիկ աստվածաբանության այս բացարձակ գաղափարների (որ միաժամանակ նպատակ և ուղենիշ էին «սրբազն այրերի», «խորհրդագգած» հայեցողների՝ միստիկների համար) ծիրի մեջ է նարեկյան դպրոցի ողջ բարոյագիտական համակարգը։

Ներքին մարդու ուսմունքը սերում է Պլատոնից¹¹⁵:

¹¹⁵ Նորպլատոնականության հիմնադիրը՝ Պլոտինոսը, համեմատելով մարդկային բնությունը բանական տիեզերքի և գոյակարգի հետ, հոգում է Պլատոնին, ըստ որի՝ բանական աշխարհը, հոգու նախահիմքը գոյավորում են ներքին մարդու տիրույթը։ «Արդ, պետք է ընդունել, որ [գոյակարգը] գոյում է հետևյալ ձևով. Կեցությունից հայնկույս Մեկն է... ապա դալիս են Գոյը և Բանականը, Երրորդը Հոգու նախահիմքն է։ Եվ այս երեքն էլ... ինչպես որ գոյակարգի մեջ են առկա, այնպես էլ մեր մեջ... զի [նշված երեքն էլ] տարանջատված են [զգայական աշխարհից]... Այլպիսին է նաև մարդուն պատկանող [եռյակը], որն, ըստ Պլատոնի, կազմում է, այսպես կոչված, ներքին մարդը... Ուստի մեր հոգին ևս աստվածային մի բան է, որն ունի [զգայելիներից] միանգամայն այլ բնություն։ Նա նման է Հոգու ընդհանրական բնությանը» (Պլոտինոս, Էննեադներ, թարգմանությունը Հին հունարենից, ուսումնասիրությունը և մեկնությունները Ա. Ստեփանյանի, Երևան, 1999, էջ 16)։ Պլոտինոսն իր «Էննեադներում» ներկայացնում է ներքին մարդու վերառաքման մի տեսություն, որը կապվում է «բացարձակ մարդու» գաղափարի հետ։ «Ի վեր շարժումի» ելակետը ներքին մարդն է», – նշում է Պլոտինոսի «Էննեադների» հայ ուսումնասիրողը (տե՛ս նույն

Ներքին մարդու հասկացությունը հանդիպում է Պողոս առաքյալի թղթերում¹¹⁶ և բազմիցս օգտագործվել է հայրաբանական գրականության մեջ, օրինակ՝ Ավգուստինուսի երկերում¹¹⁷, Գրիգոր Լուսավորչի անունով պահպանվող և Մեսրոպ Մաշտոցին վերագրվող «Հաճախապատում» ձառերում¹¹⁸, որոնց ազդեցությունը զգալի է Նարեկյան դպրոցի աստվածաբանության ու հոգեւոր արվեստների ծիրում:

Վերոհիշյալ ճառերում արտացոլվել են արևելաքրիստոնեական միստիկայի էական գաղափարները։ Ահա մի հատված ներքին և արտաքին մարդու, աներևույթ ու տեսանելի բարքերի մասին, որոնց ներդաշնակությամբ միայն մարդը կարող է մերձենալ կատարելատիպին. «Առողջացեալ զգաստացեալ սրբեալ իմասցի զներքին մարդն եւ զարտաքին... Առաւելեալ յամենայն բարեգործութիւնս եւ բեւելեօք եւ աներեւութիւք...»¹¹⁹.

տեղում, Մեկնություններ և ծանոթագրություններ, էջ 136, ծնթ. 72): Ըստ նրա՝ հոգեմտավոր այդ շարժման նպատակն է հասնել «բացարձակ Մարդու» մակարդակին, դասվել «աստվածային մարդկանց դասին»՝ մաքուր բանականության և էքստատիկ ըմբռնման ճանապարհով: «Ներքին մարդու» հղացքը մշակվել է պլատոնյան հոգեբանության ծիրում։ Այն ներկայացնում է անհատի «բանական կրիզը», որի գերակայությամբ նա ապրում է բացառապես բանական հաճույքներով, զի «... առավել արքայական է և տիրում է [առաջին հերթին] ինքն իրեն [Plato Resp., IX, 580 e]» (նույն տեղում, էջ 135, ծնթ. 64, տե՛ս նաև էջ 141, ծնթ. 14, էջ 139, ծնթ. 3):

¹¹⁶ «...Հաճելի է ինձ Աստծու օրէնքը՝ ներքին մարդու տեսակետց...» (Հոռոմ. էջ. 22): «Դրա համար էլ չենք ակարանում, այլ թէպէտե մեր արտաքին մարդը քայլայվում է, բայց մեր ներքին մարդը նորոգւում է օրբստօրէ...» (Բ Կորն. Դ. 16):

¹¹⁷ Տե՛ս **Августин Блаженный**, Исповедь, Симферополь, 1998, с. 10:

¹¹⁸ Տե՛ս «Արքոյ Հօրն մերոյ երանելոյն Գրիգորի Լուսաւորչի Յաճախապատում ճառք», Վաղարշապատ, 1894-1896, էջ 98, 142, 197, 208:

¹¹⁹ Նույն տեղում, էջ 208:

Նարեկյան դպրոցի միստիկ աստվածաբանության ծիրում խորհրդագրած (միստիկ) անհատը, իր հոգևոր կենցաղավարության ընթացքում հասնելով ներքին և արտաքին մարդու ներդաշնության, ձգտում է մաքրագործվել «ըստ ներքին մարդու» և հասնել հնարավոր աստվածանմանության՝ «նմանվել Աստծուն՝ ըստ մարդկային կարողության»:

Ինչպես արդեն նշել ենք, Խոսրով Անձևացին իր «Մեկնութիւն աղաւթից պատարագին» երկի «Սակս աղաւթիցն» գլխում աղոթքը՝ իբրև գերագույն գորություն, ներառում է ներքին մարդու մաքրագործության շղթայի մեջ, որ կապում է մարդուն վերին, իմանալի, բանական աշխարհի հետ՝ տանելով նրան աստվածացման¹²⁰:

Առավել հանգամանորեն հայ միջնադարում այս խնդիրներին անդրադարձել է Անանիա Նարեկացին: Նրա Խրատագրքում ներկայացվում է ներքին մարդու ծիրում կայացող այս մաքրագործման, աստվածամերձեցման խորհրդիցը¹²¹, որին հասնում են հոգևոր ճանապարհին ներհայեցողության, ինքնազննումի ու ինքնակառավարման ուրույն մի արվեստի՝ «ընտրության» արվեստի միջոցով: «Հաճախապատում» ճառերի հեղինակի նմանությամբ՝ Անանիա Նարեկացին մարդկային առաքինություններն ու բարքերի ամբողջությունը բաժանում է երկու մասի՝ երկելի, տեսանելի և աներևույթ՝ անտեսանելի բարքերի, իսկ «Խաւսք եւ խրատ աւետարանական...»-ում երկելի և աներևույթ բարքերի փոխարեն օգտագործված են վարք ու

¹²⁰Տե՛ս Հ. Թամրապյան, Գիրք Բ, էջ 103-108:

¹²¹Նույն տեղում, էջ 312-318:

բարք հասկացությունները¹²²: Խրատագրքում, որ վանականների ու մենակյացների համար միստիկ աստվածաբանության դասագիրք է, ներքին մարդու գաղափարը թափանցում է բուն ստեղծագործության ոլորտները, նրա հետ է կապվում նաև բանաստեղծական արվեստի տեսության համակարգը: Մարդու մաքրագործման խնդրին, ներքին մարդուն են ուղղված Անանիա Նարեկացու բարձրարվեստ բանաստեղծությունները, որ նոր, ներանձնական բանաստեղծության առաջին նմուշներն էին հայ միջնադարում:

Գրիգոր Նարեկացու ստեղծագործություններում հանդիպում են իր ուսուցչի նախանշած ներքին և արտաքին մարդու էական գաղափարները:

Մարդն աստվածակերպ է ներքուստ և արտաքուստ՝ իբրև հոգեոր մարմին: Նշանակում է՝ նա աստվածանմանության պետք է ձգտի առաքինի, տեսանելի վարքով և ներքին, աներևույթ բարքով, ինչպես տարբերակում էր Անանիա Նարեկացին:

Իսկ ո՞րքան պատիժ անմաքրութեանս եղիցի՝

ԶԱՍՈՊՈՒԱԾ զգեցողիս ներքոյ եւ արտաքոյ…

(ԼԳ, Դ)

Ներքին մարդը և արտաքին մարդը պիտի ներդաշն, միասնական լինեն վարք ու բարքերի ամբողջությամբ, այլապես անհատը կլինի անկատար՝ «կիսամասնեայ»:

Մի՛ յընտրութիւնն ապառնի՝ հաւատ,

Զի՛ մի՛ սպառնալիք հատուցմանն զրոյցս ինչ աւտար
Համբաւոյ գըեսցի:

¹²² Նույն տեղում, էջ 316:

Մի՛ երկաքանչիւրոց գոյութեանց մերոց իրաւամբք
կշտամբութիւն,

Զի մի՛ կիսամասնեայ առ մարդն ներքին եւ
առ արտաքին՝

Զարի եւ կամ բարւոյ փոխատրութիւնն կարծեսցի՝
Յանմահ զաւրութիւն արքայական որդեգրութեանն...

(ՀԵ, Է)

Ներքին մարդու գաղափարն է արծարծվում նաև «Մա-
տեանի»՝ մեռոնին նվիրված գլխում.

Սոյնպէս իւղս այս փրկութեան լուսով կատարեալ՝
Հեղեալ ի մեզ աւծանէ զարտաքին խորանս,
Իսկ գներքին մարդս, աներեւակ ծածկապէս մտեալ,
նոր կենդանածնէ...

(Ղ.Գ, Գ)

Հստ այսմ, աղոթասացությանը, վերառաքմանն ու հո-
գեոր հայեցողությանը մասնակցում են և՛ ներքին, և՛ ար-
տաքին մարդը։ Գրիգոր Նարեկացու «Կարգ եւ կանոն ա-
ղաւթից» գործում կարդում ենք.

«Քանզի յերկուց է մարդս՝ իմանալի եւ զգալի, պարտ
է, որպէս ամէ առաքեալն՝ արտաքին մարդ եւ ներքին,
յորժամ աղաւթել կամիցին՝ մտաւք առ Աստուած վերա-
նալ... եւ մտացն իբրեւ հովանի մարմնոյ ունել»¹²³:

Եվ ներքին մարդու գաղափարն, ինչպես Անանիա Նա-
բեկացու բանաստեղծական արվեստի տեսության մեջ,
կապվում է «զղջման և արտասուաց» շնորհի հետ.

¹²³ Նույն տեղում, Էջ 1084:

«Եւ աղաւթից ուսուցանելն անհնար է, բայց թէ ի փորձոյ ուսցի, եւ կարի աշխատութեան պէտք է եւ արտասուաց առնուլ զշնորհս աղաւթից...»

Յորժամ սա անդ ի յոտն կայ, որ է իմանալի միտքսն, եւ մարմինս՝ աստ, եւ յորժամ նա անդ զձեռն ամբառնայ, սա՝ ընդ նմին, եւ երբ նա խաւսի, եւ սա, եւ յորժամ նա ծունդը կրկնէ, ընդ նմին եւ սա:

Քանզի ընդ մտացն պարտ է զմարմինն շարժել, եւ զամենայն ինչ, որ մարմինն առանց մտացն առնէ, շատխաւսութիւն է եւ լեզուաւ աղաւթել: Քանզի իմանալի է Աստուած եւ զիմանալի մտացն աղաւթելն խնդրէ»¹²⁴:

Այսպես, ահա, խորհրդագդած բանաստեղծը մտնում է ներքին մարդու ոլորտ՝ ներքին շարժման, ներքին աղոթքի ու կերպավորումների մի ընթացքի մեջ, որ հոգեոր և մարմնավոր, Փիզիկական ոլորտներում կատարյալ ներդաշնակություն և համաժամանակյա ընթացք է ենթադրում. մարդու մեջ եղած Աստծո պատկերը՝ ներքին մարդը, և իր մարմնավոր կերպը՝ արտաքին մարդը, ներքին տեսողությամբ եւ գերզգայությամբ կապված են իրար, ներդաշնակում և կառավարում են նրա զգալի և իմանալի էությունները. աղոթքը պետք է լինի և՛ զգայական, և՛ մտավոր: Մարդու հոգու հետ պետք է նրա մարմինը շարժվի, և հակառակը: Զեռքերն ամբառնալիս, մատները տատանելիս, ծնրադրելիս և բարբառելիս մարդու հոգեոր և Փիզիկական մարմինները, կերպերը պետք է գործեն կատարյալ ներդաշնության մեջ, որպեսզի աղոթքը հասանելի լինի Աստծուն:

¹²⁴ Նույն տեղում, էջ 1084-1085:

*

Ներքին մարդու հասկացության հետ է կապվում մարդկային բնության ի սկզբանե աստվածային, անապական լինելու դրույթը, ինչպես նաև չարի ոչ սուբստանցիալ բնույթի մասին անտիկ շրջանից եկող տեսությունը, որ մանրամասնորեն մշակված է Դիոնիսիոս Արեոպագացու երկերում¹²⁵: Միստիկի խնդիրն է ինքնակատարելագործման միջոցով հասնել հոգեոր անարատության, անապականության: Այս գաղափարն արտահայտված է Գրիգոր Նարեկացու «Մատեանում»:

Հրամայեա՛, գթած, ինամակալ, գովեալ,
Լոյս անշիջանելի, զաւրութեամբ անսահմանալեաւ,
Զի նոր հաստատեսցի գոյութիւն բնութեանս
Մարմնեղէն յարկի անդամոցս:
Յորում հանգուցեալ անլքանելի՝ բնակեսցես բազմեալ՝
Ախորժ տենչանաւք, միութեամբ հոգւոյս իմ ընդ քեզ,
Զապականութիւն մեղացս մերժեալ իսպառ՝
Յանարատութիւն զիս պատրաստեսցես...

(ՀՀ, Դ)

Ապականությունը, ինչպես և չարը, «ինքն ըստ ինքեան անգոյական է»: Մարդն իր անապական բնությամբ է նման Աստծուն: Մոտենալով իր մարդկային սկզբնատի-

¹²⁵ Տե՛ս Դիոնիսիոս Արեոպագացի, «Նորին ի տոփականացն աւրհնաբանութեանց» (*The Armenian version of the works attributed to Dionysius the Areopagite*, edited by R. W. Thomson, Lovani, in Aedibus E. Peeters, 1987, p. 169-183):

պին՝ նախնական, աստվածային բնությանը, նա միավորվում է Քրիստոսին, աստվածանում է:

Այս խնդիրն առանցքային է Անանիա Նարեկացու «Հաւատարմատի» ողջ աստվածաբանական-դիալեկտիկական կառույցում¹²⁶:

Հեղինակը վկայակոչում է անտիկ հեղինակներին ապականության և անապականության խնդրի շուրջ¹²⁷, որ նախորդում են եկեղեցու սուրբ հայրերին արված հղումներին: Մարդու մաքրագործության, փրկագործության գաղափարը կապվում էր Քրիստոսի մարդեղացման աստվածային խորհրդի հետ, որով Քրիստոսով մկրտվողներն անմահանում և Աստծո որդիներ են դառնում:

«Այլ մեք... անապական և անմահ զմարմինն զայն անդստին ի Կուսէն ստացեալ խոստովանիմք եւ վասն մեր մեռեալ՝ անպարտական մահու, զի զմերն հատուսցէ զպարտս եւ ազատեսցէ ի մահուանէ յանցանաց սկզբնամաւրն պարտեաց եւ նախահաւրն յանցանաց եւ յիւրն յանմահականն վերացուսցէ ի փառս՝ ստեղծանելով նոր արարած ըստ պատկերի իւրոյ, զի որք ի Քրիստոս մկրտեցաք՝ զՔրիստոս զգեցաք եւ անմահացեալք՝ եղաք որդիք Աստուծոյ»¹²⁸:

Միջնադարյան միստիկայի համար այս կարևորագույն խնդրի մեկնաբանության անդրադարձները կան Գրիգոր Նարեկացու Աստվածամորը նվիրված ներբողում, որ փառաբանվում է, իբրև մարդկային բնության աստվածային սկզբի, անապականության գերագույն խորհրդանիշ. «Եւ

¹²⁶ Հ. Թամրապյան, Գիրք Բ, էջ 229-237:

¹²⁷ Նույն տեղում, էջ 241-243:

¹²⁸ Անանիա Նարեկացի, «Հաւատարմատ», ՄՀ Ժ, էջ 539:

յեւս ընտրելական երգս բանահիւսից գերահոչակեալ ես,
վսեմական վարուց նախընթաց եւ յառաջաշատիդ Սուրբ
Աստուածածին... Քեւ զանմատոյց հուրն կիզանող անա-
պական ծասքմամբ ծախեցաք... Քեւ զանկցորդն տեսակա-
նաց ի մարդկային կերպ նկատեցաք... Քեւ զանձանաւթն
Հաւր տերութիւն ազգակցապէս աւրհնաբանեցաք... Քեւ
զանսահման Բանին բնութիւն ի հասարակածին տիպ համ-
բուրեցաք, Քեւ զԱղամն նոր հոգեղէն ի չափ հասակի
առաջնոյն տեսաք, Քեւ զարեգակն արդարութեան կենցա-
ղակից մեր կցորդ ստացաք... Քեւ զանհամեմատն մարդոյ
պատկերի մեզ նմանատիպ գործով գրեցաք»¹²⁹:

«Գլխաւորեալ այսաւր ի քեզ զիմանալին փարթամ
մեծութիւն, որ սլացեալ հասեր ի բարձունս երկնից, իբր
անընդունակ ապականութեան եւ մահու լուծման՝ մարմին,
յորմէ պատկառեաց ամաւթով պարտիքն մահու. Եւ ցուցար
բնակիչ արժանապատիւ կենդանեաց երկրին՝ Տեառնդ
կենակից Սուրբ Տիրամայր. արդահատեա՛ միշտ զողոր-
մութիւն որոց պանդխտիմք ի վիհս ներքին»¹³⁰:

*

Այսպես ներանձնացյալն իր միստիկ փորձի՝ մաքրա-
գործման, հոգեւոր առաքինություններին տիրապետելու և
ներքին աղոթքի միջոցով մոտենում է կատարելատիպին՝
նմանվում է Աստծուն ըստ մարդկային կարողությունների.
Խոսրով Անձևացու, Անանիա Նարեկացու մեկնություննե-
րում, աստվածաբանական և խրատաբանական երկերում ու

¹²⁹ Գրիգոր Նարեկացի, «Ներքող ի Սուրբ Կոյսն», ՄՀ ԺԲ, Էջ 971:

¹³⁰ Նույն տեղում, Էջ 973:

բանաստեղծություններում հստակորեն նշվում է հոգևոր ընթացքի այս ուղին: Առավել հետևողական և հանդամանալից ներքին փորձառության ու տեսության այդ համադրությունն ի հայտ է գալիս Անանիա Նարեկացու խրատաշարքում, մեկնություններում, դավանաբանական երկերում և հատկապես «Սակա բացայայտութեան թուոց»-ում¹³¹:

Հոգևոր այս իդեալը նախանշված էր գեռ Պլատոնի փիլիսոփայության երրորդ եւ չորրորդ սահմանումներում, որոնք նրանից անցել են Դավիթ Անհաղթին, Դիոնիսիոս Արեոպագացու անունով հայտնի երկերի հեղինակին և այս սկզբնադրյուրներից՝ Նարեկյան դպրոցի ներկայացուցիչներին:

«Փիլիսոփայության երրորդ սահմանումը, որը կառուցված է ըստ մերձավոր նպատակի, այն է, որ ասում են, թե փիլիսոփայությունը խորհրդածություն է մահվան մասին: Չորրորդ սահմանումը կառուցված է ըստ հեռավոր նպատակի, այն է՝ փիլիսոփայությունը Աստծուն նմանվելն է ըստ մարդկային կարողության»¹³²:

Ըստ Դավիթ Անհաղթի՝ փիլիսոփայության երրորդ սահմանումը վերաբերում է մարդկային կրքերի սանձահարմանը. «Մահվան մասին մտահոգությունը նախորդում է Աստծուն նմանվելուն, որովհետև եթե նախ չմտածվի մահվան մասին, ու չմահացվեն կրքերը, անհնարին կլինի նմանվել Աստծուն»¹³³: Հեղինակը նշում է, որ փիլիսոփայության

¹³¹Տե՛ս Հ. Թամրապյան, Գիրք Բ, էջ 200-210:

¹³²Տե՛ս Դավիթ Անհաղթ, «Փիլիսոփայության սահմանումները» («Սահմանք իմաստասիրութեան»), տե՛ս Երկեր, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ս. Արեշատյանի, Երևան, 1980, էջ 67:

¹³³Նույն տեղում, էջ 69:

երրորդ և չորրորդ սահմանումները նա վերցրել է Պլատոնի «Ֆեղոն» և «Թեետետոս» տրամախոսություններից¹³⁴:

Աստվածանմանության այս գերագույն գաղափարը Դավիթ Անհաղթը կապում է նաև ինքնակատարելագործման, տեական վարժանքի, ուսումնառության, բանական ճանաչողության հետ, որ ներհատուկ են կատարյալ իմաստասերին¹³⁵:

Փիլիսոփայության չորրորդ սահմանումն առնչվում է պատկերի և նախատիպի փիլիսոփայական կատեգորիաների հետ, որոնք շոշափվում են նաև արենպագիտյան տեքստերում: Առաքինի անձը, փիլիսոփան ձգտում է աստվածանմանության, ինչպես պատկերն է ձգտում իր նախատիպին:

¹³⁴ Նույն տեղում, էջ 70: Դավիթ Անհաղթը գրում է. «Իսկ երկու սահմանումները, որոնք կառուցված են ըստ նպատակի, այն է՝ փիլիսոփայությունը խորհրդածություն է մահվան մասին, նաև՝ փիլիսոփայությունը Աստծուն նմանվելն է ըստ մարդկային կարողության, պատկանում են Պլատոնին, որովհետև «Ֆեղոնի» տրամախոսությունից երևում է, որ Պլատոնը փիլիսոփայությունն անվանում է մտածմունք մահվան մասին. Նա ասում է, թե մարդիկ սովորաբար չեն նկատում, որ փիլիսոփայությանն արդարեն նվիրված անձինք, մոռանալով և՛ իրենց, և՛ ուրիշներին, ոչ մի բանով չեն զբաղվում, այլ միայն մեռներով և մահանալով»: Իսկ «Թեետետոս» տրամախոսության մեջ ոմն երկրաչափ Թեոդորոսին նա ասում է փիլիսոփայության վերաբերյալ, որ այն Աստծուն նմանվելն է՝ ըստ մարդկային կարողության: Այստեղ նա ասում է. «Որովհետեւ, ո՞վ Թեոդորե, Հնարավորություն չկա ոչնչացնել չարը, որովհետև անհրաժեշտ է, որ գոյություն ունենա բարուն հակառակ մի որևէ բան: Եվ այն իր համար տեղ է գտել ոչ թե աստվածների մոտ, այլ անհրաժեշտությունից դրդված թափառում է երկրի վրա՝ [մարդու] մահկանացու բնության տեսքն ընդունած: Դրա համար է, որ պետք է ջանալ ինչ-քան կարելի է շուտ այստեղից փախչել: Իսկ ի՞նչ է այդ փախուստը, եթե ոչ նմանություն Աստծուն ըստ մարդու կարողության: Նմանվել Աստծուն՝ նշանակում է լինել բարեպաշտ և արդար՝ խոհեմ լինելով հանգերձ» (աե՛ս Պլատոն, Ֆեղոն, 64a, 82c-d, Թեետետոս, 174a-b):

¹³⁵ Նույն տեղում, Առաջաբան, էջ 18:

«Արդ, մենք ասում ենք, որ փիլիսոփան նման է Աստծուն այն իմաստով, ինչպես որ Սոկրատեսի պատկերի մասին ասում ենք, թե նման է Սոկրատեսին, թեպետև Սոկրատեսի պատկերը և ինքը Սոկրատեսը տարբեր բաներ են, որովհետև մեկը չնշագոր է, իսկ մյուսը՝ անշունչ առարկա: Այսպես և հենց այս նշանակությամբ մենք ասում ենք, որ փիլիսոփան նման է Աստծուն, թեև մի էություն ունի Աստված և այլ էություն՝ մարդը: Իսկ թե ինչու փիլիսոփան նման է Աստծուն, հայտնի է դառնում հետեւալից. այն գծերը, որ հատուկ են Աստծու կերպարին, հատուկ են նաև կատարյալ փիլիսոփային: Որովհետև Աստծու կերպարին հատուկ են հետեւյալ երեք հատկանիշները՝ բարությունը, իմաստությունը և հզորությունը... Կատարյալ փիլիսոփան նույնպես բնութագրվում է այս երեք հատկանիշներով...»¹³⁶:

Դավիթ Անհաղթի երրորդ և չորրորդ սահմանումները ներկայացված են Անանիա Նարեկացու, Գրիգոր Նարեկացու ստեղծագործություններում¹³⁷: Այս երկու սահմանումների համատեքստում Անհաղթը ձևակերպում է մարդու հոգու երեք մասերը, սրանց ներհատուկ չորս առաքինությունները, որոնցով մարդը հասնում է աստվածանմանության¹³⁸:

¹³⁶ Նույն տեղում, էջ 81-82:

¹³⁷ Տե՛ս Հ. Թամրապյան, «Գրիգոր Նարեկացին և նորավատոնականությունը, գլուխ 1.3. «Նորավատոնական բարոյագիտությունը և գործնական փիլիսոփայության համակարգը Նարեկացին դպրոցի աստվածաբանական-դավագանաբանական երկերում», 1.4. «Նորավատոնական բարոյագիտությունը Գրիգոր Նարեկացու «Բան խրատու վասն ուղիղ հաւատոյ եւ մաքուր վարուց առաքինութեան» խրատում» (էջ 50-91):

¹³⁸ Տե՛ս Դավիթ Անհաղթ, «Փիլիսոփայության սահմանումները», տե՛ս Երկեր, էջ 85-86, Անանիա Նարեկացի, «Սակա բացայայտութեան թուղոց», ՄՀ Ժ, էջ 444:

Մարդկային հոգու եռամասնյա տարաբաժանումը ևս հասնում է մինչև պլատոնյան ակունքները, այն բազմիցս նշվում է նորպլատոնականության հիմնադրի՝ Պլոտինոսի երկերում¹³⁹, Փիլոն Ալեքսանդրացու մեկնություններում¹⁴⁰: Դիոնիսիոս Արեոպագացին, ըստ նորպլատոնական ստորաբաժանման, սահմանում է նաև հոգու և մարմնի մասերի հարաբերակցությունը (մարդկային հոգու երեք՝ բանական, «ցասմնական» ու «ցանկական» մասերը առնչվում են մարմնի երեք հատվածների՝ գլխի, լանջի և որովայնի հետ):¹⁴¹

Անհաղթի հետեւությամբ Պլատոնի երկու սահմանումների առանցքում, այս տեսությունը ևս շարադրված է Անանիա Նարեկացու, Գրիգոր Նարեկացու երկերում, որ

¹³⁹ Ուսումնասիրողը (Ա. Ստեփանյան) այդ մասին գրում է. «Մասնակի հոգու գերի այս ըմբռնմամբ Պլոտինոսն անդրադառնում է նրա էության, կառուցվածքի և գործառույթի տարաբնույթ խնդիրներին... Պլատոնի հետեւությամբ նա հոգուն վերագրում է եռամաս կառույց՝ բաղկացած բանական, ցանկական և ցանկական հատվածներից: Առաջինով պայմանավորված է նրա բանական, երկրորդով՝ զգայական, երրորդով՝ վերարտադրողական գործառույթը: Այլ խոսքով՝ հոգին ընդհանուր գծերով վերարտադրում է Հոգու տիեզերական կառույցը՝ բանական Հոգի, հանուր Հոգի, մասնակի հոգի» [IV, 3, 32, 10-25; cf. Plato, Rep., VIII, 550 a-b, etc.] (տե՛ս Պլոտինոս, Էննեադներ, Ներածություն, էջ XXXI):

Մեկ այլ գեպքում ուսումնասիրողը նշում է. «Բանական հատվածը պլատոնյան եռակողմ հոգու բարձրագույն դրսեորումն է: Ինչպես նշել ենք, նրան հետեւում են ցանկական և ցանկական հատվածները: Համաձայն Պլատոնի՝ նմանօրինակ կառուցվածք ունի թե՛ պոլիսը, թե՛ համայն տիեզերքը [Plato, Rep., IV, 439 b-444 a; cf. T. Robinson, 1970, pp. 36-38]» (նույն տեղում, ծնթ., էջ 182):

¹⁴⁰ Տե՛ս Փիլոնի Հերքայեցոյ ճառք, Վենետիկ, 1892, էջ 114-132:

¹⁴¹ The Armenian version of the works attributed to Dionysius the Areopagite, edited by R. W. Thomson, Lovanii, in Aedibus E. Peeters, 1987, p. 206:

ներկայացրել ենք ուսումնասիրության նախորդ բաժիններում¹⁴²: Անանիա Նարեկացին, Հստակ Հետեւելով գործնական փիլիսոփայության անհաղթյան կառույցին, իր մեկնության մեջ համադրում, միահյուսում է Փիլոնի և Դավիթ Անհաղթի սկզբնաղբյուրները: Նա ազատ է վարվում այս աղբյուրների հետ և բառացի կամ մոտավոր քաղվածքի փոխարեն մեկնաբանում է սրանք¹⁴³:

Հոգու մասերի, սրանցից յուրաքանչյուրի առաքինության և սրանով աստվածանմանության տեսությունն ամենայն մանրամասնությամբ և պատկերավոր օրինակներով շարադրված է Գրիգոր Նարեկացու «Բան խրատու վասն ուղիղ հաւատոյ եւ մաքուր վարուց առաքինութեան» երկում: Գրիգոր Նարեկացին, ինչպես նշել ենք, իր ուսուցչի նման հետեւելով գործնական փիլիսոփայության Անհաղթի համակարգին, ներկայացնում է այն պարզ ու մեկին ոճով, առանց խրթնաբանությունների՝ մանրամասնելով ու ամբողջացնելով Անանիա Նարեկացու տեսությունը: Ընդ ուրում, նրա մեկնաբանություններն ավելի ծավալուն են, քան սկզբնաղբյուրներում¹⁴⁴:

Այստեղ միայն ուզում ենք հավելել, որ Անանիա Նարեկացու բնագրում կա մի կարևոր առաձնահատկություն՝ փիլիսոփայության երրորդ և չորրորդ սահմանումների՝ կրքերի սանձահարման և բարոյական մաքրագործման հետ հեղինակը շեշտում է նաև մտավոր վարժանքի, կրթության,

¹⁴²Տե՛ս Հ. Թամրապյան, Գիրք Բ, էջ 200-207, 229-231, 234-243:

¹⁴³Տե՛ս Փիլոնի Հեքրայեցոյ ճառք, «Կեանք իմաստնոց», էջ 47: Այս մասին մանրամասն տե՛ս Հ. Թամրապյան, Գիրք Բ, էջ 205-207:

¹⁴⁴Հ. Թամրապյան, Գիրք Ա, էջ 216-231:

խոհական երկունքի, ստեղծագործության նշանակությունը հոգեոր անհատի կատարելագործման ձանապարհին:

Եվս մեկ անգամ ներբերենք մեզ հետաքրքրող հատվածը՝ կառուցված Փիլոնի և Դավիթ Անհաղթի իմացաբանական դրույթների համադրությամբ. «Այլ եւ քառիւք թուաւք սահմանին առաքինութիւնք, որով կատարի մարդն Աստուծոյ՝ երիւք բնական եւ մին ստացական: Զի եռամասնեա բնաւորի հոգին, եւ միւսն եւս, ստացական, յարդարեալ ի սոսա՝ որ է արդարութիւն՝ բացակատարեն զմարդն ըստ նմանութեան Աստուծոյ... Զի երկասիրաբար ի վարժս կրթութեան սաղապիլ ի ներհունս իմաստից, որով զարդարի բանական մասն ոգւոյն... Նաեւ եռաթիւ լինի բողբոջ նահապետացն սահմանին անձնատրութիւնք, որով երրորդական առանձնաւորութիւնքն բացայատին մեզ, որք են յարացոյցք յարդարման բնութեանս: Որպէս ասէ Փիլոն, զի Աբրահամ գոյացութիւն եւ ենթակա բնաւորի, իսկ իսահակ՝ կրթարան վարժից, իսկ Յակոբ՝ կատարումն իմաստից: Զի ոչ է հնար ի ներհունս սաղապիլ թարց երկասիրութեան եւ ոչ երկասիրութիւն տարրանա թարց բնութեան: Զի այսուքիւք թուովք կատարեալ զարդարի մարդ բանական բնութիւն՝ վարժիւք յառաջատեալ, իսկ յառաջատութիւն շարաշարեալ յարագրէ առ հուպ ենթակայն, որ է կրթութիւն մահու, յորմէ ծնանի խնդրութիւն հոգւոյն, որ կոչի իսահակ: Եւ զուարձութիւն այս մակաբերեալ թեւակոխէ արփացեալ մերձ առ հեռագոյն ենթակայն, որ է նմանիլ Աստուծոյ...»

Զի որ ի վարժս կրթութեան երկասիրաբար դեգերին դեղնամակերեւութեան տեսակն ճնշելով զմարմին խոնար-

Հութեան, արտամերժելով զբազմահոյլ տեսակ փշաբեր ախտիցն եւ ճնշելով զստինս մտացն, թերեւս լիցի բղխիչ կաթին եւ մեղու ի ճաշակումն սկսեցելոց եւ կատարեցելոց, հայելով ի բանական [տարընթ՝ բնական] երկիրն, զի պարարտ է բնութեամբ եւ բազմաբեղուն ունի հովիտս եւ զընդարձակ դաշտս մտաց...»¹⁴⁵:

Փաստորեն, ներքին՝ զգայական-զգացմունքային մաքրագործմանը զուգընթաց պետք է զարգանան մարդու խոհական-բանական աշխարհը, գիտական-ստեղծագործական մղումները, որոնց ներդաշնությամբ միայն մարդ հասնում է առաքինության և իմաստասիրության այն մակարդակին, որ տանում է նրան աստվածանմանության¹⁴⁶: Եթե կրքերի սանձահարման և կառավարման արվեստը համապատասխանում է փիլիսոփայության երրորդ սահմանմանը՝ նշելով նրա մերձավոր նպատակը, ապա հոգեմտավոր վարժանքը, կրթությունը, «երկասիրությունը», «բնական և բանական» երկրի հայեցողությունը, նրա «ներհուն իմաստների» ուսումնասիրությունն արդեն փիլիսոփայության չորրորդ սահմանման տիրույթում է՝ դրանք տանում են մարդուն դեպի հեռավոր նպատակը՝ «նմանվել Աստծուն ըստ մարդկային կարողության»:

Անանիա Նարեկացին ուրեմն թափանցում է նաև Դավիթ Անհաղթի փիլիսոփայության առաջին և երկրորդ սահմանման տիրույթները, որոնք, Անհաղթի բնորոշմամբ,

¹⁴⁵ Անանիա Նարեկացի, «Սակա բացայայտութեան թուոց», ՄՀ Ժ, Էջ 444-445: Այս հատվածի մասին տե՛ս Հ. Թամրապյան, Գիրք Բ, Էջ 204-207:

¹⁴⁶ Այս մասին տե՛ս Հ. Թամրապյան, Գիրք Բ, Էջ 206-210:

սահմանում են փիլիսոփայությունն ըստ ենթակայի, սակայն նշում են նաև նրա նպատակը։ Այդ սահմանումներն են՝ փիլիսոփայությունը գիտություն է գոյերի մասին և փիլիսոփայությունը գիտություն է աստվածային և մարդկային իրողությունների մասին¹⁴⁷։ Ինչպես Անհաղթն է նշում. «Փիլիսոփայությունը ևս ունի ենթակա և նպատակ։ Ենթական բոլոր գոյերն են, իսկ նպատակը՝ գոյերի իմացությունն է, այսինքն՝ նրանց ճանաչումը և նրանց միջոցով Աստծուն նմանվելը»¹⁴⁸։

Այսպիսով աստվածանմանության, աստվածացման ծրում ներառվում են տեսական ու գործնական փիլիսոփայության բոլոր մասերը։ Իմացության այս բոլոր՝ զգայական ու բանական մակարդակների ընդգրկումով մարդու աստվածանմանության պատկերն արտացոլված է Գրիգոր Նարեկացու «Մատեանի»՝ մարդուն նվիրված ներբողի փայլուն ձեւակերպումների մեջ («Մատեան», ԽԶ, Բ)։ Առհասարակ Անանիա Նարեկացին, ինչպես և Գրիգոր Նարեկացին, հստակորեն տարբերակում են անտիկ ակունքներից եկող և Անհաղթի ձեւակերպած գիտությունների դասակարգման համակարգը (բնագիտություն՝ Փիզիկա, մաթեմատիկա՝ երկրաչափություն, թվաբանություն, աստվածաբանություն՝ մետաֆիզիկա, գործնական փիլիսոփայության կարեորագույն մաս կազմող բարոյագիտություն), սրանց յուրացման զգայական և բանական ճանաչողության մակարդակները¹⁴⁹.

¹⁴⁷ Դավիթ Անհաղթ, Երկեր, Էջ 67:

¹⁴⁸ Նույն տեղում, Էջ 56:

¹⁴⁹ Նարեկան դպրոցի ներկայացուցիչները հանդես են բերում «Եռյակ» արվեստների (*Trivium*)՝ քերականության, ճարտասանության և տրա-

Հստ Նարեկյան դպրոցի ներկայացուցիչների՝ Մարդուն տրված է աստվածային ձիրք՝ իմաստասիրել և ուսումնասիրել աշխարհը, և դա արվում է հատուկ ծրագրով և նպատակով, որպեսզի «Միտքն առնուն ի կիր սոքաւք վարել ի վարժս կրթութեան՝ զննելով տեսանել եւ քննել զաշխարհս. ծանիցէ զգալովքս զիմանալիսն եւ լսելեաւքն ի ներքս ընդունել զբանն կենաց յաիւտենականաց» (Անամիա Նարեկացի¹⁵⁰), և

Յաշխարհն հայրենական հայել...

ԶԱՍՏՈՒԱԾ ՏԵՍԱՆԵԼ ԵՒ ԿՄՆԱՑԱԿԱՆԱՑՆ ԻՄԱՍՏԱՍԻՐԵԼ:

(Գրիգոր Նարեկացի)

Այս է գործնական և տեսական բարոյագիտության բուն նպատակը, որը, խթանելով մարդու ստեղծագործական ձիրքերը, տանում է նրան հնարավոր աստվածանմանության և աստվածացման.

մաքանության խոր իմացություններ: Նրանք ազատորեն օգտվում են V-VI դարերի և հետագայի հայկական նորպլատոնական-հունաբան դպրոցի տեսական ժառանգությունից՝ Դավիթ Անհաղթի և հայ քերականների աշխատություններից՝ ներմուծելով դրանք իրենց աստվածաբանության մեջ: Քերականական եզրույթներն ու հնարները, ճարտասանական հմտություններն այս հեղինակների երկերում օգտագործվում, փոխակերպվում են ստեղծագործաբարքար: Այս մասին տե՛ս Հ. Թամրապյան «Գրիգոր Նարեկացին և նորպլատոնականությունը» (Երևան, 2004. Գլուխի IV.1. «Քերականությունը, ճարտասանությունը և տրամաբանությունը Նարեկյան դպրոցի տեսական համակարգում», էջ 227-251, մյուս գիտակարգերի մասին տե՛ս Գլուխի IV.2. «Տեսական փիլիսոփայությունը՝ բնագիտական և մաթեմատիկական գիտելիքները Նարեկյան դպրոցի տեսական համակարգում», էջ 252-266. տե՛ս նաև Հ. Թամրապյան, Գիրք Բ, էջ 208-210, 200-202 և այլուր):

¹⁵⁰ Անամիա Նարեկացի, «Սակա բացայայտութեան թուոց», ՄՀ Ժ, էջ 448:

Բանականութեանն յարգանաւք կրկին ճոխացար,
Զի զյաղթանակ բարեմասնութեանն, որ առ քեզ եղեն,
Անարգել լեզուով խաւսեսցիս,
Զգործնականացն տնաւինել զտնտեսութիւն,
Իբր կցորդ համացեղութեամբ ամենաբաշխ աջոյն
Աստուծոյ՝ աստուած կոչեցար...

(ԽԶ, Բ)

Ներքին մարդու աստվածացման այս ճանապարհին
կարեորագույն նշանակություն է ստանում անընդհատա-
կան ներքին աղոթասացությունը:

ԱՂՈԹՔԸ՝ ՈՐՊԵՍ ՀՈԳԵՖԻԶԻԿԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ, ՆԵՐԱՆՉՆԱԿԱՆ ԾԵՍ ԵՎ
ԲԱՌԱՑԻՆ ՏԵՍԻԼՔ

Եւ արդ, զթերութիւն վրիպանաց
բազմասխալ ձայնի եղկելոյս,
Ամենազարդ լցեալ,
Մատուցե՛ս յաղերս հաճութեան
Հաւը քում բարձրելոյ...
Ընդ իմ պարտաւորիս միշտ աղաւթելով
Ազգակցաւ մարմնոյդ առելոյ ի մէնջ՝
Առ համապատիւդ քո Հայր:

(2, b)

Գրիգոր Նարեկացու՝ ինչպես նաև ողջ Նարեկյան
դպրոցի հոգևոր կենցաղավարության հիմքում ներանձնա-
կան ծեսն է, որն արտահայտվում է մշտարթուն ներքին ա-
ղոթքով, մի յուրահատուկ ստեղծագործական հոգեբանա-
կան ընթացք, որ մշտապես սնում է հուզաշխարհն ու բան-
աշխարհը։ Այս իմաստով կարեոր են աղոթքի՝ իբրև միս-
տիկ ծեսի վերջին օղակի նկարագրությունները. այն ներ-
կայանում է իբրև հոգեֆիզիկական միասնական ակտ, որն
ունի իր արտաքին ատրիբուտները՝ որոշակի վարժանք,
ինքնակենտրոնացում, անհրաժեշտ նախապատրաստու-
թյուն, արարողակարգ։ Աղօթքի ընթացքում առավել ար-
տաքին և ներքին մարդը գործում են ներդաշն։

Հիշենք Անանիա Նարեկացուն.

«Կա՛րդ դիր եւ սահման, եւ խորհրդեամբ արա զարտա-
սուացն ժամանակն, եւ յԱստուծոյ խնդրեա՛ զյաջողութիւն

շնորհին, եւ բռնադատեա՛ զբնութիւնդ, յայնժամ Աստուած
ի փոյթն հայի եւ տայ շնորհս, որոյ ցանկաս»¹⁵¹:

Այժմ հետևենք Գրիգոր Նարեկացուն.

Իսկ եթէ զփականս շարժողութեանց ըլթանցս բացից՝
Բռնադատեցից խաւսել կամեցեալ,
Դարձեալ զնոյն ձայն կրկնակական
Եղերերգութեան լալեաց բազմութեան
Խէթ մտացս յառաջադրէ:

(Խէ, Ա)

Գրիգոր Նարեկացին տալիս է նաև այդ ընթացքի
պատկերավոր, բանաստեղծական նկարագրությունը.

Եւ արդ, կրկնելով ծունը բարերարիդ քաղցրութեան,
Տարածեալ զանձն իմ առաջի, զ'ի մահ գլորման
ցուցից կերպարան...
Կանգնեցայց անդրէն կիսայար՝ պատկառեալ ի քոցդ
երախտեաց,

Ի վայր կորացեալ դիմաւք, աչք ի բարձունս յառեալ
Ողորմագին տեսութեամբ ի քեզ՝ մերձդ ի հեծութիւն,
Բնաւին ողորմութիւն, բոլորվին քաղցրութիւն,
Զլիճ լուսոյս արտասուաւք լցեալ՝
Պաղատանս յուսոյ առաջի մեծիդ վերընծայեցից:

(ՀԲ, Բ)

Ո՛չ ողբմունք ձայնից, ո՛չ հեղեղք արտասուաց,
Ո՛չ տատանմունք մատանց, ո՛չ համբարձմունք
ձեռաց,

¹⁵¹ Անանիա Նարեկացի, «Յաղաքս զդշման եւ արտասուաց», ՄՀ Ժ, էջ 363:

Ո՞չ պաղատանք շրթանց, ո՞չ աղաչանք լեզուաց:
Այսոցիկ սաստկութեանց մասանց անճողոպրելեաց
Դու ես, Տէր Քրիստոս, Հնարք եւ դադարք
Դիւրութեան եւ անդորրութեան՝

փրկութեան ամենամեղս հոգւոյ:

(Խ, Բ)

«Եւ արդ, քեզ, միայն խնամակալ... ձեռն համբառնամ
տարածմամբ բազկացս, երիկամանցս գործակցութեամբ,
սրտիս հեծութեամբ, լեզուիս եւ շրթանցս ձայնարկու-
թեամբ՝ լո՛ւր ողորմութեամբ, Տէր, պաղատանացս խնդրուա-
ծոց առ քեզ կարդալոյս» (ՂԳ, Թ):

Ահա այս կերպարանք ճշգրտագոյնք պարտաւորիս
յանդիմանութեան.

Տիսուր դէմք, քաղեալ ճաճանչ, ցամաքեալ
խոնաւութիւն, երիթացեալ շուրջն,
Անշքեալ տիպ, տրտմեցեալ ոգի, այլայլեալ ձայն,
կրկնեալ պարանոց:

(ԻԹ, Դ)

Արտաքին՝ ֆիզիկական նախապայմանները շաղկապ-
վում են ներքինին՝ հոգեկանին, զգացմունքային ազդակ-
ներ, խոր ապրումներ արթնացնելու համար.

... Որ կշռես, գրես եւ մեծ համարիս զհառաչ հոգւոյ
եւ ազդումն շնչոց հեծութեան,
Զկսկիծ շրթանց, զպասքել լեզուի, զտխրականութիւն
երեսաց,

**Զկամս խորհրդոց եւ զյաւժարութիւն
խորութեան սրտից...**
(հ, լ)

Այս ամենը ենթադրում է որոշակի կերպ, չարժում, ձև, ժեստ, դիմախաղ, որ համապատասխանում է ներքին տեքստին, ներքին շարժմանը. ներքին մարդը կենտրոնն է մի յուրահատուկ հոգեոր արարողության, բեմբասացության, որն ունի նաև իր արտաքին արտահայտչածերը, արարողակարգը:

Այսուհետև աղոթողն արդեն հայտնվում է հաջորդաստիճանում, նա պիտի կառուցի, բառեղեն ձև տա աղօթքին: Այստեղ արդեն խոսքը ստեղծագործողի, բանաստեղծի մասին է: Նրան անհրաժեշտ է նախագիտելիք, «Հնարքներ», «պատճառներ և հանդամանքներ», ինչպես նշում էր Անանիա Նարեկացին: Նա պետք է ազատվի «կրկնապղտոր խորհուրդներից»՝ սաստկացնելով զգայական լիցքերը, թանձրացնելով մեղքերի պատկերը, անվերջ կրկնելով, կուտակելով, չափազանցնելով՝ ձաղկելով, ցուցադրելով անտես մտքերն՝ իբրև հայտնի գործեր, չեղած մեղքերն՝ իբրև գործած հանցանքներ.

Եւ արդ, յոյս բարեաց, տնկեալ ի սրտի,
անձն իմ կործանեալ,

Եւ գաւտեաւն հաւատոց պնդեալ
զերիկամանցդ երկակի մասունս՝
Զկրկնապղտոր խորհրդոցդ զցանկականիդ գործարան,
Խոստովա՛ն լեռ բարերարին Աստուծոյ զմտացդ՝
իբրեւ զգործոց,

Զխորհրդոցդ՝ իբրեւ զլրութեանց,
Զանտեսիցն՝ իբրեւ զյայտնեցելոց,
Զարտիդ ծածկութից՝ իբր զբարբառումն ձայնից,
Զակնարկութեանցդ՝ իբր զարդիւնականաց մեղանաց,
Զազդել շրթանցդ՝ իբրեւ ի գլուխ եղելոց չարի...
Զեկամտիցն ընդ բնաւորականացն,
զանաւրէնութիւնսն ընդ ապաստվածութեանն,
Զփոքունսն ընդ սաստկագունիցն, զնուազունս
ընդ յոլովիցն,
Զանճառիցն իմոց՝ իբր զճառելեաց գիտողին,
Զանգրելոց վնասուցն՝ իբր զնկարելոց տեսողին
ի յարձան մագնեստիս վիմի,
Զանդնդականացն գործոց՝ իբր ի յականջս
Աստուծոյ արագ ժամանելոց:
Զայսոսիկ յաճախեա՛, կուտեա՛
կրկին յանճնառութեամբ՝
Վերստին պատմել աստանաւր մեծաւ
հեծութեամբ զչէիցն՝ իբրեւ զեղելոց,
Ընծայեալ Աստուծոյ զպարտութիւն
վանեցեալ անձինդ
Զի ընկալցիս ի փոխատուէն զշնորհաւք
թողութիւն պարտուց մեղաւորին...
(ԽԵ, Ա)

Բոլոր այս բանաձևերը, բացատրությունները, վերծանությունները նպատակ ունեն ընթերցողներին և աղոթողներին բացատրելու գղջման ու արտասվաց շնորհի, աղոթքի ու բանաստեղծության բարդ ու խթին արվեստը և

զգալիորեն հարստացնում են դպրոցի տեսությունն ու փորձը նոր կողմերով:

Այլ յայլ աւրինակ փոխեալ զմատեան մաղթանաց
այսր ողբերգութեան,

Որ ինչ ինձ է յարմարաւոր...

Առ որս՝ զղմունս, խոստովանութիւնս,

Աւետիս, պարգեւս, լուսոյ երեւմունս,

Խրախոյս աստուածայինս, փառաց ժառանգութիւնս,

Հրաշից յայտնութիւնս, սքանչելեաց տեսութիւնս,

Յորոց ոմանք յոյս ընձեռեն,

Եւ ոմանք վհատութիւնս բազումս մատուցանեն,

Յորս ես կամաւ կործանեալ՝ կորստեանն վիճակեցայ:

(Լ.Գ, Գ)

* *

Այսպիսով՝ Նարեկյան դպրոցի տեսական համակարգում բարոյագիտությունն ու բանարվեստը՝ որպես հոգեոր կատարելագործման մշտական ընթացք, սերտորեն առնչվում են իրար: Դպրոցի ներկայացուցիչներն իրենց երկերում բազմիցս անդրադառնում են հոգեոր ուղու համար անհրաժեշտ հմտություններին ու սկզբունքներին՝ նշելով ներանձնական ծեսի «շատերից ծածուկ» աստիճանակարգությանը, որի կարեորագույն օղակներից են աղոթքը, ներքին մենախոսությունը, բանաստեղծությունը:

Այս առումով ուշագրավ է «Մատեանի» ՀԵ գլուխը: Այն, ըստ էության, խրատ է՝ ուղղված կրոնավորներին ու մենակյացներին, որ վերածվում է այնուհետև ներքին մենախոսության՝ խորհրդածությունների հեղինակի անձի

շուրջ, որ օրինակի ուժ և ուսուցողական նշանակություն
ունի աշակերտների համար։ Ուսուցիչը բացատրում է
նրանց «Մատեանի» անանց արժեքը, մեկնաբանում նրա
կարևորագույն սկզբունքներից մեկը, այն է՝ հեղինակն
հանդես է գալիս իբրև հավաքական կերպար, համընդհա-
նուր բարոյականության կրող՝ իր վրա վերցնելով մարդկա-
յին բոլոր մեղքերը սկզբնահորից մինչև նրա վերջին սե-
րունդը։ Հետևենք նրա խրատաբանությանը։

Այլ ահա ձեզ ասեմ, ո՞վ եկեղեցիք միանձանց
Եւ աշակերտութիւնք կրաւնաստանաց,
Որք մերկամարմին մատանցդ ձեռաւք
Առ ակնկալութիւն յուսոյն պարգեւաց
Բարեացն անբաւից տեառն զինուրեալք,
Որոց զայս սեղան հանդերձանաց խորտկաց
բանից ընծայեցուցի։

Ընկալարո՛ւք զայս աւանդութիւն խոստովանութեան
ի շինուած փրկութեան հոգւոց,
Ծաներո՛ւք սովիմք զմարմնոյս պարտութիւն...
Քանզի եւ ես իսկ, որ զայս նուազութիւն
Մասնաւոր պտղոյ ձեզ ջամբեցուցի,
Վկայեալ զանձնէ կամաւորական ստգտանք
Բիւր բամբասանաց անբժշկական մեղանաց,
ի սկզբնահայրն սկսեալ մինչեւ ի սպառումն
δննդոց նորա՝
Կամայականն յանձնառութեամք հաստեցի, եղի
Զիս ամենայնիդ պարտական չարեաց։

(ՀԲ, Ա)

Ես եմ համայնը և ամենքն են իմ մեջ՝ հայտարարում է բանաստեղծը՝ իր աշակերտներին մեկնելով «Մատեանի» խորհուրդը և տալով նրանց երկի մեջ խորանալու, նրա խորհուրդն ընկալելու բանաձեռքանալին.

Ո՞չ ոք մեղաւոր իբրեւ զիս,
Ո՞չ ոք անաւրէն, ո՞չ ոք ամբարիշտ,
Ո՞չ ոք անիրաւ, ո՞չ ոք չարագործ,
Ո՞չ ոք վրիպեալ, ո՞չ ոք սխալեալ,
Ո՞չ ոք մոլեգնեալ, ո՞չ ոք խարդախեալ,
Ո՞չ ոք շաղախեալ, ո՞չ ոք ամաչեցեալ, ո՞չ ոք
դատապարտեալ,
Ե՛ս միայն, եւ այլ ո՞չ ոք,
Ե՛ս ամենայնն, եւ յի՛ս ամենեցունն:

(ՀԲ, Գ)

Հոգեոր միստիկ կենցաղավարության իր սկզբունքների ու փորձի մասին Գրիգոր Նարեկացին բազմաթիվ հղումներ ու հիշատակություններ ունի «Մատեանում»: Նրա հիշատակությունները սփռված են տեքստերի մեջ, որոնց վերհանումով ու համադրումով տեսանելի է դառնում Հոգեոր կենցաղավարության նրա նախանշած ուղին: Գրիգոր Նարեկացին անմիջական հետեւրդն է Խոսրով Անձեացու և Անանիա Նարեկացու, երբ խոսքը վերաբերում է վանական բարոյագիտության նորմերին: Սակայն Գրիգոր Նարեկացու հոգեոր փորձը աննախաղեալ խտությունների է հասնում բուն ստեղծագործության ընթացքում, երբ նա տալիս է աղոթքի՝ իբրև ներքին ծեսի ու արարողության մեկնաբանություններ և բնութագրում իր աղոթքները՝ իբրև աստվածաշունչ ողբերի մատյան:

Բանաստեղծը հոգևոր փորձի նոր ծալքեր, ներգգացություններ, հոգևոր խորին ապրումներ ու ելեէջներ է բացում՝ զգալիորեն մեծացնելով ստեղծագործության՝ իբրև ներանձնական ակտի մտահորիզոնն ու տեսիլադաշտն՝ ուղղված դեպի ներս ու դեպի դուրս:

Խոսքն հատկապես վերաբերում է բանաստեղծական ներշնչանքի, ներքնատեսության, հոգևոր զմայլանքի ու բերկրանքի այն աստիճանակարգությանը, որ հոգևոր փորձի բարձրագույն մակարդակն են փորձում նկարագրել և որտեղ բանաստեղծի երևակայությունը բացվում է նորանոր կողմերով՝ տալով մտքի հիացման, պայծառատեսության պատկերներ: Այս ամենին աղոթողը հասնում է բանաստեղծական արվեստի գաղտնիքներին տիրապետելու երկար վարժանքի, բայց առավել աստվածային ներշնչանքի, նրա անվերջ ներկայության, աստվածային բարքառի և բանաստեղծական խոսքի միեղենության ու միախառնության շնորհիվ: Ստորև մեջբերվող հատվածում, բացի նմանատիպ նկարագրություններից, առկա է դարձյալ աղոթքի հոգեփիղիկական նկարագրության մի դրվագ, որի ավարտը առնչվում է Խոսքով Անձեացու՝ աղոթքի տեսության դրույթներին: Բանաստեղծն, ահա, իր արվեստի խորին խորքերում հասնում է խնդության, պայծառության, բերկրության, ցնծության, որ աստվածային առնչակցության «երկնաճեմ սանդուղքի» աստիճաններն են:

Դուռն բարձրութեան՝ տարակուսելոյս,
Սանդուղք երանութեան՝ եղկելոյս,
Ճանապարհ շաւղաց՝ մոլորելոյս...
(Իթ, Ա)

Տենչալի տուր, անձկալի ձիր,
Բաղձալի բերկրութիւն, անտխուր հանգիստ,
Անտարակոյս գիւտ, անկապուտ կեանք,
Անծախելի ստացուած, անփոխանորդելի բարձրութիւն,
Ամենարուեստ բժիշկ...
Լուսոյ տեսակ, ցնծութեան ցոյցք,
աւրհնութեան անձրեւ,
Հոգի երեսաց, զաւրութիւն դիմաց, հովանի գլխոյ,
Շարժարան շրթանց, ազդումն բանի, կառավար անձին,
Բարձումն բազկի, ձգտումն ձեռին,
երասանակալդ սրտի,
Հնտանի անուն, մերձաւոր ձայն,
Կցորդութիւն հարազատ, խնամածութիւն հայրենի,
Խոստովանեալ անուն, պաշտեցեալ
պատկեր, անպարագիր տիպ,
Երկրպագեալ տէրութիւն, բարեբանեալ յիշատակ,
Խնդութեան մուտք, անվրէպ շաւիդ, փառաց դուռն,
Ճշմարտութեան ճանապարհ, երկնաճեմ սանդուղք:
(ԼԲ, Գ)

Իսկ ահա «անքակ միության», «հոգեոր խրախճանքի»,
«խոր խաղաղության» մի նկարագրություն, որոնք նույն-
պես միջնադարյան միստիկայի էական հասկացություննե-
րից են և ամբողջացնում են հոգեօր աստիճանակարգությու-
նը: Նմանատիպ նկարագրությունները առանձնահատուկ
նշանակություն ունեն և հանգուցային տեղ են գրավում հայ
միջնադարյան միստիկայի և բանաստեղծական արվեստի
մեջ, քանի որ սակավադեպ են հանդիպում այլ երկերում:

**Եւ ընկա՛լ զցաւղ ողբերգութեան լալոյ արտասուաց
աչացս ցանկասիրի...**

**Եւ համբուրիւ շրթանցս առ ճաշակ
փրկութեան կենացդ հաղորդութեան՝**

Համաշնչապէս զանքակ միութիւն...

**Եւ ի ձեռն գթութեան սիրոյ քոյ
Առ քո անձկալի անունդ խոստովանեալ ծառայիս
Դարձցի՛ն ձմերունք հողմոյն խստութեան ի յաւդ**

Հանդարտութեան,

**Եւ մըրկին սաստկութիւն՝ ի սիք ախորժութեան...
Եւ վտանգք թախծանացն՝ ի**

Հոգեւոր խրախճանութիւն,

Եւ ալեկոծութիւն ծփանացն՝ ի խոր խաղաղութիւն,

Եւ ղեկացն թեւարկմունք՝ յանքոյթ նաւահանգիստն,

Եւ բերք բեռանցս մեղաց՝ փոխարկեսցի

ի թոշակ շնորհաց:

(ԼԲ, Դ)

Բազմաթիվ ու բազմազան են «Մատեանում» հոգեւոր բերկրանքի, էքստատիկ վիճակների, Աստծո հետ հոգեւոր առնչակցության այն նկարագրությունները, որոնք տեքստում ուղղակիորեն չեն կապվում աղոթքի, բանաստեղծելու ձիրքի ու հոգեւոր արվեստի հետ, սակայն նույն հոգեւոր կենցաղավարության, հոգեւոր ճանապարհի արդյունքն են, ուր անխղելի են ներքին ծեսը, աղոթքն ու արտաքին վարքը: Ինչպես հեղինակն է նշում.

Արդ ազատեա՛ զմեզ յամենայն անմաքուր գործոց,
Որ ոչ է հաճոյ քումդ բնակութեան,
Եւ մի՛ շիջցին առ ի մէնջ լուսոյդ շնորհաց փայլմունք
Ի տեսականացս աչաց իմաստից,
Վասն զի զքեզ ուսաք միանալ ի մեզ
Ի ձեռն աղաւթից եւ ընտիր վարուց խնկելոց:

(Լ. Գ, Է)

Մեջ բերենք այս առումով «Մատեանի» ամենաբնորոշ
Հատվածները.

Ո՞վ ամենապարգեւ ձեռն թիսուսի Քրիստոսի,
Եւ առ իս դարձցիս կարկառմամբ շնորհի աշոյդ
Քոյ սրբոյ՝

Բնակեալ, միացեալ եւ ոչ հեռացեալ
Յանձկութեան սրտէ սիրոյ սենեկիս:
Եւ անեղծական քո նկարագիր՝
Նշխար պանծալի լուսոյ քրիստոնէական
Քրկաւէտ կոչմանս,

Ընդ ի՛ս պահեսցի՝ միջնորդեալ ընդ քեզ
Ի մատեան յաւիտենական կտակաւդ կենաց
Հոգւոյդ աւետեաց երկնից յաւրինողիդ:

(Լ.Բ, Զ)

Հրամայեա՛, գթած, խնամակալ, գովեալ,
Լոյս անշիջանելի, զաւրութեամբ անսահմանելեաւ,
Զի նոր հաստատեսցի գոյութիւն բնութեանս
Մարմնեղէն յարկի անդամոցս:
Յորում հանգուցեալ անլքանելի՝ բնակեսցես բազմեալ՝

Ախորժ տենչանաւք, միութեամբ հոգւոյս իմ ընդ քեզ,
Զապականութիւն մեղացս մերժեալ իսպառ՝
Յանարատութիւն զիս պատրաստեսցես...

(ՀՀ, Դ)

Պատկերն ավելի ամբողջական է դառնում նմանատիպ
այլ ձևակերպումների զուգադրությամբ, որ վկայում է
Աստծո հետ անխզելի կապի և աղոթքի միջոցով անմիջական
ազդեցության մեծացման, ներշնչանքի ծավալման մասին:

Իսկ եթէ, ամենիցդ Աստուած անքնին,
Իմովս վասն իմ առ իմ փրկութիւն, ի դէմս իմ,
Իբր թէ ընդ քոյդ էութեան ես իցեմ
Մարմնով պարունակողիդ կցորդ միացեալ...
Աստուածապէս նուիրեալ եւ ի մասունս

անհատս բաշխեալ:

(ԾԳ, Գ)

Եղիցի՛ ողորմութիւն ստեղծողիդ ընդ իս,
Եւ շունչ ոգւոյս իմ ընդ քեզ՝
Անբաժանաւրէն կապաւ միացեալ ի մի:

(Ղ, Ե)

Ներկայացվող հաջորդ հատվածում աստվածային
շնորհը նույնանում է Սուրբ Հոգու առկայության, ներկա-
յության հետ, այն աստվածային «ընտանության», «միա-
վորության» նշան է մարդկային հոգում:

Շաւիղն յուսոյն կուրացաւ,
Շնորհին ծածկոյթ յինչն մերկացաւ,
Փառացն վայելչութիւն ստուերացաւ,

Հանճարն առաջնորդական խափանեցաւ...
Բարձրութեանն վստահարան կործանեցաւ,
Ընտանութեանն միաւորութիւն անջրպետեցաւ,
Արբութեան սիրող Հոգին Աստուծոյ տրտմեցաւ:

(ԻԴ, Գ)

Ներշնչանքը, Հոգեոր արվեստները, մտավոր վարժանքը կապված են Սուրբ Հոգու հետ, գործում են նրա աստվածային «զարմանալի զորությամբ»:

«Աւրհնաբանեմք ընդ Հաւր եւ Որդւոյ եւ զանբաժանելի բղխումն՝ նոցին փառակից Հոգւոյն տէրութեան... Նախ արար եւ այժմ գործէ, գոյացոյց եւ միշտ կատարէ արուեստս, սքանչելիս, նախատեսութիւնս սրբասնելոց, ազդմունս աստուածաւրէնս, զաւրութիւնս զարմանաւորս, մարդարէս, առաքեալս, վարդապետս՝ վարժողս կրթութեան հանճարոյ» (ՀԵ, Զ):

Աստված ներգործում է ոչ միայն մոտիկ կամ անմիջական հաղորդությամբ, ներշնչանքով, «Հպավորությամբ», այլև հեռուներից՝ «ի բացեայ գոլով միջոցաւ մեծաւ»:

Հեղինակը դիմել է իմաստային ըրջասության: Աստվածազգացողությունը ոչ միայն անմիջական, մերձավոր հպում ու կապ է ենթադրում, այլև մի ներգործություն, որ հեղինակի մտապատկերում ուրվագծվում է իբրև հեռագայություն: Միաժամանակ զգայելի ու տարածական են դառնում հոգեոր դաշտն ու բառաշխարհը, քանի որ բառը «Հպավորության» հանգույց ու խորհրդանիշ է:

Ոչ ձեռինդ միայն ձգմամթ հպաւորութեան,

Ո՞վ բարեգութ՝ Աստուած մերձաւոր,
Այլ ի բացեայ գոլով միջոցաւ մեծաւ՝
Ակն ունիմ զաւրել քո բանիդ առ իմ բժշկութիւն...
Այլ ի վերինն երկնի բազմելով՝
Եւ ի ստորինս երկրի բովանդակ,
Առ հրաշիցն սքանչելութիւն՝ ոչ ունիմ հատուցանել:

(ԺԷ, Գ)

Կան հատվածներ, ուր աստվածային լույսը դիտվում է
իբրև հոգեոր կապի խորհրդանիշ՝ գերզգայության աղբյուր,
որ հիշեցնում է աստվածային լույսի էմանացիաների
(բխումների) նորպլատոնականության տեսությունը.

Ա՛յս իդաք խորհրդոց խոստովանեալդ քո տենչանաց,
Ա՛յս նշոյլք լուսոյ ամենասփիւռդ ճառագայթից,
Ա՛յս ախորժութիւն ճաշակաց բարեբանեալդ

քո քաղցրութեան:

(ՀԴ, Բ)

Եւ փոխանակ զի ես ոչ խնդրեցի հետեւել լուսոյդ,
Դո՛ւ ելցես ինձ յայց, ճառագայթ ծագման

հայրենի կերպիդ:

(ՀԸ, Բ)

Մի՛ խզեր զկապ միութեան ընդ քեզ
սիրոյն պնդութեան...
Մի՛ պակասեցուցաներ զյաջողուած աջոյս՝
Առ ի զլուսոյդ մասունս բաշխեալ:

(ՀԸ, Կ)

Աստիճանաբար բանաստեղծը մերձենում է Աստծուն՝
«ըստ» մարդկային կարողության, Աստված դառնում է
«անընդմիջելի մերձաւոր»։

Խոսքի շնորհիվ ու բառային տեսիլքով այն, ինչ ա-
ներևույթ է, դառնում է տեսանելի, բառայնացած, արտա-
հայտիչ ու մարմնառույալ, մարդեղացած – և այս ամենը՝
ըստ մարդկային հնարավորությունների։

Անմիջնորդ կապը ներկայանում է իբրև ներշնչանք,
լույսի ներհոսք և արտահոսք, վայրէջք և վերառաքում –
բառեղեն կերպարանքով, անմիջնորդ առնչությունը, հա-
ղորդակցությունը կայանում է բառային հսկայական ու
զանգվածեղ տեսիլաղաշտով։

Բանաստեղծը մեկընդմիշտ հավատացած է, որ ինքը
ստեղծագործում է աստվածային ներշնչանքով։ Նա արա-
րում, գոյավորում և շնչավորում է մի խորհրդավոր բա-
ռաշխարհ – նա ստեղծաբանում է հափշտակության, ինք-
նազելման սահմանին՝ անսովոր, հսկայածավալ թուչքնե-
րով, ճյուղավորումներով ու խտացումներով։

Տէր Յիսուս Քրիստոս, Որդի Աստուծոյ կենդանւոյ...

Կեանք անկորուստ, միջնորդ երկնային,

Լիութիւն աննուազ, երանութիւն տաւնելի,

Զեռն ձգեալ սիրոյ ողորմութեան քոյ աջոյ՝

Հնկա՛լ եւ մատո՞ք քաւեալ եւ սրբեալ

զիս՝ զամենապարտու,

Բանդ կենդանի, առ հաւասարապատիւ քո Հոգի,

Զի քեւ վերստին հաշտեալ յիս դարձցի,

Եւ ի ձեռն քո իւրովն կամաւք մաքուր նուիրեալ,

Զաւրեղն ինքնութեամբ զիս Հաւր ընծայեալ,
Անդէն առ նմին նովիմբ միշտ ի քեզ
Շնչոյս ողջունիւ կապեալ ընդ շնորհիդ՝
ի քեզ միանալ անբաժանելի¹⁵²:

(Ի՞՞, ՞)

Գրիգոր Նարեկացու այս բանաստեղծական տեսիլները, բոնկումներն անմիջական աղերսների մեջ են Դիոնիսիոս Արեոպագացու էքստատիկ, խորհրդական աստվածաբանության, գոյաբանական խոր թափանցումների հետ, որ առհասարակ Նարեկյան դպրոցի միստիկ աստվածաբանության, տեսական մտքի ու ստեղծագործության սնուցող երակներից մեկն են: Այս աղերսների քննությանն է նվիրված ուսումնասիրության երկրորդ հատվածը:

¹⁵² «Մատեանի» քննական բնագրի ծանոթագրությունների մեջ աշխատասիրողը մեջ է բերում այս հատվածի մասին եղած ուշագրավ կարծիքներն ու մեկնաբանությունները (տե՛ս Մատեան ողբերգութեան, աշխ. Պ. Խաչատրյանի, Ա. Ղաղինյանի, ծնթ. 10, էջ 1012).

«Ինչպես Գ. Ավետիքյանն է նկատել, այս գլխի վերջին հատվածը շնչում է լուսավոր լավատեսությամբ: Տանջանքից, տրտմությունից ու ծայր հուսահատությունից Նարեկացին կարծես մեկեն անցում է կատարում և փարզում խորհրդապաշտի իր փրկության գաղափարին... Գլխի նման ավարտն անսպասելի չի կարող համարվել, որովհետեւ բանաստեղծն իր աղաչանքաղերսը վարում է «երկոքումբք աչօք». մինչ մի աչքը պահում է իր «մեղքերի» վրա՝ ապրելով զղում ու ինքնաձաղկում, մյուսը՝ հույսի ու գիթության վրա» (Հմմտ. «Նարեկլուծ», էջ 111):

**ԴԻՌՆԻՍԻՈՍ ԱՐԵՈՊԱԳԱՑՈՒ
ԵՔՍՏԱՏԻԿ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ ԵՐԿԵՐՈՒՄ**

ԴԻՈՆԻՍԻՈՍ ԱՐԵՈՊԱԳԱՑՈՒՆ ՎԵՐԱԳՐՎՈՂ ԵՐԿԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

Դիոնիսիոս Արեոպագացուն վերագրվող երկերը խոր ազդեցություն են թողել Գրիգոր Նարեկացու ստեղծագործության բոլոր շերտերի վրա։ Այստեղ աղերսներ են հայտնաբերվում Դիոնիսիոս Արեոպագացու աստվածաբանության բոլոր տեսակների, աղոթքի՝ օրհնաբանության տեսության հետ։

Դիոնիսյան տեքստերը միստիկ-բանաստեղծներին ազատ մտածողության և ստեղծագործության անսահմանափակ հնարավորություններ էին ընձեռում, որի բացարձակ արտահայտությունն է Գրիգոր Նարեկացու ստեղծագործությունը։

Ստեղծագործող անհատն, ըստ այս տեսությունների, գտնվում է արարչագործության, մշտագեղուն հղացման ծիրում, ուր գերագույն նշանակություն է ստանում նրա ստեղծագործ տարերքը։ Հիացումը, հրճվանքը, բերկրանքը, պայծառացումը, սերը, հոգեոր տարփանքը նրա համար սոսկ հասկացություններ ու վերացական գաղափարներ չեն, այլ աստվածային ներդործուն սկիզբներ, կենդանի կապի, անմիջնորդ հաղորդակցության ձևեր։ Նրանք շաղկապված են աստվածային արարման և ներդաշնակության գերագույն սկիզբներին՝ Բարուն, Ազնիվին, Գեղեցիկին, որոնցով ներթափանցված և ներդաշնակված է համաշխարհը։

Հստ նորպլատոնական փիլիսոփայության՝ բանական մարդը բաց է տիեզերական անսահմանության առջև՝ իմանալի՝ աստվածային էությունների աշխարհի առջև, որոնք

անթիվ են, և զգայական աշխարհի առջև, որ մինչև իր «նվաստագույն» աստիճանները, մասնիկները՝ ներթափանցված է աստվածային սիրով ու գորությամբ։ Մարդը հանգույց է, կապող օղակ է այդ երկու աշխարհների միջև, այդ երկու աշխարհներն արտացոլող՝ աստվածային քահանայապետության մի սրբազն օղակը։ Նա միացած է տիեզերական «գնդաձե», բոլորակաձև շարժմանը, նրա էությունների ու գաղափարների աշխարհին կամ անմիջականորեն, հոգեոր «շրջագայությամբ», երբ անմիջականորեն է հայում իմանալի, բանական աշխարհը, կամ երեսութական, զգայական աշխարհի տեսանելի, մարմնավոր, առարկայական պատկերներով՝ զգայական աշխարհի վերառաքման միջոցով։ այն կատարվում է հոգեոր էքստազի, տարփանքի, սիրազեղության պահերին, երբ հոգեոր զգացմունքը հասնում է իր կիզակետին, և տեսանելի պատկերների աստվածային քողարկված էությունների բացահայտմամբ հայեցողը բարձրանում է աստվածային նվիրապետության աստիճաններով։ Առաջին ուղին՝ «հոգեոր շրջագայությունը»՝ փիլիսոփայական հայեցողության, ներքին խաղաղության, հոգեոր պայծառացման ուղին է, երկրորդը՝ հոգեոր արվեստների, ներքին մենախոսության, աղոթքի, որն, ավելի անմիջական և զգացմունքային լինելով, կապվում է հոգեոր տարփանքի, էքստազի հետ։

Այստեղ անհրաժեշտ ենք համարում մի էական ճշգրտում կատարել։

Նորպլատոնականությունը, հատկապես արեոպագիտյան տեքստերը, նշելով հոգեոր մաքրագործության աստ-

վածանմանության երկու ուղիները, հնարավորություն էին տալիս ազատորեն ծավալել իմացական և ստեղծագործական ներուժը, ազդակները, հմտություններն ու հնարավորությունները նախընտրած և նախանշած այդ ուղղություններով։ Հաճախ էլ «վերնական իմաստասիրության» (Գրիգոր Նարեկացի), վերին աստվածաբանության այս երկու սկզբունքները, ուղղություններն ի հայտ են գալիս միահյուսված՝ միեղեն, ինչպես ամենայն ինչ դիոնիսյան քահանայապետության համակարգում, ուր ամեն ինչ միացած, հոգավորված, «էակցված» է (Գրիգոր Նարեկացի) աստվածային սիրով՝ տիեզերական ներդաշնակության՝ բարու և գեղեցիկի օրենքներով։

Ուստի՝ հենց միայն Նարեկյան դպրոցի փորձը վկայում է, որ միակողմանի պետք է համարել արեռպագիտյան բնագրերին տրվող տարածված բնորոշումը, այն է՝ որ նրանք սկիզբ են հանդիսացել արևելաքրիստոնեական միստիկայի փելիսոփայական-սպեկուլյատիվ ուղղության համար, որ մտահայեցողական միստիկայի բնորոշումներից է¹⁵³։

Մինչդեռ այս երկերում հստակորեն նախանշված է նաև քրիստոնեական միստիկայի երկրորդ ուղղությունը, որն ընդունված է բարոյագործնական անվանել և ուր առավել մեծ տեղ էր հատկացվում մարդու հուզական տարերքին, նրա ստեղծագործական լիցքերին։

Մի առանձին խնդիր է այս երկերի հեղինակի հարցը։

¹⁵³ Այս մասին տե՛ս **Պ. Մինին**, *Главные направления древне-церковной мистики, "Богословский вестник"*, Сергиев-Посад, 1911, с. 830-831, **Ա. Կաջդան**, *Византийская культура*, М., 1968, с. 122.

Դիոնիսիոս Արեոպագացու անունով հայտնի երկերն ընդունված է համարել V-VI դարերի հեղինակի գործեր:

Դիոնիսիոս Արիոպագացին Պողոս առաքյալի աշակերտն էր: Նրան վերագրվող երկերի մասին առաջին անգամ Հիշատակվում է 532 թ., Կոստանդնուպոլսի եկեղեցական ժողովում, ուր միաբնակները երկաբնակների հետ վիճարանելիս, իբրև մեծագույն հեղինակություն, հենվում էին Դիոնիսիոսի երկերի վրա: Ակսած այդ թվականից՝ հեղինակի իսկությունը կասկած է հարուցել, և այդ վեճերը, հաճախ անպառուղ, շարունակվում են առ այսօր:

Ժամանակակից ուսումնասիրողներից ոմանք, շեշտադրելով այս խորհրդավոր երկերի բուն էությունն ու նշանակությունը, դիտարկում են դրանք իբրև միեղեն մարդստեղծագործություն, որի խորհրդավոր հեղինակը ներհյուսվել է սրբազան բնագրերի հետ¹⁵⁴:

Դիոնիսիոս Արեոպագացին ընդհանրական եկեղեցու սուրբ հայրերից է՝ հայրաբանության վերջին շրջանի ներկայացուցիչներից և, ինչպես նշեցինք, արևելաքրիստոնեական միստիկայի փիլիսոփայական-հայեցողական դպրոցի հիմնադիր, թեև նրա երկերն ընդգծված գեղագիտական բնույթ ունեն:

Հայ իրականության մեջ Դիոնիսիոսը համարվում էր եկեղեցու 12 գերագույն հեղինակություններից մեկը: Նրա-

¹⁵⁴ Այս մասին տե՛ս **ВЛ. Лоссакий**, *Очерк мистического богословия Восточной церкви*, в кн. *Мистическое богословие*, Киев, 1991, сс. 108-109, նաև **Дионисий Ареопагит**, *Сочинения*, **Максим Исповедник**, *Толкования* (пер. Г. Прохоров), СПб, 2002, сс. 5-25.

նից բազմաթիվ քաղվածքներ կան «Կնիք հաւատոյ» դաշվանաբանական ժողովածում:

Հայ մշակույթի մեջ այս երկերի ազգեցությունը նկատելի է VIII դարից սկսած՝ դրանց թարգմանությունից անմիջապես հետո: Ինչպես հայտնի է, 718 թ. այն իրագործել է Ստեփանոս Սյունեցին՝ V-VI դդ. Հայ հունաբան դպրոցի ավանդների շարունակողը: Դիոնիսիոսի ազգեցությունն արդեն իսկ նկատելի է նրա երկերի վրա:

Այս երկերն իրենց կարևոր տեղն ունեն հայ ձեռագրական ավանդույթի մեջ: Դրանք այն բացառիկ բնագրերից են, որ մեզ են հասել հարյուրից ավելի ձեռագրերով (Հիսուսունից ավելի օրինակ պահպում է միայն Մաշտոցի անվան Մատենադարանում):

Հստ Անանիա Մոկացու թղթերի՝ Դիոնիսիոս Արեոպագացու վրա էր հիմնվում Խոսրով Անձևացին եկեղեցական-բարենորոգչական իր ծրագրերում¹⁵⁵: Նրա ազգեցությունն ակնհայտ է Անանիա Նարեկացու բանաստեղծական արվեստի տեսության և ստեղծագործական փորձի վրա, որից էլ անցել է Գրիգոր Նարեկացուն¹⁵⁶: Դիոնիսիոսի դավանաբանական հայացքները մեծապես օգտագործվել են X դ: Արանցից քաղվածքներ են զետեղված Անանիա Նարեկացու «Հաւատարմատ» դավանաբանական երկում, ուր Անանիա Նարեկացին նրան կոչում է «Սուրբ Դիոնիսիոս Արիսպագի՝ աթէնական փիլիսոփայ եւ գերակատար ճարտա-

¹⁵⁵ «Նորին տեառն Անանիայի հայոց կաթողիկոսի» Դ, ՄՀ Ժ, Էջ 288-291:

¹⁵⁶Տե՛ս Հ. Թամրապյան, Գիրք Բ, Էջ 394-397, Գրիգոր Նարեկացին և նորպլատոնականությունը, Էջ 12, 19, 21-30, 31-34 և այլն:

սան»¹⁵⁷, որ ակնարկում է հեղինակի փիլիսոփայական երկերի գեղագիտական-գեղարվեստական ուղղվածության մասին:

Նրա զորեղ ազդեցությունը, սակայն, առավելապես ի հայտ է գալիս Գրիգոր Նարեկացու ողջ աստվածաբանական-բանաստեղծական համակարգի վրա, որ իր ընդգրկումով, տեսության կիրառության համակարգվածությամբ և մի շարք դրույթների բացարձակացմամբ չի հանդիպում ողջ միջնադարում¹⁵⁸:

Բացարձակ առումով Գրիգոր Նարեկացու բանաստեղծական տեսիլքը կապված է նորպատոնական էքստատիկ աստվածաբանության հետ: Գրիգոր Նարեկացին բացարձակացրել է նաև խոսքի աստվածային էության և զորության մասին նորպատոնական պատկերացումները: Հստ Գրիգոր Նարեկացու՝ Աստծո պատկերով, հրեշտակակերպ ստեղծված մարդն իր արարման ձիրքով համացեղ է Աստծուն, ստեղծագործում է նրա հետ «Համաշնչապես»՝ թափանցելով նրա բանական և զգայական տիեզերքների անվերջ հղացումների ու փոխներթափանցումների մշտագեղուն ոլորտները: Այս գաղափարներով է ներշնչված Վերածննդի մշակույթը: Դիոնիսիոս Արեոպագացու ուսմունքը

¹⁵⁷ Անանիա Նարեկացի, «Լուծումն մաքառման երկաբնակաց», ՄՀ Ժ, Էջ 571:

¹⁵⁸ Նարեկյան դպրոցի ներկայացուցիչների երկերի բնագրագիտական հետազոտությունների բաժնում (Գիրք Ա) արդեն քննության են ենթարկվել Գրիգոր Նարեկացու «Ճառ սրբոյն Գրիգոր Նարեկացւոյ ասացեալ» և «Մեկնութիւն «Ծ՝ կա»-ի» երկերը՝ նաև նորպատոնական-արեոպագիտյան տեսական նախահիմքերի առանցքում (տե՛ս Հ, Թամրապյան, Գիրք Ա, Էջ 262-268, 312-315, Գրիգոր Նարեկացին և նորպատոնականությունը, Էջ 17-91):

վճռորոշ դեր է խաղացել քրիստոնեական միստիկայի և ընդհանրապես միջնադարյան և Վերածննդի շրջանի արվեստի տեսության զարգացման մեջ¹⁵⁹:

«Վերածննդի գեղագիտությունը, ամենից առաջ, նորավառությունն է... Նորավառությունն այդ գեղագիտությունն ի հայտ է գալիս անխտիր Վերածննդի բոլոր փուլերում՝ սկսած XIII դ. նախավերածննդից, վերջացրած մանյերիզմով... Վերածննդի մարդու այդ անկեղծ, խանդակառ, զվարթ-տոնական ներքնազգացողությունը գալիս էր նորավառությունից»:

Բնության, իբրև աստվածային գորություններով լեցուն, հավերժ կենդանի ու կենսախինդ, հրաշակերտ ստեղծագործ-արարչական տարերքի իր ընկալմամբ, Վերածննդի գեղագիտությունը նույնպես պարտական էր նորավառունականությանը...

Վերջապես, աստվածությունն ինքը Վերածննդի գեղագիտության մեջ մեկնաբանվում էր իբրև հավերժ արարող սկիզբ... Աստված ինքն ընկալվում էր բանաստեղծորեն ոգեշնչված՝ իբրև «վարպետ» (*opifex*) և «արվեստագետ» (*artifex*)...»¹⁶⁰:

Գրիգոր Նարեկացու տաղերում առկա բնության կենդանի, ստեղծագործական ընկալման հետ է կապում Մ. Աբեղյանը հայ գրականության մեջ սկզբնավորվող Վերածննդի դարաշրջանը¹⁶¹:

¹⁵⁹ Այս մասին տե՛ս Յ. Բայկով, *Византийская эстетика*, М., "Искусство", 1977, с. 166-171.

¹⁶⁰ Ա. Լօսեւ, *Эстетика Возрождения*, М., 1978, с. 610.

¹⁶¹ Մ. Աբեղյան, Երկեր, Գ, Գրիգոր Նարեկացի, Երևան, 1968, էջ 620-629:

Դիոնիսիոսին վերադրված երկերը Նարեկյան դպրոցի գրական ժառանգությամբ, հատկապես Գրիգոր Նարեկացու ստեղծագործությամբ միջնորդավորված՝ էական դեր են խաղացել մյուս խոշորագույն՝ Անիի և Կիլիկիայի գրական դպրոցների, նրանց գիտական-կրթական համակարգերի, հոգեոր արվեստների տեսության և փորձի ձեւավորման ու զարգացման գործում։ Ուսումնասիրությունները վկայում են, որ Դիոնիսիոս Արեոպագացու երկերը զորեղ ազգեցություն են թողել, Ներսես Շնորհալուց բացի, Գրիգոր Տղայի, Ներսես Լամբրոնացու (XII դ.) տեսական հայացքների և բանաստեղծական արվեստի վրա։ Ակնհայտ է այդ ազգեցությունը նաև հայ միջնադարի խոշոր դեմքերից Հովհաննես Իմաստասերի (XI) և Հովհաննես Երզնկացու (XIII) վրա։

Մինչև այժմ նշվել են այն ընդհանրություններն ու ազգեցությունները, որոնք ի հայտ են գալիս դրանց և Դավիթ Անհաղթի, Ներսես Շնորհալու, Գրիգոր Տաթևացու, Վանական վարդապետի երկերում, ինչպես նաև, Ստեփանոս Այունեցուց հետո, այդ երկերի Համամ Արևելցու, Եսայի Նչեցու, Վահրամ Ռաբունու լուծմունքներում ու մեկնություններում, որոնք շրջանառվել են հայ միջնադարյան դպրոցներում և վարդապետարաններում։

Այս ամենին գումարվում է, ահա, Նարեկյան դպրոցն իր մատենագրական մեծ ժառանգությամբ, որը X դ. հայ մատենագրության գերակշիռ մասն է կազմում։

ԱՍՏՎԱԾԱՆՄԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Աստվածանմանության, աստվածացման էական գաղափարին է նվիրված Դիոնիսիոս Արեոպագացու «Յաղագս երկնայնոցն քահանայապետութեանց» երկի մի առանձին՝ XII դլուխը, խորագրված «Վասն Է՞ր մարդկան քահանայապետք հրեշտակք կոչին»։ Ինչո՞ւ են քահանայապետերը և սրբազան այրերը հրեշտակներ և անգամ աստվածներ կոչվում, ինչո՞ւմն է մարդու աստվածացման խորհուրդը, և արդյո՞ք հասու է դրան մարդկային բնությունը։

Այս խնդիրը Դիոնիսիոսի միստիկ աստվածաբանության էական գաղափարներից է։ Հստ նրա՝ երկնային քահանայապետության բարձրագույն և ցածրագույն աստիճանակարգությունները (զարդք) կենդանի հաղորդության, կապի մեջ են, և ստորին աստիճանները թեպետ ամբողջովին հասու չեն ամենայնի սկզբնապատճառին, գերագույն զորությանը, սակայն շաղկապված, կցորդված լինելով նրան՝ մասնակիորեն, ըստ իրենց կարողության հաղորդվում են կատարելագույնին, ձգտում են աստվածային կատարելության։

Ուստի անվայելուչ չէ քահանայապետին հրեշտակ անվանել, քանի որ նա հաղորդ է երկնային այդ աստիճանակարգությանը և հրեշտակների նման կարող է ներգործել մարդկանց վրա՝ ազդարարելով Աստծո կամքը՝ «մարդարեանալով և հայտնաբանելով»։

«XII,1. Վասն Է՞ր մարդկան քահանայապետք հրեշտակք կոչին։

Խնդրի և այս իմանալեացն ասացելոց սիրելի տեսու-

թեամբք, զի թէ անհաղորդք են գերագունիցն բոլորմանց յետինքն. զի՞նչ պատճառ է մերումս քահանայապետի հրեշտակ Տեառն ամենակալի յաստուածաբանութեանցն անուանիլ:

Բայց ոչ է հակառակ բանս՝ որպէս վարկանիմ՝ նախասահմանելոցն։ Քանզի ասեմք եթէ... գերագունին զարութեան երիցագունիցս զարդուց կարաւո են վերջինքն, քանզի մասնականի եւ համեմատի են հաղորդ ըստ միում շաղկապական կցորդութեան ամենեցունց...

Ձնոյն եւ յաղագս ամենայն աստուածայնոցն իմացութեանց սահմանել ոչ է մեղադրելի, քանզի որպէս առաջինքն առաւելապէս ունին զնուաստագունիցն զսրբավայելուչս առանձնաւորութեանցն՝ նոյնպէս ունին եւ յետինքն յառաջնոցն, բայց ոչ նմանապէս, այլ նուաստաբար։

Արդ ոչ ինչ <ուրեմն> է անտեղի, որպէս վարկանիմ՝ թէ եւ զմերս քահանայապետ աստվածաբանութիւնն հրեշտակ կոչէ, որ ըստ կարողութեանն իւրում հաղորդէ հրեշտակաց մարգարէականի առանձնաւորութեան և առ յայտնաբանականն նոցա նմանութիւն որպէս հասանելի մարդկան յարձակեալ»¹⁶²:

Հստ Դիոնիսիոսի՝ մեզանից բարձր գերագույն էությունները, ինչպես նաև աստվածասեր և սրբազան մարդիկ աստվածներ են կոչվում, թեև գերագույն Աստվածությունն անհասանելի է նրանց, և էություններից ու մարդ-

¹⁶² *Տե՛ս The Armenian version of the works attributed to Dionysius the Areopagite, edited by R.W. Thomson, Lovanii, in Aedibus E. Peeters, 1987 (այսուհետև՝ Դիոնիսիոս Արեոպագացի), «Յաղագս երկնայնոցն քահանայապետութեանց», էջ 35-36:*

կանցից ոչ մեկը չի կարող «տիրապես և ամբողջովին» նրան նման համարվել, սակայն երբ հոգևոր և բանական որևէ էություն ձգտում է անմիջականորեն, ամբողջովին միավորվել նրան, տենչալով աստվածային պայծառացման, ապա, ըստ մարդկային կարողության, կարժանանա աստվածանմանության և Աստված կոչվելու:

«Եւ գտանես զի եւ աստուածս կոչէ աստուածաբանութիւնն զերկնայինսն եւ գերագոյն քան զմեզ էութիւնսն եւ զառ ի մէնջ աստուածսէրս և սրբազան արս, թէ եւ աստուածային թաքնութիւն գերագոյն <էութեամբ> քան զամենեսին արտաքս է համբարձեալ եւ գերագոյն հաստատեալ, եւ ոչ ինչ յէիցս նմա նմանիլ կարող լինի տիրապէս եւ բոլորովիմբ:

Բայց միայն որքան ինչ իմանալեացն և բանաւորաց առ միաւորութիւն ի նա ըստ կարողութեան բոլորովիմբ դարձեալ, և յաստուածայինսն նորա լուսափայլութիւնս որպէս հասանելի է անդադար յարձակի՝ թէ պարտ լիցէ ասել՝ ըստ կարողութեան յաստուածանմանութիւնն և աստուածականին համանունութեան արժանաւորի»¹⁶³:

Դիոնիսիոսն աստվածացման իր տեսությունը խորացնում և ծավալում է եկեղեցական քահանայապետությանը նվիրված երկում¹⁶⁴ այն կապելով քահանայագործության, հաղորդության խորհուրդների հետ, որոնց գերագույն գերէ վերապահվում մարդու մաքրագործության, աստվածաց-

¹⁶³ Նույն տեղում, էջ 36-37:

¹⁶⁴Տե՛ս Դիօնիսիոս Արեոպագացի, «Եթէ զի՞նչ է եկեղեցականիս քահանայապետութեան աւանդութիւն եւ զի՞նչ այնորիկ դիտումն», էջ 54-127:

ման միստիկ ծեսի ընթացքում: Ըստ նրա՝ եկեղեցական քահանայապետությունն իր զորությամբ նույնանում է երկնային քահանայապետության հետ: Քահանան նախ ինքն է մաքրագործվում և աստվածանում, ապա հավատացյալ-ներին է հաղորդում աստվածային խորհուրդներին¹⁶⁵ ձգտելով «Հրեշտակային գերազարդ» քահանայապետությանը: Այսպես ըստ մարդկային հնարավորության և չափի, ըստ առաքինության՝ մարդիկ սրբազան արարողակարգի միջոցով վեր են համբառնում, աստվածանում են:

«Այլ գերագոյնքն քան զմեզ էութիւնք եւ կարգք, որոց այժմ զսրբազանն հիշումն արարաք, անմարմինք են եւ իմանալի, եւ գերազարդ է նոցա քահանայապետութիւնն: Իսկ զմերս տեսանեմք համեմատաբար մեզ ինքեանց զգայականաց նշանակաց զանազանութեամբ բազմացեալ, յորոց քահանայապետաբար ի միատեսակ աստուածանալն ըստ մերում չափաւորութեանս համբառնամք՝ իսկ զԱստուած եւ աստուածայինն՝ առաքինութիւն: Նոքա որպէս իմացութիւնք իմանան որպէս իւրեանց պարտ է, իսկ մեք զգալեաւք պատկերաւք յաստածայինն կոյս ըստ կարողութեան համբառնամք տեսութիւն»¹⁶⁶:

Հրեշտակներին աստվածիմացությունը տրվում է անմիջաբար, ըստ իրենց իմացական զորության և աստվածային լուսափայլության, իսկ մարդկանց՝ զգալի պատկերների միջոցով¹⁶⁷: Դիոնիսիոսը բացատրում է, բանաձևում է

¹⁶⁵ Նույն տեղում, էջ 55:

¹⁶⁶ Նույն տեղում, էջ 56, տե՛ս նաև էջ 57-58:

¹⁶⁷ Այս մասին տե՛ս հաջորդ գլխում՝ «Պատկերագրությունը»՝ պատկերի տեսությունն՝ իբրև «նշանական աստվածաբանություն»:

աստվածանալու խորհուրդը՝ տալով նորպլատոնականությանը ներհատուկ սահմանում, այն է՝ ձգտել աստվածանմանության և Աստծո հետ միության՝ որքան հասանելի է մարդուն.

«Եւ այս ոչ կարէ այլազդ լինել, եթէ ոչ աստուածասցին ապրեալքն: Իսկ աստուածանալն է առ Աստուած նմանութիւն, որպէս հասանելի է, եւ միաւորութիւն»¹⁶⁸:

Դիոնիսիոսը մանրամասնում է իր տեսությունը՝ հետագայում ներառելով այն իր նշանական (խորհրդանիշային) աստվածաբանության մեջ: Ըստ նրա՝ երկրային քահանայապետության առաջնորդները, գերագույն աստվածությամբ լցված, աստվածացման ուղի են նշում իրենց հետևողներին՝ նյութեղեն օրինակներով, զգալի պատկերներով՝ երկրային, մարդկային երեւոյթների բազմազանությունից վեր բարձրանալով առ աննյութական, բանական, գերագույն աստվածային ոլորտները: Ընդ որում՝ այդ միստիկ արարողակարգը, հոգեսոր վերառաքումը կատարվում է խոսքով և առանց խոսքի, «գրով և առանց գրի» (վերջին դեպքում, հավանաբար, հեղինակը նկատի ունի անբարեառ աղոթքի փորձը, որ ներառված է նրա խորհրդական աստվածաբանության մեջ):

«Արդ կարեւորապէս առաջինք առաջնորդքն մերոյս քահանայապետութեան գերագոյ աստուածապետութենէն ինքեանք լցեալք ի սրբազանէն պարգեւէ, եւ զորս զնոյն հետայն նորին յառաջ ածել առաքեցան յաստուածապետականէն բարերարութենէ: Իսկ ինքեանք աննախանձաբար

¹⁶⁸ Նույն տեղում, էջ 57:

հաճեալք որպէս աստուածք եւ որոց զնոյն հետայն համբարձման եւ աստուածանալոյ՝ զգալեալք պատկերաւք զերկնայինսն եւ զանազանութեամբ եւ բազմութեամբ զծածուկսն, եւ մարդկայնովքս զաստուածայինսն, եւ նիւթովք զաննիւթսն եւ մերովքս զգերագոյնսն, գրով եւ առանց գրոյ խորհրդագածութեամբ ետուն մեզ ըստ սրբազն աւրինադրութեանց»¹⁶⁹:

Աստվածացման գաղափարն է արտահայտված նաև Դիոնիսիոսի «Յաղագս աստուածայնոցն անուանց» երկի XII գլխում, որ խորագրված է «Յաղագս սրբոյն սրբոց, թագաւորին թագաւորաց, Տեառն տերանց, Աստուածոյ աստուածոց»¹⁷⁰: Ըստ Դիոնիսիոսի՝ «պարզագույն աստվածությունը» կարգավորել և աստիճանակարգել է «ամենայն էից» տիեզերքը՝ «բարեկարգությամբ, նույնությամբ և ուղղությամբ» օժտելով այն և իրեն հաղորդվելու կարողություն պարգևելով մարդկանցից արժանավորներին: Նա աստվածանալու շնորհ է տվել նրանց, որ առ ինքն են դառնում.

«Իսկ աստուածութիւն զամենատեսուչ նախախնամութիւն, եւ բարերարութեամբ ամենակատարիւ զամենայն շուրջականի տեսանելով եւ միահամուռ ունելով, եւ ինքեամբ լցեալ եւ գերագոյն ունելով զամենայն՝ որք ի նախախնամութեանն նորա վայելեն:

Արդ զայս ամենայն ի վերայ գերազանցեալ պատճառին արձակաբար է աւրհնաբանելի, եւ ասելի է նմա գերու-

¹⁶⁹ Նույն տեղում, էջ 58-59:

¹⁷⁰ Նույն տեղում, էջ 217-219:

նակ սրբութիւն, եւ տիրութիւն եւ թագաւորութիւն <գերակայ> եւ պարզ աստուածութիւն: Քանզի ի նմանէ միով եւ ի միասին բնաւորեցաւ եւ բաշխեցաւ... ամենայն էիցս կարգաւորութիւն եւ զարդ, զանյաւդաւորութիւն եւ անհաւասարութիւն, եւ անչափութիւն ի բաց արտաքսեալ, եւ ի բարեկարդ նոյնութիւնն եւ ուղղութիւն զարդարեալ, եւ յայտնի կացուցեալ զարժանաւորեալան հաղորդելոյն նմա, ամենակատարն եւ ամենայն ազնուիցն ամենայն ամենաստացկութիւն, ամենայն բարի նախախնամեցելոցն, զինքն բարեւայելչապէս տուեալ առ ի յաստուածանալ այնոցիկ, որք ի նայն դառնան»¹⁷¹:

Աստվածանմանության գաղափարն է Դիոնիսիոսը շուշափում նաև պատկերի գոյաբանական տեսության մեջ: Ըստ քրիստոնեական տեսության՝ մարդն ստեղծված է Աստծո պատկերով և նմանությամբ: Սակայն հին իմաստասերները գերագույն աստվածությունը չէին նմանեցնում ոչ մի էության ու մարդու: Դիոնիսիոսն իր աստվածաբանական համակարգին համապատասխան, որն այստեղ լիովին համընկնում է Պլատոնի և Դավիթ Անհաղթի փիլիսոփայության հայտնի սահմանմանը, լուծում է տալիս այս հարցին. մարդն իր պատկերով նման չէ Աստծուն, աստվածանմանությունը տրվում է նրան ըստ մարդկային կարողության, չնորհվում է նրանց, որ առ Աստված են դարձել, քանզի Աստված է ամեն ինչի պատճառը և իր զորությամբ հպվելով առաքինի, աստվածատես մարդկանց՝ առ սկզբնա-

¹⁷¹ Նույն տեղում, էջ 218:

պատճառն է դարձնում: Աստվածային գոյաբանական այդ «Համակարգի» մեջ նրան հաղորդվող բոլոր էությունները նման են իրար և ըստ կարելվույն նման են Նախագույնին և Ակզենապատճառին: Աստծուն հաղորդակից ամենայն ինչ աստվածանմանության իր չափն ունի, և լցնելով ու միավորելով իրենով իր ստեղծած աշխարհները՝ Աստված գոյավորում, օժտում է նրանց «ինքնանմանությամբ»:

«Իսկ նման գԱստուած եթէ ի նոյն նա ոք ասիցէ, որպէս բոլոր բոլորովիմք ինքեան միայնարար եւ անբաժանապէս գոլով նման՝ ոչ է անպատուելի մեզ զնմանին աստուածանունութիւնն: Բայց աստուածաբանքն զգերագոյնն քան զամենայն Աստուած զնոյն ոչ ումեք նման ասեն գոլ, իսկ իւր նմանութիւն աստուածային չնորհել այնոցիկ որք ի նայն են դարձեալ, ըստ կարողութեան նմանութեամք գերագունին քան զամենայն սահման եւ բան: Եւ է աստուածայնոյն նմանութեան զաւրութիւն զհպեալսն զամենեսին առ պատճառն դարձուցանել: Զայսոսիկ է ասել նմանութիւնս Աստուծոյ, եւ ըստ Աստուածայնոյ պատկերի եւ նմանութեան. զի ոչ նոցա է նմանեցուցանել զԱստուած, զի եւ ոչ մարդ է իւրովն պատկերաւ նման: Քանզի ի վերայ համակարգիցն կարողութիւն է նմանս միմեանց լինել եւ հակադարձել յերկոցունց վերայ զնմանութիւնն, եւ լինել երկոցունց նման զիրեարս ըստ նախագույնին նմանութեան տեսակի: Բայց ի վերայ պատճառին եւ պատճառաւորացն ոչ առցուք յանձն զհպեարձութիւնն: Զի ոչ միայն այսոցիկ կամ այնոցիկ պարզեւէ զնմանսն գոլ, այլ ամենեցունց որք նմանութեան են հաղորդք գոլոյն նմանիցն Աս-

տուած լինի պատճառ, եւ է նորին <ինքնանմանութեանն> գոյացուցիչ»¹⁷²:

Այսպիսով՝ Աստծով գոյավորված ամենայն ինչ և՛ նման է Աստծուն, և՛ նման չէ: Նման է ըստ հնարավորության, և նման չէ, անհամեմատելի է ըստ նվազության՝ ինչ-պես պատճառականները՝ պատճառին, չափը՝ անբավին, անչափելիին. «Քանզի ինքն իսկ աստուածաբանութիւնն զաննման գոլ զնա ընծայէ եւ ամենեցունց անշարակարգ, որպէս այլ քան զամենայն: Եւ որ հրաշափառագոյնն եւս է, զի ոչ ինչ գոլ նման նմա ասեն: Եւ ոչ է հակառակ բանս առ նա նմանութեանն, քանզի նոյնքն եւ նմանք են Աստուածոյ եւ աննմանք. է ինչ, որ ըստ հնարաւորութեան նմանողին՝ նմանութեանն, եւ <է> ինչ, որ ըստ նուազութեան պատճառաւորացն ի պատճառին, եւ չափովք անբաւիւք եւ անհամեմատիք նուազեալ»¹⁷³:

Բոլոր էությունները, հրեշտակները, մարդիկ, երկինքն իր լուսատուներով, արարչագործ տարերքները, բնությունը շաղկապված, միավորված, կցորդված են իրար աստվածային զորությամբ և սիրով: Այդպես են շաղկապված իրար նաև մարդկային հոգին և մարմինը: Այս գոյեղեն զորության և աստվածային սիրո շնորհով են «աստվածացյալ-ներն աստվածանում»:

«Ի նմանէ են աստուածատեսակքն հրեշտակականացն զարդուց զաւրութիւնք…

Թառաջ գայ աննուազն զաւրութիւն եւ ի մարդիկ, եւ ի կենդանիս, եւ ի տունկս, եւ ի բոլորն ամենայնի բնութիւն:

¹⁷² Նույն տեղում, էջ 207:

¹⁷³ Նույն տեղում, էջ 207-208:

Եւ զաւրացուցանէ զմիաւորեալսն առ միմեանց սէր եւ կցորդութիւն... Եւ զամենեցունց կարգս եւ բարեդրութիւնս յիւր բարին հասուցանէ, եւ զանմահսն կենդանիս հրեշտականացն միութեանց անբիծս պահէ, եւ զերկնայինսն եւ լուսաւորականս, եւ աստեղացն էութիւնս եւ կարգս անայլայլելիս, եւ յաւիտեան գոլ տայ զաւրութիւն: Եւ ժամանակի շրջաբերութիւնս որոշէ յառաջ ճանապարհաւ... Եւ զհրոյն զաւրութիւնս անշէցս առնէ, եւ զջրոյ հոսանս աննուազ, եւ զաւդոց հեղմունս սահմանէ, եւ զերկիր ի վերայ ոչնչի սերտէ, եւ կենդանածինս նորա երկունս անեղծս պահէ: Եւ զմիմեամբք յաւդաւորութիւն տարեցս եւ խառնուամն անշփոթելի եւ անանշատելի, եւ զհոգւոյ եւ մարմնոյ շաղկապութիւն շարունակէ, եւ զտնկոց սննդականսն եւ աճողականս զաւրութիւնս ի վեր շարժէ: Եւ ունի զգոյեղնսն զաւրութիւնս բոլորիցն, եւ զամենեցունց անլոյժ աւթեւանն հաստատուն պահէ, եւ զնոյն աստուածանալն պարգեւէ զաւրութիւն չնորհելով աստուածացելոցն»¹⁷⁴:

Նույն միտքն է կրկնվում նաև մեկ այլ հատվածում.
Աստված ինքն անփոփոխ, «անփոխաբուն» մնալով, նախախնամաբար անդադար ներգործում է, «տրվում» է առ ինքը դարձողներին՝ «աստվածացողներին»: «Իսկ այլն՝ վասն զի յամենեսեան նախախնամաբար մերձ է Աստուած, եւ ամենայն յամենայնի վասն ամենեցունց փրկութեան լինի, մնալով յինքեան եւ յիւրմէ նոյնութենէն անփոխաբնապէս եւ անդադար կայիւք ըստ միոյ ներգործութեան, եւ տուեալ զինքն զաւրութեամբ առ աստուածանալ դարձելոցն»¹⁷⁵:

¹⁷⁴ Նույն տեղում, էջ 199-200:

¹⁷⁵ Նույն տեղում, էջ 206:

ինչպես տեսնում ենք, պլատոնյան և նորպլատոնական փիլիսոփայության սահմանումների հիման վրա արեոպագիտյան բնագրերի հեղինակը զարգացրել է խոր ու հանգամանալից մի տեսություն՝ այն ներառելով քրիստոնեական աստվածաբանության համար էական՝ պատկերի և նախատիպի կատեգորիաների քննության ծիրում։

*

Նարեկյան դպրոցի ներկայացուցիչները, հավատարիմ նորպլատոնական-արեոպագիտյան ավանդույթին, անձնական միստիկ փորձառության և ստեղծագործության տիրույթներում յուրացնում և ստեղծագործաբար զարգացնում են այն։

Արեոպագիտյան աստվածաբանության էական ազդեցությունը նկատելի է արդեն Խոսրով Անձևացու մեկնություններում¹⁷⁶։ «Մեկնութիւն աղաւթից պատարագին» երկի «Սակա աղաւթիցն» գլխում աղոթքը կապվում է իմանալի, ներքին լույսի գաղափարի հետ, որ դիտվում է իրեւ աստվածային ներկայություն մարդկային հոգիներում։ Նրան տիրապետողները դառնում են «լույսի որդիներ»՝ այստեղից արդեն սրբազն տեսիլքով կապվելով երկնային արքայության հետ։

Այս լույսի տեսությանն արժանանում են հոգեոր մարդիկ, Աստծո որդիները, ինչպես արեոպագիտյան բնագրում՝ «սրբազն և աստվածասեր մարդիկ»։ Անձևացին փորձում է բացատրել, բացահայտել մարդու աստվածացման գաղա-

¹⁷⁶Տե՛ս Հ. Թամրապյան, Գիրք Բ, էջ 82-102, 103-107։

փարը, «որքանով մարդկային միտքն հասու է այդ բարձրագույն իմացությանը»¹⁷⁷:

Այստեղ ևս Անձեւացին արեոպագիտյան ավանդույթի հետևորդն է, և նրա տեսությունը Դիոնիսիոսի նշված գլխի հարասության կամ մեկնաբանության տպավորություն է թողնում:

«Վասն զի ի վեր՝ յերկինս կոչէ և տանի եւ անդ ժառանգէ իւր ամենապատրաստ թագաւորութիւն, զոր արքայութիւն կոչէ...»

Բայց աղէ տեսցուք զպարզեւս մեծութեան, ոչ որքան էն, զի այն հրեշտակացն անիմաց է, թո՛ղ թէ մարդկան: Բայց որքան փոքրկութիւն մտաց մերոց կարէ ձգտել յիմացումն, յորժամ կոչող՝ Աստուծոյ Միածին Որդին իցէ եւ առ իւր Հայրն կոչիցէ եւ աւրհնեալս ի նմանէ անուանեսցէ եւ զիւր թագաւորութիւնն նոցա խոստանայ ոչ տալ միայն, այլեւ ժառանգեցուցանել, այսինքն՝ սեպհական նոցա առնել, որպէս եւ իւրն սեպհական է:

Եւ եթէ Որդին զԱստուծոյն ունելով թագաւորութիւն, Աստուած է, յայտ է, թէ եւ սոքա, որ զնոյն ժառանգեն թագաւորութիւն՝ աստուածանան»¹⁷⁸:

Մեկնության հիմքում դարձյալ նույն՝ աստվածացման, աստվածանմանության գաղափարն է՝ ըստ մարդկային կարողությունների («որպէս հասանելի մարդկան յարձակեալ» (Դիոնիսիոս), «որքան փոքրկութիւն մտաց մերոց կարէ ձգիլ յիմացումն» (Անձեւացի):

¹⁷⁷ Նույն տեղում, էջ 104-105:

¹⁷⁸ Խոսրով Անձեւացի, «Բացայատութիւն կարգաց եկեղեցւոյ քարոզութեանց եւ աղաւթից», ՄՀ Ժ, էջ 79:

Հոգեոր կյանքով ապրողներն հասնում են հոգեոր պայծառացման, Աստծո բնակարան դառնալով, անմիջ-նորդ, անարգել ճանապարհորդում են աստվածային ոլորտ-ներում, կենդանի կապի մեջ լինելով Աստծո հետ՝ լուսա-վորվում, պայծառանում են՝ հասնելով հոգեոր բերկրանքի, ցնծության՝ այստեղ իսկ, այս կյանքում բաց երեսով՝ իբրև հայելի, տեսնելով Տիրոջ փառքը.

«...Հաստատեալ Հոգւովն ի ճշմարիտ հաւատսն եւ լու-սաւորել նովիմբ՝ բացաւ երեսաւք զփառսն Տեառն իբրեւ ընդ հայելի տեսանեն...»¹⁷⁹:

«Յաղագս որոյ եւ անարգել որ առ Աստուած է մտացն ճանապարհորդութիւն ունել զգնացումն եւ անտի բարիոքն անդստին իսկ բերկրեալ՝ յուսալից եւ յարազուարճ եղեալ»¹⁸⁰:

Աղոթքը հոգեոր մաքրագործման կարեօր օղակն է. Նրա միջոցով թափանցելով իմանալի աշխարհը՝ ներանձնացյալը բարձրանում է երկնային քահանայապետության աստի-ճաններով, քանի որ երկինքն է աղոթողի ուխտատեղին»¹⁸¹.

«Արդ, երանէ մարգարէն զայնս, որք մտացն աստի ելս առնեն յերկինս, յոր տեղիս զուխտն աղաւթիցն կարգէ:

Այսպիսին, ասէ, զաւրհնութիւնս ստասցի, զի աւրէնս-դիր եղեւ իւր անձինն եւ այլոց. գնասցէ ի զաւրութենէ ի զաւրութիւն, յառաքինութենէ յառաքինութիւն, որ զաւրա-ցուցանէ զնա՝ որպէս յաստիճանէ յաշտիճան զգնացս փո-խելով, մինչեւ ելցէ ի վերինն Սիոն...»¹⁸²:

¹⁷⁹ Նույն տեղում, ՄՀ Ժ, Էջ 181:

¹⁸⁰ Խոսրով Անձեւացի, «Բացայայտութիւն կարգաց եկեղեցւոյ քարո-գութեանց եւ աղաւթից», ՄՀ Ժ, Էջ 185:

¹⁸¹ Տե՛ս Հ. Թամրապյան, Գիրք Բ, Էջ 107:

¹⁸² Խոսրով Անձեւացի, «Բացայայտութիւն կարգաց եկեղեցւոյ», ՄՀ Ժ, Էջ 125

Մեկնության այս հատվածն ուղղակիորեն կապվում է արեռապագիտյան ավանդույթի հետ. զորությունները գտնվում են երկնային բարեկարգության երկրորդ աստիճանակարգությունում և ընդհանրապես աստվածային բոլոր էություններն երկնային քահանայապետության մեջ զորություններ են անվանվում: Հիշենք «Յաղագս երկնայնոցն քահանայապետութեանց» երկի գլուխներից մեկը՝ խորագրված՝ «Վասն Է՞ր ամենայն երկնային էութիւնքն առ հասարակ զաւրութիւնք երկնայինք կոչին»:

Դիոնիսիոս Արեռապացացուն վերագրվող երկերի՝ հատկապես «Յաղագս երկնայնոցն քահանայապետութեանց» երկի «Վասն Է՞ր մարդկան քահանայապետք հրեշտակք կոչին» գլխի ուղղակի ազդեցությունն ի հայտ է գալիս Գրիգոր Նարեկացու «Մատեանի» և գանձերի բազմաթիվ հատվածներում:

Մարդու հրեշտակակերպության, աստվածացման գաղափարին է նվիրված Գրիգոր Նարեկացու գանձերից մեկը՝ խորագրված «Քարոզ Գրիգորի Նարեկացւոյ, ասացեալ ի սուրբ Լուսաւորիչն Գրիգոր»: Այս գանձում Գրիգոր Լուսավորչի կերպարով Գրիգոր Նարեկացին ներկայացնում է իր հոգեսոր իդեալը՝ գերագույն մաքրությամբ սրբացած անձը հրեշտականում է՝ դառնում է մարմնավոր հրեշտակ, աստվածանում է ըստ մարդկային կարողության:

Իմանալի լցեալ լուսով ծագեցար ի մտիցն արեւու՝
Կողմանցն հիւսիսոյ՝ խաւարաբնակ որդւոց
Թորգոմայ...

Յորդիս լուսոյ եւ տուլնջեան երկնաւորին Հաւը՝
Յարգանդէ աւազանին վերագրեցեր,

Արեամբ անձինդ եւ երկամբք տանջանաց՝
Ժողովուրդ քեզ սեպհականեցեր...
Զոր արկեալ Հոսմամբ գետաւրէն յաշխարհն Հայաստան,
Մաքրեցեր, լուսաւորեցեր եւ կատարեցեր
զթոռունսն Ազքանազու...
Կաթամբ մայրաբար դիեցուցեր զերկամբք քո
ծնեալ զզաւակսն անհամարս...

Գերագոյն մաքրութեամբ երեւեալ՝
Փայլեցար յորդիս Սիոնի, տէր սուրբ Գրիգոր,
Առաւել ծագմամբ լցեալ որպէս յաստեղս արեգակն...
Արեամբ անձինդ հաւտիցս քո ստացող,
Մեծդ ի վկայս եւ անբաղդատ բնաւից արեամբ

պսակելոց,

Մարգարէիցն առաւել գիտող զխորհուրդն Յիսուսի,
Միանձանց կրաւնիցն գլուխ եւ պետ ստուգապէս,
Մարդ երկնային եւ հրեշտակ երկրային,
Մերովբէ հողեղէն եւ քերովբէ նիւթական,
Աթոռ մարմնեղէն եւ հանգիստ կամաց մեծին

Աստուծոյ...¹⁸³

Ինչպես տեսնում ենք, նա կրկնում է Խոսրով Անձեացու մի արտահայտությունը՝ աստվածանմանության ձգտող անձանց մասին. աստվածային լույսի տեսիլքով խորհրդապաշտները դառնում են լույսի որդիներ («որդիս լուսոյ եւ որդիս տուընջեան» (Խոսրով), «Յորդիս լուսոյ եւ տուընջեան երկնաւորին Հաւը» (Գրիգոր):

¹⁸³ «Քարոզ Գրիգոր Նարեկացւոյ ասացեալ ի սուրբ Լուսաւորիչն Գրիգոր», ՄՀ ԺԲ, էջ 685-688:

Այս հատվածին հաջորդող փոխի մեջ, որն աղոթքի ձև է ստանում, Գրիգոր Նարեկացին հանուրի անունից աղերսում է Սուրբ Երրորդությանը՝ շնորհել մարդկային բնությանը կենդանի միություն, դարձնել մարմնավոր անմարմին և հոգեւոր մարմին՝ «ըստ իր պատկերի և ձեկ»։ Մարդու՝ իբրև Աստծո պատկերի իր այս ձևակերպումներով (մարմնավոր անմարմին, հոգեւոր մարմին), նա յուրովի զարգացնում է պատկերի և նախատիպի անհաղթյան և արեոպագիտյան տեսությունը։

Այս հոգեւոր իդեալները միջնադարյան միստիկի համար գերազույն նշանակություն ունեին և ուղղակիորեն բխում են նորավատոնական ակունքներից, քրիստոնեական հայրաբանական գրականությունից, առավելապես Դիոնիսիոս Արեոպագացու պատկերի և սկզբնատիպի գոյաբանական տեսությունից, որը, ինչպես նշեցինք, համադրել և ներհյուսել է տեսական այս աղբյուրները։

Զայնիւ գոչմամբ արտասուաց մաղթանաւք
Հայցեմք ի քէն, Տէր բոլորից, Սուրբ Երրորդութիւն,
Ստեղծիչ յանէից համայնից բնաւիցս եղելոց,
Յաւրինող մերոյ բնութեանս կրկին կենդանեաւք
ի մի միութիւն,

Մարմնաւոր անմարմին եւ մարմին հոգեւոր
ի պատկեր եւ ի ձեւս քո...¹⁸⁴

Երկնային մարդու՝ «մշտնջենաւոր անձնաւորի» այդ կատարելատիպն է՝ հանձին Հակոբ Մծբնեցի եպիսկոպոսի, կերպավորում Գրիգոր Նարեկացին իր համանուն ներ-

¹⁸⁴ Նույն տեղում, էջ 689։

բողում, որ նրա ներբողների մի շարք հատվածների նման՝
նույնահանգ բանաստեղծության նմուշ է.

«Եւ արդ, ստուգապէս խոստովանեսցի սուրբս այս
միացեալ, հաստատեալ ի տունկն կենաց բարեացն բերրի,
եւ ձգեալ ձգտեալ զել շառաւեղի կենացն Բանի հովուա-
կան ձայնի ի վեր քան զերկին եւ անդր քան զծով.

Եւ ի դամբանի գոլով երկրաւոր,

Հնդ Բարձրելոյն գտաւ միաւոր.

Եւ մինչ էրն յերկրի իսկ կենդանաւոր անցաւոր,

Եղեւ անձնաւոր մշտնջենաւոր.

Եւ ի խիստ վարս կրաւնաւոր,

Վայելչապէս գոյր պսակաւոր...

Եւ հասարակաց գոյի նիւթաւոր,

Մարմնացելոյ Բանին կերպաւոր.

Եւ ստորիցս աստեաց՝ անկարաւտիցն հանգունաւոր.

Եւ մսապատ գեղ պատկերաւոր՝

Հատ արփիաբնակ խմբին լուսաւոր.

Եւ մաքրակենցաղ վարուք ճգնաւոր,

Բազմաժառանգ որդւովք պտղաւոր.

Եւ ընդ երկնային ձրից պատմաւոր,

Արքայութեան Տեառն աւետաւոր.

Եւ համաւրէն սեռք բանաւոր,

Նա կրկնակի շնչող հոգեւոր...

Եւ արդ յիրաւի զասքանեաց դրուագս բղիսման

բանին այսր դասեցի...»¹⁸⁵:

¹⁸⁵ Գրիգոր Նարեկացի, «Ներբող ի սուրբ Յակոբ Մծբնայ բան նուիրա-
կան գովեստի», ՄՀ ԺԲ, էջ 995:

Գրիգոր Նարեկացու վարքերում նա անվանվում է «Հրեշտակ ի մարմնի»: Սա, ինչպես նաև «Մատեանում» տեղ գտած Հայտնի հիշատակությունը, վկայում է, որ Գրիգոր Նարեկացին իր նշած սրբակենցաղ այրերի նման փորձում էր իրագործել հոգեոր այդ իդեալները գործնական կյանքում, հոգեոր կենցաղավարության ընթացքում:

Պետ վարժից կոչեցայ...

Ռաբբի ռաբբի անուանեցայ...

Սուրբ վկայեցայ ի մարդկանէ...

Յաւազանէ կոչեցայ Արթուն...

Ի փրկութեանն աւուր Հսկող յորջորջեցայ...

(ՀԲ, Դ)

Արբի համբավ էր վայելում նաև Գրիգոր Նարեկացու ուսուցիչը՝ Անանիա Նարեկացին, որ ծայրագույն վարդապետի աստիճան ուներ¹⁸⁶: Հիշենք Անանիա Նարեկացու աշակերտ Ուխտանես պատմիչի վկայությունն իր պատմության առաջաբանում. «Իսկ դու կենդանախարուկեալ քոյին սուրբ եւ պարկեշտ վարուք, եւ յարածգնեալ խստակիր վշտամբերութեամբ, եւ կենդանի վկայեալ ի մարմնի զանմարմնոցն բերելով նմանութիւն»¹⁸⁷: Անանիա և Գրիգոր Նարեկացիները սրբացվել են եկեղեցու կողմից, և նրանց վարքերը տեղ են գտել Հայսմավուրքում: Անանիա Նարեկացու վարքում կարդում ենք. «Ի սմին աւուր եւս

¹⁸⁶ Մատենադարան, ձեռ. N10434, թերթ 85թ:

¹⁸⁷ Ուխտանես եպիսկոպոս, «Պատմութիւն Հայոց» (աե՛ս Մատենագիրք Հայոց, ԺԵ Հասոր, Ժ դար, Պատմագրութիւն, Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 452):

Հանգիստ սրբոյն Անանեայ վարժապետի Նարեկացւոյն։ Սա ի մանկութենէ առեալ զլուծ կրօնաւորական կարգի եւ բաղում առաքինաջան երկոց զանձն տւեալ, վարժեալ եղեւ յաստուածային գրոցն գիտութեանց։ Եւ առաւել եւս հմուտ լեալ փիլիսոփայական արհեստից, մինչ զի յամենայն տեղիս տարածեալ հոչակեցաւ անհաս ոգեւորութիւն գիտութեան նորին... Եւ ըստ վարուցն մաքրութեան կրօնիցն գովելոյ հոգիազարդ փիլիսոփայութեամբ եւ զբազումս եհան ի հրահանգս իմաստից գիտութեան... Եւ ի սորին վանիցն ելին արք իմաստունք եւ կատարեալք, յորոց մի էր եւ սուրբն Գրիգոր Նարեկացին՝ հրեշտակն ի մարմնի...»¹⁸⁸:

Ահա նմանատիպ մի հատված Գրիգոր Նարեկացու «Մատեանից», ուր սրբազան այրերի «գերբնության», հրեշտակակերպության և մարդու աստվածացման գաղափարներն առնչակցվել են, և որտեղ նա կրկնում է իմաստասիրության պլատոնյան երկրորդ սահմանումը.

Եւ քանզի երջանիկքն եւ փառաւորեալքն
սրբոցն պարք

Յորոց ոմանք դոյզն ինչ գթեցին եւ
յաճախազոյնս հաստատեցան...

Զգերազանցն քան զբնութեանն աւրէնս,

Վարս եւ առաքինութիւնս հրեշտակականս:

Եւ արդ, նոքա, որ աւրհնեալքն են

Յամէնիշխան բերանոյ աստուածութեան

Հաւըն Քրիստոսի,

¹⁸⁸ Մատենագարան, ձեռ. N 7359, թերթ 183ա: Տե՛ս Հ. Թամրաղյան, Գիրք Բ, էջ 120-122, 125-126:

Հնտրեալքն, տաւնեալքն, խնկեալքն են
բարեբանեալքն,
իբրեւ զանդամս Քրիստոսի պաշտեցեալք
եւ իբրեւ զաւթեվանս Հոգւոյն Սրբոյ յարդարեալք,
Յորս չիք ինչ նշմարանք եւ կամ գիւտք խաւարի,
Այլ ամենեւին անկեղծութիւն եւ լուսաւոր
արդարութիւն,
Որ որքան մարթ է զմարդն Աստուծոյ՝ Աստուծոյ
նմանեցուցանել...
(ՀԱ, Ա)

Այնուհետև նա մանրամասնում է սրբակյաց այրերի
Հոգեոր կենցաղավարության կերպերն ու առաքինություն-
ները, որ նրանց հասցնում են պայծառատեսության, աստ-
վածանմանության:

Կրաւնք բարձունք եւ անխոնարհելիք,
Կեանք զգաստք եւ անստգտանելիք,
Պաշտաւն առ Աստուած կարծր եւ անփոխարկելի...
Տեսաւորութիւն պայծառ եւ անապշելի,
Իմաստասիրութիւն վերնական եւ անկոխելի,
Պատկեր մաքուր եւ անաղարտելի,
Զորոց կերպարանս եւ զյիշատակս անուանցն աղաչել
Աստուած իսկ վարդապետեաց...

(ՀԱ, Ա)

Գրիգոր Նարեկացին ներհյուսում և ծավալում է արեո-
պագիտյան գաղափարները իր բանաստեղծական տեքստե-
րի մեջ: Սրբազան այրերը, Հոգեոր, բանական կյանքով

ապրող մարդիկ, ըստ Դիոնիսիոսի, իրավամբ հրեշտակներ և աստվածներ են կոչվում, քանի որ աստվածային լուսափայլությամբ համակված հաղորդակից են գառնում երկնային քահանայապետությանը և ըստ մարդկային կարողության՝ աստվածանում են: Այս գաղափարը Գրիգոր Նարեկացին զարգացնում է «Մատեանի» նաև այլ մասերում: Այն արտացոլված է և «Մատեանի» հայտնի հատվածում, որ ներբող է մարդկային բնությանը, ուր մարդու հրեշտակակերպության, աստվածանմանության, աստվածացման գաղափարները այլ արտահայտություն ու իմաստավորում են ձեռք բերում. մարդկային միտքը, բնությունը, բանականությունը կապվում են Աստծո արարչագործ ուժի հետ: Դրանով Մարդը համացեղ է Աստծուն և աստված է կոչվում:

Ահա ի յոտս տանողականս
Կրողաց երկուց միակցորդ խորհրդականաց,
Հստ ձեւոյ հրեշտակի կառուցար,
Իբր ի թոփչս թեւոց կրկնաբարձ

բաղկաց վերատանողաց՝

Յաշխարհն հայրենական հայել...

Իբր կցորդ համացեղութեամբ ամենաբաշխ աջոյն

Աստուծոյ, աստուած կոչեցար:

(ԽԶ, Բ)

Ինչպես տեսնում ենք, դիոնիսյան այս գաղափարները «Մատեանում» ձեռք են բերում բացարձակ նոր հնչողություն և ուժգնություն:

*Եվ վերջապես՝ Նարեկացին բացարձականացնում է այդ
գաղափարները «Մատեանի» մի այլ հատվածում.*

Կեանս կրկինս եւ անմահականս՝

Շնորհաց, մկրտութեան, յարութեան, նորոգութեան,

Առ քեզ ընտանութեան, ընդ Հոգւոյդ

Սրբոյ միութեան,

Քաւութեան, ազատութեան, լուսաւորութեան,

Մշտնջենաւոր մաքրութեան, իսկապէս երանութեան,

Ընդ վերնայնոցն կցորդութեան, անկապուտ փառաց,

Ի շրթունս մեր ձայնիւ բարձրելոյն

Հաշտեցուցիչ բանից աղաչանք:

Եւ զոր ահաւորն է ասել՝ կարգեմ աստանաւոր,

Յիշատակ եղեալ մեծիդ երախտեաց՝

Աստուած իսկ լինել ընտրութեամբ շնորհին

Եւ ընդ հաստողիդ միանալ՝ տէրունի մարմնոյդ

ճաշակմամբ

Եւ ընդ լուսոյդ կենաց խառնութեամբ...

(ԾԲ, 4)

«ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ»՝ ՊԱՏԿԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆ՝ ԻԲՐԵՎ «ՆՇԱՆԱԿԱՆ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ».

Նարեկյան դպրոցի էքստատիկ աստվածաբանության կարևոր մասն են կազմում հոգեոր արվեստների տեսությունն ու փորձը, որ գտնվում են Դիոնիսիոս Արեոպագացու անունով Հայտնի երկերի ուժեղ ազդեցության տակ:

Դիոնիսիոս Արեոպագացին աստվածաբանական իր համակարգում խորհրդագրած (միստիկ) անհատի համար տարբերակում է հոգեոր խոկման, ներհայեցողության, բանական շարժման և զգացմունքային էքստազի չորս մակարդակ՝ նշանական (խորհրդանիշային) աստվածաբանություն, որ նա համարում է նաև պատկերագրություն, Հայտնաբանություն, մերձակա աստվածաբանություն (աղոթքի տեսություն), տոփողական (էքստատիկ) աստվածաբանություն և խորհրդական (խորհրդապաշտային) աստվածաբանություն, որոնք սերտորեն աղերսված են իրար:

Դիոնիսիոս Արեոպագացու պատկերի տեսությունը, ինչպես ինքն է ասում՝ պատկերագրությունը, որն ընկած է քրիստոնեական աստվածաբանության պատկերի և սկզբնատիպի տեսության հիմքում, նախանշում և ցուցանում է առարկայական, երեկի, տեսանելի պատկերների միջոցով դեպի անյութ, անտեսանելի էռթյունների իմանալի աշխարհը բարձրանալու ուղին: Այս հարցին հեղինակը բազմիցս անդրադառնում է «Յաղագս երկնայնոցն քահանայապետութեանց», «Եթէ զի՞նչ է եկեղեցականիս քահանայապետութեան աւանդութիւն» և այլ երկերում: «Յաղագս երկնայնոցն քահանայապետութեանց» երկի մեջ կարդում ենք.

«Արդ գՅիսուս կարդալով զհայրականն լոյս, զէն ճշմարիտ որ լուսաւորէ զամենայն մարդ որ գալոց է յաշխարհ, որով առ սկզբնալոյսն Հայր զմատչելն ընկալաք, յաստուածայնոց բանից հայրենաւանդ լուսափայլութիւնս՝ որպէս հասանելի է մեզ՝ հայեսցուք. եւ զորս ի նոցանէն մեզ նշանակաւ եւ վերածապէս երեւեալս յերկնայնոցն իմացութեանց քահանայապետութիւնս՝ որպէս կարող եմք՝ ի վերայ հայեսցուք»¹⁸⁹:

Այդ ճանապարհով է հնարավոր հաղորդակցվել աստվածային վերին լույսին, որից «իջել» են «հայրաշարժ լուսերեւութեամբ» վերին պարգևները, և նույն այդ «միացուցիչ զորությամբ» նա մարդկանց աշխարհն իրեն է կապում և «դարձնում ի միավորություն և աստվածարար պարզություն»։ Մարդիկ նրան են ձգտում աստվածատուր ձիրքով, քանզի նրանից է ամենայն ինչ և դառնում է առ նա:

«Ամենայն տուր բարի եւ ամենայն պարգել կատարեալ ի վերուստ է իջեալ առ ի Հաւրէն լուսոյ: Այլ և ամենայն հայրաշարժ լուսերեւութեան յառաջ ճանապարհ ի մեզ բարետրապէս ընթացեալ դարձեալ որպէս միացուցիչ գաւրութիւն ձգտեցուցանելով զմեզ պարզէ եւ դարձուցանէ առ ժողովողին Հաւր միաւորութիւն եւ աստուածարար պարզութիւն. քանզի ի նմանէ են ամենայնք եւ ի նա, որպէս սրբազանն ասաց բան»¹⁹⁰:

Նյութեղեն և աննյութեղեն, զգայական և բանական աշխարհները կապված են իրար «Հոդավորապես» և ընտա-

¹⁸⁹ Դիոնիսիոս Արեոպագացի, էջ 1:

¹⁹⁰ Նույն տեղում:

ներար, և նյութեղեն օրինակներով, խորհրդանիշերով (զարդ) կարելի է համբառնալ առ անյութ սկզբնատիպերը, քանզի նրանց վայելչաձևությունից է գալիս երկու աշխարհների կապն ու նմանությունը:

«Արդ ոչ է անտեղի վերաստեղծուկ զերկնայինսն կերպաւորութիւնս եւ յանպատուական նիւթոյ մասանց, վասն զի նոյն նիւթն առ արդարեւ բարին ունելով զգոյութիւնն ըստ ամենայն նիւթեղէն զարդուն իւրոյ նմանութիւնս ինչ հնչման ի յիմանալի վայելչութենէն ունի, եւ կարողութիւն է նոքաւք համբառնալ առ աննիւթսն սկզբնատպութիւնս, աննմանաբար՝ որպէս ասացի՝ զնմանութեանց բուռն հարկանելով եւ նոցունց ոչ նոյն աւրինակ, այլ յաւդաւորապէս եւ ընտաներար ի վերայ իմանալեացն եւ զգալեացս առանձնաւորութեանց սահմանելոց»¹⁹¹:

Աստծո ստեղծած ամեն ինչ սրբազան է և էակցված է նրան, և այդ տեսանելի աշխարհի սրբազան պատկերներով ու օրինակներով մենք կարող ենք բարձրանալ, հասու լինել էությունների, նախատիպերի բարձրագույն ոլորտներին:

«Զգալեաւք պատկերաւք զերկնայինսն գրեաց իմացութիւնս սրբազնագրութեամբք եւ ասացելոցն շարադրութեամբ, որպէս զի զմեզ վերաբերեսցէ զգայականաւք յիմանալիսն եւ սրբազան ստեղծականացն աւրինակաց ի պարզսն կոյս յերկնայնոցն քահանայալետութեանց ծայրագունութիւնս»¹⁹²:

¹⁹¹ Նույն տեղում, էջ 8:

¹⁹² Նույն տեղում, էջ 3:

Եկեղեցական քահանայապետությանը նվիրված գործի մեջ Դիոնիսիոսը զգալի պատկերները համարում է աստվածային տեսության հայելիներ:

«Ոչ ինչ անվայելուչ եւ անսրբազան է ունել զգալիս պատկերս, այլ աստուածարժան տեսութեան է աւրինակս կերպացուցանել բնաւորականաւք եւ մարդկաւայելուչ հայելեաւք»¹⁹³:

Այդ սրբազան պատկերների միջոցով մարդը համբառնում է առ աստվածային էությունների աշխարհը, աստվածանում է ըստ մարդկային կարողությունների.

«Այլ գերագոյնքն քան զմեզ էութիւնք եւ կարգք որոց այժմ զսրբազանն յիշումն արարաք՝ անմարմինք <են> եւ իմանալի, եւ գերազարդ է նոցա քահանայապետութիւնն: Իսկ զմերս տեսանեմք համեմատաբար մեզ ինքեանց զգայականաց նշանակաց զանազանութեամբ բազմացեալ, յորոց քահանայապետաբար ի միատեսակ աստուածանալն ըստ մերում չափաւորութեանս համբառնամք՝ իսկ զԱստուած եւ զաստուածայինն առաքինութիւն: Նոքա որպէս իմացութիւնք իմանան որպէս իւրեանց պարտ է, իսկ մեք զգալեաւք պատկերաւք յաստուածայինս կոյս ըստ կարողութեան համբառնամք տեսութիւնս»¹⁹⁴:

Պլոտինոսը զգայական աշխարհից գեպի բանական աշխարհը, Նախագույնը տանող ճանապարհին տրամախոհությունից առավել դեր է հատկացնում պատկերազգացողությանը, լուսային տարփանքին, աղոթքին, որոնց գերա-

¹⁹³ Նույն տեղում, էջ 64:

¹⁹⁴ Նույն տեղում, էջ 56:

գույն դեր է վերապահվում էքստատիկ աստվածաբանության համակարգում¹⁹⁵:

Նյութական գգալի աշխարհի միջոցով բանական՝ աստվածային աշխարհը ճանաչելու այս գաղափարը հանդիպում է նաև Փիլոն Ալեքսանդրացու¹⁹⁶ և Դավիթ Անհաղթի երկերում: Հստ Անհաղթի տեսության. «Աստվածայինն ինքն ըստ ինքյան անձանաչելի է, սակայն նայելով նրա ստեղծագործություններին և արարածներին, ինչպես նաև աշխարհի կարգավորված շարժումը, մենք մտածողության և մտահայեցողության միջոցով հասու ենք լինում արարչին: Անտեսանելին հեշտությամբ ճանաչվում է այն բանի միջոցով, ինչը տեսանելի է»¹⁹⁷:

¹⁹⁵Տե՛ս Պլոտինոս, Էնեադներ, Էջ 24, 32-33, 42, 46-47, 58-64, 92-93, 96 և այլն:

¹⁹⁶Տե՛ս Փիլոնի Հերքայեցւոյ ճառք, «Յաղագս քահանայիցն», Էջ 181:

¹⁹⁷Տե՛ս Դավիթ Անհաղթ, Երկեր, Էջ 42: Ուսումնասիրողը (Ս. Արևշատյան) բնության ճանաչման, «աշխարհի կարգավորված շարժման» իմացման միջոցով Արարչին հասու լինելու դրույթը կապում է ամենայն ինչի գոյության և շարժման սկզբնապատճառի արիստոտելյան գաղափարի հետ (Արիստոտել, Մետաֆիզիկա, XII 6, 1071 a 20) (տե՛ս նույն տեղում, Էջ 304):

Մի այլ հատվածում այսկողմնային և այնկողմնային աշխարհների կապի, նյութական աշխարհի միջոցով աննյութականը ճանաչելու, տեսանելի պատկերների միջոցով էությունների աշխարհը թափանցելու գոյաբանական-աստվածաբանական գաղափարը ներկայանում է նորպատունական փիլիսոփայական-իմացաբանական կառույցում՝ իմաստասիրության հինգ աստիճանների հիմքում, որոնց միջոցով, ասես «սանդուղքով կամ կամքով», փիլիսոփան բարձրանում է ամենայն նյութականից դեպի ամենայն աննյութականը:

«Հինգերորդ գլուխ էր, յորում խնդրէաք՝ եթէ զի՞նչ է ընդ մէջ ճանապարհն: Եւ պարտ է գիտել, թէ հինգ աշտիճանք են ամենայն իմաստասիրութեան՝ բանականն, բարոյականն, բնաբանականն, ուսումնականն,

Արեոպագիտյան պատկերի տեսությունը, որ կենտրոնական տեղ է գրավում քրիստոնեական աստվածաբանության մեջ, պատկերընկալման, պատկերի գոյաբանական, իմացաբանական և գեղագիտական արժեքի ու նշանակության այս հիմնադրույթներն իրենց խոր զարգացումն են ապրել Նարեկյան դպրոցում, հատկապես Անանիա Նարեկացու բանաստեղծական արվեստի տեսության մեջ: Ինչպես նշել ենք, Անանիա Նարեկացին առավել շեշտում է պատկերի տեսանելի, առարկայական, «մարմնավոր», զգացմունքային առանձնահատկությունների անհրաժեշտությունը, քանի որ այն ուղղակիորեն կապում է բանաստեղծական արվեստի ներգործուն ազդեցության հետ: Նա մշակել է այսկողմնային, տեսանելի, «երկրային», «մարմնավոր»

աստուածաբանականն. յորոց ծայրք են երկու՝ բանականն եւ աստուածաբանականն, իսկ մէջք՝ այլքն:

Ի սոցանէ ոմանք գրսկարանաց եւ մաքրարանաց քատակեցան, իսկ ոմանք հուպ ի կատարեալսն եւ ոմանք ի կատարելոց եւ նոցին խորհրդածութեանց: Այդ սրսկարանաց եւ մաքրարանաց քատակեցաւ բարոյականն՝ մաքրելով զհոգին ի չար բարուականաց կարծեաց, որպէս զի մաքուր եւ կարգաւոր եղեալ՝ մաքրապէս մերձեսցի յիմաստասիրութիւն, իսկ հուպկատարելոցն քատակեցաւ բնաբանականն, քանզի թէպէտ եւ անշարժ խնդրեմք ի բնաբանութեանն եւ շարժեցեալս յաստուածաբանութեան, այլ սակայն աստուածայինքն պատճառք գոն շարժելութեան բնականացն, եւ շարժելոցն ի հանգամայնս գամք շարժողաց անշարժիցն. իսկ աներեւելին յերեւելոյն փութագոյն ունի զնանաչելն: Իսկ նոցին կատարելոց քատակեցաւ ուսումնականն՝ որպէս սանդուղք ինչ եւ կամ կամուրջ յամենեւիմք նիւթականացն առ ամենեւիմք աննիւթականսն:

Այսոցիկ ամենեցուն բագին եւ տաճար եղեւ Արիստոտելի իմաստասիրութիւնն (տե՛ս Դավիթ, Անյալթ, Երկասիրութիւնք փիլիսոփայականք. «Մեկնութիւն «Ստորոգութեանցն» Արիստոտելի», Երևան, 1980, էջ 212-213):

պատկերների միջոցով աղոթքը կառուցելու և զգացմունքի ուժնացմամբ հոգևոր էքստազի համելու մի ամբողջական տեսություն, որ նա ընտրության, զղջման և արտավաց արվեստ է անվանում¹⁹⁸: Այդ արվեստի մեջ ներհյուսված են դիոնիսյան աղոթքի տեսությունն ու պատկերագրությունը, և այդ սկզբունքներով է նա կառուցում իր աղոթքներն ու խոստովանանքները՝ «զղջական», հուզախոռված աղոթքի և ներքին խոկման ու մտահայեցության՝ քնարական մենախոսության տեսք տալով նրանց:

Բանաստեղծական արվեստի այդ տեսությունն ու փորձը նորարարական էր իր ուղղվածությամբ և նախօրինակը չուներ նախորդ դարերի հայ հոգևոր բանաստեղծության մեջ¹⁹⁹: Հիշենք մի քանի հատկանշական օրինակներ Անանիա Նարեկացու խրատներից և «Յաղագս զղջման եւ արտասուաց» երկից:

Հստ Անանիա Նարեկացու՝ բանաստեղծական աղոթքի կառուցման կարեոր սկզբունքներից մեկն այն է, որ բանաստեղծն իր զղջման օրինակները, պատճառ-պատկերները պետք է վերցնի այստեղից, երկրային կյանքից, որ կարողանա հասնել իր արվեստի բարձրությանը. «Եւ զոր աւրինակ հողագործքն յառաջագոյն պատրաստեն զանաւթ գործոյն, մինչդեռ ոչ իցէ հասեալ ժամանակ վաստակոցն, այսպէս եւ դու զայս ամենայն աւրինակ ստացիր ժողուժեան յերկաւորացս աստի: Վասն որոյ ասէ առաքեալ. «Ան-

¹⁹⁸ Տե՛ս Հ. Թամրապյան, Գիրք Բ, էջ 395-396, 346-347:

¹⁹⁹ Տե՛ս Հ. Թամրապյան, Անանիա Նարեկացի. Կյանքն ու մատենագրությունը, էջ 253-325:

Երեւոյթքն Աստուծոյ ի սկզբանէ արարածովքս իմացեալ տեսանին» (Հռոմ. Ա. 20)²⁰⁰:

Նույն գաղափարն է հեղինակը բանաձեռւմ նաև «Յաղագս զղջման եւ արտասուաց» գործի սկզբում. «Ո՞վ աստուածամէր սիրելի եղբայր... զբանն, վասն որոյ աղաչեցեր զիս եւ ասացեր՝ ցուցանել քեզ ճանապարհ յաղագս զղջման եւ արտասուաց, եւ արդ՝ ես սակաւուք պատճառս տամ յաղագս քում աստուածսիրութեանդ... սակաւ ինչ հետամուտ եղեալ ի Գրոց Սրբոց եւ յաւրինակաց տարեցս, վասնզի՝ «Աներեւոյթք նորա արարածովքս իմացեալ տեսանին», – որպէս ասէ առաքեալ»²⁰¹:

Աղոթքի վերջում նա պարզաբանում է, որ իր այդ սկզբունքը վերցրել է Ավետարանից. մարդիկ ի ծնե մարմնավոր են և նրանց հուզաշխարհի վրա ներգործելու, նրանց մոտ զղջման զգացմունք առաջացնելու համար հարկավոր է դիմել երկրային կյանքից վերցված տեսանելի, «երևելի» պատկերների²⁰²:

Աղոթքի միջոցով հնարավոր է հոգեոր էքստազի հասնել, աստվածային էությունների, իմանալի (բանական) լույսի ոլորտները թափանցել՝ զգայական՝ արտաքին աշխարհի պատկերների վերառաքմամբ: Նրանցով պետք է կառուցվի աղոթքը, ինչպես և աստվածաշնչյան այն պատճառ-օրինակներով, որոնք արթնացնում, հուզում են մար-

²⁰⁰ Անանիս Նարեկացի, «Յաղագս զղջման և արտասուաց», ՄՀ Ժ, էջ 363:

²⁰¹ Նույն տեղում, էջ 360: Պատկերի՝ որպես ընտրության, զղջման «պատճառների», պատկերի և սիմվոլի մասին տե՛ս Հ. Թամրապան, Գիրք Բ, էջ 350-360:

²⁰²Տե՛ս Հ. Թամրապան, Գիրք Բ, էջ 354:

դու խոհաշխարհը: Աղոթքի հյուսվածքի մեջ ընտրողաբար ներմուծված այդ օրինակներով ստեղծվում է նրա ամբողջական կառույցը, որի միջոցով աղոթողը հասնում է «արտասվաց» շնորհին: Ընդ որում՝ ընտրության արվեստը ներանձնական սկիզբ ունի, այն անհատական ակտ է և իբրև ներանձնացյալի հոգեոր սիրանք՝ կապ չունի համընդհանուր, «հասարակաց» աղոթքների հետ:

Գրիգոր Նարեկացին իր ստեղծագործության մեջ օգտագործել է նորավատոնական «պատկերագրության», պատկերնկալման այս խոր հղացքը: Նա զարգացնում է այս գաղափարներն իր ստեղծագործության ծիրում՝ ելնելով աստվածային ներշնչանքով արարելու և «աստվածաշունչ» երկ ստեղծելու իր բացարձակ գաղափարից: Եվ պատկերներն այստեղ ուղղակիորեն կապվում են խոսքարվեստի, ինչպես բանաստեղծն է ասում՝ «խոսքի զորության արվեստի» հետ²⁰³:

Զգայական և բանական աշխարհների այսօրինակ ճանաչողությանն ու աստիճանակարգությանն՝ իբրև իմացաբանական սկզբունք՝ Անանիա Նարեկացին անդրադառնում է նաև «Սակս բացայայտութեան թուոց» երկի մեջ: Զգալի աշխարհի ճանաչողությունը ներկայանում է իբրև իմացության նախնական, տարրական աստիճան, աշխարհաճանաչողության յուրահատուկ այբուբեն, որին հաջորդում է բանական, իմանալի աշխարհի ճանաչողությունը²⁰⁴:

²⁰³Տե՛ս Հ. Թամրապյան, Նարեկյան գլուոցը, Էջ 105-172:

²⁰⁴Տե՛ս Անանիա Նարեկացի, «Սակս բացայայտութեան թուոց», ՄՀ Ժ, Էջ 440-441, այս մասին տե՛ս Հ. Թամրապյան, Գիրք Բ, Էջ 207-208

Այս տեսությունից է բխում ողջ արարչության՝ աստվածայինով ներթափանցված լինելու պանթեիստական ըմբռնումը, բանական ճամփորդության մեջ մեկ աշխարհից մյուսն անցնելիս զգայական պատկերի բացառիկ նշանակությունը:

*

Պանթեիստական աշխարհընկալման հետ են կապված Արեոպագացու էքստատիկ աստվածաբանության բոլոր մակարդակները, որոնք ամբողջանում են մի միեղեն գոյաբանական կառույցում: Այս մակարդակներում է բացվում, այս ոլորտներում է շնչում և Գրիգոր Նարեկացու բանաստեղծական աշխարհը:

Բանաստեղծը կարողանում է ներքին մարդու տիրույթում ներքուստ պայծառացնել, հոգեոր էքստագի պահին շնչավորել բնության պատկերները՝ բարձրացնելով պատկերաշարը մի նոր հոգեոր մակարդակի, ուր աստվածային ներշնչանքը երևակում է նրանց աստվածային իմաստն ու էությունը. բանաստեղծական հղացքի՝ դեպի բանական տիեզերքը միտված ստեղծաբանության միջոցով նրանք բարձրանում են մարդկային երևակայության և ներհայեցողության հոգեոր մակարդակներով, էքստատիկ վերառաքմամբ, հոգով առ Աստված, առ ամենայնի Սկիզբը:

Արարող հոգին աստվածային ներշնչանքով նրանց մղում է դեպի նախատիպը, նախագույնը:

Ստեղծաբանության ընթացքում արդեն, հոգեոր էքստագի բռնկման պահերին բանաստեղծն արարում է դրանց արքետիպերի աշխարհում կամ սահմանաշերտին՝ բանա-

ստեղծի հոգում այդ երկու աշխարհները միախառնված են իրար՝ ներհոսում են և արտահոսում. բանաստեղծի ներաշխարհ՝ փոքր տիեզերքը, ճամփորդում է զգայական և բանական աշխարհներում:

Այս գաղափարին են ենթարկվում նաև պատկերավորման միջոցները: Նորպատոնական գեղագիտական համակարգում փոխակերպությունները (դրանց հետևությամբ՝ համեմատությունները, փոխաբերությունները, էպիտետները՝ իբրև փոխակերպություններից ուղղակիորեն սերող պատկերավորման միջոցներ, ինչպես նաև բուն պատկերը, որ միշտ ձգտում է իր նախատիպին) ոչ միայն սոսկական գեղարվեստական հնարանք են, այլև գոյաբանական անցումներ՝ իմանալիից դեպի զգայական աշխարհ և հակառակը. նրանք անքակտելի մի ամբողջության, միեղենության տարբեր օղակները, աստիճաններն են, ուստի պատկերային անցումները գերբնականից (բնազանցականից) բնականին, բանականից՝ զգայականին, աստվածային էություններից՝ բնությանը՝ իրական են բանաստեղծի համար. պետք է աստվածային շնորհով դրանք զգալ, ներապել և արտահայտել բանաստեղծորեն՝ խոսքի, բառերի միջոցով, որ խորհրդավոր այդ շղթայի վերելքի և վայրէջքի արտահայտություններ են: Այսպիսով, անհուն տարածքներ են բացվում բանաստեղծական ներշնչանքի ու երևակայության համար. բանաստեղծն իրեն զգում է Աստծո, բնության, տիեզերքի մասնիկը, համաբնութենակիցը, նրա խոհաշխարհը երևակում է պատկերների տիեզերական այդ շղթան, որին օղակված է մարդկային հոգին: Այն նրան պատկերա-

նում է լուսեղեն բխումների, տեսիլների, պատկերահոսքերի, հաճախ առեղծվածային ու պարագոքսալ թվացող զուգորդությունների և առնչությունների շղթայաձև կառույցների տեսքով, որ բանաստեղծական կառույցի մեջ անդամ շեշտում են միեղենության այդ խորհուրդը:

Սա է նորպատոնական պանթեզմի բուն էությունը՝ հայեցողը ներքին պայծառացման, էքստազի մեջ ընկալում է միեղենության այդ խորհուրդը, աստվածային էությունների լուսեղեն բխումը, վայրէջքը զգայական աշխարհ և անցումը զգայական աշխարհից դեպի իմանալի աշխարհը, ավելի բարձր հոգեսոր աշխարհները, որոնք անսահման են: Բուն ստեղծագործության ընթացքում այս զգացողությունը, ներհայեցողությունը վերածվում են զգացմունքային էքստազի, սիրազեղության:

Այսպես պետք է մեկնաբանել փոխակերպությունների խորհուրդը միստիկ բանաստեղծի մոտ:

Դիոնիսիոսի տեսության համաձայն՝ Աստված երկնային աստիճանակարգությամբ հրեշտակների դասերից իջնում է մինչև հրեշտակակերպ մարդիկ, այնուհետև մինչև մարդկային բնությունը, կենդանիները, բույսերը, ամենայն ինչ, որ կենդանի է՝ ապրում և չնչում է նրանով, համաշունչ է նրան:

Ամենայն ինչ ներթափանցված է աստվածայինով և միտված է առ նա: Տիեզերքը բխել է և գոյում է Բարու, Ազնիվի, Գեղեցիկի, Սիրո աստվածային օրենքներով, որոնք բարեձեռությամբ ու ներդաշնակությամբ են օժտել նրան:

Այդ առումով ուշագրավ է Դիոնիսիոսի «Յաղագս աս-

տուածայնոցն անուանց» երկի «Յաղագս կենաց» գլուխը²⁰⁵: Այն ներբող է արարչին և արարչագործությանը, ամենայն ինչի սկզբնապատճառին, որին հեղինակն անվանում է հավիտյան կյանք և ինքնակյանք (ինքնաստեղծ): Նա համասփոել է կյանքը, և ամենայն կյանք հաղորդակից է նրան: Նրանից է գոյացել հրեշտակների «մշտաշարժ» աշխարհը. հանուն նրա կենդանի գոյացություններն անմահ են կոչվում՝ ոչ իրենց հավիտենական գոյության, այլ այդ կենդանարար, կենարար և ամեն ինչ ներառող աստվածային կյանքի՝ ինքնակյանքի պատճառով, որ նույնանում է Մեկի, Առաջնամիակի, Նախագույնի նորպլատոնական գաղափարների հետ:

«Իսկ այժմ աւրհնաբանելի է մեզ զկեանսն յաւիտենից, յորմէ ինքնակեանք եւ ամենայն կեանք, եւ որով յամենայն յորս զիարդ եւ ից՝ հաղորդ են կենաց կեալն ընտանեբար իւրաքանչիւր ումեք սփոի: Որ եւ անմահից հրեշտակացն կեանց եւ անմահութիւն, եւ անապական նոյնութիւնն հրեշտակականին մշտաշարժութեան ի նմանէ եւ վասն նորա, եւ է, եւ գոյացաւ: Վասն որոյ եւ կենդանիք միշտ եւ անմահք ասին, եւ ոչ անմահք դարձեալ, զի ոչ առ ի յինքեանց ունին զանմահն գոլ եւ յաւիտենական կեալն, այլ ի կենդանարարէն եւ յամենայն կենաց արարողականէն եւ միահամուռ ունողէն պատճառոյ: Եւ որպէս ի վերայ էին ասեաք եթէ եւ <նորին> գոլոյն է յաւիտեան, նոյնպէս եւ աստանաւր դարձեալ զի եւ ինքնակենացն է աստուածայինն կեանք, կենդանական եւ գոյացողական: Եւ ամենայն կեանք

²⁰⁵ Դիոնիսիոս Արեոպագացի, «Յաղագս կենաց», Էջ 190-192:

եւ կենդանական շարժութիւն ի կենացն՝ որ գերագոյնն է քան զամենայն կեանս եւ զամենայն սկիզբն ամենայն կենաց։ Ի նմանէ եւ անձինք զանապականութիւն ունին, եւ կենդանիք ամենայն եւ տունկք ըստ յետին հնչման նմանութեան կենաց ունելով զկեանսն։ Զոր ի բաց <հանեալ> ըստ ասացելումն, պակասէ ամենայն կենդանութիւնն...»²⁰⁶:

Ամեն կենդանությունն, ամեն էությունն միատեսակաբար նրանից է նախագոյացել, և այդ անվերջ, հավիտենական հղացման և բազմածնության մեջ ամենուր, ամեն ինչի, ամեն կյանքի մեջ նա է երեսում, այդ գերալիր կյանքը, որ վեր է ամենայն կյանքից, այդ կենդանարար ուժը, որն անբարբառելի է մարդկային լեզվով²⁰⁷:

Գրիգոր Նարեկացու տաղերում բնության կենաց խաղերի, ելևէջների մեջ հատկապես վառ գուներանգներով է շնչում բուսաշխարհը՝ ծառերը, թփերը, ծաղիկները, տերեները։ Բնությունը նրա տաղերում շնչափորփած է, ոգեղենացած է, և այդ բնությունն է երգում բանաստեղծը՝ ամեն ինչի մեջ աստվածային էությունը փնտրելով և բանաստեղծական էքստազի, «վերնական» տեսիլքի մեջ հայտնաբանելով նրանց ոգեղեն իմաստը։ Քանզի չկա ոչինչ, որ էություն չունենա։ Այստեղ նա դարձյալ հետեւում է Դիոնիսիոսին, ըստ որի՝

«Որ ինչ զիարդ եւ իցէ՝ է ի նախագոյէն, եւ է, եւ հնարաւորի, եւ ապրի... եւ ոչինչ է գոյ, որոյ ոչ է էութիւն...»²⁰⁸:

²⁰⁶ Նույն տեղում, էջ 190-191:

²⁰⁷ Նույն տեղում, էջ 192:

²⁰⁸ Նույն տեղում, «Յաղագս էի յորում եւ յաղագս յարացուցից», էջ 186:

Բնությունը, ինչպես աստվածային արարչագործության բոլոր ոլորտները, ոգեղեն է. բոլոր հությունները, բնության երկույթները միացած են իրար անշփոթ միությամբ, իմանալի աշխարհը, մարդն ու բնությունը ծագել են, բխել են, ստեղծվել են նույն սկզբնապատճառից. «Այլ եւ ի բոլոր բնութեան էիցս ամենայն սահմանք որք ըստ իւրաքանչիւր բնութեան շարամանեալ են ընդ միում անշփոթ միութեանն եւ ի յանձին միատեսակապէս որք ըստ մասին բոլոր մարմնոյն նախախնամականաւքն զաւրութիւնք...»

Եւ ի նոյն յամենեցունց պատճառէն իմացականքն եւ իմանալիք աստուածատեսակացն հրեշտակաց էութիւնք, եւ անձանց, եւ ամենայն աշխարհի բնութիւն...»²⁰⁹:

Արարչագործական այս հրաշքի, տիեզերքների աստվածային միեղենության արտահայտություն է Գրիգոր Նարեկացու ամենախորհրդավոր գործերից մեկը՝ «Վարդավառի տաղը».

Գոհար վարդըն վառ առեալ
Ի վեհից վարսիցն արփենից.
Ի վեր ի վերայ վարսից
Ծաւալէր ծաղիկ ծովային:
Ի համատարած ծովէն
Պղպջէր գոյնըն այն ծաղկին.
Երփին երփնունակ ծաղկին,
Շողշողէր պըտուղն ի ճղին:
Քրքում վակասիր պտուղն,
Մնանէր խուռըն տերեւով.

²⁰⁹ Նույն տեղում, էջ 187:

Տերեւն տաւիղ տուողին,
 Զոր երգէր Դաւիթ հրաշալին:
 Ի փունջ խուռներամ վարդից
 Գոյնզգոյն ծաղկունք ծաղկեցան,
 Այդ սաւս ու տաւսախ ծառերդ
 Վարդագոյն ոստս արձակեցին:
 Այդ նոճ ու բողբոջ ասրաւսդ,
 Զարդ առեալ վարդըն շուշանին.
 Շուշանըն շողէր հովտին,
 Շողշողէր դէմ արեգականն...

(«Տաղ Վարդավառին»)²¹⁰

Ահա թե ինչ աստվածային ծաղկեփունջ է հյուսում միս-
 տիկ բանաստեղծը՝ յուրովի վերստեղծելով աստվածային,
 ոգեղենացած բնությունն իր ելեջների, գույների մեջ: Ողջ
 բնությունն աստվածային է՝ արեը, հովիտները, լեռները,
 քամիները, ծառերն ու ծաղկները, երկինքը, ամպերն ու
 աստղերը: Եվ այս տիեզերական ոգեշնչման կենտրոնում
 են վարդն ու շուշանը, նրանց շուրջն է պտտվում ողջ
 բնությունը, նրանք շնչում են աստվածային սիրով: Ամեն
 ինչ համակված է աստվածային սիրով, անգամ տերեւը, որ
 նույնպես ստեղծել է Աստված, և արարման այդ հրաշքն է
 երգում բանաստեղծը, այս դեպքում՝ Դավիթ հրաշալին:
 Բնությունը Աստծո տավիղը՝ քնարն է: Աստծո տավիղն է
 նաև բանաստեղծը, որ տարփողում է աստվածային բնու-
 թյունը:

²¹⁰ ՄՀ ԺԲ, էջ 704:

Հիշենք «Տաղ Ծննդեան»-ից («Եին աջոյ աջոյ ձեռին...») նմանատիպ մի հատված.

Իսիրոյ սէր ծանուցեալ,
Սիրաբողբոջ տարփմամբ լցեալ,
Սիրով ընդ սէր միաբանեալ...

Գարունաբեր, գարունահրաշ,
Գեղ գովելի երփնազարդեալ,
Նոր հարսանեաց միաբանեալ:

Եկայք նոր մեք նորագուարճ,
Վառ ի վառեալ, տիպ ծալ ի ծալ
Թըփոյն տերեւ յաւրինեսցուք²¹¹:

«Վարդավառի» և «Համբարձման» տաղերի մասին Մ.
Աբեղյանը իր «Գրիգոր Նարեկացի» մեծարժեք ուսումնա-
սիրության մեջ գրում է:

«Տերեւն՝ տաւիղ տուողին, Զոր երգէր Դաւիթ հրաշա-
լին»: Հովից սոսափող տերեւ, ուրեմն, հնչուն բնությունն
է առհասարակ, դա Աստծու քնարն է, որ նվագում է նաև
սաղմոսերգու բանաստեղծը: Բանաստեղծն ինքն էլ, սա-
կայն, Աստծու քնարն է. «Սուրբ Երրորդութեանդ արժանաս-
ցուք լինել քնար միշտ հոգեւոր հնչմանց» («Տաղ Համ-
բարձման»), կնշանակե, մեր Նարեկացու հայացքով, բա-
նաստեղծն էլ նույնն է անում, ինչ բնությունը: Երգելով
բնությունը՝ նվագում է աստվածային քնարի վրա»²¹²:

²¹¹ Նույն տեղում, էջ 633-634:

²¹² Մ. Աբեղյան, Երկեր, Գ, Գրիգոր Նարեկացի, էջ 583-584:

Այս տաղերը, «Ծննդեան», «Հայտնութեան» և «Հարութեան» տաղերի հետ նա կապում է հայոց գրականության մեջ սկզբնավորվող Վերածննդի գաղափարախոսության հետ²¹³:

Գրիգոր Նարեկացու այս տաղերում մարդը հայտնվում է տիեզերական արարչագործության տարերքում և իրու «Աստծուն համացեղ», միախառնված նրա «գարունաբեր, գարունահրաշ», մշտագեղուն արարչագործությանը, ինքը ևս արարում է բնությունը՝ համակված «նորագուարճ» արարման հրաշքով: Տաղերի այս հատվածներում ակնհայտ է բանաստեղծի պանթեիստական աշխարհայացքը: Բնության ամեն երևույթի, ամեն արարածի մեջ նա տեսնում է Աստծուն:

Նարեկացին իր տաղերով տարփողում է աստվածային սերը, որով ներթափանցված է ողջ բնությունը: Հոգեոր տարփանքի պահին նա բանաստեղծությունը փոխակերպում է պատկերահոսքերի, տեսիլաշարերի, լուսեղեն բխումների: Միստիկ էքստազի, պայծառատեսության, «լուսերեւության», լուսերգության, տարփերգության մեջ բոլորովին այլ իմաստ են ստանում բառը, պատկերը. Նրանք հոգեոր, հոգեկիր, կենդանի այն նշանակները, պարունակներն են, որ վերառաքում են, հոգեոր, տիեզերական արարչագործական հոսքի մեջ են մտցնում երկրային, զգայական աշխարհի պատկերներն ու երևույթները՝ աստվածային սկիզբներով ներթափանցված նրանց հությունը, քանի որ «չկա ոչինչ աշխարհում, որ էություն չունենա» (Դիոնիսիոս Արեոպագի):

²¹³ Նույն տեղում, էջ 620-625:

Մարդու «շրջագայությունը» աստվածային էությունների իմանալի այդ ոլորտներում նույնպես կապված է հոգեսոր էքստազի, աստվածային սիրո տարփանքի հետ, քանի որ նրանով է շարժվում, այդ սիրով է շաղկապված համաշխարհը, և նա աստվածային մշտնջենավոր շրջագայողն է՝ միեղեն այդ աշխարհներն իրար շաղկապող։

Ավելին՝ մարդու երկնային այդ ճամփորդությունը, շրջագայությունը՝ նրան շնորհված «անմոլոր բոլորակի» մեջ, ընթանում է աստվածային տարփանքի շավիղներով, պտտվում նրա շուրջը, նրա «անմոլոր հոլովույթով»՝ վերադառնալով դեպի զգայական աշխարհ, դեպի բնություն, որ նույնպես «էակցված» է Աստծուն, և նրա կենարար շնչով, «գերալիր» կյանքով են համակված ամեն կենդանի շունչ, ամեն ծառ ու ծաղիկ, թուփ ու տերև։ Եվ տիեզերական այդ շարժման, այս բարեկերտության, ներդաշնակության խորքից բարձրանում է մարդը՝ Աստծո քնարը, արարման իր ձիրքով Աստծուն «համացեղ էակը»։

**ԱՐԵՊԻ ԻԲՐԵՎ «ՄԵՐՁԱԿԱ
ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ».
ՕՐՀԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ՝ ԻԲՐԵՎ ԴԻՌՆԽՈՍԻ ԵՐԿԵՐԻ
ԽՈՐՔԱՑԻՆ ՀՂԱՑՔ**

Դիոնիսիոս Արեպագացու տեսական համակարգում հատուկ տեղ է գրավում աղոթքի տեսությունը, որ նա համարում է «մերձակա աստվածաբանություն»՝ շեշտելով նրա անմիջնորդ, անմիջական աստվածահայեցողության բնույթն ու էությունը:

Աղոթքի տեսությունն իր հիմքում ունի երկնային և երկրային քահանայապետությունների, իմանալի և զգալի աշխարհների գոյաբանական կապի գաղափարը. այդ երկու աշխարհները գոյացել և գոյում են Աստծո նախախնամությամբ և գոյակցված, էակցված են իրար:

Դիոնիսիոս Արեպագացու «Յաղագս աստուածային անուանց» երկի մի գլուխը նվիրված է աղոթքի՝ իբրև «մերձակա աստվածաբանության», աստվածամերձ հայտնաբանության քննությանը և միստիկ կենցաղավարության մեջ նրա դերի լուսաբանմանը: Այն խորագրված է՝ «Զի՞նչ է աղաւիթից զաւրութիւն, եւ յաղագս երանելոյն Յեռեթէոսի, եւ յաղագս երկիւղածութեան եւ շարագրութեան աստուածաբանականի»²¹⁴:

Այս գործն աղոթքի տեսություն է, որ կապվում է ավելի հոգեզգայական էքստազի, քան բանական հայեցողության հետ: Դա են վկայում նաև հոգեոր էքստազի մասին հեղինակի այս աշխատության այլ գլուխները, որոնց կանդրադառնանք:

²¹⁴ Տե՛ս Դիոնիսիոս Արեպագացի, էջ 149-153:

Զգայական աշխարհից վերառաքումը զուգորդվում է առաջին հերթին «սրբազն» էքստազի (տոփման), «աստվածային սիրո» զգացմունքի, հուզագեղման հետ, որ գերագույն նպատակ է «խորհրդագգած» անձի համար:

Անպղտոր, մաքուր մտքով կատարվող «ամենասուրբ» աղոթքի միջոցով միայն կարող է ներանձնացյալը, հայեցողն առավել մերձենալ գերագույն բարուն՝ Աստծուն և նրա «բարեպետությանը», թափանցել բանական աշխարհը, որին այնուհետ միայն հաջորդում է առավել խաղաղ՝ բանական հայեցողությունը, երբ հայեցողը ուսանում է, սերտում է աստվածային պատգամները՝ նրա շուրջը տարածվող էությունների աշխարհը:

«Արդ՝ նախ եթէ թուեսցի՝ զամենակատար եւ զբոլորիցն Աստուածոյ յառաջ ճանապարհաց յայտնաբանականն բարի անունութիւն տեսցուք, զբարեպետական եւ զգերագոյն բարին կարդալով զերրորդութիւնն զյայտնողն բոլորիցն իւրոց բարեաց նախախնամութեանց:

Քանզի պիտոյ է մեզ աղաւթիւք նախ համբառնալ որպէս ի բարեպետութիւն եւ յաւէտ հպեալ ի նա՝ այսուիկ ուսանել զամենաբարիսն պարզեւս, զոր շուրջ զնովաւ են սերտեալ. զի ինքն յամենեսին մերձ է, բայց ոչ ամենայն մերձ է ի նա:

Իսկ յայնժամ, յորժամ կարդամք առ նա ամենասուրբ աղաւթիւք, անպղտոր մտաւք եւ առ աստուածային միաւորութիւնն պատեհութեամբ, յայնժամ եւ մերձ լիցուք առ նա»²¹⁵:

²¹⁵ Նույն տեղում, էջ 149:

Հստ Դիոնիսիոսի՝ առաջին հերթին և միշտ աստվածաբանությունը ամենասուրբ աղոթքով է պետք սկսել: Աղոթքի միջոցով, որ հնարավորություն է տալիս «մերձենալ» Աստծուն, ուսանել, հայտնաբանել, համբառնալ, հավետ հպվելով նրան, մենք միանում ենք Աստծուն՝ ոչ թե նրան ձգելով դեպի մեզ, այլ բարձրանալով առ նա:

Այդ պատճառով բուն աստվածաբանության սկզբունքները շարադրելուց առաջ նա անդրադառնում է մերձակա աստվածաբանությանը՝ աղոթքին, որի միջոցով, ասես երկնային ճառագայթից քաշելով՝ բարձրանում ենք մինչև «բարձրագույն, բազմաճանանչ ճառագայթների պայծառությունը», աստվածային լուսեղեն բխումների աշխարհը:

«Եւ որպէս... բազմալոյս ինչ լար ի յերկնից ծայրութենէն կախեալ ի վերուստ մինչ ի վայր, եւ բուռն հարեալ զնմանէ ձեռն զձեռամբ փոփոխելով քարշել թուելով զնա, ոչ զնա ի մեզ քարշեաք, զ՚ի վերուստ կապեալն, այլ մեք եւ լանեաք առ բարձրագոյնսն բազմաճանանչ ճառագայթիցն պայծառութիւն:

...Վասն որոյ եւ նախ քան զամենայն եւ յաւէտ քան զաստուածաբանութեանն աղաւթից սկսանել պարտ է, ոչ որպէս յինքն քարշելով զամենայն ուրեք <մերձ> զաւրութիւնն եւ զոչն ուրեք, այլ որպէս զի աստուածայնովք յիշատակաւք եւ կոչամբ զմեզ ինքեանս ընձեռեալս նմա եւ միաւորեալս:

Եւ այս թերեւս է աղերսանաց արժանի, զի բարեփառ առաջնորդին մերոյ Յեռեթիոսի զաստուածաբանականսն տարրութիւնս գերաբնապէս <ժողովեցելոյ>, մեք որպէս ոչ

բաւականաց այնոցիկ, այլս մերձակայ աստուածաբանութիւնս շարագրեցաք»²¹⁶:

«Սրբազն խավարի» միստիկ աստվածաբանությունը, ինչպես կտեսնենք, ևս ամբողջությամբ կապված է աղոթքի փորձնթացի հետ, քանի որ հասու չէ մարդկային բանականությանը, այլ միայն սրբազն աղոթքին՝ փառատրությանը կատաֆատիկ և ապօֆատիկ եղանակներով:

Մերձակա աստվածաբանության այս պատկերավոր ձևակերպումը դարձյալ սերում է նախորդ շրջանի նորպլատոնական գոյաբանական-գեղագիտական հայեցողության և աղոթքի տեսության դրույթներից. հանդիպում են անգամ նույնատիպ պատկերներ: Այսպես, Պլոտինոսի «Էննեադներում» կարդում ենք. «Եվ ինչպես որ շրջանի կենտրոնը գոյություն ունի ըստ ինքյան՝ պարագելով իր մեջ յուրաքանչյուր ճառագայթ... ճիշտ այդպես էլ մեր մեջ առկա [ճառագայթով] մենք առնչվում, աղերսվում և համագոյում ենք [Նախագոյնի] հետ: Իսկ մեզանից նրանք, ովքեր և միանում են նրան, հաստատվում են այնտեղ՝ բանական աշխարհում»²¹⁷:

Սրան համահունչ է Պլոտինոսի մեկ այլ խոհապատկեր, ուր բանական և զգայական տիեզերքի հավերժական շարժումը նա արտահայտում է «արեգակի ճառագայթներից շողարձակող ոսկենման տեսիլքի» միջոցով: «... Հանուր Հոգին արտաքինից, բոլորեքյան [շրջված է] առ ինքը, ներհոսում ու ներթափանցում է իր մեջ՝ լուսավորելով իրեն:

²¹⁶ Նույն տեղում, էջ 149-150:

²¹⁷ Տե՛ս Պլոտինոս, Էննեադներ, V. 1, էջ 17-18:

ինչպես արեգակի ճառագայթները՝ լուսավորելով մութ ամպը, ստիպում են դրան շողարձակել և բացել մի ոսկենման տեսիլք, այդպես էլ Հոգին, ներթափանցելով երկնի մարմնի մեջ, դրան հաղորդում է կյանք և անմահություն»²¹⁸:

Պոտինոսը ևս իր էքստատիկ աստվածաբանության մեջ գերազույն գեր է հատկացնում աղոթքին, որին անդրադառնում է «Էննեադների» մի շարք հատվածներում: Աղոթքի միջոցով, աստվածային ներշնչանքով է հայեցողը զգայական աշխարհից բարձրանում դեպի արքետիպերի աշխարհը²¹⁹:

«...Կանչի՛ր Աստծուն, որն արարել է այն ամենը, ինչի մտապատկերը դու ունես, աղոթի՛ր, որ դա, հայտնվի: Եվ թող նա դա, հայտնվի, բերելով իր հետ տիեզերքը, նա, ում ծիրում են գտնվում [մնացած] բոլոր աստվածները, նա, ով մեկ է և բոլորը»²²⁰:

Այսպիսով, աստվածաբանության և՛ նշանական, և՛ մերձակա՝ ներանձնական աղոթասացության աստիճանները կապվում են աստվածային սիրո, բանական լույսի գաղափարի հետ՝ միանալով տարփողական (էքստատիկ) աստվածաբանությանը: Ըստ Դիոնիսիոսի՝ աստվածային Հոգու այդ ներթափանցումների՝ «Հայրաշարժ լուսերեսության» չնորհիվ մարդկային հոգիները միավորվում են և ձգտում են «աստվածարար պարզության»²²¹:

Այս փոխներթափանցող պատկերաշարերը վկայում են,

²¹⁸ Նույն տեղում, էջ 5:

²¹⁹ Նույն տեղում, էջ 42, 46-47, 64, 93, 96 և այլն:

²²⁰ Նույն տեղում, էջ 93:

²²¹ Դիոնիսիոս Արեոպագացի, էջ 1:

որ նորպլատոնականների և միստիկ աստվածաբանների աշխարհնկալման և ստեղծագործության ծիրում մերձակա աստվածաբանությունը կապվում է աստվածային լույսի զգացողության հետ՝ վերածվելով էքստատիկ աստվածաբանության։ Հստ էության, դրանք ներհյուսված են իրար՝ իբրև միեննույն միստիկ ակտի, ստեղծաբանության տարբեր մակարդակներ։

Այս կապն ակնառու է Խոսրով Անձնացու «Մեկնութիւն ժամակարգութեան» երկի «Սակս աղաւթիցն» գլխում, որ սերտորեն աղերսված է իմանալի, բանական լույսի գաղափարի հետ²²²: Աղոթքը «վերնական իմաստասիրության» այն մակարդակն է, որ հասցնում է աստվածատեսության, պայծառատեսության և հոգևոր գերզգայնության՝ տանելով աղոթողին երկնային աստիճանակարգերով՝ առաքինությունից առաքինություն, զորությունից զորություն²²³: Աղոթքն է բորբոքում աստվածային սիրո հուրը մարդկանց հոգիներում²²⁴: Նրա չնորհիվ հոգին միանում է սրբերի, հրեշտակների դասին, դառնում է Աստծո օթեան և տաճար. «Եւ զի՞նչ եւս ներբողեցից զարդիւնաւորութիւն աղաւթից. զի հրեշտակաց դասակից առնէ. սրբոց՝ քաղաքակից. սերովքէից՝ կաճառակից։ Տաճար գործէ զմարդ Աստուծոյ եւ աւթեւանս Եղրորդութեան կազմէ»²²⁵:

²²² Տե՛ս Հ. Թամրապյան, Գիրք Բ, էջ 103-110:

²²³ Տե՛ս վերը, հմմտ. Դիոնիսիոս Արեոպագացի, «Յաղագս երկնայնոցն քահանայապետութեանց»՝ «Վասն Է՞ր ամենայն երկնային էութիւնքն առհասարակ զաւրութիւնք երկնայինք կոչին», էջ 35-36:

²²⁴ Տե՛ս Հ. Թամրապյան, Գիրք Բ, էջ 94:

²²⁵ Խոսրով Անձնեւացի, «Բանք պիտանիք իրատականք, յոյժ աւգտակարք եւ հոգեշահք նորին սուրբը հոգեկիր վարդապետին Խոսրովու, զկամքն եւ զերկիւղն Աստուծոյ ճշմարտութեամբ ծանուցողի», ՄՀ Ժ, էջ 242:

Այս ավանդույթի նորովի արտահայտություններ են Գրիգոր Նարեկացու «լուսագեղուն» տաղերի մի շարք հատվածներ։ Հիշենք նրանցից մեկը.

Գունդ տրամք երամից կայք յանուրեք վայր,

Վայր համբից բիւրից աւր սահմանեալ գետ.

Գետ քառանիւթեայք պաղպաջ երկնի փայլ փայլ,

Փայլք փաղփինատար անծայրենի լոյս,

Լոյս գերազանցիկ երկնաշապիղ ուահ...

(«Տաղ Յարութեան»)²²⁶

*

Դիոնիսիոս Արեոպագացու աղոթքի տեսության մասն է կազմում օրհնաբանական աստվածաբանությունը։ Դիոնիսիոսն իր «Յաղագս աստուածայնոցն անուանց» երկն առհասարակ հղացել է իբրև օրհնաբանությունների շարք՝ ձոնված Արարչին և նրա արարչագործությանը, մարդուն ու մարդկային հանճարին՝ օրհնաբանություններ, որոնք ներհյուսված են ամենաբարդ ու խրթին, հաճախ գաղտնածածուկ աստվածաբանական բնագրերին։ Դրանք տարփողում են Աստծո արարչագործության հրաշքը, աստվածայինով ներթափանցված ողջ տիեզերքը, որ գեղուն է սիրով և անընդհատ շարժման մեջ է։

Անընդհատ շարժման մեջ են նաև զարմանալի այս բնագրերը, որ ներթափանցել են Գրիգոր Նարեկացու երկերի մեջ, և նրանցով միջնորդավորված, «շաղկապված և

²²⁶ Գրիգոր Նարեկացի, «Տաղ Յարութեան», ՄՀ ԺԲ, էջ 647:

էակցված» տիեզերական շրջապույտը դառնում է վերժամանակյա ստեղծագործություն:

Հստ Դիոնիսիոսի՝ գերագույն ներշնչանքի պահին օրհնաբանությունն ու աստվածաբանությունը ներհյուսվում են, դառնում են միեղեն աստվածահայեցողություն և հասցնում Աստծո հետ հաղորդության, կցորդության, հափշտակության, հիացման, որի գերագույն արտահայտություններից են տեսիլքները: Մենք ուղղակի կապ ենք տեսնում Դիոնիսիոսի այս հատվածների և Նարեկացուանձնական տեսիլքների հիշատակությունների միջև, որոնք նրա հոգեւոր պայծառացման, աստվածացման պահերն են, և որոնց նա բացառիկ նշանակություն է տալիս՝ իբրև գերբնության դրսեորումներ, ներքին մարդու պայծառացման պահեր²²⁷:

«Յաղագս աստուածայնոցն անուանց» երկի III գլուխ մեջ Դիոնիսիոսը բացում է իր միստիկ աստվածաբանության սրբազան գաղտնիքներից մեկը:

Խոսելով իր ուսուցիչ Հեռոթեոսի (նույնն է՝ Ռեթեոս) «Զաստուածաբանական տարրութիւնս» (Աստվածաբանական սկզբունքներ) երկի մասին և մեծարելով նրան՝ Դիոնիսիոսը, դիմելով Տիմոթեոսին, հիշատակում է մի սրբազան պատմություն՝ կապված Հակոբոս Տեառնեղբոր և Պետրոս առաքյալի հետ, որի մասնակիցն են եղել նաև իրենք՝ Հեռոթեոսի հետ: Բոլոր այս սրբազան այրերը Սուրբ Աստվածածնի ննջման ժամանակ հավաքվում են «աստ-

²²⁷ Այս մասին տե՛ս վերը՝ «Մատեանի» պատկերային համակարգը, տեսիլքները, բառաստեղծության շերտերը»:

վածընկալ մարմնի» (ըստ Մաքսիմոս Խոստովանողի մեկնության՝ Սուրբ Աստվածածնի մարմնի) հայեցողության համար: Եվ ահա՝ գալիս է օրհնաբանության պահը՝ քահանայապետերը սկսում են օրհնաբանել Քրիստոսի մարդեղության խորհուրդը, և բոլոր այդ սրբազան գաղտնատեսների մեջ հզորագույն է ճանաչվում, հաղթում է Հեռոթեոսը՝ Դիոնիսիոսի ուսուցիչը՝ զարմանքի, սքանչացման մեջ հաղորդակցվելով, «կցորդվելով օրհնաբանվողին»: Դիոնիսիոսը նկարագրում է իր ուսուցչին գերագույն ներշնչանքի պահին, որի շնորհիվ նա կոչվում է «աստվածընկալ և աստվածային օրհնաբանող»: Այնուհետև նա շեշտում է, որ այդ խորհրդավոր աստվածաբանություններից (նույնն է՝ օրհնաբանություններից) հետո բազմիցս ծանոթացել է նրա «տեսողական» (հավանաբար՝ տեսիլային, ներշնչված, հափշտակված) օրհներգություններին²²⁸:

Նման տեսանկյունից դիտարկելով՝ Դիոնիսիոսի երկերում ի հայտ է գալիս ներքին մի կառույց, որ թույլ է տալիս նրա միստիկ տեսությունը, եթե ոչ ամբողջությամբ, ապա հիմնական մասերով, ընկալել իբրև համապարփակ աղոթքի տեսություն, քանի որ աղոթքը, օրհնաբանությունը, ըստ էության, նրա աստվածաբանական համակարգի, աստվածաճանաչողության սկիզբն է, միջոցն ու նպատակը: Եվ աղոթքի ժանրի մեջ են ներառվում նաև օրհնաբանությունը, փառատրությունը, խորհրդավոր միստիկ ներ-

²²⁸ Դիոնիսիոս Արեոպագացի, «Յաղագս աստուածայնոցն անուանց», էջ 151-152:

սուզումները և մտահայեցումները, որոնք արդյունք են աշխարհն իբրև աստվածային անվերջ հղացման, լուսեղեն արարչագործության ծիր, անվերջ բխում և շրջապտույտ ընկալելու դիոնիսյան գաղափարի:

Աղոթքի՝ իբրև անմիջական աստվածահաղորդության, աստվածահայտնության արվեստի և գիտության, յուրատեսակ առաջին աստվածաբանության միջոցով աղոթողը կամ աստվածաբանողը բարձրանում է երկնային աստիճանակարգերով: Իր ողջ աստվածաբանական համակարգը Դիոնիսիոսը ներառում է այս շղթայի մեջ՝ իբրև վերառաքման աղոթք, սիրազեղուն, էքստատիկ օրհնաբանություններ և հիմներ, և իբրև բանական հայեցողության բարձրագույն վիճակներ ու ներսուզումներ՝ կատաֆատիկ (ճառելի, հաստատող) և ապոֆատիկ (անճառելի, ժխտող) փառատրություններ, որոնք, ըստ էության, աղոթքի ձևանմուշներ ու օրինակներ են:

Ճառելի աստվածաբանությանն է նվիրված Դիոնիսիոսի «Յաղագս աստուածայնոցն անուանց», անճառելի՝ «Յաղագս խորհրդականի աստուածաբանութեան» երկը: Այս շղթային է անմիջականորեն ներհյուսվում Դիոնիսիոսի՝ վերը ներկայացված պատկերի տեսությունը՝ «նշանական աստվածաբանությունը»: Բոլոր այս օրհնաբանություններն ու փառատրությունները նախօրինակներ են Գրիգոր Նարեկացու ստեղծագործության համար: «Մատեան»-ի շատ դրվագներ իրենցից աստվածային գերանունության շարքեր են ներկայացնում:

Դիոնիսիոսն իր այս երկի օրհնաբանական բնույթի

մասին է խոսում առաջին իսկ գլխում, որ թուղթ է՝ ուղղված Տիմոթեոս քահանային («Քահանայակցի Տիմոթեայ ի Դիոնիսէ քահանայէ»²²⁹):

«Այսոցիկ աստուածատեսակքն իմացութիւնք հրեշտականմանապէս, որպէս հասանելի է, միաւորեալք, վասն զի ըստ ամենայն իմանալոյ ներգործութեան դադարման այսպիսի ինչ լինի աստուածացելոցն իմացութեանց առ ի վերուստն լոյս միութիւն, աւրհնեն զնա տիրագոյնս ի ձեռն ի բաց որոշմանն յամենայն էիցս, զայս ճշմարտաբար եւ գերաբնապէս լուսափայլեցեալք առ ի յերանականէն միաւորութենէ, զի ամենայն էիցս է պատճառ, իսկ նա ոչ ինչ որպէս քան զամենայն գերագոյապէս արտաքս որոշեալ:

Իսկ զգերագոյութիւնն զաստուածապետական եթէ զինչ երբէք իցէ, և կամ զգերագոյ բարերարութեանն էութիւն՝ ոչ որպէս զբան կամ զաւրութիւն, և ոչ որպէս զմիտս կամ զկեանս կամ զէութիւնս է պարտ աւրհնաբանել, ոչ ումեք, որք գերագոյն քան զամենայն ճշմարտութիւն ճշմարտութեանն տոփողք, այլ որպէս յամենայն ունակութենէ եւ շարժութենէ, կենաց, երեւմանէ մտաց, կարծեաց, անուանէ, բանէ, մտածութեանց, իմացուածոյ, էութենէ, կայից, սերտութենէ, միութենէ, բովանդակութենէ, անբաւութենէ, յամենայնէ որքան ինչ էքս են՝ գերունակապէս ի բաց որոշեալ:

Բայց վասն զի որպէս բարերարութեան գոյութիւն նորին գոլոյն ամենայնի է պատճառ՝ զբարեսկզբնականն նախախնամութիւն աստուածապետութեանն յամենայն պատճառաւորացս է աւրհնաբանելի:

²²⁹ Նույն տեղում, էջ 128-137:

Վասն զի Նովաւ են ամենայնքս եւ Նորա աղագաւ, եւ
նա է նախ քան զամենայն, եւ ամենայն ինչ ի նա հաստա-
տեցաւ, եւ գոլս այս բոլորիցս յառաջածութիւն եւ գոյա-
ցութիւն, եւ նմա փափաքէ ամենայն իմանալիքն եւ բա-
նաւորք գիտողապէս, իսկ նուաստագոյնքն քան զնոսա-
ըստ զգալեաց, եւ այլքն ըստ կենդանական շարժութեան
եւ կամ գոյեղինիւ եւ բնաւորականաւ պատեհութեամբ»²³⁰:

Ինչպես կտեսնենք, հեղինակն իբրև օրհնաբանության
եղանակներ այստեղ պարզաբանում է նաև իր հաստատող
և ժխտող աստվածաբանության սկզբունքները²³¹, որոնք
հետագայում, առավել խորացված ներկայացվում են «Յա-
ղագս խորհրդականի աստուածաբանութեան» երկում:

Դիոնիսիոսի զարգացրած փիլիսոփայական համակար-
գը հիմնական իր մասերով դարձյալ ներառվում է աղոթքի
տեսության, օրհնաբանության և փառատրության ձևերի
ու ներքին օրինաչափությունների, «սրբազնագույն,
խորհրդագրած» իմաստի ու նշանակության մեկնաբանու-
թյան ծիրի մեջ:

Աղոթքի տեսությունը, ինչպես պարզվում է վերը
նշված երկի հետագա շարադրանքից, նաև Հեռոթեոսի՝ աստ-
վածային այդ օրհներգուի «Աստվածաբանական սկզբունք-
ների» հիմնական շերտերից է, որը հանդես է գալիս իբրև
օրհնաբանություն կամ օրհնաբանության տեսություն։
Սրան Դիոնիսիոսը բազմիցս և տարբեր ձևակերպումներով
անդրադառնում է իր երկերի տարբեր գլուխներում և
հատվածներում։

²³⁰ Նույն տեղում, էջ 134:

²³¹ Նույն տեղում, էջ 134-135:

Այսպես, օրհնաբանությունը ներկայացվում է «Յաղագս աստուածայնոցն անուանց» երկի IV գլուխ երեք ենթագլուխներում (15-17)²³²: Առհասարակ, ինչպես նշեցինք, այս երկի գլուխների մեծ մասը հորինված է որպես աստվածաբանական հիմներ՝ միախառնված փիլիսոփայական-գեղագիտական տրամախոսության հետ: «Յաղագս Բարոյ, Լուսոյ, Ազնուի, Տոփման, Զարմացման...» ենթագլուխում, որի խորագիրն իսկ վկայում է նրա բնույթը, կարդում ենք. «Այլ զայսոսիկ է ի նշանականին աստուածաբանութեան: Իսկ այժմ զիմացականն բարիանունութիւն է աւրհնաբանելի եւ ասելի...»²³³:

Այդ է խորհրդանշում և այս երկի բանաստեղծական բնաբանը, որ բացակայում է հայերեն թարգմանության մեջ.

Աստվածախոս շուրթեր՝ լուսեղեն մտքի
ծիրում ընկղմած
վերառաքում ես սուրբ անունների գեղեցկությունը...
Ու արարում ես դու աստվածածայն
օրհներգություններ...²³⁴

Հեղինակն ամենուրեք օգտագործում է օրհներգության, օրհնաբանության ժամրին հատուկ բառապաշար և ճարտասանական բարձրարգիեստ ոճ:

²³² Նույն տեղում, էջ 167-183: Արանց առանձին հատվածներ ներկայացնում ենք Համապատասխան՝ տարփողական աստվածաբանությանը և զարմանքի՝ սքանչացման հասկացությանը նվիրված գլուխներում:

²³³ Նույն տեղում, էջ 158:

²³⁴ *Տե՛ս՝ Дионисий Ареопагит, Сочинения. Максим Исповедник, СПб, 2002, с. 207:*

Գեղագիտական-գեղարվեստական այս շերտը, ճարտասահնական այս արվեստն ու յուրահատուկ բառագանձը խորապես ընկալել, ստեղծագործաբար յուրացրել ու ծավալել է Գրիգոր Նարեկացին։ Դիոնիսիոսի երկերի այս յուրահատուկ բառապաշարի ազդեցությունը հատկապես ի հայտ է գալիս Անանիա Նարեկացու, Գրիգոր Նարեկացու ներբողներում։

Սրբագան այդ օրհնաբանությունները Դիոնիսիոսը հնչեցնում է նաև այլ գլուխներում՝ ի հայտ բերելով աստվածաբանական նորանոր խորքեր ու բանաձեռումներ։ «Յաղագս Էի, յորում եւ յաղագս յարացուցից» գլխում կարդում ենք.

«Արդ զայսոսիկ փափագէ բանս աւրհնաբանել զնախախնամութեանն յայտնաբանականսն աստուածանունութիւնս...»

Եւ զամենայն բարերարութեան պատճառն է աւրհնաբանելի՝ եւ Աստուած, եւ կեանս, եւ իմաստութիւն, [եւ] էացուցիչ, եւ կենդանաբար, եւ իմաստատուր պատճառ էութեան, եւ կենաց, եւ մտաց, եւ բանի, եւ զգայութեան հաղորդեցելոցն»²³⁵։

Այս դրվագում հեղինակը փափագում է խոսքով օրհնաբանել աստվածային նախախնամության հայտնաբանական աստվածաբանության ներմիության մասին։ Բնագրի այս խորքային

ինչպես տեսնում ենք, սա հեղինակային վկայություն է օրհնաբանական խոսքի և հայտնաբանական աստվածաբանության ներմիության մասին։ Բնագրի այս խորքային

²³⁵ Նույն տեղում, էջ 184։

շերտերից և միահյուսումից է գոյավորվում հեղինակի զարմանալի ոճը. օրհնաբանության միջոցով՝ հեղինակը նաև հայտնաբանում է՝ հասնելով փիլիսոփայական խոր ընդհանրացումների:

Իբրև հավիտենական կենաց ճշմարտություններ՝ Դիոնիսիոսն օրհնաբանում է մարդկային խոսքը, միտքը, իմաստությունն ու հանճարը՝ իբրև մտավոր շարժում, իբրև «ինքնիմաստություն»²³⁶:

Իբրև «գերիմաստ իմաստասիրություն»՝ Դիոնիսիոսն օրհնաբանում է աստվածային արդարությունը՝ նորապլատոնական փիլիսոփայության բարձրագույն բարոյագիտական աստիճանը. որով իմաստասերը ձգտում էր աստվածանմանության՝ *Oρχնաբանության* այդ ոգին պահպանվում է անգամ փիլիսոփայական ամենաբարդ խնդիրներն ու հասկացությունները քննելիս, ինչպես «Յաղագս մեծի, փոքու, նորին, այլոյ, նմանոյ, աննմանոյ, կայից եւ շարժութեան, հաւասարութեան» գլխում. «Արդ մեծ աւրհնաբանի Աստուած յասացեալսն եւ ի մեծութեան եւ ի սիք նուրբ զաստուածայինն նուազութիւն ցուցանելով... որպէս նմանից եւ նմանութեանց գոյացուցիչ, եւ աննման ամենեցունց... եւ կայուն, եւ անշարժ, եւ նստեալ յաւիտենական, եւ շարժեալ... եւ որքան այլ ինչ համազաւրք՝ այսոցիկ աստուածանութիւնք յասացելոց աւրհնաբանին»²³⁸:

²³⁶ Նույն տեղում, էջ 192, 197:

²³⁷ Նույն տեղում, էջ 198, 201, 203:

²³⁸ Նույն տեղում, էջ 204:

Նույն պատկերն է «Յաղագս Ամենակալին, հնոյն աւուրց, յորում եւ յաղագս յաւիտենի եւ ժամանակի» գլխում, ուր Աստված օրհնաբանվում է իբրև ժամանակի և հավիտենության սկզբնապատճառ:

«Ժամ է այժմ բանիս զբազմանունն Աստուած որպէս զամենակալ եւ որպէս զհին աւուրց աւրհնաբանել...

Իսկ Աստուած որպէս զյաւիտեան եւ որպէս զժամանակ աւրհնաբանելն, որպէս ամենայն յաւիտենի եւ ժամանակի պատճառ...»²³⁹:

Բերենք ևս մի քանի բնորոշ օրինակներ.

«Յաղագս խաղաղութեան...

Արդ, բեր զաստուածայինն եւ ժողովապետն խաղաղութիւն աւրհնութեամբք խաղաղականաւք վերահռչակեսցուք»²⁴⁰:

«Յաղագս Սրբոյն Սրբոց, Թագաւորին թագաւորաց, Տեառն տերանց, Աստուածոյ աստուածոց:

Այլ վասն զի եւ յաղագս այսոցիկ որքան ինչ ասել պարտ էր՝ զարժանն առաք վախճան, աւրհնաբանելի է մեզ զանբաւ անունն եւ որպէս զՍուրբ սրբոց, եւ որպէս զթագաւոր թագաւորաց, թագաւորելով յաւիտեան եւ յաւիտեանս յաւիտենից...»²⁴¹:

Օրհնաբանությունը, փառատրությունն ու սրբասացությունը կենտրոնանում է Սուրբ Երրորդության վրա,

²³⁹ Նույն տեղում, էջ 209, 211:

²⁴⁰ Նույն տեղում, էջ 212:

²⁴¹ Նույն տեղում, էջ 217:

այն տարփողվում է իբրև Առաջնամիակ, Սկզբնապատճառ և Աստվածակալություն.

«Յաղագս Կատարելոյն եւ Միոյ.

Արդ ի վերայ նորին բանին եթէ թուեցի՝ առաւելագոյն դեգերեսցուք, քանզի աստուածաբանութիւնն ըստ ամենայնի պատճառին եւ զամենայն, եւ համանգամայն զամենայն ստորոգէ, եւ որպէս Կատարեալ, եւ որպէս զՄի աւրհնաբանէ...

Արդ այսու աստուածաբանութիւնն զբոլորն աստուածապետութիւն որպէս զամենեցունց պատճառ աւրհնաբանէ միոյ մականունութեամբ, եւ մի Աստուած Հայր եւ մի Տէր Հիսուս Քրիստոս, եւ մի նոյն Հոգին Սուրբ՝ վասն գերազանցեալ անբաժանութեանն բոլոր աստուածականին միութեան...

Եւ պիտոյ է եւ մեզ ի բազմացն ի Մին դառնալ զաւրութեամբ աստուածականին միութեան եւ միեղինաբար աւրհնաբանել...»²⁴²:

Աստվածաբանական հայտնությունների, օրհնաբանությունների այս շարքը կարելի է երկար շարունակել:

Դիոնիսիոսի տեսական դատողություններն աստվածաբանության օրհնաբանական բնույթի մասին ձեռք են բերում առավել գեղարվեստական ինքնաբուխ հնչերանգներ ու երանգավորումներ, ճարտասանական-գեղարվեստական արտահայտչականություն:

Այսպիսին է «Յաղագս կենաց» ենթագլուխը, որ մի կատարյալ ներբող, օրհներգություն է կյանքին և բնությանը.

²⁴² Նույն տեղում, էջ 219-220:

«Իսկ այժմ աւրհնաբանելի է մեզ զկեանսն յաւիտենից,
յորմէ ինքնակեանք եւ ամենայն կեանք...

Եւ ամենայն կեանք եւ կենդանական շարժութիւն ի
կենացն, որ գերագոյն է քան զամենայն կեանս եւ զամե-
նայն սկիզբն ամենայն կենաց: Ի նմանէ եւ անձինք զանա-
պականութիւնն ունին եւ կենդանիք ամենայն, եւ տունկը²⁴³
ըստ յետին հնչման նմանութեան կենաց ունելով զկեանսն...

Ի նմանէ կենդանանայ եւ ջեռնու կենդանիք ամենայն
եւ տունկը: Եւ թէպէտ իմանալի ասացից, թէպէտ բանա-
կան, թէպէտ զգայական, թէպէտ սննդական եւ աճողական,
թէպէտ զինչ եւ իցէ կեանս, կամ կենաց սկիզբն, կամ կե-
նաց էութիւն՝ ի նմանէ կեայ եւ կենդանանայ ի գերագոյն
քան զամենայն կենացն, եւ ի նմանէ ըստ պատճառոյ միա-
տեսակապէս նախագոյացաւ: Զի եթէ գերագոյն կեանք եւ
կենդանապետական կեանք է, եւ ամենայն կենաց է պատ-
ճառ, եւ կենդանածին, եւ լցողական, եւ անջատողական
կենաց: Եւ յամենայն կենաց է աւրհնաբանելի ըստ բազմա-
ծութեանն ամենայն կենաց, որպէս ամենեւիմբ եւ ամենայն
կենաւք տեսեալ եւ աւրհնաբանեալ, եւ որպէս անկարաւտ,
յաւէտ լի եւ գերալիր կենաւք, ինքնակեանք եւ որպէս
վեր քան զամենայն կեանս կենդանաբար, եւ կամ զիարդ
եւ իցէ արդեաւք զանբարբառելի կեանսն մարդկաւրէն ոք
աւրհնաբանեացէ»^{243:}

*

Դիոնիսիոս Արեոպագացու տեսական համակարգի զո-

²⁴³ Նույն տեղում, էջ 190-192:

րեղ ազդեցությունը նկատելի է հատկապես «Ճառ սրբոյն Գրիգոր Նարեկացւոյ ասացեալ» երկի վրա, որին այս տեսակետից անդրադարձել ենք Նարեկյան դպրոցի ներկայացնուցիչների բնագրագիտական հետազոտություններին նվիրված բաժնում²⁴⁴: Այս ճառում ևս պատկերվում է աշրաբչության, Առաջնամիակից լուսեղեն բխումի, մարդու՝ երկնային ու երկրային քահանայապետությունների հանգույցի, օրհնաբանությունը: Այստեղ ներկայացնենք միայն «Ճառի» և արեոպագիտյան բնագրերի համեմատության մի օրինակ.

«Այսուհետեւ դարձուսցուք զիմանալի աչս մեր ի մեզ՝ հայելովն ի վեր, ի բարձունս բարձանց, եւ ի յերկինս երկնից եւ ի սուրբն սրբոց, որ անդը է, քան զիմանալի գաւառն հրեղինաց, ուր միայնակ Սուրբ Երրորդութիւնն ըրջի, զամենայն արարածս արտաքս թողեալ առաջին վարագուրաւն զիմանալիսն յինքենէ, եւ երկրորդաւն զմեզ ի նոցանէ, զոր եւ աստուածաբանեալ փառաւորեսցուք աստուածաբան փառատրութեամբ՝ աւրհնելով զնա յերիս երեւեալ երեսս եւ անձինս...»²⁴⁵:

«Եւ զամենայն սրբազան աւրհնաբանութիւն աստուածաբանիցն գտցես առ ի բարերար յառաջածնութիւնն աստուածապետութեանն յայտնաբանապէս եւ աւրհներգաբար յաւրինեալ...

Իսկ այժմ համեմատաբար ի ձեռն սրբազանից վարագուրից զասացելոցն եւ զքահանայապետականաց աւան-

²⁴⁴Տե՛ս Հ. Թամրապյան, Գիրք Ա, էջ 262-268:

²⁴⁵Տե՛ս «Ճառ սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ ասացեալ», ՄՀ Ժ, էջ 1068:

դութեան մարդասիրութեանն՝ զգալեաւքս զիմանալիսն եւ գոյիւքս զգերագոյնսն ծածկելով, եւ կերպաւորութիւնս եւ գաղափարս եղեալ անկերպիցն և անտպից, եւ զգերաբունն եւ զանձեւ պարզութիւնն զանազանութեամբ բաժանականացս նշանակաց բազմացուցեալ և ստեղծեալ»²⁴⁶:

Գրիգոր Նարեկացու Ճառում ևս աստվածաբանությունը, փառատրությունն ու օրհնաբանությունը շաղկապված են իրար իբրև միեղեն հորինվածք և բնագիր:

Սրա վառ արտահայտությունները երեան են գալիս նաև Գրիգոր Նարեկացու տաղերում, «Ճառ լուսոյ Խաչի» ներբողում, Հոբի գրքի «Ո՞վ է Դա» հատվածի բանաստեղծական մեկնություններում:

Գրիգոր Նարեկացու տեսիլքը ներշնչված է Դիոնիսիոսի «զարմանահրաշ» ներթափանցումներով և հիերարխիկ տեսությամբ:

«Ճառ լուսոյ Խաչի» ներբողի նախադրության մեջ Գրիգոր Նարեկացին մեկնաբանում է Եսայու մարգարեության մի հատվածը. «Զերկին աթոռ իմ և զերկիր պատուանդան ոտից իմոց» (Ես. ԿԶ. 1)` փորձելով բացահայտել պատկերի «երկկերպեան» իմաստը. այն է՝ ինչպես են մարդու մեջ միացել «հողազանգուած միեղենութիւնն» ու «անյաւդական եւ լուսանշոյլ պայծառ պարզութիւնն», այսինքն՝ աստվածային էությունը:

«Վասն զի հրաշազնին զաւրութիւն ընդգրկեալ ի կայս կրաւնաւորական երկկերպեան պատկերի իւրոյ բանիս տեսութիւն, եւ որպէս մարմնոց շարընթացելոց ի յոքունց

²⁴⁶ Դիոնիսիոս Արեոպագացի, Էջ 131-132:

նիւթոց ի միեղինութիւն հողազանգուած մասանց մսեղեաց զանունակն քանակութեան չափաբերական բարբառով կշռեաց: Իսկ անյաւղական եւ լուսանշոյլ պայծառ պարզութիւնն զիա՞րդ ըստ այսմ նմանութիւն մասին ձեւասցի»²⁴⁷:

Աստվածային գերալիր էությունը խառնված է, հոգակցված է զգայական աշխարհին, գոյության ստորին աստիճաններին (իր տաղերում Նարեկացին օգտագործում է այս առումով «էակցեալ» եզրաբառը):

«Ապա խոստովանեալ՝ միշտ հաւատացի յաւարտումն գերալլութեան էութիւն նորա, եւս եւ ի ստորինս կոյս ծանուցեալ յաւդատեսակ խառնութիւն նորին»²⁴⁸:

Աստվածայինով ներթափանցված կյանքի այս գաղափարն է, ահա, Գրիգոր Նարեկացու ներբողի և օրհնաբանությունների հիմքում:

Ողջ բնությունը, անտառն ու բույսերն Արարչի հայտնությունից, նրա «կենսաբեր գալուստից» «հոգեպես» ցնծում են և հրճվում, անձայն բարբառով, անխոս շուրթերով տարփողելով նրան («բազմազրուագ ձայնիւ նուագեն»): Եվ բանական մարդն է՝ էի պատկերն ու օրինակը, «երանությամբ» գլխավորում այդ համատիեզերական «բսող երգաբանությունը», Արարչին և իր արարչագործությունը: Ինչպես տեսնում ենք, ամեն ինչ դարձյալ հանգում է աղոթքին, օրհնաբանությանը, երգաբանությանը:

«Եւ ըստ այլասեռն զարմ՝ ծառք բուսոյ բնաւին ան-

²⁴⁷ Գրիգոր Նարեկացի, «Ճառ լուսոյ Խաչի», ՄՀ ԺԲ, Էջ 930:

²⁴⁸ Նույն տեղում:

տառաց համայն հրճուանաւք խրախուսեալ ցնծան հոգեւ պէ՞՝ զյայտնութիւն երեւման Հաստչին ծանուցեալ (Հմմտ. Սաղ. ՂԷ, 12-13):

Եւ արդ, եթէ այսոքիկ ստեղծուածք փոքունք մեծն արարչութեան վայելչական եւ բերկրապարարն լրութեամբ զԾնկաւղին եւ զՀաստաւղին կենսաբեր գալուստն ի բարբառ անձայն անբան բերանոյ, եւ ի ձեռս անյայտս անտիպ տեսակի, եւ յոտս անբերողս բնութեանն բարձից բազմադրուատ ձայնիւ նուագեն, քանզի թէ գիրն ստուերականս պատճառ փառաց Անեղին պատուի, իսկ խաչին երեւեալ նշան՝ ամենայնիւ բառնիւ ներբողեալ եւ ծածկեցեալ փառացն յայտնարան...

Քանզի յայսքանեաց շնորհաց հաղորդեալ եւ երանութեամբ միշտ գլխաւորեալ, ապա զո՞րպիսի ըղձական զնուիրեալ ձայն ընձեռեսցէ բանականս մարդ՝ ունող զաւրինակ էին պատկերի: Նա զի եւ հոլովումն յաւդուծոյ բղխման երգաբանութեանս...»²⁴⁹:

Համեմատության համար մեջ բերենք հատվածներ Դիոնիսիոսի երկերից.

«Արդ զիա՞րդ զնա աստուածաբանքն որպէս զզաւրութիւն աւրհնաբանեն... կամ զիա՞րդ առցուք ի վերայ նորա զհզաւրանունութիւնն...

Յառաջ գայ... զաւրութիւն եւ ի մարդիկ, եւ ի կենդանիս, եւ ի տունկս, եւ ի բոլորն ամենայնի բնութիւն: Եւ զաւրացուցանէ զմիաւորեալսն առ միմեանց սէր եւ կցորդութիւն...

²⁴⁹ Նույն տեղում, էջ 930-931:

Եւ զամենեցունց կարգս եւ բարեղրութիւնս ի յիւր բարին հասուցանէ, եւ զանմահսն կենդանիս հրեշտակականացն միութեանց անբիծս պահէ, եւ զերկնայինսն եւ լուսաւորականս եւ աստեղացն էութիւնս եւ կարգս անայլայլելիս՝ եւ յաւիտեան գոլ տայ զաւրութիւն...

Եւ զմիմեամբք յաւդաւորութիւն տարեցս եւ խառնումն անշփոթելի եւ անանջատելի, եւ զհոգւոյ եւ մարմնոյ շաղկապութիւն շարունակէ, եւ զտնկոց սննդականսն եւ աճողականս զաւրութիւն ի վեր շարժէ: Եւ ունի զգոյեղէնսն զաւրութիւնս բոլորիցս... եւ զնոյն զաստուածանալն պարզեւէ՝ զաւրութիւն չնորհելով աստուածացելոցն»²⁵⁰:

«Արդ՝ զայս ամենայն ի վերայ գերազանցեալ պատճառին արձակաբար է աւրհնաբանելի, եւ ասելի է գերունակ սրբութիւն, եւ տիրութիւն, եւ թագաւորութիւն գերակայ եւ պարզ աստուածութիւն... եւ վասն զի գերալիր է ամենայնիւ ամենայնի պատճառը ըստ միոյ քան զամենայն գերունակ գերազանցութեանն՝ Սուրբ Սրբոց աւրհնաբանի եւ զայլսն ըստ գերաբուղի պատճառին եւ արտաքս համբարձեալ գերունակութեանն»²⁵¹:

Դիոնիսիոսյան օրհնաբանական աղոթքի տեսությունը, աղոթքներով՝ իբրև հրեղեն «բազմալոյս» լարով երկինք բարձրանալու պատկերը բառաստեղծման, պատկերավորման նոր հնարանքներով, օգտագործում է Գրիգոր Նարեկացին (Հոքի գրքի մի հատվածի՝ «Ո՞վ է դա»-ի մեկնությունը²⁵²):

²⁵⁰ Դիոնիսիոս Արեոպագացի, էջ 198-200:

²⁵¹ Նույն տեղում, էջ 218:

²⁵² Պահպանվել է Յոք՝ Լ.Հ.-8.թ.30 տեղիի մեկնությունը:

Այս հատվածում Գրիգոր Նարեկացին «բացում» է, հոգևոր էքստազի մեջ մեկնում է իր ստեղծագործության նորարարական տարերքը. բանաստեղծի «հոգևոր շուրթերը նորասացիկ խոսք և նոր օրհնաբանություն են պտղաբերում՝ իբրև հրեղեն լար սուրբ աղոթքներ երկինք առաքելով»:

Արդ, ո՞վ երանելի ժառանգք

Եւ որդիք Վերին Երուսաղէմին,

Եւ մանկունք լուսեղէն եւ պանծալի առագաստի,

Լուարո՛ւք զայս բան նորասացիկ եւ

աւրհնութիւն նոր...

Եւ ընծայաբերական, եւ պտղաբերութիւն

հոգեւոր շրթանց

Եւ ծաղիկ աստուածային մերոց խորհրդոց...

Արդ, զայս նոր ոսկէճաճանչ պսակ եղեալ

ի գլուխս ձեր՝

Գոհացարուք զպսակողէն եւ եկայք ընդ մեզ,

Զայնակցեալ փառաւորեսցուք զհիմնարկողն երկնի

եւ երկրի...

Իբրեւ հրեղէն լար՝

Զսուրբ զաղաւթս յերկինս առաքեսցուք...²⁵³

Աղոթքի, օրհնաբանության, աստվածային լուսեղեն բխումների, բնությունների փոխթափանցման ու այս ամենի մեջ բանական փառաբանության տեսությունը, ինչպես նշել ենք, անմիջականորեն շաղկապված է տարփողական (էքստատիկ) աստվածաբանությանը:

²⁵³ Գրիգոր Նարեկացի, «Մեկնութիւն «Ով է դա»-ի», ՄՀ ԺԲ, Էջ 508-509: Այս մասին տե՛ս Հ. Թամրապյան, Գիրք Ա, Էջ 313-315:

ՏԱՐՓՈՂԱԿԱՆ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ ՏԱՂԵՐԸ

Դիոնիսիոս Արեոպագացու գոյաբանական-գեղագիտական ուսմունքում, ինչպես նորպլատոնական փիլիսոփայական համակարգում կարեոր տեղ է գրավում հոգեոր էքստագի տեսությունը:

Այն առանձին կարեորություն ունի Գրիգոր Նարեկացու միստիկ աստվածաբանության մեջ՝ կապված հոգեոր կենցաղավարության, հատկապես աղոթքի փորձընթացի և բանաստեղծական արվեստի հետ։ Այս հարցին անդրադարձել ենք նաև նախորդ գլուխներում։ Հոգեոր տարփանքը, հափշտակությունը, բերկրանքը, պայծառացումը գերագույն նպատակ էր համարվում միստիկ հայեցողի և արվեստագետի համար՝ իրեւ աստվածայինին մերձենալու, նրա ոլորտները թափանցելու, նրան միախառնվելու միջոց։ Այս պարագայում ևս դպրոցի ներկայացուցիչների համար սկզբնաղբյուր է հանդիսացել Դիոնիսիոս Արեոպագին՝ և՛ աղոթքի, և՛ պատկերի գոյաբանական-իմացաբանական նշանակության, և՛ էքստատիկ աստվածաբանության երրորդ մակարդակի՝ հոգեոր տարփանքի իր տեսությամբ, որոնց նա առանձին գլուխներ է նվիրել իր աշխատություններում։

Աշխատության նախորդ մասերում մենք անդրադարձանք Դիոնիսիոսի էքստատիկ աստվածաբանության նախորդ երկու աստիճաններին՝ նշանական և մերձակա աստվածաբանական մակարդակներին, որոնք նախապատրաստում, նախանշում են «խորհրդագործ» անձի էքստատիկ

Հայեցողության, ներքին խոկման, վերառաքման ուղիներն ու եղանակները:

Դրան հաջորդում է բուն՝ հոգևոր տարփանքի տեսությունը՝ որ նոր՝ գոյաբանական, իմացաբանական և գեղագիտական խորքեր է բացահայտում:

Փորձենք ներկայացնել հոգևոր էքստազի, աստվածային ներշնչանքի, տարփանքի նրա տեսությունը: Այս խնդրին են նվիրված «Յաղագս աստուածայնոցն անուանց» երկի «Յաղագս տոփման», «Յաղագս զարմացման» և «Սրբոյն Յեռեթէոսի ի տոփականացն աւրհնաբանութեանց (IV. 15-17) գլուխները²⁵⁴: Հեղինակն իր այս տեսությունը «տոփողական (էքստատիկ) աստվածաբանություն», «տոփման գիտություն» է անվանում²⁵⁵: Այն խոր աղերսներ ունի Գրիգոր Նարեկացու երկերի, հատկապես տաղերգության հետ:

Տարփանքը նույնանում է աստվածային սիրո հետ, և առ Աստված դարձողները «բաժանական և մարմնավայելուչ» սիրուց (նկատի ունի զգացական աշխարհն իր բազմազանությամբ, որ «գեղեցկագործել» է Արարիչը) պետք է բարձրանան առ «աստվածային միեղեն սերը»: Այդ միեղեն սիրով են ներթափանցված բոլոր գոյությունները:

«Զի թուեցաւ եւ ոմանց առ ի մէնջ սրբազնաբանողաց աստուածայնագոյն լինել զտոփմանն անուն զսիրոյն... Քանզի... հասարակաց գոլ ասեն աստուածաբանքն զսիրոյ եւ զտոփմանն անուն... Քանզի աստուածավայելչապէս

²⁵⁴ Տե՛ս Դիոնիսիոս Արեոպագացի, էջ 163-166, 166-167, 167-183:

²⁵⁵ Նույն տեղում, էջ 164-165:

արդարեւ տուփմանն ոչ միայն առ ի մէնջ, այլ եւ ի նոցունց ասացելոցն աւրհնեցելոց՝ զբազմութիւնն ոչ զատեալ ի միատեսակութենէ տուփականին աստուածանունութեան, ընտանեբար ինքեանց ի բաժանական եւ մարմնավայելուչ եւ անջատեալն գլորեցան։ Որ ոչ է ճշմարիտ տուփումն, այլ ուրուական ինչ կամ անկուած ինչ արդարեւ տուփմանն, քանզի անզատելի է բազմութեանն միեղինութիւն յաստուածայնոյն եւ միոյ տուփմանէ»²⁵⁶։

Աստվածային տարփանքը Դիոնիսիոսի գոյաբանության, տիեզերաբանության ամբողջական շղթայի կարևոր օղակն է, տիեզերական շարժման և գոյակարգի սկիզբներից մեկը։ Ազնիվն ու Բարին՝ որպես աստվածային սկիզբներ, տիեզերական ներդաշնակության ազդակներ, կրողներ և շարժիչ ուժեր, ներգործում են գերագույն էքստազի՝ աստվածային սիրո միջոցով, որով ներթափանցված են ողջ տիեզերքը, տարերքները, «վերին և ստորին» աշխարհները։ Այդ տարփանքի, սիրատենչության, սիրաբաղձության շնորհիվ «ստորինները» ձգտում են «վեհագույններին», «վեհագույնները»՝ «ստորիններին», և բոլորն էլ գտնվում են նախախնամության տիրույթում։

Ամենայնի պատճառը Աստվածն է՝ այդ աստվածային տարփանքի, սիրազեղության սկզբնաղբյուրը։ Աստվածային այդ տարփանքը սկիզբն է բարու և գործում է հանուն բարու։

«Յաղագս տուփման

Արդ ամենեցունց է ազնիւն եւ բարի փափաքելի եւ

²⁵⁶ Նույն տեղում։

տուփելի եւ սիրելի: Եւ վասն նորա աղագաւ եւ տրուպքն ի վեհագոյնմն դարձողապէս տռփին, եւ կցորդաբար համատարերքն ի համակարգսն, եւ վեհագոյնքն ի տրուպսն նախախնամապէս... եւ ամենայն ինչ ազնուին եւ բարւոյն փափաքելով առնէ եւ ախորժէ...

Համարձակեսցի եւ զայս ասել ճշմարիտս բան՝ եթէ եւ նոյն ինքն ամենեցունց պատճառն վասն բարերարութեանն գերազանցութեան յամենայն ինչ տռփի, զամենայն ինչ առնէ, զամենայն ինչ կատարէ, զամենայն միահամուռ ունի, զամենայն սնուցանէ. Եւ է աստուածային տռփումն բարի բարւոյ վասն բարւոյ: Քանզի ինքն բարեգործողն տռփումն էիցս՝ ի բարւոջն ըստ գերազանցութեան նախագոյ՝ ոչ եթող զնա անծին մնալ ի յինքեան, այլ շարժեաց զնա ի գործաւորութիւն ըստ ամենեցուն ծնողականին գերազանցութեան»²⁵⁷:

Նախագոյ աստվածությունը՝ ծնելով բարին, անծին չի թողել նրան՝ այլ տվել է աստվածային տարփանքով էություններ ծնելու գերագույն կարողություն, որով նա արարում է աշխարհները:

Հոգեոր սերը, տարփանքը (տռփումը) աստվածային զորություններ են՝ չաղկապված Ազնիվի և Բարու նախասկիզբների հետ՝ նրանք են չաղկապում, չարունակում, համակարգում իմանալի և զգալի աշխարհները՝ վերնայիններին շարժելով դեպի նվաստագույնները և հակառակ՝ խոնարհագույններին դարձնելով առ առավելագույնները:

«Արդ որք ուղղակի լսեն զաստուածայինսն, ի վերայ նորին զաւրութեան դնի առ ի սրբազանիցն աստուածաբա-

²⁵⁷ Նույն տեղում, էջ 163:

նից սիրոյ և տռվման անուն ըստ <աստուածայնոցն> յայտնաբանութեանց: Եւ է այս միացուցչի զարութեան եւ շաղկապականի եւ առաւելապէս շարունականի ի յագնուին եւ ի բարւոջ, վասն ազնուի եւ բարւոյ նախագոյացելոյ, եւ յագնուէ եւ ի բարւոյ վասն ազնուի եւ բարւոյ տուեցելոյ, եւ միահամուռ ունելով գհամակարգսն ըստ հասարակորդականին զմիմեանս ունակութեան, շարժելով զառաջինսն առ ի նուաստագունիցն նախախնամութիւն եւ սերտելով զիսոնարհագոյնսն դարձիւ առաւելագունիցն»²⁵⁸:

Ողջ տիեզերքը ներթափանցված, շաղկապված է աստվածային սիրո տարփանքով՝ «աստվածագույն էություններից» մինչև «նվաստագույն արարածները»:

Աստվածային սիրո, տարփանքի այդ գաղափարը՝ իբրև աստվածային ոլորտների, մարդու և բնության միավորող տարերք, առավել ծավալվում է «Յաղագս զարմացման» գլխում:

«Է եւ զարմացուցիչ աստուածայինն տռվումն, ոչ թողլով ինքեանց լինել զտռվեալսն այլ տռվելեացն: Եւ յայտնեն առաւելագոյնքն ի նախախնամութենէ եղելոյ ի խոնարհագոյնսն, եւ համատարերքն ի միմեանց շարունակութենէն, եւ նուաստքն յառ առաջինսն յաստուածայնագունէն դարձմանէ»²⁵⁹:

Աստվածային սերը շարժող ուժ և զորություն է, զգալի, երկելի է դարձնում Բարու և Ազնիվի ներգործությունը, բխում է Բարուց և դառնում առ Բարին:

²⁵⁸ Նույն տեղում, էջ 165-166:

²⁵⁹ Նույն տեղում, էջ 166:

«Եւ այսու սիրելի և տռփելի կոչեն զնա՝ որպէս զազ-նիւ եւ բարի, եւ տռփումն դարձեալ եւ սէր՝ որպէս շարժո-ղական համանգամայն եւ որպէս վերածու զաւըութիւն գո-լով ինքեամբ, միայն զնոյն ի ձեռն ինքեան ազնիւն եւ բա-րի, եւ որպէս երեւեցուցիչ գոլով ինքեան ինքեամբ եւ ար-տաքս որոշեցելոյն միութեան բարի յառաջ ճանապարհ եւ միաւորական շարժումն, պարզ, ինքնաշարժ, ինքնաներ-գործ, յառաջագոյն գոլով ի բարւոջն, եւ ի բարւոյն էիցս բղխելով, եւ անդրէն ի բարին դառնալով»²⁶⁰:

Ազնիվն ու Բարին՝ իբրև արարչական պատճառներ, ստեղծում են տիեզերքը «գեղեցկության տարփանքով». «Եւ սկիզբն ամենայնի ազնիւն է, որպէս արարչական պատճառ եւ շարժող բոլորիցս եւ միահամուռ ունող իւրոյն գեղեցկութեան տռփմամբ եւ բովանդակութիւն է ամենայ-նի եւ սիրելի որպէս կատարողական պատճառ»²⁶¹:

Աստվածային տարփանքը, սերը բխում է Բարու էութ-յունից և դառնում է առ նա: Նա շրջագայում է տիեզեր-քում, նա «մշտնջենավոր շրջագայող» է Բարու «անմոլոր հոլովույթի» ծիրում, որով ներթափանցված ու ներդաշ-նակված է տիեզերքը:

Այս հատվածն ակնհայտորեն հիշեցնում է աստվածա-յին էությունների և մարդու հոգեմտավոր, բանական շարժման հեղինակի տեսությունը, ըստ որի՝ բանական մարդուն տրված է բանական աշխարհների շրջանաձև շար-

²⁶⁰ Նույն տեղում, էջ 167:

²⁶¹ Նույն տեղում, էջ 160:

ժումը՝ ասես «մի բոլորակի մեջ նրան շարժվելու անմոլություն է տրված»:

«Եւ շարժիլ ասին աստուածայինն իմացութիւնք շրջագայար միացեալք սկզբմամբ եւ անվախճանիւք լուսափայլութեամբք ազնուին եւ բարւոյ...»

Իսկ անձին շարժութիւն է շրջագայութեամբ, յինքն մուտն արտաքուստ կուսէ եւ իմանալեացն նորա տեսութեանց միատեսակք շարամանութիւնք, որպէս ի բոլորակի իմիք անմոլորութիւն պարզեւեալ նմա...»²⁶²:

Նույն կերպ շրջագայում է նաև աստվածային սերը՝ տարփանքը:

«Որով եւ զանվախճանութիւն իւր եւ զանսկզբնութիւն ցուցանէ առաւելապէս աստուածային տուփումն, որպէս զշրջագայ ինչ մշտնջենաւոր, վասն բարւոյ, ի բարւոյ եւ ի բարւոջ, եւ ի բարի անմոլար հոլովիւք շուրջ ընթացեալ եւ ի նորին, եւ ըստ նորին, եւ յառաջ գոլով միշտ, եւ մնալով, եւ հասանելով»²⁶³:

Աստվածային տարփանքը հատուկ է աստվածային էություններին, մարդուն և բնությանը, վերիններին, ստորիններին և «Համատարերք» զորություններին:

Այս մասին խոսվում է «Արբոյն Յեռեթէոսի ի տուփականացն աւրհնաբանութեանց» գլխում.

«Զտուփումն թեպէտ աստուածային եւ թեպէտ հրեշտակական, թեպէտ իմանալի, եւ թեպէտ անձնական, եւ թեպէտ բնական ասասցուք՝ միաւորական իմն եւ <շարակա-

²⁶² Նույն տեղում, էջ 161:

²⁶³ Նույն տեղում, էջ 167:

լու> զաւրութիւն իմասցուք՝ զգերազանցագոյնսն շարժելով ի նախախնամութիւնս խոնարհագունիցն, իսկ զհամատարերսն դարձեալ ի կցորդականն զմիմեանս ունակութիւնս, եւ յետոյ զնուաստն առ ի վեհագունից եւ գերակայիցն դարձումն»²⁶⁴:

Այդ համընդհանուր տարփանքը «ժողովվում և շարափակվում է ամենայն էությունների Հոր ներսում»: Այդ ամենին իշխում է «ամենայն տոփման անբովանդակելի պատճառը», որին «բնակցապես» շաղկապված է ամենայն էությունների «հանրական տոփումը»:

«Այժմ անդրէն վերստին առեալ զամենեսին ի մի եւ ի շարափակեալն տոփումն, եւ յամենեցունց նոցա Հայրն հաւաքեալ ժողովեցուք ի բազմացն, նախ ի յերկուս ժողովեալ զնա տոփողականս ընդհանուր զաւրութիւնս, զորոց բուռն հարեալ ունի եւ իշխէ ամենայնի յամենեցունց գերագունէն ամենայն տոփման անբովանդակելին պատճառ, եւ առ որ յարձակի բնակցապես իւրաքանչիւր էիցս՝ որ յամենայն էիցս հանրականն տոփումն»²⁶⁵:

*

Աստվածային սիրո, տիեզերական տարփանքի՝ իբրև գոյաբանական սկզբէ գաղափարը գերիշող է Գրիգոր Նարեկացու տաղերում:

Այս տաղերի մեծ մասը աստվածային սիրո տարփողումներ են (բառեզր՝ որ առավել ճշգրիտ է արտահայտում նրանց էությունը):

²⁶⁴ Նույն տեղում, էջ 167-168:

²⁶⁵ Նույն տեղում, էջ 168:

Հիշենք «Տաղ Քառասնաւրեայ գալստեան Տեառն» քերթվածը, որ Աստծո մարդեղացման, գերագույն էություններից, սկիզբներից աստվածային տարփանքով բնության ստեղծման մի համընդգրկուն պատկեր է, ուր նույն սիրազեղության, սիրատարփության մեջ են բանական և զգայական աշխարհները.

Մինն էին ել ի նմինն ի յերկուց
Մի երկակի հանգոյն էից զուարձ միշտ.
Միշտ անբաւ այսր հրաշունակի բան,
Բան խորհրդաբեր եւթներգին աղի չափ.
Չափ վայր ասպարէզ իշեալ ի տեղի տարրայնոյ տարփ,
Տարփ ի վեր արփային տարփ,
Տարփ ի վայր նուսխայաւրէն ճեմ,
Ճեմ կուսինածոց ծաղիկ, վարդ փթթեալ
ի գիրկս մաւր...

(«Տաղ Քառասնաւրեայ գալստեան Տեառն»)²⁶⁶

Տիեզերական սիրո մեղեղին է հնչում «Տաղ Ծննդեան»-ում: Բանաստեղծն ինքը զգացմունքային էքստազի, սիրազեղության մեջ Քրիստոսի ծննդյան խորհուրդն ընկալում է աստվածային վայրէջքի և վերառաքման մեջ, երբ բնությունը բռնկված է աստվածային այդ սիրով, արարչագործ տարփանքով, և այդ սիրազեղության շղթայի մեջ է առնված մարդ արարածը: Այդ տաղը տիեզերական շրջապտույտի, բանական և զգայական աշխարհների փոխներթափանցման մի շրջապատկեր է՝ համակված աստվածային

²⁶⁶Տե՛ս ՄՀ ԺԲ, Էջ 635:

սիրով, բնության տարփանքով։ Գրիգոր Նարեկացին Քրիստոսի ծննդյան խորհուրդն ընկալում է աստվածային էռության լուսեղեն բխման և վայրէջքի, հոգու և բնության սիրատարփության տեսիլքներով և պատկերաշարերով։ Միեղեն այս աշխարհներն արարում են սերը, բարին, գեղեցկությունը։

Էին աջոյ աջոյ ձեռին,
Աջոյն իւրոյ աջ ընդ աջմէ
Հաւը յահեկէ լուսոյն փառաց։

Ի ծոց ծնողին ծագումն անուն,
Յարփւոյն ծագեալ, եկեալ ի սէր,
Կուսին ծնեալ գծոցոյ ծաղիկն։
Ծաղիկ ծոցոյ, ծոց հայրենի,
Ամպոյ նման իջեալ յերկնից,
Զսէր իւր ի մեզ քաղցրիկ ցաւղեալ։

Սէր ի յամպոյ, ամպ սիրաշարժ,
Աւգոյն հոսեալ ի նոյն գեղման,
Վայր իջուցեալ կաթս անձրեւաց։

Ի սիրոյ սէր ծանուցեալ,
Սիրաբողբոջ տարփմամբ լցեալ,
Սիրով ընդ սէր միաբանեալ²⁶⁷։

Բնությունը ներթափանցված է աստվածային սիրոս սրբազան բխումով, մարդն ինքը միացած է մշտնջենական,

²⁶⁷ Նույն տեղում, էջ 633։

մշտահոլով, մշտագեղուն արարչագործության այդ շղթային, միաբանված «գարունաբեր, գարունահրաշ, սիրաբողբոջ» այդ տարփանքին:

Նա՝ բանաստեղծը ևս արարում է՝ բռնկված աստվածային սիրո հրաշքով, զվարճության, ցնծության, միաբանության կոչելով օրհնաբանողներին:

Լուսինն ի լոյս լրումն եկեալ,
Ճոխ ճեմելով գիշերավարն
Հզկնի ճեմէր բարկ աստեղաւք:

Առաւաւտուն ցաւղիկն իջեալ
Ի նոր Սիոն, զծայրալն տուեալ
Քաղցը արեւուն, արուսեկին:

Գարունաբեր, գարունահրաշ,
Գեղ գովելի երփնազարդեալ,
Նոր հարսանեաց միաբանեալ:

Եկայք նոր մեք նորագուարճ,
Վառ ի վառեալ, տիպ ծալ ի ծալ,
Թըփոյն տերեւ յաւրինեսցուք:

(«Տաղ Ծննդեան»)²⁶⁸

Նորագվարճ ստեղծաբանողը, միացած աստվածային արարչագործության զեղուն շղթային, հորինում է գարնան տարփանքով վառվող թուփն ու տերևը, որն իբրև բնություն և բնապատկեր՝ տիպն է նախատիպի՝ աստվածայինի:
Այստեղ դարձյալ անհրաժեշտ ենք համարում մի գու-

²⁶⁸ Նույն տեղում, Էջ 634:

գաղրություն կատարել Դիոնիսիոսի «պատկերագրության», պատկերի տեսության և Նարեկացու տաղերի միջև։ Պատկերի, նշանակի և սկզբնատիպի տեսությանը նա անդրադառնում է «Յաղագս երկնայնոցն քահանայապետութեանց» երկի երկրորդ՝ «Եթէ վայելչաբար աստուածայինքն եւ երկնայինքն եւ ի ձեռն աննմանից նշանակաց երեւին» գլխում և այլուր²⁶⁹։ Պատկերագրության, պատկերաձեռության, հայտնաբանության (այսպես է անվանում նա իր տեսությունը) մի ուշագրավ նմուշ կա նրա «Յաղագս աստուածայնոցն անուանց» երկի երկրորդ գլխում («Յաղագս միաւորեցելոյ եւ անջատեցելոյ աստուածաբանութեանն»)²⁷⁰, որտեղ մեկնաբանվող պատկերները շատ են հիշեցնում նարեկացու վերոհիշյալ տաղերի պատկերները՝ մեկ անգամ ևս վկայելով, որ դրանք ազդել են տաղերի պոետիկայի վրա։

«Դարձեալ վասն զի է աղբիւրեղէն աստուածութիւն Հայր, իսկ Որդի եւ Հոգին աստուածածնող աստուածութեանն՝ եթէ այսպէս պիտոյ է ասել՝ բողբոջք աստուածատունկք եւ որպէս ծաղիկք եւ գերագոյնք լոյսք առ ի սրբազնիցն ասացելոցն առաք։ Իսկ եթէ զիա՞րդ են այսոքիկ՝ ոչ ասել եւ ոչ զմտաւ ածել է կարողութիւն»²⁷¹։

Հիշենք Գրիգոր Նարեկացու աստվածային սիրո և լուսազեղության պատկերները. «Կուսին ծնեալ զծոցոյ ծաղիկն», «սիրաբողբոջ տարփմամբ լցեալ», «արփային տարփ» և այլն։ Նման պատկերներով լի են տաղերն ու գանձերը։

²⁶⁹Տե՛ս Դիոնիսիոս Արեոպագացի, Էջ 3-10:

²⁷⁰Նույն տեղում, Էջ 137-146:

²⁷¹Նույն տեղում, Էջ 144:

Այսպես, օրինակ, «Համբարձման տաղ»-ում Քրիստոսը պատկերվում է իբրև աստվածային լույս, որի երկրային «տիպը», «տպավորյալ պատկերն» արեգակն է.

Են՝ ի միշտ էն անեղապես ծնունդ.

Ծածկեալըն յանքնին ծոցոյ

Ծագեալ ի Հաւրէ լուսոյ՝ աշխարհի լոյս:

Լոյսըն զիւրական ստեղծեալըն տիպ.

Պատկեր տպաւորեալ լուսոյն,

Ծածկոյթ հողանիւթ արփիական կերպին:

(«Տաղ Համբարձմանն Քրիստոսի»)²⁷²

Մեջբերենք մի հատված «Մատեանից», ուր «աղբյուրեղեն» աստվածության և նրա՝ իբրև գերագույն լուսի, աստվածատունկ ծաղիկների ու բողբոջների այս պատկերը վերամարմնավորվել ու ծագալվել է.

Ամենալոյս, աննախանձ եւ բազմազեղուն

Գովեալ արարչութեանդ զաւրեղութեան

վանեալ են կարծրութիւնք

Արտաբերութեան սրտի բանսարկուին...

Սպառմամբ խոպանման աղբերացս երկուց,

Որ ի զգայականս եղեմայ բղխեալ

պատրաստեաց տնկողն,

Զի ոռոգեալ ծաղկեսցի նովաւ,

Որ ի յիս բարեգործութեան կենսատունկն դրախտ:

(Լէ, Բ)

²⁷² Տե՛ս ՄՀ ԺԲ, Էջ 662:

Էքստատիկ աստվածաբանության գերազույն արտահայտությունը՝ տիեզերական սիրո, տարփանքի մեղեղին հնչում է նաև «Ճաղ Յարութեան»-ում. աստվածային սիրո մեղեղին համակել է ողջ բնությունն ու տիեզերքը:

*Սէր յառաւաւտէ,
Սէր յառաւաւտէ ճեմեալ
Իւր անձուկ ծագմամբ:*

*Ծագմանն արեւելք,
Ծագմանն արեւելք անուն
Այն արուսեկին:*

*Մի՞թէ յայն ի վայր,
Մի՞թէ յայն վայր ի վայրի
Տաւիդ տարածեալ.*

*Կամ սիրոյ շրջան,
Կամ սիրոյ շրջան առեալ
Աստեղբք բոլորեալ²⁷³:*

Այդ սերը ծփում է լույսերի տարփանքի մեջ.

*Նա ծով վաղընթաց,
Նա ծով վաղընթաց ածեալ
Դուռն արեւելեան.*

*Ծայրարձակ լերանց,
Ծայրարձակ լերանց բարձանց
Տաւդ տարածանէր:*

²⁷³ Նույն տեղում, էջ 651:

Արեւմըտենի,
Արեւմըտենի սեռի
Լրմամբ միացեալ:

Աղերս ձայնաղի,
Աղերս ձայնաղի առնէր
Ի ծայրս արեւու:

Ի զարդ շաւիղից
Ի զարդ շաւիղից փայլեալ
Ոսկէթէլ շողից:

Շող երփն առ երփին,
Շող երփն առ երփին փողով
Հովհաննի:

Զարդ փայլենազարդ,
Զարդ փայլենազարդ փայլից
Գայր յարեւելից...

(«Ճաղ Յարութեան»)²⁷⁴

Ողջ բնությունը բռնկված, ներթափանցված է աստվածային սիրով, առնված է սիրո շրջանի, տիեզերական բոլորքի մեջ, և այդ բոլորքին, այդ «վայրերին» է հասնում բանաստեղծի ձայնը, տավիղի լարը, երկնային աղերսի մեղեղին, որ հնչում է մինչև արեւի ծայրը, միահյուսվում, միախառնվում նրա «ոսկեթել շողերին», և այնտեղից «երփն առ երփին» փայլերով կրկին իջնում շուշանի հովտին:

²⁷⁴ Նույն տեղում, էջ 651-652:

Ինչպես տեսնում ենք, դարձյալ տիեզերական շրջադարձության մի պատկեր է այս տաղը։ Զգայական աշխարհի, բնության պատկերները ստեղծագործողը ներառում է իր հոգեւոր ծիրում, իր ներաշխարհի հետ «միասնաբար» մտցնելով նրան «միեղեն» բանական հոսքերի, տիեզերական շրջանաձև շարժման մեջ՝ գաղափարների և էությունների աշխարհում։ Այս տաղի հղացքը համընկնում է նորպատոնական տիեզերագիտության աստիճանակարգին, և արվեստի երկի, ստեղծագործական բուն ընթացքի գոյաբանական-գեղագիտական ընկալման և գեղարվեստական արտահայտման օրինակ է։

Այս առումով նշված տաղը նորպատոնական արվեստի տեսության և նրա գեղարվեստական մարմնավորման բացառիկ նմուշներից է։

*

Գրիգոր Նարեկացու տաղերը նորպատոնական էքստատիկ աստվածաբանության գեղարվեստական արտահայտություններ են՝ ձևի և բովանդակության անկրկնելի կատարելությամբ։ Նրանցում արտահայտված են զգայական և բանական աշխարհների անխղելի կապի, անընդհատ շարժման ու փոխներթափանցման գաղափարները։ Հոգով՝ իբրև զգայական և բանական տիեզերքների միջնաշխարհի շնորհիվ զգայական աշխարհի երեսույթները, պատկերները վերառաքվում են դեպի բանական տիեզերք։ Ըստ այդմ՝ բանաստեղծական-գեղարվեստական պատկերները ստեղծվում են, կան, գոյություն ունեն այդ միջնաշխարհում, որ է մարդու ներաշխարհը՝ միկրոտիեզերքը։ Նրանք ընկալ-

վում են աստվածային խորհուրդների ու գաղտնիքների մակարդակում՝ երկնային և երկրային նվիրապետությունների միջև:

Եվ այստեղ դարձյալ Գրիգոր Նարեկացին գեղարվեստութեն մարմնավորում է Դիոնիսիոս Արեոպագացու տեսական դրույթները²⁷⁵:

«Արեոպագիտյան երկերի հեղինակը կազմավորում է պատկերների կուռ աստիճանակարգություն, որոնց օգնությամբ «գերբնության» մակարդակից ճշգրիտ իմացություն է հաղորդվում մարդկային գոյության մակարդակին: Գրական և գեղարվեստական պատկերներն այնտեղ ուղակի տեղ են զբաղեցնում՝ նրանք գտնվում են խորհուրդների, գաղտնիքների մակարդակի վրա, այսինքն՝ երկնային և երկրային աստիճանակարգերի միջև»²⁷⁶:

Եվ այստեղ, ինչպես նշել ենք, աստվածայինի, մարդու և բնության միախառնության այս էական գաղափարի գեղարվեստական մարմնավորման ընթացքում, Գրիգոր Նարեկացու տաղերգության մեջ ի հայտ են գալիս պանթեիստական աշխարհընկալման տարրեր:

²⁷⁵Տե՛ս Դիոնիսիոս Արեոպագացի, Էջ 1-10, 159-163:

²⁷⁶В. В. Быков, Византийская эстетика, М., "Искусство", 1977, с. 130.

«ԽՈՐՀՐԴԱԿԱՆ» ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ «ՄԱՏԵԱՆՈՒՄ»

Դիոնիսիոս Արեոպագացին իր աստվածաբանական համակարգի վերջին աստիճանը կոչում է «խորհրդական աստվածաբանություն», որին նվիրված առանձին աշխատություն ունի²⁷⁷: Դիոնիսիոսն իր միստիկ աստվածաբանության այս վերջին մակարդակում ի մի է բերում նրա բոլոր աստիճանները՝ ամբողջացնելով իր աստվածահայեցողության, աստվածածանաչողության համակարգը²⁷⁸: Հստ այդ տեսության՝ Աստված հասու չէ մարդկային իմացությանը, նա անճանաչելի է, անիմանալի. ամեն ինչի սկզբնապատճառը լինելով՝ նա անդենական է: Իբրև անմատուց լույս՝ նա մարդկային բանականության համար ծածկված է խավարով և ներկայանում է իբրև «սրբազն մեգ»: Ուստի Աստված անբառելի է, անասելի է, անիմանալի է: Առ նա պետք է բարձրանալ ոչ միայն գերագույն, բարձրագույն՝ «իմացական աստվածանունություններով», որոնք նշում են նրա կատարելությունները և «գերապատիվ վայելչությունները», այլև «հաստատողական մերժման», ժխտման եղանակով, քանի որ զգայական և բանական որևէ հատկանիշ, երևույթ կամ էություն անհարիր է նրան: Սակայն դրանով ոչ թե նվազեցվում է, այլ առավել

²⁷⁷ Տե՛ս Դիոնիսիոս Արեոպագացի, «Յաղագս խորհրդականի աստուածաբանութեանն», էջ 224-230:

²⁷⁸ Դիոնիսիոսի խորհրդական աստվածաբանության ապոֆասիկ (ժխտող) և կատաֆաստիկ (հաստատող) մեթոդների և նրանց՝ խորհրդանիշային աստվածաբանության հետ ունեցած կապի մասին տե՛ս **В. Бычков**, *Византийская эстетика*, с. 129-134:

շեշտվում է նրա գերազանցությունը։ Աստված՝ իբրև ամենայն ինչի սկզբնապատճառ, հաղորդ է իր արարած տիեզերքներին և պահում է նրանց իր նախախնամության բոլորքում։ Ամենայն ինչ շաղկապված, էակցված է անիմանալի Աստծուն։

Ուստի Աստված իմանալի է և անիմանալի, ճանաչվում է գիտությամբ և անգիտությամբ, ամեն ինչում, ամեն ինչի միջոցով և վեր է ամեն ճանաչողությունից, թեև ներառում է իր մեջ բանական ու զգայական տիեզերքները, և նրանից են ամենայն մարդկային իմաստ, միտք, խոսք և հանճար, որոնցով մարդը ձգտում է աստվածային իմացության և աստվածանմանության՝ ըստ իր կարողությունների։

Աստված վեր է ամենայն մտքից, ուստի Դիոնիսիոսն իր միստիկ աստվածաբանության գերագույն աստիճանը համարում է անխոս, անբառ, անմտառելի և անպատկեր աղոթքը, որ կատարվում է հոգեմտավոր վերառաքմամբ, երբ խորհրդագգած անձը մտքի զորությամբ վեր է բարձրանում, վերացարկվում է զգալի և իմանալի աշխարհներից, մտքի կապանքները թոթափելով, տարրալուծվում է «անքննելի իմաստության գերաճաճանչ ճառագայթներում»։

Դիոնիսիոսը բացահայտում է «սրբազան խավարի» և ժխտողական աստվածաբանության էությունը. աստվածային խորհուրդը անդին է, վեր է էությունից՝ այն անճանաչելի գերէություն է և աներևույթ գերազանց լույս։

«Այլ որպէս ասացի յոլովակի՝ զաստուածայինսն աստուածավայելչապէս է իմանալի։ Քանզի անմիտն եւ անզգայն ըստ գերազանցութեան եւ ոչ ըստ պակասութեան է

դնելի Աստուածոյ, որպէս եւ զանբանն վերադրեմք գերագունիս քան զբան, եւ զանկատարն գերակատարին եւ նախակատարի, եւ զանշաւշափելի եւ զաներեւելի մէգն՝ անմատոյց լուսոյն ըստ գերազանցութեան աներեւութին լուսոյ:

Որպէս զի աստուածայինն միտ զամենայն միահամուռունի քան զամենայն արտաքս համբարձեցելով գիտութեամք, ըստ ամենեցունց պատճառոյ ի յինքն... գիտելով եւ յէութիւն ածելով: Եւ զայս վարկանիմ աւանդել բանին որ ասէն եթէ՝ որ գիտէն զամենայն նախ քան զլինելն նորա: Քանզի ոչ ի յէիցս ուսանելով գիտէ զէսս աստուածայինն միտ, այլ յինքենէ եւ ինքեամք ըստ պատճառոյ զամենեցունց տեղեկութիւն եւ գիտութիւն, եւ էութիւն ունի նախ եւ յառաջագոյն առեալ. ոչ ըստ տեսակի իւրաքանչիւր ուրուք, այլ ըստ միոյն պատճառի պարունակութեան զամենայն գիտելով եւ միահամուռ ունելով, որպէս եւ լոյս ըստ պատճառի ինքեամք զգիտութիւն խաւարի յառաջագոյն է առեալ, ոչ այլուստ գիտելով զխաւար՝ բայց ի լուսոյ:

Արդ զինքն գիտելով աստուածայինն իմաստութիւն գիտասցէ զամենայն, աննիւթաբար զնիւթեղէնսս եւ անբաժանական զբաժանականս եւ զբազումս միեղինապէս, նովիմք Միովն զամենայն գիտելով եւ յառաջ ածելով: Քանզի եթէ ըստ միոյ պատճառի Աստուած ամենայն էիցս զգոլն հաղորդեցոյց, ըստ նորին միականին պատճառի գիտասցէ զամենայն որպէս ի նմանէ գոլով եւ ի նմա նախագոյացեալս»²⁷⁹:

²⁷⁹ Դիոնիսիոս Արեոպագացի, «Յաղագս աստուածայինոցն անուանց», էջ 195:

Այստեղ ևս Դիոնիսիոսը դիմում է իր «նշանական» աստվածաբանության օգնությանը: Աստված, որ վեր է ամեն իմացությունից, ամեն մտքից ու խոսքից, անձանաչելի է, անմատույց է իր աստվածային բնությամբ: Մարդիկ աստվածային խորհուրդները քննում են զգալի աշխարհի՝ նրա արարածների ուսումնասիրությամբ, բանական և զգայական աշխարհների կարգավորությամբ ու ճանաչողությամբ:

«Առ այսոքիւք քննել պարտ է եթէ զի՞արդ մեք գիտեմք զԱստուած ոչ իմացական եւ ոչ զգալի, եւ ոչ բնաւին ըստ էիցս գոլով: Արդ զի մի գուցէ ծշմարտութեամբ ասել եթէ գիտեմք զԱստուած ոչ ի նորին բնութենէ, քանզի անգիտելի է այս եւ ի վեր քան զամենայն բան եւ միտս, այլ յամենայն էիցս կարգաւորութենէ՝ որպէս ի նմանէ յառաջ եկելոյ, եւ պատկերս ինչ եւ նմանութիւնս աստուածայնոցն նորա յարացուցից ցուցանելով ճանապարհաւ եւ կարգաւ յայն որ անդրն է քան զամենայն՝ ըստ կարողութեան հանեալ յամենեցունց որոշեալն եւ գերունակ, եւ յամենեցունց պատճառն»²⁸⁰:

Արեոպագիտյան բնագրերի հեղինակը գալիս է պարագոքսալ եզրահանգման. աստվածային գիտությանը կարելի է հասնել գիտական անգիտությամբ: Իր աստվածաբանության այս բարձրագույն աստիճանում նա գերազույն նշանակություն է տալիս մարդու էքստատիկ փորձին, որ կատարվում է մտքի վերառաքման, աստվածային ներշնչանքի և աղոթքի միջոցով, որոնցով խորհրդապաշտ ան-

²⁸⁰ Նույն տեղում, էջ 196:

հատը զգայական աշխարհից՝ տեսանելի պատկերների միջոցով բարձրանում է դեպի բանական՝ էությունների աշխարհը։ Այս ընթացքում, գիտական ճանաչողության կողքին ավելի մեծ նշանակություն է տրվում հավատին։ Հետագայում այս կանխադրույթն իրու հիմք ընդունվեց միջնադարյան սքոլաստիկոսների կողմից։

«Վասն որոյ եւ յամենայնի ճանաչի Աստուած, եւ առանց ամենայնի, ի ձեռն գիտութեան ճանաչի եւ ի ձեռն անգիտութեան, եւ է նորա եւ իմաստ, եւ բան, եւ հանճար, եւ շոշափումն, եւ զգայութիւն, եւ փառք, եւ երեւույթ, եւ անուն, եւ այլք ամենայն։ Եւ ոչ իմանի, եւ ոչ ասի, եւ ոչ անուանի, եւ ոչ է ինչ յէիցս, եւ ոչ յիմիք ի յէիցս ճանաչի։ Եւ յամենայնի ամենայն է, եւ ոչ յիմիք ոչ ինչ։ Եւ յամենեցունց ամենեցուն ճանաչի, եւ յոչնչ ոչ ումեք։ Քանզի եւ զայս ուղղակի ասեմք յաղագս Աստուածոյ, եւ յէիցս ամենեցունց աւրհնաբանի ըստ ամենեցունց համեմատութեանն որոց էն պատճառ։ Եւ է դարձեալ աստուածային գիտութիւնն Աստուածոյ ի ձեռն անգիտութեան գիտացեալ, ըստ գերագոյն քան զմիտս միութեանն, յորժամ միտք յէիցս ամենայնէ ի բաց կացեալ, եւ ապա եւ զինքն թողեալ՝ միաւորեսցի գերաճաճանչ ճառագայթիցն, անդուստ եւ անդանքնելի խորութեամբ իմաստութեանն լուսաւորեալ...»²⁸¹։

Աստված ճանաչելի է և անճանաչելի, այն անճանաչելի է իր բարձրագույն աստիճանում՝ իրու առաջնամիակ, սակայն նա ճանաչելի է իր արարչագործությամբ, իրու ամենայն ինչի սկզբնապատճառ, նրանից են ծագում և առ

²⁸¹ Նույն տեղում։

նա են դառնում իր ծիրում պտտվող տիեզերքները, բանական աշխարհները, մարդը, գգայական աշխարհը. նա ամենուր է, ամեն ինչ ներթափանցված է նրանով:

«Եւ բան աւրհնաբանի Աստուած առ ի սրբազանիցն ասացելոց, ոչ միայն զի եւ բանի, եւ մտաց, եւ իմաստութեան է բաշխող. այլ զի եւ զամենայնի պատճառս ի յինքեան միատեսակապէս է առեալ, եւ զի եւ ամենեսին տարեալ լինի թափանցիկ լինել՝ որպէս ասացեալքն ասեն՝ մինչեւ յամենեցունց վախճանն եւ նախ քան զայսոսիկ, զի եւ քան զամենայն պարզութիւն է գերապարզեալ աստուածայինն բան, եւ քան զամենայն գերագոյն ըստ գերազանցութեան է արձակեալ»²⁸²:

«Խորհրդական» աստվածաբանության հայեցակարգով է Դիոնիսիոսը մոտենում նաև Սուրբ Երրորդության «անձառելի» խորհրդին, որ վեր է ամեն անունից և խոսքից, իմացությունից և գիտությունից: Այստեղ նվազում են մարդկային իմացության հնարավորությունները, և տեղ է բացվում «անձառելի», ժիտողական, ապոֆատիկ աստվածաբանության համար. միայն վեր բարձրանալով ամենայն իմացությունից ու գիտությունից՝ մարդ կարող է հպվել Սուրբ Երրորդության խորհրդին: Այստեղ է, որ հավատը, որ միտիկ աստվածաբանության հիմքն է, վեր է դասվում գիտությունից:

«Վասն որոյ եւ միութիւն աւրհնաբանեալ եւ Երրորդութիւն գերագոյն քան զամենայն աստուածութիւն՝ ոչ է ոչ միութիւն, ոչ Երրորդութիւն, որ առ ի մէնջ եւ կամ յայլ

²⁸² Նույն տեղում, էջ 197:

ումեքէ է ծանուցեալ, այլ զգերագոյն միութիւնն նորա եւ զաստուածածնողութիւնն ճշմարտապէս աւրհնաբանեսցուք՝ երրորդականաւ եւ միեղինիւ աստուածանութեամբ զգերանունն անուանեմք քան զգոյսս գերագոյնն:

Եւ ոչ միակ մի կամ երրեակ, ոչ թիւ, ոչ միութիւն կամ ծնողութիւն, եւ ոչ այլ ինչ յէիցս եւ կամ ումեք յէիցս ծանուցեալ. արտաքս բերէ զգերագոյն քան զամենայն բանս եւ միտս թաքնութիւնն, քան զամենայն գերագոյապէս գերագոյի աստուածութեանն:

Ոչ անուն է նմա եւ ոչ բան, այլ յանկոխս է <արտաքս> անջատեալ: Եւ ոչ զնոյն բարութեանն անուն պատշաճ նմա մատուցանեմք. այլ փափագմամբք իմանալ ինչ եւ ասել յաղագս անձառելւոյ բնութեանն այնորիկ, յանուանցն զբարեպաշտագոյնն անուն նախ սրբազնաբանեմք: Եւ համաձայնեսցէ արդեաւք այս աստուածաբանիցն, բայց ի յիրացն ճշմարտութենէ նուազիմք: Վասն որոյ եւ նոքա զոր ի ձեռն անձառութեանցն ի վեր ճանապարհ նախապատուեցին, որպէս ի զարմացման եղեալ անձն իւրոցն համացեղից, եւ ընդ ամենայն աստուածայինս իմացմունն ճանապարհորդեալ, որպէս արտաքս համբարձեալ քան զամենայն անուն եւ բան, եւ գիտութիւն, յետոյ քան զամենայն ի նա հպեալ՝ որքան ինչ մեզ է կարողութիւն հպել ի նա»²⁸³:

Դիոնիսիոսը ներհայեցողության, մտքի վերացական աշխատանքի շնորհիվ հոգեոր վերառաքման ուղի է նշում, որին խորհրդագգած անհատը հասնում է՝ թոթափելով

²⁸³ Նույն տեղում, էջ 221:

մարմնական և զգայական ամենայն ինչ, ձգտելով Գերագույն պարզագույն էությանը, որին նա հասնում է անպատճեր, «անաչյա», անբարբառ ու անձայն հայեցողությամբ։ Այդ հայեցողությունը պահանջում է հոգեկոր կենտրոնացում ու ներսուզում, բանական լարում և մտքի վերացական աշխատանք՝ դառնալով յուրահատուկ վերացարկվող, հեռակա աստվածաբանություն։

Այս ընթացքում Դիոնիսիոսը տալիս է հաստատող և ժխտող աստվածաբանության նման շարքեր, որ հետագայում ուղեցույց և ընդօրինակման առարկա դարձան միջնադարյան միստիկ բանաստեղծների համար։

Ահա նման մի նմուշ.

«Եւ դարձեալ ի վեր ելանելով ասասցուք,
թէ ոչ անձն է եւ ոչ միտ,
ոչ երեւոյթ կամ կարծիս,
կամ բան, կամ իմացումն ունի:
Ոչ բան է եւ ոչ իմացումն,
ոչ ասի եւ ոչ իմանի:
Ոչ թիւ է եւ ոչ կարգ,
ոչ մեծութիւն եւ ոչ փոքրութիւն,
ոչ հաւասարութիւն եւ ոչ նմանութիւն կամ
աննմանութիւն։

Ոչ կայ եւ ոչ շարժի,
ոչ լռութիւն բերէ եւ ոչ ունի զաւրութիւն։
Ոչ զաւրութիւն է եւ ոչ լոյս,
եւ ոչ կեանք է, եւ ոչ էութիւն,
ոչ յաւիտեան եւ ոչ ժամանակ,

ոչ զգայութիւն... եւ ոչ հանճար,
ոչ ճշմարտութիւն է եւ ոչ թագաւորութիւն, եւ
ոչ իմաստութիւն,
ոչ մի եւ ոչ միութիւն կամ բարութիւն,
եւ ոչ հոգի է... ոչ որդիութիւն, ոչ հայրութիւն
եւ ոչ այլ ինչ յորոց ի մեզս են եւ կամ այլ ումեք
յէիցս գիտելի եղեալ...

Ոչ բան է նորա եւ ոչ անուն,
եւ ոչ գիտութիւն, ոչ խաւար է եւ ոչ լոյս...
եւ ոչ է նորա բնաւին դրութիւն կամ
ի բաց բարձումն...

Վասն զի եւ գերագոյն քան զամենայն դրութիւն է
ամենակատար եւ միեղէն պատճառն ամենայնի,
եւ գերագոյն քան զամենայն
ի բաց բարձումն գերունակութիւն <ամենայնի>
պարզաբար արձակեցելոյ եւ անդր քան զբոլորսս»²⁸⁴:

Դիոնիսիոսը մշակում է ներքին աղոթքի մի տեսություն, որի բարձրագույն աստիճանը «անշշունջ, անբառ» աղոթքն է. եթե գերագոյն միտքը, վերից վար իջնելով, ըստ քանակի և ըստ տեսակի բազմանում է՝ վերածվելով զգալի բառերի և պատկերների բազմազանության, ապա ստորին մակարդակից դեպի վեր՝ առ գերագույնը շարժումը գնալով՝ ներամփոփվում է՝ թոթափելով զգայական պատկերները, տպավորությունները, վերջում դառնալով «անաչյա» հայեցողություն, «անշշունջ և անբարբառ» աղոթք:

²⁸⁴ Նույն տեղում, էջ 229-230:

«Վասն զի որքան ի վեր հայիմք, այսքան բանս ի տեսութենէ իմացականացն ամփոփի. որպէս եւ այժմ ի գերագոյն քան զմիտս մտեալ մէգն ոչ դուզնաբանութիւն, այլ անբանութիւն ամենեւին եւ անիմացութիւն:

Իսկ ի վերուստ ի յետինսս իջեալ բանիս ըստ քանակութեան իջման առ համեմատ բազմութիւն ընդարձակի, բայց այժմ ի <ստորնոցս> առ գերակայն ելեալ՝ ըստ չափոյ ի վեր ճանապարհին ամփոփի, եւ յետ ամենայն վեր ճանապարհորդութեանն բոլոր անշնչելի եղիցի եւ բոլոր միաւորեսցի ընդ անբարբառութեանն»²⁸⁵:

Այստեղ հարկ է շեշտել մի էական հանգամանք, որ կարծես անտեսվել է արենպագիտյան խորհրդական աստվածաբանության՝ նրա հաստատողական և ժխտողական սկզբունքների և ներհայեցողական անբառ աղոթքի մեկնաբանությունների ընթացքում։ Այս տեսությունը, ինչպես և հեղինակի ողջ տեսական համակարգը, ներհյուսված է «մերձակա, նշանական և տարփողական» աստվածաբանական մակարդակներին, որոնք միահյուսվում են աղոթասցության մեջ՝ անձնական և անանձնական, զգացմունքային, հուզական բնույթ հաղորդելով հոգեոր ապրումին և խոհաշխարհի վերացարկված ներթափանցումներին։

Այդպիսի աղոթքով է սկսում Դիոնիսիոսն իր խորհրդական աստվածաբանությունը՝ լավագույնս արտահայտելով մերձակա և հեռակա աստվածահայեցողության եղանակների ներմիությունը, ներհյուսումը միստիկ արարողության մեջ։ Սուրբ Երրորդությունը ներկայանում է որպես սրբա-

²⁸⁵ Նույն տեղում, էջ 228:

զան խավար, որի անմատույց լույսը՝ «գերալուսությունը» պատված է «թաքնախորհուրդ լուռթյան միգով», և որին կարելի է հասնել «անաչյա իմացությամբ».

«Երրորդութիւն գերագոյ, գերագոյնդ Աստուած
եւ գերագոյնդ բարութիւն,
Քրիստոնէից վերատեսուչ յաստուածայնոյ
իմաստութեանն,

Ուղղեա՛ զմեզ ի խորհրդականացն ասացելոց
Գերանծանոթ եւ գերաճաճանչ,
Եւ ծայրագոյնն գագաթն,
Ուրանաւր պարզքն եւ արձակք,
Եւ անփոփոխելիք աստուածաբանութեանն
Խորհուրդք ըստ գերալուսութեանն՝
Ծածկեալ թաքնախորհուրդ լուռթեան միգով՝
Ի խաւարչտի զգերերեւակութիւնն վերափայլեալ,
Եւ ամենաբազում ամենաշաւշափութեամբն,
Եւ աներութիւն գերագոյն գեղեցկաւքն
պայծառութեամբք

Գերալիր արարեալ զանաչեայսն իմացութիւնս:
Արդ ինձ այսոքիկ ըղձալիք լիցին...»²⁸⁶:
«Ընդ այսորիկ լինել առնեմք աղաւթս մեք զգերալոյսն
մէք, եւ ի ձեռն անտեսութեան եւ անգիտութեան տեսանել
եւ գիտել զգերագոյն քան գտեսութիւն եւ գիտութիւն՝
զնոյն զոչ տեսանելն եւ գիտել»²⁸⁷:

²⁸⁶ Նույն տեղում, էջ 224:

²⁸⁷ Նույն տեղում, էջ 226:

Այստեղ նա մշակում է ապօֆատիկ և կատաֆատիկ օրհնաբանության սկզբունքները.

«Զիա՞րդ պարտ է միաւորիլ եւ աւրհնութիւնս վերադրել ամենայնի պատճառին եւ գերագունին քան զամենայն:

Հստ այսորիկ լինել առնեմք... Քանզի այս է արդարեւ տեսանելն եւ գիտել, եւ գգերագոյ էն գերագոյապէս աւրհնաբանել ի բաց բարձմամբ զամենայն էսս, որպէս որք մինչ ինքնաբուն առնիցեն պատկեր եւ ի բաց առնուցուն զամենայն զոր առ ի խափան մաքուր տեսութեան իցէ եղեալ ի վերայ, եւ ինքն ինքեամբ միայն ի բաց բարձմամբն զծածուկ գեղեցկութիւնն երեւեցուցանէ: Արդ պիտոյ է, որպէս վարկանիմ, ի բաց բարձմունսն ներհակապէս դրութեանցն աւրհնաբանել»²⁸⁸:

Մեկ այլ տեղ, որ Անանունի սքանչացման պատկեր է ներկայացնում, հեղինակը դարձյալ պարզաբանում է իր՝ հաստատող և ժխտող աստվածաբանության սկզբունքները՝ իբրև օրհնաբանության եղանակներ:

«Արդ, զայս տեսեալ աստուածաբանիցն, եւ որպէս անանուն աւրհնաբանեն զնա, եւ յամենայն անուանէ: Անանուն՝ որպէս յորժամ ասեն զնոյն աստուածպետութիւնն միով ի խորհրդականացն նշանականին աստուածերեւութեանն սաստել հարցողին, եթէ զի՞նչ անուն է քո, եւ որպէս յամենայն աստուածանունականէ գիտութենէ ի բաց տանելով զասելն, եթէ եւ ընդէ՞ր հարցանես զանուն իմ, եւ այս է սքանչելի: Ո՞չ ապաքեն արդարեւ էին է

²⁸⁸ Նույն տեղում, էջ 226-227:

սքանչելի անուն, որ գերագոյն քան զամենայն անուն, էն՝
անանուն, որ քան զամենայն անուն անուանեալ գերագոյն
է սերտեալ՝ թէպէտ յաշխարհիս յայսմիկ եւ թէպէտ ի
հանդերձելումն»²⁸⁹:

Աղոթքի ընթացքում ներհյուսվում են էքստատիկ
աստվածաբանության բոլոր աստիճանները գերագոյն է-
ության անըմբոնելի ընկալմամբ՝ հիացման, զարմանքի,
հափշտակության վիճակում.

«Իսկ դու՝ ով գեղեցիկդ Տիմոթէէ՝ առ ի խորհրդականսն
տեսութիւնս յարածգականաւ կրթութեամբ եւ զզգայու-
թիւնսդ թող ի բաց, եւ զիմանալիսդ ներգործութիւնս եւ
զամենայն զգալիսն, եւ զիմացականս, եւ զամենայն զոչ
էսն եւ զէս, եւ առ միաւորութիւն, որպէս հասանելի է, ան-
ծանաւթաբար յարձակեալ գերագունին քան զամենայն
էութիւն եւ գիտութիւն: Քանզի նորա ամենակատար ան-
ըմբոնեաւ եւ արձակ եւ մաքուր զարմացմամբն առ գերա-
գոյ ճառագայթն աստուածայնոյն խաւարի համբարձցիս՝
զամենայն թողեալ եւ յամենայնէ ի բաց լուծեալ»²⁹⁰:

*

Արեոպագիտյան աստվածաբանության այս վերին մա-
կարդակը նույնպես արտահայտված է Գրիգոր Նարեկացու
ստեղծագործության մեջ: Այստեղ ևս հանդիպում է Աստծո՝
իբրև սրբազան խավարի, անմատույց լույսի ըմբոնումը, ո-
րի աղբյուրն, անկասկած, Դիոնիսիոսն է: Ըստ այդմ՝ մեռո-
նի խորհրդի մեկնաբանության ընթացքում, որին Աստծո

²⁸⁹ Նույն տեղում, էջ 134-135:

²⁹⁰ Նույն տեղում, էջ 225:

Նմանությամբ վերագրվում են անքննելիության, վերին անհասանելիության, խավարչտին, մթին, ծածկված ու անտեսլինելու հատկանիշներ, Աստծուն տրվում են մարդկային մտքին անհաս՝ անքնին խավարի, անմատույց լույսի «գերանունություններ ու գերիմաստներ»:

Իսկ մառնամուտ, որ եւ այս միւռոն
ըստ այլում բառի ցուցանի,
Այսինքն է՝ մթին, որ եւ խաւարչուտ գոլ
եւ ծածկեցեալ կամ անտեսական:
Որ եւ սոյն կոչումն դիմառութեան
չէ աւտարացեղ,
Քանզի արդարեւ յիւրէ անտի անունն նշանակի,
Վասն զի անքնին է այս խորութիւն յաւէտ,
Քան զամենայն սրբութեանց սրբոց...
Ի մասունս ազդողականացն տնաւրինապէս
տեառնագրի,
Սակայն անհասութեամբն վերնականաւ
եւ զանունն ունի անքնին:
Քանզի որպէս Աստուած իսկ եւ իսկ
ի լոյս անմատոյց ասի,
Իսկ անսահման փառաւորութեամբն
յեղանակաւ իմն անբաւութեան
Ի խաւար անզնին ծածկեալ իմանի՝
Փակեալ արտաքուստ ի ձեռնարկութեանց
մերոց իմաստից,
Նոյնպէս եւ այս ծորումն լուսոյ
ի լեզուաց ոմանց ճարտարաց
ի ճահ ճեմութեանց

Դրականապէս անուանագրութեամբ մռայլ

առձայնի,

Վասն ոչ գաւրելոյ երկրածին բնութեան

գիսկն գիտելոյ:

(Ղ.Գ, ԺԹ)

Գրիգոր Նարեկացու մեկնության մեջ դրական և ժխտողական աստվածաբանական նշված եղանակներն այս հատվածում հանդես են գալիս զուգորդված, համատեղ՝ ծառայելով նույն նպատակին՝ մեռոնի աստվածային էության բացահայտմանը: Նարեկացին հիշատակում է հաստատող՝ կատաֆատիկ «աստվածանունության» կերպը՝ «դրականապէս անուանագրութեամբ»: Մեռոնն իր այդ հատկանիշներով նմանակերպ է բարձրյալին, որն անքնին է, անտես է, անմատույց է, անզնին է, խավար է, փակ է, բայց նաև հուր է, լույս է.

**Իսկ զի գերկաքանչիւրս աստուածականացն
անդստին յինքեան հարստաբար,**

Տիրապէս ունի,

**Քանզի ի կոչումն անուան բարձրելոյն
նմանակերպեալ՝**

Կրկին մեծանայ իւղս այս՝

Նուիրեալ ամենաբուրեան ազնիւ կնդրկաւ.

Վասն զի Աստուած մեր հուր ծախիչ է,

Հստ Մովսեսի, եւ դարձեալ՝ լոյս է,

Հստ Յովհաննու, ուստի եւ եսայի

Ճշմարտապէս զսոյն ակնարկէ՝

Եղիցի՝, ասէ, լոյսն իսրայելի ի հուր:

(Ղ.Գ, ԺԹ)

Գրիգոր Նարեկացին իր սկզբնական շրջանի գործերից մեկում՝ «Վասն ուղիղ հաւատոյ եւ մաքուր վարուց առաքինութեան» խրատում ևս իրար է հյուսում արեոպագիայան բնագրերում հանդիպող ժխտողական աստվածաբանության անվանումներն ու հաստատող, դրական աստվածաբանության «գերանունությունները».

«Եւ արդ, այս է ճշմարիտ հաւատոյ դաւանութիւն։ Հաւատալ զԱստուած Հայր՝ Էութիւն ճշմարիտ, գոյ կատարեալ, անեղ, անսկիզբն, անժամանակ, անպատճառ, անիմանալի, անտեսանելի, անձառելի, անհաս, պարզ, անզնին, անկէտ, անսահման, աներբ, անուր, անբովանդակելի, անայլայլելի, անփոփոխ, գերաբուն, գերագոյ, գերալոյս, գերանճառ։ Ոչ յումեքէ եղեալ, եւ ոչ ինքն զինքն արարեալ։ ոչ ինչ յառաջ քան զնա, եւ ոչ զոյտ ընդ նմին. այլ ինքն գուլով սկիզբ եւ պատճառ ամենայնի, համագոյիցն Որդոյ ծննդեամբ եւ Հոգւոյն ելողութեամբ, եւ եղականացն արարչութեամբ»²⁹¹։

Հիմնականում այս երկու սկզբունքների միահյուսումն առկա է «աղոթանվեր մատյանի» բոլոր դրվագներում։

Դիոնիսիոսի «խորհրդական» և «մերձակա» աստվածաբանության ազդեցությունն ի հայտ է գալիս արդեն «Մատեանի» սկզբում, ուր հեղինակը օրհներգության, փառատրության օրինակներ է տալիս՝ նաև մեկնաբանելով դրանց խորհուրդը և շեշտելով «մերձակա» աստվածաբանության՝ աղոթքի գերն իր «Մատեանում»։

Այսպես, երկրորդ գլխում կարդում ենք.

²⁹¹ Գրիգոր Նարեկացի, «Վասն ուղիղ հաւատոյ», ՄՀ ԺԲ, էջ 1024:

Կեցո՛ զիս, գլխած, լո՛ւր ինձ, ողորմած,
Մարդասիրեա՛, ներող, ինայեա՛, երկայնամիտ,
Պաշտպանեա՛, ապաւէն, բարերարեա՛, հզաւր,
Ազատեա՛, ամենակալ, կենագործեա՛, նորոգող,
Վերականգնեա՛, ահաւոր, լուսաւորեա՛, երկնային,
Բժշկեա՛, հնարաւոր, քաւեա՛, անքնին,
Պարզեւատրեա՛, առատ, չնորհագարդեա՛, աննախանձ,
Հաշտեա՛ց, անախտակիր, ընկա՛լ, անոխակալ,
Սրբեա՛ ի պարտեաց, աւրհնեալ:

(Բ, Դ)

Այս իմաստով կատարելատիպ է «Մատեանի» երրորդ գլուխը, որ գերխիտ է աստվածային մականուններով և մակդիրներով, որոնք ընդգծում են նրա էական հատկանիշները, և ուր դրական և ժխտական անվանումները նույն դերն են կատարում, իբրև գերանունություններ, գերագույն խորհրդանիշեր՝ օգնելով աղոթողի վերառաքմանը:

Տէ՛ր իմ, Տէ՛ր, տուիչ պարզեւաց, ինքնաբուն բարի,
Ամենից տիրող հաւասարապէս, միայն արարիչ
զբնաւս յոչէից,
Փառաւորեալ, անքնին, ահեղ, ահարկու,
Սոսկալի, հզաւր, սաստիկ,
Անտանելի, անմերձենալի, անըմբոնելի, անիմանալի,
Անճառելի, անտեսանելի, անզննելի, անշաւշափելի,
Անորոնելի, անսկիզբն, անժամանակ,
Անշամանդաղ գիտութիւն, աներկեւան տեսութիւն,
Ճշմարիտ էականութիւն, բարձր եւ խոնարհ,
Աւրհնաբանելի գոյութիւն, անստուեր ծագումն,
Ամենափայլ ճառագայթ, խոստովանեալ լոյս,

Անտարակոյս վստահութիւն, անտարտամ հանդիսատ,
Անյեղլի կնիք, անսահմանելի տեսիլ, վկայեալ անուն,
Ճաշակ քաղցրութեան, բաժակ բերկրութեան,
Հաստիչ հոգւոց հաց, աւտար մթութեանց սէր,
աներկրայ խոստումն,

Ծածկոյթ ցանկալի, զգեստ անկապուտ,
Աւթոց բաղձալի, զարդ փառաց,
Զեռնկալու մեծ, ապաւէն գովեալ,
Աննուազելի չնորհ, անպակասելի գանձ,
Անապական անձրեւ, արփիացնցուղ ցաւղ,
Ամենատեղաց դեղ, ձրի բժշկութիւն,
Կրկնաձիր առողջութիւն, վեհագոյն խրախոյս,
Անպատիր կոչումն, համաւրէն աւետիս,
Ստրկամեծար թագաւոր, աղքատասէր պաշտպան,
մշտահարուստ տուիչ,
Անխափան դիմեցումն, աննահանջելի հրաման,
Անհամառաւտ յոյս, երկար տեսողութիւն,
Անզղական սուր, ամենաբաշխ աջ,
Արդարակշիռ ձեռն, անաշառատես ակն,
Միսիթարութեան ձայն, սփոփանաց լուր,
բերկրութեան բերումն,
Անուն կենդանի, նախախնամող մատն,
Անգայթակղելի ելք, անխարդախ ընթացք,
Կենդանարար կամք, աննենգելի խրատ,
աննախանձելի պատիւ,
Լայնական հնարք, անձկական պայման,
Անգտանելի հետք, աներեւոյթ շաւիդ,

Անչափագիր պատկեր, որքանութիւն անսահման,

աննմանական տիպ,

Անզուգական գութ, ողորմութիւն բազմազեղ,

Խոնարհութիւն տաւնելի, համբոյր փրկական:

Եւ եւս քան զայս ազդմունք վայելչականք՝

աստուածութեանդ նուիրելիք.

Աւրհնեալ, գովեալ, բարեբանեալ,

քարոզեալ, աւետարանեալ,

Հոչակեալ, հնչեցեալ, պատմեալ, անխարելի

կամաւք աղաչեալ...

(Գ, Ա)

Այս հատվածում ևս Աստծո՝ իբրև սրբազան, անմերձենալի խավարի ըմբռնումն է արտահայտված («անսահմանելի տեսիլ, աւտար մթութեանց սէր, ծածկոյթ ցանկալի»), որ զուգորդված է նրա՝ իբրև անսպառ, անսահման լույսի ընկալման հետ («անշամանդաղ գիտութիւն, աներկեւան տեսութիւն, անստուէր ծագումն, ամենափայլ ծառագայթ, խոստովանեալ լոյս»): Ընդ որում՝ արտահայտված է նաև բանաստեղծի մղումը՝ աստվածային սիրո միջոցով թափանցել այդ օտար, բայց և ցանկալի մթան ծածկույթից ներս («աւտար մթութեանց սէր, ծածկոյթ ցանկալի»):

Հեղինակն ակնարկում է իր միստիկ փորձի, անմիջնորդ աստվածընկալման և հաղորդության մասին: Ըստ Գրիգոր Նարեկացու՝ բանաստեղծն արարում է աստվածային սիրո հոսքերի մեջ: Նա ընդգծում է հոգեոր տարփանքի այդ պահը, բանաստեղծության էքստատիկ էությունը՝ խոստանալով դրանց անդրադառնալ հաջորդ մասերում

(ճառերում): Հենց դրանց շնորհիվ նա պիտի Աստծուց փրկության արժանանա: Աստված ոչ այնքան փառատրությամբ, որքան նրա «ախորժելի տենչերով լցված» աղերս-ներով պիտի հագենա ու զվարթանա:

Եւ որ ինչ առ մեզ բերին առ ի քէն
հոսմունք քաղցրութեան,

Զոր հանդերձելոցն ճառից
լուսաբանեն կերպաւորութիւնք,

Որով զուարթ ցուցանիս ի փրկութիւն իմ, երանութիւն,
իբր ի պարարտութենէ իմեքէ, ախորժ

տենչանաւք լցեալ,

Զի ոչ իմովս ինչ սնոտիապատուաստ
փառատրիս երգով,

Այլ զի պատճառ իմն առցես զփոքրս աղերս՝
մեծիդ փրկանաց:

(Գ, Ա)

Այս հատվածին համահունչ է «Աղաւթք թարգմանաւ-
րէն վասն սրբալոյս իւղոյն միւռոնի» գլխի մի հատվածը:

Եւ զի՞ եւս իցէ բազմապատիկս նշանակել

Առ այս մեծ խորհուրդ անհասանելի

Եւ ոչ ճաշակել քեզ, քաղցրութիւն,

իմանալ քեւ զայս, թէ զի՞նչ իցէ իւղն,

Եթէ ոչ գտխրութիւն ի փայտն պարտեաց

սովիմբ բժշկեալ,

Հստ սաղմոսողին, զուարթ գործեացես.

Եւ զի՞նչ պարարտութիւնն,

Եթէ ոչ զկերակուրն մահու սովաւ մոռասցուք՝
 լցեալ ի սմանէ,
 Եւ զի՞նչ աւծութիւնն, եթէ ոչ զմոխրոյն
 թշուառ տեսութիւն
 ի ձեռն սորին փոխարկեացուք ի պայծառութիւն
 յաւէժ ուրախութեան...
 (Ղ. Գ, Թ)

Այս գլխում կան մերձակա, նշանական, տարփողական
 և խորհրդական աստվածաբանության համատեղման, միա-
 հյուսման գեղեցիկ նմուշներ։ Մի նման հատվածում, ահա,
 մեկնությունը վեր է ածվում դարձյալ «մաղթողական բա-
 նաստեղծության», «գոհաբանական աղերսի»՝ «գոհութիւն՝
 խառնեալ ընդ աղերսի»՝ երգ երգոցի բնաբանի մեկնաբա-
 նությունը հասցնելով հոգեոր սիրագեղության, առ Աստ-
 ված ուղղված բուռն տենչանքի, որով բանաստեղծը պիտի
 հասնի աստվածային «քաղցրության լույսին»։

Հաստատեցէ՛ք զիս իւղով
 Եւ գեղեցկազարդ խնձորով յարկեալ ծածկեցէ՛ք,
 Եւ ի պարտէզ իւղենեաց տածեալ գրգեցէ՛ք (հմմտ երգ.
 Բ.5, Ե, 1, Զ.1),
 Եթէ ոչ, այսր ահա ընտրական նիւթիւ Հոգւով
 քո լցեալ,
 Ի սոյն լոյս տեսցուք զանիմանալիդ ի
 մեզ բարձրութիւն, գովեալ:
 Եւ արդ, քեզ միայն, խնամմակալ,
 Պատճառդ բարի բնաւից եղելոց,
 Զեռն համբառնամ տարածմամբ բազկացս,

Երիկամանցս գործակցութեամբ,
Միտիս հեծութեամբ,
Լեզուիս եւ շրթանցս ձայնարկութեամբ՝
Լուր ողորմութեամբ, Տէր,
Պաղատանացս խնդրուածոց առ քեզ կարդալոյս:
Ծնորհաւորեալ այսու պարգեւաւք՝
Գոհաբանութիւն քեզ վերընծայեմ,
Հզաւը, ահաւոր, բարձրեալ, անքնին,
Անփակ փափագմամբ միշտ համբուրեցեալ,
Սուրբ, սուրբ եւ միայն միշտ սուրբ,
Աւրհնեալ հանապազ,
Ցաւէժ անդադար երգաձայնութեամբ:
Ընձեռեա՛ առաւել բարերարութիւն իսպառ վրիպելոյս,
Տուր լոյս քաղցրութեան ոչ մասին միոյ
Մատուցման լուսոյ արժանաւոր ինչ հանդիպելոյս՝
Լայնել քեւ, բարի, զնրբութիւն ծածուկ խորհրդոյս,
Գոհութիւն խառնեալ ընդ աղերս...

(Ղ. Թ.)

Աղոթքի միջոցով, երբ մարմինն ու հոգին ներդաշն են
գործում, բանաստեղծը, աղոթողը ձգտում է հասնել էքս-
տազի աստիճանին, երբ իր տենչանքը խառնվում է «քաղց-
րության լույսին» և հրեշտակային «եռահյուսակ սրբասա-
ցությանը»:

Հատկանշական են «Մատեանի» ԺԴ, ԺԶ գլուխները, որ
հար և նման լինելով նմանատիպ բազմաթիվ հատվածներին՝
առանձնանում են նորպլատոնական և քրիստոնեական աստ-
վածաբանության միահյուսման յուրօրինակ ձևով, դրանց

ներհատուկ «աստվածանունություններով» ու հասկացություններով։ Սուրբ Հոգին ներկայանում է իբրև Սկզբնագոյի կատարյալ իսկություն, մշտնջենավոր էություն, անսպառ լուսեղեն բխում Հորից, Սուրբ Երրորդությունն՝ իբրև երկնային սիրո անստվեր լույսի Սկզբնապատճառ։

Աստուած բարերար, հզաւը, ահաւոր,
Հայրդ բարի ողորմութեանդ չնորհի,
Որոյ անունդ իսկ մեծիդ զգիթութիւն
եւ զբնտանութիւն աւետարանէ,
Քաղցրդ դժնէից եւ անգոհացողաց.
Ընդ քեզ եւ Որդիդ քո՝ իբրեւ զքեզ,
Զաւրաւոր ձեռն՝ իբրեւ զքոյդ,
Անժամանակ տէրութեամբ ահեղ,
Ընդ արարչութեանդ քում բարձրացեալ.
Եւ Հոգիդ Սուրբ ճշմարտութեան,
Բղխեալ առ ի քէն անսպառութեամբ,
Կատարեալ իսկութիւն գոյի, էութիւն մշտնջենաւոր,
Հաւասար քո ամենայնիւ, փառակից
Որդւոյ տէրութեամբ:
Երբեակ անձնաւորութիւն համայն անքնին,
Տրոհեալ ի դիմաց ուրոյն զատուցմամբ,
Իսկ միաւորեալ համազուգութեամբ,
Նոյնագոյ բնութեամբ տիրապէս, անշփոթ
եւ անանջըպետ՝
Միով կամաւք եւ կցորդութեամբ:
Ո՛չ երիցութիւն ումեմն ի յումեմն,
Եւ ո՛չ քթթել մի ական առ նուազութիւն
միոյն ժամանեալ,

**Քան թէ պատճառ սիրոյ երկնայնոյ անստուեր լուսոյ,
Որ առ մերն է ծանալթութիւն,
Միով պսակաւ սրբասացութեան անսկզբնաբար
աստուածաբանեալ:**
(ԺԳ, Ա)

Աստված ներկայանում է իբրև գերագույն էություն,
որ վեր է ամեն խոսքից, պատկերից, չափից, մեծությունից,
այն անսահմանափակ բացարձակն է, գերագույն լույսը, որ
թափանցել է ամենայնի մեջ: Նարեկացին կրկնում է Աստ-
ծո՞ արեոպագիտյան որակումներն ու ստորոգելիները:

Եւ արդ, դու միայն Աստուած երկնաւոր, բարձրեալ,
բարեգործ...

Ի վերդ, քան զբան, պատկեր անպարագիր,
Անդը, քան զորքանութիւն կշռութեան,
Անչափ լայնութիւն փառաց,
Անտարրափակ ընդարձակութիւն հատու զաւրութեան,
Անամփոփելի առաւելութիւն բացարձակութեան,
Անտկարանալի բարերարութիւն գթութեան:

(ԺԶ, Ա)

Լոյսդ ի մէջ խաւարի, աւրհնութեանդ գանձ...
Զաւրաւոր, անպատում, անքնին, անճառ...
Ճաճանչ կիզանող ընդհանրական

թափանցանցութեան խորհրդոյ մեծի:
(ԺԶ, Բ)

Ինչպես նշել ենք, Գրիգոր Նարեկացին իր օրհնաբա-
նությունները ներհյուսում է աստվածանմանության միստիկ

տեսությանը՝ անցում կատարելով մեկից մյուսին. նա զարդացնում է իր այդ տեսությունը՝ մեկնարկելով փառատրության համապատասխան բնատողերից: Բան ԺԹ-ում կարդում ենք.

Անհաս մեծութիւն, անուն ահաւոր, բարբառ կենդանի,
Լուր ցանկալի, ճաշակ ախորժելի,
Կոչումն պաշտելի, բարերարութիւն խոստովանելի,
Ազգումն խնկելի, իսկութիւն դաւանելի,
Էութիւն փառատրելի, գոյութիւն աւրհնաբանելի...
Լոյս ամենայնի, յամենայնի ողորմած, հզաւը,
Երկնային:

Եւ այժմ զլուծեալ եւ զխորտակեալ հողանիւթ անաւթս
Աստուածորէն հրաշակերտութեամբ, աղաչեմ, գթած,
Նորոգ հաստատեա՛,

Զքոյին պատկերս մեղաւք հնացեալս
Ի քրայս հալոցաց կայծակամբ բանիդ,
Պաղատիմ առ քեզ, վերստին ձուլեա՛,
Զխախտեալ շինուածս քումդ հանգստեան
Խորանի մարմնոյս՝

Պահպանաւ հոգւոյս մաղթեմ, բարերար,

Ի բնակութիւն քեզ մաքրագործեա՛:

(ԺԹ, Ա)

Նման օրհնաբանությունները սոսկ վերացական թվարկումներ ու հարակրկնություններ չեն, մտքի աբստրահողաշխատանքին այստեղ միախառնված է նաև զգայական-զգացմունքային շերտը, որով նրանք ներհյուսվում են ջերմեւանդ աղոթքին՝ վերածվելով աղերս-մաղթանքների, որոն-

ցում նշմարվում է Աստծո հետ անմիջնորդ կապի, այդ միության կենդանի զգացողության հարակայող տեսիլքը։ Եվ այստեղ էական են դառնում այն բնորոշումները, որոնք նշում են այդ կապը. Աստծո էական հատկանիշների մեջ շեշտվում են նրա ազդեցության, ներգործության, շնորհատվության, անընդհատ կապի, հրաշագործության արարչական գորությունները, արվեստի հրաշքները։ Աստված համարվում է «Համբուրելի խոսք, սքանչելի ազդում» (Իլ, Է), «Բարձրության պատկեր, բերկրության բարբառ» (ԾԷ, Ա):

Այս թվարկումների մեջ անգամ ուրվագծվում է ստեղծագործության, «Մատեանի» ստեղծման կենդանի ընթացքը, որն իրականանում է աստվածային ներգործությամբ, որը ներշնչում, ազդում է բանաստեղծի վրա, բայց նաև սանձում է նրա ստեղծագործ տարերքը, տպավորում, ամփոփում, «արձանացնում» է նրա խռովահույզ ընթացքը։

Բարեբանեալ Աստուած երկնաւոր...

Փոխարկիչ կարեաց... յարմարիչ բանից,

Սանձարկու լեզուի, շրջադրութիւն շնչոց, կացուցիչ
հագագի,

Ամփոփիչ խորհրդոց, կրթարան կամաց,

արձանացուցիչ յուզմանց...

Որ... իմաստութեամբ նուաճեալ, առ

քեզ դարձուցանես։

(Ղ, Ա)

Ճանապարհ կենաց,

Որ առաջնորդես քաղցրութեամբ դիմելոյա

ի լոյսդ վերին...

**Յուսոյ կերպարան,
ձմարիտ առհաւատչէիւ աղաչողաց մատանց
յայտնի երեւեալ...**

**Ազատութիւն շնորհածիր,
Որ տաս լիապէս առանց փոխատրութեանց փրկանաց:
Առատութիւն աննախանձելի,
Որ քոյին փառաւորութեամբ զանարդ նիւթ հողոյս
ճոխացուցանես:**

**Պայծառութիւն անստուեր,
Որ ճառագայթիւք ահեղ բարձրութեան պարածածկեալ
զթշուառու՝
Կրկին բարդաւաճ առնես:**

(Ղ, Բ)

**Հայեա՛ց, Տէր, երկնից զուարթ քաղցրութեամբ...
Եւ արա՛ անդորր հանգստական դիւրաւոր
ի բազմատագնապս հեծութենէ:**

(Ղ, Գ)

**Հաճախ այդ անվանումները հնչում են հոգու տագ-
նապներն ու խոռվքները փարատելու համար: «Հոգու շուր-
թերով», «ամբողջ սրտով» բանաստեղծը «համբուրում» է
Աստծո անունը: Ուստի աստվածանունությունները կատա-
րում են հոգեռ-զգացմունքային ազդեցության դեր,
մղում են ջերմեռանդ, «ի խորոց սրտի» աղոթասացության:**

**Աստուած յաւիտենական, բարերար եւ ամենակալ,
Ստեղծիչ լուսոյ եւ յաւրինիչ գիշերոյ...
Որ ամենարուեստ իմաստութեամբ քո
Դարձուցանես յայդ զստուերս մահու:**

Աննուազ ծագումն եւ անմուտ արեգակն...

Որ լսես զհեծութիւն կապելոց
Եւ հայիս յաղաւթս խոնարհաց,
Եւ ընդունիս զիսնդրուածս նոցա,
Աստուած իմ եւ թագաւոր իմ,
Կեանք իմ եւ ապաւէն իմ...

Առաքեա՛ զպահպանողական զաւրութիւն աջոյ քոյ
Եւ փրկեա՛ զիս յերկիւղէ գիշերի եւ ի դիւէ չարէ,
Որպէս զի զյիշատակ սոսկալի եւ սուրբ քո անուանդ,
Միշտ համբուրեալ շրթամբք հոգւոյ ըղձութեան շնչոյ.
Կեցի՛ց պահպանեալ ընդ այնոսիկ,
Որ կարդան զքեզ ի բոլոր սրտէ:

(Ղ.Դ, Ա)

Բանաստեղծական անսպառ երևակայությամբ, պատկերավոր անվանումների, փոխարերական պատկերների և մակդիրների առատությամբ հատկանշական է ԼԲ գլուխի գհատվածը: Բանաստեղծը «Հեղում է» իր անվանաշարերը, որ չեն հագեցնում իր «բառային քաղցը», քանզի անկարող են մարդկային խոսքը և հոգու իդերն արտահայտել անարտահայտելին:

Անպակաս լրութիւն...

Անբովանդակելի բնութիւն, անքննելի իսկութիւն,

Հզաւը զաւրութիւն, կարող բարերարութիւն,

անպակաս լրութիւն,

Անճառ ժառանգութիւն, վայելչական վիճակ,

Առատ պատրաստութիւն, անստուեր իմաստութիւն,

Տենչալի տուր, անձկալի ձիր,

**Բաղձալի բերկրութիւն, անտխուր հանգիստ,
Անտարակոյս գիւտ, անկապուտ կեանք,
Անծախելի ստացուած, անփոխանորդելի բարձրութիւն,
Ամէնարուեստ բժիշկ, անսասանելի հաստատութիւն...
Լուսոյ տեսակ, ցնծութեան ցոյցք,**

**աւրհնութեան անձրեւ,
Հոգի երեսաց, զաւրութիւն դիմաց, հովանի գլխոյ,
Շարժարան շրթանց, ազդումն բանի, կառավար անձին,
Բարձրումն բազկի, ձգումն ձեռին, երասանակալդ սրտի,
Ընտանի անուն, մերձաւոր ձայն,
Կցորդութիւն հարազատ, խնամածութիւն հայրենի,
Խոստովանեալ անուն, պաշտեցեալ պատկեր,**

**անպարագիր տիպ,
Երկրպագեալ տէրութիւն, բարեբանեալ յիշատակ,
Խնդութեան մուտք, անվրէպ շաւիղ, փառաց դուռն,
Ճշմարտութեան ճանապարհ, երկնաճեմ սանդուղք:
Եւ այլ բազմութիւն բանից գովեստից
Անհամար կարգաց եւ տանց անբաւից,
Զոր ո՛չ բերէ բերան երկրածին,
Եւ ո՛չ տանի գործի մարմնեղէն,
Եւ ո՛չ կըռեն իղձք հոգեղէն:**

(ԼԲ, 4)

**Այստեղ դարձյալ Նարեկացին խոսում է աստվածային
ձիրքի, ներշնչանքի, շնորհված խոսքի մասին, որ բանա-
ստեղծի շուրթերի շարժարանն է, նրա ազդեցությամբ են
ձեռքերն առ բարձրյալը բարձրանում:**

Աստված ներկայանում է իբրև գերագույն արվեստագետ, ամենարվեստ արարիչ, որ արարման շնորհով է օժտում նաև բանաստեղծին, մասնակցում նրա ստեղծագործությանը:

Եւ արդ, ստեղծիչդ ամենայն եղելոց Քրիստոս...

Ահա, Հզաւը, անքնին, անձառ, բարերար

թագաւոր անմահ,

Առ այս կերպ պատկառանաց ինքնապարսաւս

խոնարհութեան,

Որ ինձէն զանձն մեծաւ ձաղանաւք յոգի դատեցի,

Լի՛ց նուագաւք այսր մատենի

Անարգանաւք ամաւթոյ զդէմսն սատանայի,

Եւ զերեսս կերպի պատկառեցելոյս նշանաւ

խաչիդ զաւրացո՛:

Միասցի՛ կնիքդ լուսոյ ի գեղ տեսակիս...

Արուեստդ հրաշից ի ճակատիս շո՛ւք նշանակեսցի:

(ԿԵ, Բ)

Կենաց աւետիս, կէտ տերունի... ճշգրիտ պատկեր...

Զաւրաւոր, Հնարաւոր, ամենարուեստ...

(ԻԸ, Ե)

Աստծո բարձրագույն անվանումներին ավելանում են ամենահնար արվեստագետը, երկնային ճարտարապետը, արծաթագործը (ԿԹ, Ա), ամենարվեստը, վարդապետը (ՀԶ, Բ), մատենագիրը, որը գրում է բանաստեղծի հոգու ոսկեն տախտակի վրա (ԼԴ, Ժ):

Այսպես, այս թվարկումների ընթացքում, որ արթնաց-

նում, սրում են բանաստեղծի միստիկ աստվածազգացողությունը, շարունակվում է նաև նրա անմիջնորդ գրույցն Աստծո հետ։ Սահմանները ջնջվում են, բանաստեղծի եսը միախառնվում է Աստծուն, Աստված ինքն է, ասես, արարել «Մատեանը», և բանաստեղծը խնդրում է նրան՝ հանուն իր հանդեպ տածած սիրո, ողբերգության մատյանում հիշել և ներել նաև թշնամիներին։

Բարձրեալ անքնին, զաւրութիւն ահեղ,

Տէր արարածոց, թագաւոր երկնի,

Ստեղծիչ հրեշտակաց, գոյարան մտաց,

Հաստիչ հրեղինաց,

Պետ բարի՝ հոգւոց, աջ ապաւինութեան,

Անդորրութիւն հանգստեան,

տեսարան լուսաւորութեան,

Պայծառութիւն բերկրութեան,

ճանապարհ երանութեան,

Պատճառ կենդանութեան, առիթ բանաւորութեան,

Փրկութիւն՝ առանց չարութեան,

առաջնորդ խաղաղութեան,

Պարիսպ ամրութեան, պատուար պահպանութեան,

Ճանկ բոցոյ մեծի աւրհնութեան,

սահման անոխակալութեան,

Թիշեա՛ յայսմ ողբերգութեան մատենի բանիս

խոստովանութեան

Եւ զոր ի մարդկային ազնէ թշնամիս մեր՝ ի բարի,

Եւ արա կատարեա՛ նոցին քաւութիւն եւ ողորմութիւն։

Մի՛ բարկասցիս նոցա վասն իմ, Տէր,

**Իբրեւ զսուրբս բամբասողաց,
Առ յաճախ սիրոյդ, որ ի յիս...**

(ԶԳ, Ա)

Բանաստեղծը շեշտում է սրբի իր համարումը և աստվածային սերն իր հանդեպ:

Այդ ոգով էլ նա ավարտում է իր «Մատեանը»՝ խնդրելով Աստծուն իր ամենազոր խոսքով լրացնել իր խոսքի թերություններն ու վրիպումները:

**Արեգակն արդար, ճառագայթ աւրհնեալ,
Լուսոյ կերպարան, փափագ անձկութեան,
Բարձրեալ անքնին, զաւրեղ անպատում,
Բարւոյ բերկրութիւն, յուսոյ տեսութիւն,
Փովեալ երկնաւոր, թագաւոր փառաց,
Քրիստոս արարիչ, խոստովանեալ կեանք:
Եւ արդ, զթերութիւն վրիպանաց բազմասիսալ**

Ճայնի եղկելոյս,

**Ամենազաւրդ բանիւ լցեալ,
Մատուսցե՛ս յաղերս հաճութեան Հաւը**

Քում բարձրելոյ...

(ՂԵ, Ա)

Ինչպես տեսնում ենք, արեոպագիտյան «խորհրդական» աստվածաբանությունը յուրովի արտահայտություն է գտել Գրիգոր Նարեկացու «Մատեանում»։ Այն ծառայում է հեղինակի ստեղծագործական խնդիրներին, երկիրուն նպատակին, ներհյուսվելով, իբրև օրհներգություն և փառատրություն, աղոթասացությանը՝ «մերձավոր», ան-

միջնորդ աստվածաբանությանը՝ ըստ Դիոնիսիոսի: Այդօրինակ հատվածներն ու թվարկումները՝ մտային հայեցողությունից, մտավոր վերառաքումից բացի, նարեկացուքնագրերում ունեն նաև հուզական-զգացմունքային ազդակների գործառույթ. դրանք նախապատրաստում են բանաստեղծին հասնելու հոգեոր վերառաքման վերին օղակին՝ հուզագեղությանը, որ ներկայացնում է հոգեոր զգացմունքի բարձրագույն աստիճանը: Պատահական չէ, որ հաճախ այդ «աստվածանունության» շարքերին, մտքի վերացական ներթափանցումներին, «անբարբառ» ու «անաչյա» աղոթքներին հաջորդում են բանաստեղծի ամենաինտիմ խոստովանությունները և բանաստեղծական ներքին փորձի բացահայտումները:

Այդ փորձը բանաստեղծը խտացրել և բանաձեւել է «Մատեանի» մի տողում.

Անմատչելի հեռաւոր եւ
անընդմիջելի մերձաւոր...
(հԳ. Ա)

ԶԱՐՄԱՆՔԻ ԵՎ ՀԻԱՑՄԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԵՈՊԱԳԻՏՅԱՆ ԷՔՍՏԱՏԻԿ ԱՍՏՎԱՇԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՅԱՆ ՄԵջ

Էքստատիկ աստվածաբանության նորավատոնական համակարգի մեջ ընդգծվում են զարմանքի, հիացման հասկացությունները, որ կապվում են նրա բոլոր մակարդակների հետ²⁹²: Սրան նվիրված է Դիոնիսիոսի «Յաղագս աստուածայնոցն անուանց» երկի «Յաղագս զարմացման» գլուխը: Այս գաղափարը կապվում է Բարու, Ազնիվի, Սիրո աստվածային սկիզբների, բանական և զգայական աշխարհների փոխներթափանցող հիերարխիկ համակարգերի էքստատիկ ընկալման և հայեցողության հետ, որ բանական մարդու զարմանքն ու հիացումն են շարժում: Այս տեսակետից այն առնչվում է և «նշանական աստվածաբանության» էսական սկզբունքի՝ պատկերների, «մարմնավոր» օրինակների նշանների, խորհրդանշների միջոցով աստվածային էությունների աշխարհը թափանցելու հետ²⁹³:

«Եւ զարմացուցիչ աստուածայինն տռփումն. ոչ թողլով յինքեանց լինել զտոփեալսն այլ տռփելեացն...

Համարձակելի է եւ զայս ասել յաղագս ճշմարտութեան, թէ եւ ինքն ամենայնի պատճառն <ազնուիւ> ու բարւով տռփմամբ... Ի գերագոյն՝ քան զամենայն եւ յամենեցունց արտաքս անջատմանէն առ ի յամենեսին լինելն

²⁹² Այս հասկացության մասին նարեկյան դպրոցի տեսական ու ստեղծաբանական համակարգում տե՛ս Հ. Թամրաղյան, Գիրք Բ, էջ 275-279:

²⁹³ Նույն տեղում, էջ 275:

զիջանէ՝ ըստ զարմացողականին գերագոյ զաւրութեան անփոխարունի յինքենէ ...»²⁹⁴:

Զարմանքը, զարմացումը՝ կապվելով նաև հոգեոր էքստազի բարձրագույն մակարդակի՝ խորհրդական աստվածաբանության հետ՝ վեր է համարվում ամենայն խոսքից ու գիտությունից: Նրանց միջոցով միստիկը վեր է բարձրանում զգայական աշխարհի հայեցողությունից և ճամփորդում է բանական տիեզերքում՝ ամեն ինչից անդին «Հպվելով Աստծուն, որքան մարդուն կարողություն է տրված»:

«Ոչ անուն է նմա եւ ոչ բան, այլ յանկոխս է <արտաքս> անջատեալ... Վասն որոյ եւ նոքա զոր ի ձեռն անճառութեանցն ի վեր ճանապարհ նախապատուեցին, որպէս ի զարմացման եղեալ անձն իւրոցն համացեղից, եւ ընդ ամենայն աստուածայինսն իմացմունն ճանապարհորդեալ, որպէս արտաքս համբարձեալ քան զամենայն անուն եւ բան, եւ գիտութիւն, յետոյ քան զամենայն ի նա հպեալ՝ որքան ինչ մեզ է կարողութիւն հպել ի նա»²⁹⁵:

Այն կապվում է նաև Աստծո՝ իբրև «սրբագան խավարի» հասկացության հետ, որ զուգորդվում է անմատույց լույսի, «գերագո ճառագայթի» ըմբռնման հետ. «Քանզի նորա ամենակատար անըմբռնեաւ եւ արձակ եւ մաքուր զարմացմամբ առ գերագոյ ճառագայթն աստուածայնոյն խաւարի համբարձիս՝ զամենայն թողեալ եւ յամենայնէ ի բաց լուծեալ»²⁹⁶:

²⁹⁴ Դիոնիսիոս Արեոպագացի, Էջ 166-167:

²⁹⁵ Նույն տեղում, «Յաղագս աստուածայնոցն անուանց», Էջ 221:

²⁹⁶ Նույն տեղում, «Յաղագս խորհրդականի աստուածաբանութեան», Էջ 224:

Այս հասկացությունները, աստվածանաչողության այս հղացքը ևս գալիս են Պլատոնից, Արիստոտելից և Պլոտինոսից: Պլոտինոսն իր «Էնեադներում» այս առնչությամբ հղում է Պլատոնին.

«Հանուրից վեր գտնվողը չի ձգտում գեղեցիկ լինել. այն առաջինն է հայտնվում ի հայեցումն, զի մաքուր Զեն է, զի Բանականի հայեցումն է, որը նաև տեսանելու զմայլանքն է: Եվ Պլատոնը, ցանկանալով ցուցանել այս իրուղությունը, բերում է մեզ համար ավելի ընկալելի օրինակ. նա ստեղծում է Արարիչ-Ճարտարագետի կերպարը և ներկայացնում է նրա ստեղծագործությունը: Այդ ճանապարհով նա ձգտում է երևանել, թե որչափ զմայլելի է Հարացույցի և Գաղափարի գեղեցկությունը: Զի եթե որևէ մեկը հիանում է մի բանով, որ գոյություն ունի ըստ ուրիշի, ապա իր հիացքն ուղղում է առ այն, ըստ որի արարյալն աշխարհ է եկել²⁹⁷... Պլատոնն [այդ կապակցությամբ] պարզաբանում է, որ «Հիացածին» ինքն առաջնորդում է դեպի հարացույցը և ըստ պատշաճի ըմբռնում այն, ինչ բառերից անդին է: Եվ ապա ավելացնում է. «Հիացածն ինքը ձգտում է էլ ավելի նմանվել Հարացույցին»²⁹⁸... Այնուհետև [Պլատոնն] ավելացնում է. եթե Հարացույցը չլիներ ծայր աստիճան գեղեցիկ՝ հանդերձ անանց Գեղեցիկով, այդ դեպքում ի՞նչը կարող էր ավելի գեղեցիկ լինել այս տեսանելի [տիեզերքից]»²⁹⁹:

²⁹⁷ Plato, Tim., 37c:

²⁹⁸ Plato, Tim., 42e:

²⁹⁹ Պլոտինոս, Էնեադներ, V, 8, Էջ 92:

Պլոտինոսը տալիս է նաև մարդու մտահայեցողական շարժման, նրա միստիկ վերառաքման փորձի նկարագրությունը, որում մտքի բանական բոլորակաձև շարժումը հանդես է գալիս իբրև մտքի հիացում և հոգեզմայլ աղոթք:

«Ուստի եկեք տրամախոռության ճանապարհով ըմբռնենք այս [տեսանելի] տիեզերքը՝ թողնելով, որ նրա յուրաքանչյուր հատված մնա այնպիսին, ինչպիսին որ կա՝ չմիախառնված [ուրիշին]: Եկեք միաժամանակ, որքանով դա հնարավոր է, ի մի բերենք այդ բոլորակն այնպես, որ հատվածներից մեկի, օրինակ, արտաքո ոլորտի երեալու պարագայում անմիջապես հետեւ արեգակի և մյուս լուսատուների մտապատկերը... Եվ այնուհետև թող ի հայտ գան հողը, ջուրը, բոլոր կենդանի արարածները՝ ասես մի պայծառ բոլորակի ծիրում: Եվ թող բացվի քո հոգում նաև այդ բոլորակի մտապատկերը, որ պարառում է նշված բոլորը... Պահպանելով քո մեջ այդ մտապատկերը՝ ընկալի՛ր նաև մյուս բոլորակը՝ հեռացնելով, սակայն, նյութի զանգվածը: Հեռացրու նաև տարածությունը և քո մեջ առկա նյութի զգայական պատկերը: Եվ մի՛ փորձիր ընկալել այդ բոլորակից չափերով ավելի փոքրը, կանչի՛ր Աստծուն, որն արարել է այն ամենը, ինչի մտապատկերը դու ունես, աղոթի՛ր,

Այս աղբյուրներից է օգտվել Դավիթ Անհաղթը: Այդ մասին ուսումնասիրողը (Ս. Արեգացյան) գրում է. «Զարմանքի՝ որպես փիլիսոփայության սկզբնապատճառի մասին խոսում է Պլատոնը «Թեետետ» երկխոսությունում (155 d), ինչպես նաև Արիստոտելը՝ «Մետաֆիզիկայում» (I, 2, 982 b 10): Դավիթը ելնում է «Թեետետից», քանի որ քիչ հետո բերում է ծիածանի (իրիդայի՝ թավմանտի՝ Զարմացողի դստեղ) օրինակը, որը առկա է Պլատոնի շարադրանքում (տե՛ս Դավիթ Անհաղթ, Երկեր, ծնթ., էջ 315):

որ գա, հայտնվի: Եվ թող նա գա, հայտնվի՝ բերելով իր հետ տիեզերքը, նա, ում ծիրում են գտնվում [մնացած] բոլոր աստվածները, նա, ով մեկ է և բոլորը»³⁰⁰:

Պլոտինոսը տալիս է Աստծո արարչագործության հայեցողության միջոցով առ Սկզբնատիպը բարձրանալու մի բանաձև, որը տիպական է նորպատոնականության համար. «Ինչ-որ մեկը... Եթե նա հիանում և զարմանում է այս զգայական տիեզերքով, ըմբռնում դրա մեծությունը, գեղեցկությունը, հավերժական շրջապտույտի կարգը, ճանաչում դրա ծիրում գտնվող տեսանելի և անտես աստվածներին, ոգիներին, կենդանի արարածներին, բոլոր բույսերը, ապա թող համբառնի դեպի նրա արքետիպը»³⁰¹:

Աստծո «զարմանագործ» արարչագործությամբ սքանչացման, նրա միջոցով Արարչին հայելու և փառատրության վառ պատկերներ են հանդիպում Անանիա Նարեկացու «Սակս բացայատութեան թուոց» և Գրիգոր Նարեկացու «Վասն ուղիղ հաւատոյ» երկերում³⁰²:

«Դարձեալ բանալ պարտ է զակն ի տեսութիւն արարածոցս, եւ տեսանել զսքանչելի գործս Աստուծոյ. եւ ի տեսանելն մարմնոյ աչաւք՝ ընդ նմին բանալ եւ զմտաց աչսն,

³⁰⁰ Պլոտինոս, Էնեադներ, էջ 92-93:

Ուսումնասիրողն (Ա. Ստեփանյան) այս հատվածի առնչությամբ նշում է, որ Պլոտինոսը «նկատի ունի տիեզերքի հոգեմտավոր պատկերը: Համաձայն Պլոտինոսի՝ վերջինս իբրև լուսեղեն բոլորակ (կամ քառանիստ, կամ ութանիստ, կամ տասանիստ) բացահայտվում է այն հոգիներին, որոնք Հիշողության ու Սիրո ճանապարհով հասցրել են վերադառնալ մաքուր գաղափարների աշխարհ» [Tim., 49a, Phaedr, 253e]:

³⁰¹ Պլոտինոս, Էնեադներ, V, 1, էջ 7:

³⁰² Տե՛ս Հ. Թամրապյան, Գիրք Բ, էջ 277-278:

եւ իմաստութեամբ տեսանել զզարմանագործութիւն արարածոցս. ըստ որում եւ Դաւիթ տեսեալ ասէր, «Տեսի զերկինս զգործս մատանց քոց՝ զլուսին եւ զաստեղս զորս դու հաստատեցեր» (Սաղ. Ը, 4): Այսինքն՝ հայել յերկնի բարձրութիւն եւ յընդարձակութիւն, ի լուսաւորացդ պայծառութիւն եւ ի գեղեցկակարգաւորութիւն. եւ որ յետ այսորիկ յամպս, յանձրեւս, ի հողմս, ի ձիւնս, ի սառն, ի կարկուտ, յերկիր, ի բոյսս, ի տունկս, ի մարդոյս գեղեցկակազմութիւն, յանասունս, ի գազանս, ի թռչունս, ի ծովս, յաղբիւրս, ի գետս. եւ զի՞ եւս մի ըստ միոջէ ասացից, յայլ ամենայն եղելութիւնս... եւ ի տեսանելն զայսպիսի անպատմելի արարչութիւն, շարժել այնուհետեւ զմիտս եւ զլեզու ի փառաբանութիւն Աստուծոյ, եւ յամենայն եղելոցս փառաւորեն զԱրարիչն... Այլ մարդիկ մտաւորք եւ բանաւորք՝ տեսանելով զոր ի նոսա սքանչելագործութիւն՝ փառաւորեն զԱրարիչն:

Եւ... յայսպիսի հրաշազան եւ զարմանագործ տեսութենէ իմաստաբար հայեցողքն զԱստուծած փառավորէն...»³⁰³:

Փառաբանության, զմայլանքի, «Հոգեոր հրճվանքի ու տարփանքի», ներգործուն այդ ուժերի մարմնավորմամբ հրեշտակների հետ փառատրության հրաշալի նմուշ է Գրիգոր Նարեկացու՝ Աստվածածնին նվիրված ներբողը:

«Մեծ է առ նոսա հիացումն սքանչելի գործոյս այսորիկ, քան զհասումն երկրաւորացս բանից պատմութեան:

Բայց սակայն երգեսցէ բանս որքան զաւրեսցէ ի բաղձանաց սրտի փափագման՝ նմին ընծայ աւրհնառաք փա-

³⁰³ Գրիգոր Նարեկացի, «Վասն ուղիղ հաւատոյ», ՄՀ ԺԲ, Էջ 1052-1053:

ուաց տեսչութեան. նա զի թէ երկինք փառացն Աստուծոյ լինին պատմաբանք... ապա այժմ յերեւել Բանին ի մարմնի եւ լինել մարմին Աղամեան կերպիւ, հարկ է յոյժ ճահողապէս՝ ոչ միայն անմարմնոցն, այլ եւ զգայնոցս արժանաբար ըղձականութեամբ հնչել զձայն բերկրանաց բարբառոյ բանից աւրհնութեանց։ Քանզի խոնարհ այս երկիր եղեալ տիրակիր, գտաւ լծակից ընդ աստուածակիր երկինն վերին. վասն որոյ խրախուսեալ հոգեւորական հրճուանաւք երկուցն դասուց ի մի խումբ պարու, տաւնս տարեկանս Փրկչին փայլման կատարեն, զգայական սեռս եղականաց, եւ անմարմին դասք հրեշտակաց. յերեւելիս տեսականաց, եւ յիմանալիսն ծածկեցելոց։ Ընդ որս եւ մեք կցորդք այսաւը եկեղեցի դուստր վերինն յարկի երկնայինն առագաստի, պարեմք հոգեպէս տարփմամբ՝ երգելով քեզ ընդ երկնայնոցդ ձայն սրբասաց։

Ո՞վ ամենասուրբ արարչընկալ Տիրուհի եւ Աստուածածին, որ զանտանելին երկնի բարձրութեան եւ երկրի լայնութեան, ծովու խորութեան եւ անդնդոց անհասութեան զ'իքէն մարմնացեալն իսկութեամբ էութեան յորովայն անձուկ սուրբդ քում սենեկի կրել զաւրեցեր»³⁰⁴:

Աստծո մարդեղության, նրա արարչագործության հանդեպ հոգեկոր սքանչացումը, տարփանքը վերածվում է երգի, ցնծության, փառաբանության։ Այս առումով գեղարվեստական կատարելություն են «Տաղ եկեղեցւոյ» և «Մեղեդի Ծննդեան»՝ նույն տաղի տարբերակները³⁰⁵։ Նարեկացին իր տաղն անվանում է «Երգ զարմանալի, երգ շարժ-

³⁰⁴ Գրիգոր Նարեկացի, «Ներբողի ի Սուրբ Կոյսն», ՄՀ ԺԲ, էջ 966:

³⁰⁵ Տե՛ս Հ. Թամրապյան, Գիրք Բ, էջ 279:

վարժենի...», որ Աստվածամոր և Հրեշտակների հանդրվանն է դառնում («Տեղի եղեք բարեկերտին»). այս սկզբնատողերի մեջ արդեն արտահայտված է նրա նորպլատոնական հղացքը՝ գդայական և բանական աշխարհների միեղենության, փոխներթափանցող, իրար ընդառաջ հոսող շարժման ձևերի մասին: Աստվածամոր դիմագծերն ու շարժումները կամարաձև են, նրա աչքերից, իբրև արեգակներից, առավոտյան «ծիծաղախիտ ծովի նման» լույս է բխում, նրանից «սեր է կարկաչում», նա շարժվում է՝ «հանդարտիկ խաղում է, թեկնիթիկին ճեմում է» և լուսեղեն բխումների մեջ հոսում է էություններին ընդառաջ («Հոսէր զելեւեալսն ընդ միմեանս...»): Աստվածամոր շարժումը ներդաշնակ է տիեզերական համաչափությանը, նա շարժվում է էությունների աշխարհի հետ համընթաց, աստվածային բոլորակաձև հարաշարժության ծիրում: Աստվածամայրը տիեզերական բարեկերտության, ներդաշնակության կատարելատիպ է: Դրա մեջ է այս իսկապես զարմանահրաշտաղինի, «շարժվարժենի», ժողովրդական բառ ու բանով հագեցած նկարագրությունը Վերածննդի մեծ նկարիչների կտավներն է Հիշեցնում, որոնց հղացքի հիմքում ևս նորպլատոնական գեղագիտությունն է:

Երգ զարմանալի, երգ շարժվարժենի,
Տեղի եղեք բարեկերտին:
Խորհուրդ, խորհուրդ համերամ,
Զարդ երամից, զարդ...
Յունից նրբենից կից ի մի կից կամար,

Նէճեմ, թէ նէճեմ միջաւրէի ժամ:
 Աչքն ծո՛վ ի ծո՛վ ծիծաղախիտ
 ծաւալանայր յառաւաւտուն՝
 Երկու փայլակնաձեւ արեգական նման...
 Զեռացն եղիշոյ կամարաձեւ կապէր.
 Ատիճա՛ղ -պատիճա՛ղ ստղի-հտղի հուռն.
 Հոսէր զեղեւեալսն ընդ միմեանս,
 Հանդարտիկ խաղայր, թէկնիթիկին ճեմ,
 Բերանն երկթերթ, վարդն ի շրթանցն կաթէր.
 Լեզուին շարժողին քաղցրերգանայր տաւիղն...
 Ծոցն լուսափայլ, կարմիր վարդով լցեալ,
 Ծղիքն ծիրանի՝ մանուշակի հոյլք...
 Գեղեցիկ պատմուճանաւն զարդարեալ էր,
 Ի կապուտոյ, ի ծիրանոյ, ի բեհեզոյ, ի յորդանէ
 ոսկեշողէր գոյնն:
 Գաւտին՝ արծաթափայլ, ոսկետտուն, կամարակապ...
 Անձինն ի շարժել մարգարտափայլ գեղովն,
 Ոտիցն ի քայլել՝ լոյսն ի կաթիլ առնոյր:

(«Ճաղ եկեղեցւոյ ի Գրիգորէ նարեկացւոյ»)³⁰⁶

Այսպես իր տաղերում բանաստեղծը՝ բռնկված աստվա-
 ծային սիրով, ստեղծագործական տարփանքի մեջ «Ճամ-
 փորդում է աստվածային լուսեղեն ծիրում», արարչության
 մեջ: Եվ հոգեոր սքանչացման մեջ նա տարփողում է այդ
 արարչությունը:

³⁰⁶ Տե՛ս ՄՀ ԺԲ, Էջ 713-714:

*

Այսպիսով՝ Գրիգոր Նարեկացու երկերն ի հայտ են բերում նրա ստեղծագործության խոր աղերսներն արեոպագիտյան էքստատիկ աստվածաբանության բոլոր ոլորտների հետ։ Դիոնիսիոսն իր գրվածքներում զարգացնում է աղոթքի և օրհնաբանությունների մի ամբողջական տեսություն։ Դրանց շարքում են աղոթասացական աստվածաբանությունը, նշանական աստվածաբանությունը (պատկերի տեսությունը), էքստատիկ («տարփողական») աստվածաբանությունը, խորհրդական (խորհրդապաշտական) աստվածաբանությունը, որն իր մեջ ներառում է ճառելի (դրական, կատաֆատիկ) և անճառելի (ժխտողական, ապոֆատիկ) օրհնաբանության եղանակները։ Այս բոլորն ամբողջանում են օրհնաբանական աստվածաբանության մեջ, քանի որ Դիոնիսիոսն օրհնաբանությունն ու աստվածաբանությունը նույնացնում է երկրային ու երկնային քահանայապետության հիերարխիկ չղթայի մեջ։ Աստվածաբանական համակարգի այս բոլոր ուղղություններն իրենց գոյաբանական, տիեզերագիտական, գեղագիտական ոլորտներով ներթափանցել են Գրիգոր Նարեկացու ստեղծագործության խորին շերտերը։

Այս խորհրդավոր բնագրերով ներթափանցված է ամբողջովին Գրիգոր Նարեկացու աղոթքի տեսությունը, տաղերգությունը, ներբողագրությունը, ողջ աստվածաբանական համակարգը։ Դիոնիսիոսի հետ են կապված «Մատեանում» սրբազն տեսիլքների բացահայտումները (տե՛ս Հեռոթեոսի՝ Աստվածամոր մարմնի հայեցողության և տեսի-

լային հափշտակության հատվածը), նրա պատկերընկալման խոր հղացքը նարեկացին զարգացնում է իր ստեղծագործության ծիրում՝ կապելով «խոսքի զորության արվեստի» հետ: Դիոնիսիոսի բնագրերը զարկ են տվել նրա բանաստեղծական անանց երեակայությանը, մտքի թռիչքին, խորհրդավոր մտքերի, պատկերների ստեղծագործական գորեղ ներուժն արտահայտված է Գրիգոր նարեկացու երկերում: Ավելին, դրանք էական ազդեցություն են թողել նրա պոետիկայի և բառաշխարհի կազմավորման և զարդացման վրա՝ սնելով նրա բառաստեղծման տարերքը, մղելով նրան անընդհատ նորաբանությունների: Այդ խորհրդավոր բանաձեռումները, բանական աշխարհի վերամարմնավորումներն ու տեսիլքները նրա առաջմղիչ գաղափարները, ստեղծագործական սկիզբներն են:

Նարեկացին դիոնիսյան բնագրերը մտցրել է արարման ծիրի, բանաստեղծական շրջապտույտի մեջ՝ վերածելով բանաստեղծությունն անվերջ նորաբարության, նորասացության, ստեղծաբանության, արարման շրջապտույտարերքի, ստեղծելով մի բոլորովին նոր բառաշխարհ, Դիոնիսիոսի օրհնաբանական աստվածաբանությունը մտցնելով աստվածամերձ նոր ոլորտների մեջ³⁰⁷:

Եվ վերջապես, Նարեկացու ստեղծագործության մեջ արտացոլված են արեոպագիտյան բնագրերի գոյաբանական խոր հղացքները: Առհասարակ Նարեկյան դպրոցի տեսական համակարգում ընդգծված է նորպլատոնականության գոյաբանության ազդեցությունը, որի առանցքն է

³⁰⁷ Տե՛ս Հ. Թամրապյան, Գիրք Ա, էջ 313:

թվի փիլիսոփայությունը։ Գիտական-փիլիսոփայական այս ավանդույթն է հիմք դարձել նաև Նարեկյան դպրոցի գեղագիտության և արվեստի տեսության համար։ Այստեղ է, որ Նարեկյան դպրոցի ներկայացուցիչները հանդես են գալիս հոգեոր արվեստի դերի, գոյաբանական-իմացաբանական նշանակության, ստեղծման ընթացքի և բանական տիեզերքի հետ ունեցած կապի նոր մեկնաբանություններով։

**ՆՈՐՊԼԱՏՈՆԱԿԱՆ ԳՈՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ ԵՐԿԵՐՈՒՄ**

**ՆՈՐՊԼԱՏՈՆԱԿԱՆ ԹՎԻ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ԱՐՎԵՍՏԻ ԳՈՅԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ.
ՄԻԱԿԸ, ԳԻԾԸ, ՇՐՋԱՆԸ, ԳՈՒՆԴԸ՝ ԻԲՐԵՎ
ԱՇԽԱՐՀԱՍՏԵՂԾՄԱՆ ՆԱԽԱԶԵՎԵՐ**

Գրիգոր Նարեկացու տաղերգության մեջ, Անանիա Նարեկացու հետևողությամբ, առկա է նաև պյութագորական-պլատոնական թվի փիլիսոփայության, գոյաբանական աստիճանակարգության ուղղակի ազդեցությունը, ըստ որի՝ աշխարհը գոյավորվում է թվերի՝ իբրև սուրբ մոնաղների և վերերկրային գոյերի վայրէջք և մարմնավորում:

Ըստ պյութագորական թվի փիլիսոփայության, թվերն աստվածային, անբաժանելի էություններ են, բոլոր գոյերի սկզբնապատճառներ՝ միաժամանակ անխզելիորեն կապված զգայական, տարածական մարմինների և իրերի աշխարհի հետ։ Պլատոնի ուսմունքի մեջ թիվը՝ իբրև գաղափարների աշխարհի անքակտելի մաս, կտրվում է զգայական աշխարհից՝ հանդես գալով իբրև զգայական աշխարհը մարմնավորող, կազմավորող գաղափար։ Թվերի հայեցողությունը «ուժգնորեն մղում է հոգին դեպի վեր և ստիպում է խորհել ինքնին թվերի մասին... թույլ չտալով, որ որևէ մեկը փոխարինի նրանց տեսանելի և շոշափելի թվակիր մարմիններով»³⁰⁸։ Թիվը չի տրվում զգայական ընկալումներին, այն տրվում է միայն բանականությանը՝ իբրև մաքուր գաղափար ու գոյ։ Փիլոն Ալեքսանդրացու փիլիսոփայության կարեոր շերտն են կազմում թվերի աստվածային էության

³⁰⁸ Տե՛ս Պլատոն, Պետություն, VIII, 525 a-b:

մեկնաբանությունները. Նրա փիլիսոփայության այս հատվածը ուսումնասիրողները բնորոշում են իբրև պլատոնական-նորպյութագորականություն³⁰⁹: Հետեւելով այս ավանդույթին՝ Անանիա Նարեկացին ևս իր «Սակս բացայայտութեան թուոց» երկում մեկնում է թվերը որպես մաքուր էություններ, որ հաղորդակից են դարձնում բանական, աստվածային աշխարհին: Նրանք ուղեկցում են դեպի «իմանալի» աշխարհի հայեցողությունը՝ անքակտելի, անտրոհելի, աննյութեղեն, կատարյալ գոյությունների, հավերժական էությունների «վերին կայաններ», որ այս դեպքում համընկնում է Պլատոնի մշտնջենական գաղափարների աշխարհին³¹⁰:

Այս երկը թվային միստիկան և նրա աստվածաբանական, գոյաբանական, իմացաբանական և բարոյագիտական ակունքները բացահայտող առայժմ մեզ հայտնի միակ ամբողջական գրվածքն է միջնադարյան հայ մատենագրության մեջ: «Սակս բացայայտութեան թուոց»-ը, որի անկյունաքարն է «հեթանոս» իմաստասերների զարգացրած թվի փիլիսոփայությունը, միջնադարյան կրթական համակարգի

³⁰⁹ Այս մասին տե՛ս **Ա. Լօսեվ**, *История античной эстетики; Поздний Эллинизм, "Филон Александрийский"*, М., 1980, сс. 94-96.

³¹⁰ Անանիա Նարեկացին այս մասին նշում է միակի և ութնյակի խորհուրդներին անդրադառնալիս (տե՛ս Անանիա Նարեկացի, «Սակս բացայայտութեան թուոց», ՄՀ, Ժ 442, 449-450): Նորպատոնական այս տեսության արտացոլումը Անանիա Նարեկացու «Սակս բացայայտութեան թուոց» երկում քննել ենք նախորդ ուսումնասիրության համապատասխան բածնում (տե՛ս Հ. Թամրապյան, Գիրք Բ, էջ 184-200: Այս մասին տե՛ս նաև Հ. Թամրապյան, Գրիգոր Նարեկացին և նորպատոնականությունը, «Պյութագորա-պլատոնական փիլիսոփայությունը Նարեկացին դպրոցի գիտական-գրական ավանդույթում», էջ 95-146):

Համար հատկանշական՝ «ներքին» և «արտաքին» գիտելիքների մի բարդ համադրություն է:

Այստեղ շոշափվում են և բնագիտական, իմացաբանական և բարոյագիտական խնդիրներ, որոնք իրենց հերթին աղերսվում են Անանիա Նարեկացու և Գրիգոր Նարեկացու այլ աշխատություններին՝ ստեղծելով մի միասնական տեսական կառույց, ուր անտիկ ակունքները և նորպլատոնական ավանդույթը ներհյուսված են նորպլատոնականության քրիստոնեացված տարբերակի, միջնադարյան միտափիկ բարոյագիտության և արվեստի տեսության հետ:

Իր թվի փիլիսոփայության գոյաբանական-իմացաբանական, տարբերաբանական, բարոյագիտական կառույցն ստեղծելիս Անանիա Նարեկացին մեծ կարևորություն է տվել Պյութագորասի, Պլատոնի, Փիլոն Ալեքսանդրացու, Դավիթ Անհաղթի, Դիոնիսիոս Արեոպագացու տեսություններին, որոնցում այն ենթարկվել է խոր ու համակարգված մշակման:

Մեկ թվի մեկնության ժամանակ նա ուղղակիորեն հղում է Պլատոնին և պյութագորականներին. «... որպէս ասէ Պլատոն, թէ՝ Ամենայն իրք հարկ է սկիզբն մի գոլ... բայց զսա ասացին պիւթագորեանքն ոչ թիւ, այլ սկիզբն թուոյն»³¹¹: Փիլոն Ալեքսանդրացու և Դավիթ Անհաղթի թվային խորհրդաբանության ազդեցությունն առավել ակնհայտ է չորս և յոթ թվերի մեկնության մեջ, որոնք հագեցած են բարոյագիտական և բնագիտական բազմաթիվ

³¹¹ Նոյն տեղում, էջ 442:

տվյալներով և թվային զուգադրություններով³¹²: Ինքը՝ Դավիթ Անհաղթը, չորս թիվը մեկնելիս վկայակոչում է Պյութագորասին³¹³: Մեկ այլ տեղ նշում է, որ թվերի միջոցով բանական աշխարհը, անմարմին էությունները ճանաչելու տեսությունն առել է Պլոտինոսից³¹⁴:

Թվի փիլիսոփայության, թվային միստիկայի հետ կապված էական ու տեսանելի առնչություններ կան Գրիգոր Նարեկացու երկերի որոշ հատվածների և Անանիա Նարեկացու «Սակս բացայայտութեան թուոց» աշխատության միջև: Հիշարժան է հատկապես յոթ թվի մեկնաբանությունը.

Իսկ միւսն զանհանդերձելի երկիր որովայնին սենեկի՝
Եւթնեակ զաւակաւք բարգաւաճեցոյց,
Որ է թիւ անբաւութեան՝ զբնաւն նշանակելոյ
գէութիւն,

³¹² Տե՛ս Հ. Թամրապյան, Գիրք Բ, էջ 184-200, տե՛ս Փիլոնի Հերքայեցւոյ ճառք, էջ 109:

³¹³ «Փիլիսոփայության սահմանումների մեջ եղած տարբերություններն ընդամենը չորսն են այն պատճառով, որ պյութագորականների մոտ չորսը մեծ հարգանք էր վայելում. նրանք, Պյութագորասին երդում տալով, ասում էին՝ «Երդգում ենք բնության մշտաբուխ աղբյուր՝ քառյակը մեզ ավանդողին»: Նրանք մշտաբուխ էին անվանում չորս թիվը՝ նկատի ունենալով չորս տարբերը, և դրա համար պյութագորականների մոտ չորսը մեծ հարգանք էր վայելում, և դա կամ չորս տարբերի պատճառով, կամ հոգու չորս առաքինությունների...» (Դավիթ Անհաղթ, Երկեր, էջ 98-99):

³¹⁴ «Իսկ որ բնագիտությունից հետո պետք է դիմել մաթեմատիկային, դրա մասին հրահանգում է հրաշալի Պլոտինը՝ ասելով, որ «Նորագարժներին անմարմին էությանը մերձեցնելու համար պետք է ուսուցանել մաթեմատիկա. նրա միջոցով անմարմին էությունը գիտելի է դառնում» (Դավիթ Անհաղթ, Երկեր, էջ 106. տե՛ս Պլոտինոս, Էննեադներ, I 3, 157):

**Աստուածութեանն յարակայութեան սահման
անհետազաւտելի...**

**Այս թիւ պանծալի, որում ո՛չ է կէտ կցորդի եւ
ոչ սպառուած վախճանի,**

**Այլ կոյս ոմն է՝ ուրոյն ընտրութեամբ նուիրեալ յաւէտ
Անձառ վիճակաւ համայն յաւիտենիւ,
Թժուարաթարգմանելի մերոց իմաստից...**

*(ԼԱ, Ա)*³¹⁵

Ահա մի այլ հատված.

**Ահա վա՛յ ինձ եւթնիցս անդամ կրկին եղկութեամբ,
Հստ չափոյ կշռութեան այսր համարոյ,
Որ գանբաւութիւնս թուոց պարագրէ...**

(ՀԹ, Գ)

³¹⁵ *Տե՛ս Հ. Թամբրաղյան, Գիրք Բ, էջ 212: Հմմտ.՝ Դավիթ Անհաղթ.* «Պարտ է գիտել, եթէ եւթն թիւդ կոյս լսի, որպէս Աթենայ և ժամանակ:
Եւ կոյս՝ վասն զի ամենայն թիւ ի ներքոյ տասնեկիդ կամ ծնանի զոք
կամ ծնանի յումեքէ. իսկ եւթն ոչ ծնանի զոք ի ներքոյ տասնեկիդ և ոչ
ծնանի յումեքէ... Արդ այսպէս և Աթենայ կոյս լսի...» (Դաւիթ Ան-
յաղթ, Երկասիրութիւնք փիլիսոփայականք, էջ 82-83): «Ի ներքս տաս-
նեկի թիւք, կամ ծնանին կամ ծնանեն, զի ներքս տասնեկին՝ զնոյն: Իսկ
եւթներակն ոչ ծնանէ զոք զներսոյց տասնեկի թուոցն, և ոչ ծնանի
յումեքէ: Հստ որում ասելով զնա պիթագորեանքն մշտնջենաւորակու-
սին և անմաւրն՝ միակին նմանեցուցանեն, զի ոչ ծնաւ և ոչ ծնցի» (Փի-
լինի Հերբայեցւոյ ձառք, «Այլաբանութիւն», էջ 109): «Իսկ սքանչելի
թիւ է-երորդիդ յոգնաթիւ ունի խորհուրդ զանազանեալ անխառն տա-
րորոշ թիւ, սեռն և անապական բնութիւն, զի ոչ ծնանի զոք, և ոչ ծնա-
նի յումեքէ ի ներքոյ Ժ-ինդ, զոր կոչեն մշտնջենակուսի և անմաւր,
միակ ի բնութիւն, զոր ասեն ծնեալ յուղղոյն Արամազդայ» (Անանիա
Նարեկացի, «Մակս բացայայտութեան թուոց», ՄՀ Ժ, էջ 448-449):

Թվերի միստիկ մեկնությանն ենք հանդիպում նաև «Մատեանի» ժե (77 թվի վերաբերյալ), հԶ (20), ԿԵ (1000), ՂԳ (80 և 400) գլուխներում:

Առաքյալներին նվիրված ներբողում Գրիգոր Նարեկացին անդրադառնում է տասներկու թվի աստվածաշնչյան խորհուրդներին՝ Հետևելով Անանիա Նարեկացու մեկնության եղանակին և մեջ բերելով նաև բնագիտական և մարդակազմական տվյալներ: Ըստ իր հիշատակության, իր այդ տվյալները նա քաղել է բնության տարերքներից («յարմարաց տարեր երկրի») և քերթողների երկերից («ըստ քերթողացն ճահագրութեան»):

«Նշանագիրք կերպատարագք այլազան զարմի միաթիւ շարի երկակի հնգիցն եւ երկուց վարողացն եւ յարմարաց տարեր երկրի, եւ ամաց շարժութեան եւ հաստատութեան, ըստ քերթողացն ճահագրութեան: Քանզի նուիրական ոմն է ի սոցունց, որպէս ոչխար կատարեալ արու. եւ այլ՝ գործնական իբր զուարակ լծաձիգ, կասող. եւ արքայական՝ իբր մարդադատիչ եւ առեւծ հզաւր: Եւ այսպիսեաւ թուով յարմարեալ մինչեւ ի կատարեալ թիւն երկոտասան: Երկոտասան եւ դրութիւն երկրի ձեւականութեան. երկոտասան եւ աւուրցն ժամուց տուընջեան տեսակ. երկոտասան եւ գլխաւոր թիւք անդամոց մարմնոյն. Երկոտասան ըստ այսց վակասին սուրբ քառամանեակ (Ելք ԻՀ. 15-21). Երկոտասան կայլակք աղբերաց (Ելք ԺԵ. 27: Թիւ ՂԳ. 9), եւ որք արբին զայն զաւրապետք. Երկոտասան եւ վկայական արձանք գետածինք ի Յորդանիսայ ծոցոյն համբարձեալք (Յես Դ. 1-8). Երկոտասան եւ զոր Հեղիաս

կառոյց նպատակ ի կործանեալ հիման սեղանոյն (Գ. Թագ. ԺՀ. 31-32): Ահա երկոտասան թիվ խորհրդական՝ զսրբազան անուան ձերոյ յիշատակարան կոչման՝ վկայեալ վերակարգելոց»³¹⁶:

Նորալլատոնական այս տեսության խոր մեկնաբանություններ ու զարգացումներ են հանդիպում Դիոնիսիոս Արեոպագացու թվի միստիկ տեսության մեջ, որ նարեկյան դպրոցի հիմնական սկզբնաղբյուրներից է:

*

Դիոնիսիոսը մեկի, միակի գաղափարը կապում է նախագոյի գաղափարի հետ՝ առնչելով այն միաժամանակ կետի, գծի, շրջանի՝ իբրև աշխարհի գոյաբանական մողելների հետ: Նրա «Ձաղագս աստուածայնոցն անուանց» երկում կարդում ենք.

«Եւ վերստին առեալ ասասցուք եթէ ամենայն էիցս եւ յաւիտենից գոլն առ ի նախագոյէն է: Եւ ամենայն յաւիտեան եւ ժամանակ ի նմանէ, եւ ամենայն յաւիտենի եւ ժամանակի եւ ամենայնի՝ զիարդ եւ իցէ՝ է ի նախագոյ սկիզբն եւ պատճառ...

Առաջին, ուրեմն զնորին գոլոյն պարզեւ նորա բարերարութեանն եղեալ առաջի անդրանկաւ հաղորդութեամբն նախ աւրհնաբանի. Եւ է ի նմանէ եւ ի նա եւ նոյն գոլն եւ էիցս սկզբունքն եւ էքս ամենայն, եւ զիարդ եւ իցէ զնոյն գոլն յար ունելով. Եւ զայս անբաւապէս եւ շարամանութեամբ եւ միեղինաբար:

³¹⁶ Գրիգոր Նարեկացի, «Ներբող ի սուրբ առաքեալսն», ՄՀ ԺԲ, էջ 983-984:

Քանզի միակաւ ամենայն թիւ միատեսակաբար նախադոյացաւ, եւ ունի զամենայն թիւ միակն յինքեան միայնաբար. եւ ամենայն թիւ միանայ ի միակն, ըստ որում որքան ի միակէն գայ յառաջ՝ այսքան որոշի եւ բազմանայ:

Եւ բեւեռով ամենայն գիծք բոլորակի ըստ միում միաւորութեան շարագոյացան. եւ զամենայնսն ունի նշանն յինքեան զուղղութիւնսն միատեսակապէս միաւորեալս առ միմեանս, եւ առ մի սկիզբն յորմէ յառաջն եկին: Զի նոյն բեւեռովն ամենայն կատարմամբ միանան. դոյզն ինչ ի նմանէ մեկուսեալ, դոյզն ինչ եւ բաժանեալ եւ որոշեալ յաւէտ: Եւ պարզաբար, որքան ինչ ի բեւեռէն հաղագոյն, այսքան եւ ի նման եւ ի միմեանս միանան. եւ որքան ի նմանէ [հեռագոյն], այսքան ի միմեանց մեկուսին»³¹⁷:

Ուրեմն անտեղի չէ, ըստ Դիոնիսիոսի, աղոտ պատկերներով դեպի ամենայն ինչի սկզբնապատճառը բարձրանալ, ամեն ինչ, անգամ հակառակ երեսութները, տեսնելով միեղենության, անշփոթ միության մեջ, քանի որ նրանք տարբեր են միայն նախագո միակից, մեկից ունեցած իրենց հեռավորությամբ, ինչպես շրջանի կենտրոնից դուրս եկած շառավիղներ:

Մեկը՝ միակը, ինքնաբավկ է, կատարյալ, այն ամենայն ինչի սկիզբն է, նրանից են բխում բոլոր էությունները:

«Այլ եւ ի բոլոր բնութեան էիցս ամենայն սահմանք որք ըստ իւրաքանչիւր բնութեան շարամանեալ են ընդ միում անշփոթ միութեանն, եւ ի յանձին միատեսակապէս

³¹⁷ Դիոնիսիոս Ալեռապագացի, «Յաղագս աստուածայնոց անուանց», V. 4, էջ 185-187:

որք ըստ մասին բոլոր մարմնոյն նախախնամականքն զաւրութիւնք։ Ոչ ինչ ուրեմն է անտեղի յաղաւտ պատկերաց յամենեցունց պատճառն կոյս ելեալ՝ գերազարդ աչաւք տեսանել զամենայն յամենեցունց պատճառին, եւ զմիմեանց հակառակն միատեսակապէս եւ միաւորաբար»³¹⁸:

Իր այս հայացքները նա զարգացնում է նշված երկի՝ հատուկ այս հարցին նվիրված «Յաղագս կատարելոյն եւ միոյ» գլխում:

Ամենայն ինչի սկզբնապատճառը Մեկն է՝ Առաջնամիակը, որ կատարյալ է, անեղծանելի. նրանից են «գերաբխում» «ամենայն անբավությունը», «ամենայն բովանդակությունը». «Աստուածաբանութիւնն ըստ ամենայնի պատճառին... որպէս կատարեալ եւ որպէս զմի աւրհնաբանէ զնա... եւ զամենայն անբաւութիւնն սահմանեալ, եւ ամենայն բովանդակութեան գերագոյն սփռեալ... իսկ կատարեալ դարձեալ ասի որպէս <անաճելի> եւ միշտ կատարեալ, եւ որպէս անեղծանելի, որպէս զամենայն յինքեան յառաջագոյն ունելով եւ գերաբխելով ըստ միոյ եւ... զկատարեալսն կատարելագործէ եւ իւրովն կատարելութեամբ լնու»³¹⁹:

Մեկը բոլոր թվերի աղբյուրն է և ամենայնի անփոխարուն պատճառը, այն առաջ է, քան բազումը, նա է սահմանում բազմությունը՝ ինչպես բազում էությունները մի տեսակի մեջ են մտնում, և տեսակներն են սերում մի սեռից և այլն։ Զկա ոչ մի թիվ, էություն, որ հաղորդակից չլինի մե-

³¹⁸ Նույն տեղում, էջ 187:

³¹⁹ Նույն տեղում, էջ 219:

կին, չկա բազմություն առանց մեկի, իսկ մեկը կա առանց բազմության, քանի որ այն կար նախքան թվերը, ամենայն ինչ գտնվում է միակի բոլորքում:

«Իսկ մի՛ զի ամենայն միեղէն է ըստ միոյ միութեանն գերունակութեան եւ ամենեցունց է միոյ անփոխաբնապէս պատճառ: Քանզի ոչ ինչ է յէիցս անհաղորդ միոյ. այլ որպէս ամենայն թիւ միակի է հաղորդ, եւ մի երկակ եւ տասնեակ ասի, եւ կէս մի, եւ երրեակ եւ տասնեակ մի, այսպէս ամենայն եւ ամենայնի մասն միոյ է հաղորդ, եւ գոլոյն մի, ամենայն էքս են: Եւ ոչ է ամենայնի պատճառն մի ի բազմացն մի, այլ նախ քան զամենայն մի եւ բազմութեան սահմանողական: Քանզի ոչ է բազմութիւն անհաղորդ միոյ, այլ բազումքն մասանցն մի՛ է բոլորիւն. եւ բազումքն պատահմանցն մի ենթակայիւն, եւ բազումքն թուոյ կամ զաւրութեանց մի՛ տեսակաւն, եւ բազմացն տեսակաց մի՛ սեռիւն. եւ բազումքն յառաջ ճանապարհացն մի՛ սկզբմաբն: Եւ ոչ ինչ է յէիցս, որ ոչ երբեք հաղորդ է միոյ... Եւ առանց միոյ ոչ եղիցի բազմութիւն, իսկ մի առանց բազմութեան եղիցի, որպէս եւ միակ նախ քան զամենայն թիւ բազմացեալ: Եւ եթէ ամենայնի զամենայն միաւորեալ ոք ի ներքոյ դիցէ, ամենայնն լինի բոլորիւն մի»³²⁰:

Այդ գերագույն էությունն է գոյավորում, կազմավորում և իր բոլորքում պարունակում ու պահպանում աշխարհը. առանց նրա կքանդվի և կկազմալուծվի այդ բոլորությունը, տարրական աշխարհի ամբողջականությունը:

³²⁰ Նույն տեղում, էջ 219-220:

Առաջնամիակի այդ գաղափարի հետ է կապում հեղինակը նաև Սուրբ Երրորդության գաղափարը։ Ընդ որում՝ նա տարբերակում է բացարձակ մեկն՝ իբրև գերագույն աստվածություն և սկզբնապատճառ, մեկ թվից։ Առաջնամիակը գերագույն է քան մեկը, բայց նույնանում է մեկի հետ թվերի և էությունների աշխարհում, քանզի թվերն հաղորդակից են էությանը։ Գերագույն մեկն է սահմանում ամենայն թվերը, այդ թվում՝ մեկը, նա է ամենայնի պատճառը, թիվը և կարգը։

«Եւ ամենայնի է միակն տարրացողական։ Եւ եթէ ի բաց բառնաս զմինն, ոչ բոլորութիւն եւ ոչ մասն եւ ոչ այլ ինչ... ի յէիցս եղիցի, քանզի զամենայն միոյն ինքեան միատեսակապէս յառաջագոյն է առեալ եւ պարունակեալ։ Արդ այսու աստուածաբանութիւնն զբոլորն աստուածապետութիւն որպէս զամենեցունց պատճառ աւրհնաբանէ միոյ մականունութեամբ։ Եւ մի Աստուած Հայր, եւ մի Տէր Հիսուս Քրիստոս, եւ մի նոյն Հոգին Սուրբ, վասն գերազանցեալ անբաժանութեանն բոլոր աստուածականին միութեան, որով ամենայն միաբար ժողովի եւ գերագոյն միանայ եւ առաջին է գերագոյապէս։ Վասն որոյ եւ ամենայն ի նա իրաւամբք վերառաքի եւ վերադրի... շարակարգի եւ մնա, եւ շարակալեալ լինի, եւ լնու, եւ դառնայ։ Եւ ոչ ինչ գտցես յէիցս, որ ոչ է ի միում, ըստ որում ամենայն աստուածութիւնն գերագոյապէս անուանի...»

Եւ պիտոյ է մեզ ի բազմացն ի մին դառնալ զաւրութեամբ աստուածականին միութեան եւ միեղինաբար աւրհնաբանել զբոլորն եւ մի աստուածութիւն զամենեցունց

պատճառն մի, որ նախն է քան զամենայն մի եւ բազմութիւն, եւ մասն, եւ սահման, եւ անսահմանութիւն, եւ բովանդակութիւն, եւ անբաւութիւն... եւ նախ քան զամենայն, եւ գերագոյն քան զամենայն, եւ միակապէս պատճառ, եւ գերագոյն քան զնոյն մինն գոլով, եւ զնոյն մինն գոյ սահմանեալ, եւ վասն զի գոյն մի, որ ի յէսս է՝ ընդ թուով է, իսկ թիւ էութեան է հաղորդ: Բայց գերագոյնն մի եւ էն մի զամենայն թիւ սահմանէ, եւ ինքն է եւ միոյ, եւ թուոյ, եւ ամենայն էի սկիզբն եւ պատճառ, եւ թիւ եւ կարգ»³²¹:

Ինչպես տեսնում ենք, հեղինակը յուրովի մեկնաբանում, զարգացնում և խորացնում է նորապատոնական-նորպայութագորական ավանդույթը: Նրա նորամուծությունն այն է, որ այդ տեսությունը նա փորձում է կապել Սուրբ Երրորդության գաղափարի հետ՝ գաղտնիության և թաքնատեսության շղարշով պատելով այն: Սուրբ Երրորդությունը՝ իբրև միաստվածություն, «գերագույն և գերանուն» է ամենայն գոյերից. այն թիվ չէ, այլ գերագույն միություն և աստվածածնողություն՝ միեղեն գերագույն աստվածություն, որ վեր է էական աշխարհից և հասու չէ մարդկային մտքին ու բանականությանը:

«Վասն որոյ եւ միութիւն աւրհնաբանեալ եւ Երրորդութիւն գերագոյն քան զամենայն աստուածութիւն, ոչ ոչ միութիւն, ոչ Երրորդութիւն որ առ ի մէնջ եւ կամ յայլ ումեքէ ծանուցեալ, այլ զգերագոյն միութիւնն նորա եւ զաստուածածնողութիւնն նշմարտապէս աւրհնաբանեացուք՝ Երրորդականաւ եւ միեղինիւ աստուածանունութեամբ գեր-

³²¹ Նույն տեղում, էջ 220-221:

անունն անուանեմք քան զգոյսս գերագոյնն: Եւ ոչ մի միակ կամ երբեակ, ոչ թիւ, ոչ միութիւն կամ ծնողութիւն, եւ ոչ այլ ինչ յէիցս եւ կամ ումեք յէիցս ծանուցեալ, արտաքս բերէ զգերագոյնն քան զամենայն բանս եւ միտս թաքնութիւնն, քան զամենայն գերագոյապէս գերագոյի աստուածութեանն: Ոչ անուն է նմա եւ ոչ բան, այլ յանկոխս է արտաքս անջատեալ»³²²:

Մեկը, Առաջնամիակը, ամենայն ինչի անշարժ սկզբնապատճառը, Սուրբ Երրորդությունը անձանաչելի և անիմանալի է: Նա ստեղծում, կարգավորված շարժման մեջ է դնում աշխարհը, ներգործում է նրա վրա իր նախախնամության ծիրում, արարում է իր արարչագործ սկիզբների բխումներով՝ ինքը մնալով անմատույց և անհասանելի: Այս հատվածում հեղինակը դիմում է իր իսկ մշակած միստիկ աստվածաբանության վերջին աստիճանին՝ խորհրդական (խորհրդապաշտական) աստվածաբանությանը, ըստ որի՝ խորհրդապաշտ անհատը ձգտում է մերձենալ գերագույն աստվածաբանությունը հաստատող և ժխտող (կատաֆատիկ և ապոֆատիկ) մեթոդներով:

Նարեկացին օգտագործել է խորհրդական աստվածաբանության նշված եղանակներն իր «Մատեանում», իսկ տաղերում, թվերի գոյաբանական տեսության հետ կապված, նկատելի է Առաջնամիակի և Սուրբ Երրորդության, և նրանց միջոցով աշխարհի գոյավորման, տարրանալու արեոպագիտյան գաղափարի ազդեցությունը:

³²² Նույն տեղում, էջ 221:

*

Մեկի՝ իբրև առաջնամիակի, նախագո էության, սկզբնապատճառի, մեկի և նախագույնի, մեկի և երկյակի, մեկի և բաղումի, մեկի և բանական ու զգայական աշխարհների հարաբերության էակական գաղափարները խորազնին մշակման են ենթարկվել նորալատոնականության հիմնադիր Պլոտինոսի երկերում³²³, որի որոշ գրույթներ անցել են Դավիթ Անհաղթին:

Պլոտինոսն իր «Էննեադներում» ևս տալիս է թվերի միջոցով աշխարհի գոյավորման իր «նախագիծը», ուր նա մեկը համարում է էությունների նախագո, պարզագույն հիմք, որին՝ իբրև պատկեր ու ձև, էակցված են մյուս թվերը: Նրանցից գոյավորվում է քանակը, որակը, որոնք արքետիպեր են, հոգին, ծավալները, մեծությունները և զգայական աշխարհի գոյացություններն ու մարմնական իրողությունները. «Մտածելիների որակական տարբերությունն Այլությունն է: Լինելով բազում՝ դրանք առաջ են բերում թիվը և քանակը: Յուրաքանչյուրի առանձնահատկությունը ծնում է Որակը: Եվ դրանցից՝ իբրև արքետիպերից, բխում է մնացած ամենայն ինչ:

Եվ Աստված, որ Հոգուց անդին է, բազում է... Բայց ո՞վ է ծնել այս Աստծուն. Պարզագույնը, որը նախորդում է բազումին, որն Աստծո և բազումի պատճառն է, որն արարում է թիվը: Թիվը նախագո չէ: Երկյակին նախորդում է Մեկը, երկյակը երկրորդն է. նա ընդունում է Մեկն իբրև [ամենայն ինչի] սահմանադիր սկիզբ, մինչդեռ ինքն անսահ-

³²³Տե՛ս Պլոտինոս, Էննեադներ, էջ 9-10, 14-18, 36-47, 47-51, տե՛ս նաև ծնթ., էջ 147-152:

ման և անորոշ է: Երբ սահմանվում ու որոշարկվում է, վերածվում է թվի, որը [ներկայանում է] իբրև էություն: Թիվ է նաև Հոգին: Հետևաբար ո՞չ ծավալները, ո՞չ մեծությունները նախադո չեն: Բոլոր մարմնական իրողություններն իհայտ են գալիս հետագայում, սակայն զգայությունն ընկալում է դրանք իբրև իրական և ճշմարիտ գոյացություններ: Անգամ սերմերի մեջ նախընտրելին ու կարևորը հեղուկը չէ, այլ այն, ինչ անտեսանելի է: Դա թիվ է ու բանական տարր: Ուստի այն, ինչ բանական աշխարհում թիվ ու երկյակ ենք կոչում, ներկայացնում է բանական տարրերը և [ընդհանրապես] բանականը: Երկյակը, երբ դիտարկում ենք իբրև նախահիմք, անսահման ու անորոշ է, բայց նրանից ու Մեկից բխող յուրաքանչյուր թիվ [էութենական] պատկեր ու ձեւ է: Այդու [Բանականը] ներկայանում է իբրև [մեկություն]՝ ձևավորված իր ծիրում առկա բազում թվերից: Սակայն նա ձևավորված ու կարգաբերված է ըստ Մեկի՝ մի ձևով, իսկ ըստ իրեն՝ մեկ այլ: Հընթացս իր գործառույթի՝ այդպիսին է նաև հայեցությունը: Եվ մտածումը ոչ այլ ինչ է, եթե ոչ ի մի բերված հայեցողն ու հայեցումը»³²⁴:

Տիեզերաստեղծման այս «նախագծի» հետ է կապվում Դիոնիսիոս Արեոպագացու բանական և զգայական աշխարհների շարժման ձևերի տեսությունը, որի ազդեցությունը նկատելի է Գրիգոր Նարեկացու տաղերի վրա: Ըստ Դիոնիսիոսի՝ Աստված, իբրև Առաջնամիակ, ամենայն շարժման սկզբնապատճառն է, և ինքն անշարժ է: Այս տեսությունը

³²⁴ Պլոտինոս, Էնեադներ, էջ 9-10:

գալիս է Արիստոտելից, և նրա ազդեցությունը նկատելի է նաև Դավիթ Անհաղթի տեսական հայացքների վրա³²⁵:

Աստծո՞ իբրև անշարժ սկզբնապատճառի շարժման գաղտնիքը և նրա դրսեորումները նա ուղղակիորեն չի կապում, չի նույնացնում տիեզերական շարժման ձևերի հետ (նա թվարկում է ուղղագիծ, շրջանաձև, բանական [իմացական], անձնական, բնական շարժման ձևերը), այլ ավելի խորքային, «աստվածավայել» մեկնաբանություն է տալիս: Աստվածային շարժումն արտահայտվում է ոչ թե փոփոխման, այլայլության, հեղման, տեղափոխման միջոցով կամ վերը թվարկված շարժման ձևերով, նրա գերագույն խորհուրդն աշխարհն էացնելու և իր նախախնամությամբ տիրույթում պահելու, «անըմբոնելի պարունակությամբ իր մեջ առնելու», նախախնամությամբ և ներգործությամբ առաջ մղելու մեջ է, որին հաջորդում են տիեզերական շարժման ձևերը, որոնք կարգավորվում են աստվածային ուժերով և օրենքներով:

³²⁵Տե՛ս Դավիթ Անհաղթ, Երկեր, Էջ 39-42, Երկասիրութիւնք փելիսոփայականք, Էջ 213:

Դավիթ Անհաղթը հետեւում է Աստծո գոյության գոյաբանական ապացուցման արիստոտելյան եղանակին, որ բազմիցս հանդիպում է նաև արենպագիտյան բնագրերում: Ուսումնասիրողն այս մասին գրում է. «Դավիթը հետեւում է Աստծո գոյության, այսպես կոչված, տիեզերաբանական ապացուցմանը, որն առաջադրել էր Արիստոտելը: Բնության ճանաչման, «աշխարհի կարգավորված շարժման» իմացման միջոցով նրա արարչին հասու լինելու գավթյան դրույթն իր ակունքներով կապված է արիստոտելյան առաջին «շարժիչի», ամեն մի շարժման և գոյության սկզբնապատճառի գաղափարի հետ, որ որպես «հավերժական անշարժ էություն պետք է անհրաժեշտաբար գոյություն ունենա» (Արիստոտել, «Մետաֆիլիկա», XII 6, 1071, ա 20. տե՛ս Դավիթ Անհաղթ, Երկեր, ծնթ., Էջ 304):

«Իսկ զի՞նչ յորժամ դարձեալ աստուածաբանքն յամենայնսս յառաջ գալ եւ շարժիլ ասեն զանշարժն, ոչ ապաքէն եւ զայս աստուածավայելչապէս է իմանալի: Քանզի շարժիլ զնա համարելի է բարեպաշտապէս, ոչ ըստ բերման, կամ այլայլութեան, կամ փոփոխման, կամ յեղման, եւ կամ ետեղափոխ շարժութեան, ոչ ուղղականն, ոչ շրջաբերականն, ոչ զոր յերկոցունցն, ոչ զիմացականն, ոչ զանձնականն, ոչ զբնաւորականն. այլ զառ ի յէութիւնն ածել Աստուածոյ ի միահամուռ ունելն զամենայն, եւ ամենայնիւ ամենեցունց նախախնամել, եւ հուպ գոլ յամենեսին ամենեցունց անըմբոնելի պարունակութեամբ, եւ առ ամենայն էսս նախախնամականաւք յառաջ ճանապարհաւք եւ ներգործութեամբք: Այլ եւ շարժութիւն անշարժին Աստուածոյ աստուածավայելչապէս բանի թոյլ տալի է՝ աւրհնաբանել»³²⁶:

Հեղինակն այնուհետև խոսում է սկզբնապատճառից առաջացող տիեզերական շարժման ձևերի մասին՝ շոշափելով կետի, գծի, շրջանի, գնդի հասկացությունները, ինչպես նաև ուղղագիծ, շրջանաձև և գնդաձև տիեզերական շարժման գաղափարները, որոնցով Աստված գոյավորում է աշխարհը, որով շարժվում են բոլոր էությունները, գոյությունները, գգայական և բանական աշխարհները. ամեն ինչ սկիզբ է առնում նրանից և դառնում է առ նա. «Եւ զուղղականն զանխորութիւնն է իմանալի, եւ զանխափանն յառաջ ճանապարհս ներգործութեանցն զառ ի նմանէ լինելն բոլորիցս. իսկ զգնդատեսակութիւնն <զհաստատունն> յա-

³²⁶ Դիոնիսիոս Ալեռապագացի, «Յաղագս աստուածայնոցն անուանց», IX, էջ 208:

ուաջ ճանապարհ եւ զծննդագործն կայս. իսկ ըստ շրջադարձեան զնոյն եւ զմէջն եւ զծայրսն պարունակելն եւ պարունակեալ միահամուռ ունելն, եւ զոր ի նա ի նմանէ յառաջ եկելոցն դարձումն»³²⁷:

Այստեղ գիծը, շրջանը, գունդը աշխարհաստեղծման նախաձեռներ են, մոդելներ: Մեկ թվի խորհրդի հետ են կապվում, ինչպես նշել ենք, կետը և շրջանը: Այդ կետից են սկիզբ առնում բոլոր գծերն ու նշանները, որ մոտ կամ հեռու՝ ներառված են նրա բոլորքում:

«Քանզի միակաւ ամենայն թիւ միատեսակաբար նախագոյացաւ... ըստ որում որքան ի միակէն գայ յառաջ՝ այսքան որոշի եւ բազմանայ:

Եւ բեւեռով ամենայն գիծք բոլորակի ըստ միում միաւորութեան շարագոյացան. եւ զամենայնսն ունի նշանն յինքեան զուղղութիւնսն միատեսակապէս միաւորեալս առ միմեանս, եւ առ մի սկիզբն յորմէ յառաջն եկին»³²⁸:

Այսպիսով, նորպլատոնական գոյաբանական այս համակարգում թվերը, գիծը, եռանկյունին, բուրգը, շրջանը, գունդը հանդես են գալիս իբրև նախագաղափարներ, սկզբնատիպեր, արարչական նախագծեր, որոնց մարմնավորմամբ գոյավորվում է զգայական աշխարհը: Նրանք նաև տիեզերական շարժման նախաձեռներ են, որոնց մեջ էանում է Աստված՝ իբրև Սկզբնապատճառ, Առաջնամիակ՝ ինքը մնալով անշարժ և նախախնամությամբ ներառելով նրանց իր բոլորքում:

³²⁷ Նույն տեղում, էջ 208-209:

³²⁸ Նույն տեղում, էջ 187:

Հիշեցնենք, որ Անանիա Նարեկացու «Սակս բացայայտութեան թուոց» երկում արտացոլված է նաև թվի փիլիսոփայության այս կողմը՝ թվերի և իրերի աշխարհի միջև եղած կապը: Ինքնակա թվերը մտնում են հաղորդության և հարաբերության ոլորտը և իրեւ սկզբնապատճառներ, արարիչ ուժեր՝ կազմավորում ու կարգավորում իրերի աշխարհը անտեսանելի ու անզգայելի տարածության միջոցով, որ Պլատոնը սահմանում է որպես միջանկյալ տարածություն՝ ընկած գաղափարների աշխարհի և զգայական իրերի միջև³²⁹: Այս տեսությունն է, ըստ Փիլոն Ալեքսանդրացու, շարադրում Անանիա Նարեկացին:

³²⁹Տե՛ս Հ. Թամրապյան, Գիրք Բ, էջ 190: Մեկը և երկուսը, լինելով «կատարյալ» գաղափարների աշխարհում, «անկատար» են տարածության մեջ, քանի որ երկրաչափական մարմին չեն ստեղծում: Մեկն անկատար է, քանի դեռ չի միաբանվել, չի «բոլորգել» երկուսի հետ, որով սկիզբ է դրվում երկրաչափական, տարածական ձևերին: Մտնելով տարածության մեջ՝ մեկը վերածվում է կետի, որ, շարժվելով, սկիզբ է դնում չհատվող գծին. երկուսը գաւուում է երկու կետ, որոնք միանում են գծով, որ արդեն սահմանափակված, հատված գիծն է: Սակայն սրանք դեռևս հարթություն ու մակերես չեն ստեղծում: Այս իմաստով առաջին կատարյալ թիվը երեքն է, քանի որ նրա չնորհիվ կետի ու գծի՝ մեկի և երկուսի «միաբանությամբ» ստեղծվում է հիմնական արարիչ ձևը՝ երկրաչափական եռանկյունը (տե՛ս Անանիա Նարեկացի, «Սակս բացայայտութեան թուոց», ՄՇ Ժ, էջ443): Սահմանափակված մակերես, հարթություն ստեղծելով՝ այն սակայն դեռ խորություն չի հաղորդում տարածության մեջ, դեռ մարմին չի ստեղծում. եռանկյունը գոյավորում է անմարմին բնություններին, էություններին գաղափարների աշխարհում: «Մակերեռութը» «խորություն», ծավալ է ստանում այդ հարթությունից դուրս գտնվող չորրորդ կետի միջոցով, որով ստեղծվում է առաջին եռաչափ մարմինը՝ բուրգը՝ սկիզբ դնելով բնության տարրերի մարմնափորմանը (նույն տեղում, տե՛ս նաև «Փիլոնի Հերացիցոյ ճառք», էջ 229: Այս մասին տե՛ս Հ. Թամրապյան, Գիրք Բ, էջ 189-194):

*

Այս գաղափարները հետաքրքիր արտահայտություն են գտել նաև Գրիգոր Նարեկացու Սուրբ Խաչին նվիրված ներքողում, ուր խաչի խորհուրդը, արարչագործ զորությունը, ձևը նա համեմատում է աշխարհաստեղծ մաքուր ձևերի՝ գծի, մակերեռույթի (եռանկյան) հետ.

«....Արժանի լիցուք... փառաւորել զքեզ կենսատու ի կանուխն ժամանութիւն եւ յանագանն յարածութիւն, ի գիծն լայնական եւ ի մակերեռութութիւնն հարզստական: Որ ես միշտ բարետրական երգաբանութեամբ երկրպագեալ, Յիսուսի արեամբն մխեալ եւ զէն նորին զաւրացեալ, որ է ի քեզ, ընդ քեզ եւ առ քեզ ի միջոց տարածման երկնաթոիչ եւ փայլակնընթաց խաչիդ ձեւակի...»

Որում անսահման գովութիւն երգոց, ըստ անկէտն իսկութեան եւ ըստ անկշիռն իշխանութեան, ըստ էականն յարակայութեան եւ ըստ արարչականն զաւրութեան...»³³⁰:

Խաչի ձևի և գոյաբանական թափանցումների մեկ այլ նման հատված կա այս ներքողի առաջին տարբերակում. «...յարմարական ձեւակերպութիւն... որ եւ ի սկիզբն գոյանալոյն յէեն էակացմ՝ տարածումն յատակաց գետնոյն կառուցման, ի գուշակութիւն քումդ աւրինակի ի կայսքառանկիւն կերպի հաստատեցաւ»³³¹:

Կետի, գծի, մակերեռույթի («լայնական ծիր»), իբրև աշխարհաստեղծ մաքուր ձևերի, էությունների գերակա աշխարհի մարմնավորման, զգայական ու բանական աշխարհ-

³³⁰ Գրիգոր Նարեկացի, «Ներքող ի Սուրբ Խաչն», ՄՀ ԺԲ, Էջ 940:

³³¹ Նույն տեղում, Էջ 947:

Ների կապի այս գաղափարներն արտահայտված են Հակոբ Մծբնեցուն նվիրված նրա ներքողում («Ներքող ի սուրբն Յակոբ Մծբնայ բան նուիրական գովեստի»), ուր անապական, սրբացած անձինք, Քրիստոսի վկաները, «լույսի որդիները» դիտվում են երկնային և երկրային քահանայապետությունների ներթափանցումների մեջ։ Այս ներքողի ճարտասանական ոճի մեջ են առնված նաև քերականական-տրամաբանական համակացություններ։

«Բարձրացի՛ր, Սիո՛վն հոգեւոր, դիմաւոր անձնաւոր խնկաւոր եւ խորհրդաւոր, երկնաւոր խորան լուսաւոր գերափառ, յաղթող Սինայի, բերողի ստուերին կտակի անկայի եւ լուծականի, կապտողի եւ ոչ պեճողի։ Առ որ խտրոց եւ կամ կէտ գծի ի միջոց երկուց կառուցեալ՝ սահման ծանուցման վեհին եւ փոքրուն, մահաձրին եւ կենաշնորհին, յարակային եւ աւրաւորին, երկնայնոյն եւ անցաւորին. առ գիրն եղծական եւ առ հոգին մնացական. սակս ծառայական միջնորմ աւրինին, եւ տիրականն համակցորդ եւ սիրապատար Աւետարանին ի յաշխարհականն պայման ուխտի, եւ ի վերնայինն շաղկապ բանի։ Ուստի յաւէտ իսկապէս պարեաց եւ կամ կարապետ գոլով նախընթաց սկզբնաշաւիղ անստուերական պաշտելի տաւնեալ երջանկացն, ուր հարսնեկանն միադրութիւն համակայութեանն առ աւրէնս երկրի՝ անկցորդ, եւ առ հասարակաց իր՝ անհաւասար։ Ըստ մարմնային հիւթաւոր աչաց պարագրեալ եւ ըստ իմաստից անարգել դիտմանն դուն ինչ նկատեալ։ Եւ քանզի անմերձէ բանիս ձգումն առ անհասութիւն ծածուկ խորհրդոյս, որքան քանակութիւն փոքրուն առ ստուարին դիմակ, եւ անձկականն գիծ առ լայնականն ծիր, եւ մարմնայինն յաւդ առ

տիրականն գոյ, եւ ձեռինն հասումն առ մտացն արագումն, եւ երկրակոխ հիւթաւոր առ սէրափին սրբարան, եւ մահացու լուծական առ վերնական կենսածին։ Զի որքան անդր եւ ի վեր կամարն յարկի անդրանկացն կայից վկայի անդանաւը հրաշապէս, եւ եւս քան զէսն գերակայիցն, եւ որդիքն լուսոյ դաւանին։

Ցորոց եւ զմին աստանաւը առեալ ի գովեստ բանից մատուցից...»³³²:

Ինչպես տեսնում ենք, այս հատվածում բանաստեղծական ճոխս հյուսվածքի մեջ արտահայտված է կատարյալ, «աստվածացած» մարդու իդեալը, որ դիտարկվում է աստվածային նվիրապետության լուսեղեն պատկերախաղերի մեջ, որին միացած են աշխարհի գոյավորման նորպլատոնական գաղափարները։

Գրիգոր Նարեկացու միստիկ հայացքները յուրօրինակ զարգացում են գտել նրա «Մատեանում» և տաղերում, որոնց հատկապես մանվածապատ ու խրթին հատվածները ըստ ամենայնի վերծանված ու մեկնաբանված չեն։

Հաճախ այլաբանական միտքը նրանցում ենթախորք է իջել գաղտնագրության աստիճանի, հաճախ դրանք հուզական զեղումներ ու էքստատիկ շարքեր են հիշեցնում, որոնք ուղեկցվում են ըղձական ձայնարկություններով և, ըստ երևույթին, տաղերի մեղեղային խտացումներն ու հանգույցներն են հանդիսացել, բանալիներ՝ տաղերգության միստիկ արարողության համար։

Թվի գոյաբանական այս կառույցի, նրա հիմնարար

³³² Գրիգոր Նարեկացի, «Ներբող ի սուրբն Յակոբ Մծբնայ բան նուիրական գովեստի», ՄՀ ԺԲ, էջ 990։

գաղափարների հետ աղերսվելով՝ նորովի են մեզ համար լուսաբանվում Գրիգոր Նարեկացու գանձերի և տաղերի ուրոշ տեղիներ:

Կան մի շարք հատվածներ, որ ներթափանցված են պյութագորա-պլատոնյան գոյաբանությամբ, որ բանաստեղծության էությունն ու հղացման առանցքն է:

Ահա մի ուշագրավ հատված, ուր Աստծո մարդեղության խորհուրդը պատկերված է իբրև աստվածային, գերակա թվերի վայրէջք, որոնք «տարրանալով», այսինքն՝ մարմնավորվելով, չափ ու տարածություն են ստեղծում՝ այս ամենը, իհարկե, տրված բանաստեղծական ճոխ ու ճկուն կառուցի, պատկերային հոսքի մեջ: Սրբազնագույն էությունը՝ մեկը դառնում է երկուս, որը ենում է, բխում է մեկից «զվարճությամբ», և այդ աստվածային բխման հետ է կապվում նաև «հրաշունակ բանի»՝ խոսքի և աստվածային չափի խորհուրդը, որ կապված է թվերի աստվածային խորհրդի հետ և այդ տաղում առնչվում է նաև յոթ թվի «խորհրդաբեր» գորությանը, որով ստեղծվում է երգը, մեղեղին:

Մինն էին ել ի նմինն ի յերկուց,
Մի երկակի հանգոյն էից զուարճ միշտ,
Միշտ անբաւ այսը հրաշունակի բան,
Բան խորհրդաբեր եւթներգին աղի չափ.
Չափ վայր ասպարէզ իջեալ ի տեղի տարրայնոյ տարփ,
Տարփի ի վեր արփային տարփ,
Տարփի ի վայր նուսխայաւրէն ճեմ...

(«Ճաղ Քառասնաւրեայ գալստեան Տեառն»)³³³

³³³Տե՛ս ՄՀ ԺԲ, էջ 635, տե՛ս նաև Հ. Թամրապյան, Գիրք Բ, էջ 125:

Ահա ևս մի մանվածապատ հատված, որ հարում է աշխարհի գոյավորման պլատոնյան-փիլոնյան պատկերացումներին, ուր կիրառվում են էություն, նյութ, անէություն, գոյ, տիպ, ներընդունակություն, կերպ, շուք, տարր, կետ, կցորդություն, էակցություն, մետ հասկացություննեղը: Թվում է՝ գործ ունենք մեկնողական-խորհրդապաշտական ծավալուն եղկի հետ, մինչդեռ այս բոլոր եզրաբառերը խտացած են բանաստեղծական ութ տողի մեջ, որոնք շարակցված են շղթայական կառույցով (ամեն սկբնաբառը կրկնում է նախորդ տողի վերջնաբառը) և հագեցած են բառախաղերով ու բաղաձայնույթի օրինակներով:

Էն նորոյ նորին նոյն նիւթ,
Նիւթ էականին, էնն յանէից գոյ.
Գոլն յոչէից եղաւորեալ տիպ,
Տիպ երանութեան ներընդունակ ներ.
Ներ ներբողական նուաստափիպ կերպ,
Կերպ երամաղին եւ ցուցանի շուք.
Շուք տարրաշշոյ զեղ մէջ ասոյ զկէտ,
Կէտ կատարելոց կցորդակցեալ եւ էակցեալ մէտ,
Մէտ տաղերամին ձայնաստեղծեալ

Երբայական տղայք...

(«Ճաղ ի Յարութիւն Ղազարու»)³³⁴

Որոշակի է, որ այստեղ դարձյալ տրված է անէությունից դեպի էություն ու նյութական, տարրական աշխարհ տանող շղթան, որի աստիճանական, անցումային ձևերն են տիպը, կերպը, շուքը, կետը, մետը (չափը):

³³⁴ Տե՛ս ՄՀ ԺԲ, էջ 645:

Անէությունից ծնվում է Գերագույն էությունը, նրանից՝ նյութը։ Անէությունից ստեղծվելով՝ Գերագույն գոյությունը ստեղծում է «ներընդունակ տիպը»՝ Սկզբնատիպը, որն իր հերթին ստեղծում է «նվաստատիպ կերպը»՝ պատկերը, որ «կցորդված, էակցված» է Սկզբնատիպին՝ Գերագույն էությանը։ Կերպը՝ պատկերը, ցուցանում է Սկզբնատիպի փառքը, գեղեցկությունը։ Այն իր հերթին ձգտում է Սկզբնատիպին, կետին՝ կապվելով Առաջնամիակի, Մեկի՝ իբրև Գերագույն էության գաղափարի հետ, որ ստեղծում է գաղափարների աշխարհը և տարրանալով՝ նյութեղեն, գգայական, տեսանելի աշխարհը, որ «կցորդյալ, էակցյալ» է նրան։

Ստեղծվում է վերընթաց և վայրընթաց շարժման մի կառույց, նյութեղեն և աննյութեղեն աշխարհների անվերջ մի շրջապտույտ, որի գոյաբանական-տիեզերաբանական ակունքներին անդրադարձել ենք աշխատության այլ մասերում ևս։

Այս հատվածում ևս Նարեկացին շեշտում է տաղի, մեղեղու աստվածային էությունը, որն այս դեպքում նրա գոյաբանական հանգույցն է։ Գերագույն էության և նրանից բխած էությունների աշխարհի հետ, թվերի պես՝ իբրև արարչագործ զորության, կապված է չափի (մէտ) գաղափարը, որով «ձայնաստեղծվում» է տաղը։

Կէտ կատարելոց կցորդակցեալ եւ էակցեալ մէտ,

Մէտ տաղերամին ձայնաստեղծեալ

երրայական տղայք…

Ինչպես նախորդ տաղի մեջբերված հատվածը, սա ևս արվեստի «գոյաբանական» տեսության մի նմուշ է՝ ներամփոփված Գրիգոր Նարեկացու՝ աստվածային արարչագործության շղթային «էակցված» տաղի մի քանի տողերում:

Այս հատվածը դարձյալ գաղափարների, էությունների գոյավորման և նրանց նյութականացման, նրանց մարմնավորմամբ՝ «ներընդունակությամբ տարրանալու» պյութագորյան-պլատոնյան ընթացքի յուրօրինակ բանաստեղծական վերաիմաստավորում է, որ առնչակցվում է թվի փիլիսոփայության հետ (թվի փիլիսոփայությունը նման հատվածների վերծանության բանալին է):

Այս ամենի հետ, ահա, էակցված է արվեստի երկը՝ ներհյուսված խոսքից, պատկերից, մեղեղուց, որ ստեղծված է աստվածային չափով և միջանկյալ է աննյութեղեն և նյութեղեն աշխարհների միջև:

Սա միջնադարյան արվեստի տեսության մի մեծարժեք նմուշ է՝ մատուցված բանաստեղծական անկրկնելի ձեզ մեջ: Նրանում միջնադարյան աստվածաբանության ու արվեստի տեսության համար էական՝ նախատիպի և պատկերի կապի գաղափարը միահյուսված է պլատոնյան-արիստոտելյան ավանդույթի հետ, ըստ որի՝ ստեղծագործության գաղափարը կապված է վերերկրային էությունների աշխարհի հետ. արվեստագետն այն կրում է իր մեջ և գոյավորելով, մարմնավորելով այն՝ նյութեղենացնում է: Եվ մարդկային այդ հղացումը, արարումը ներառված է աստվածային նախախնամության, պյութագորա-պլատոնյան գոյաբանության ոլորտների մեջ:

Հաճախ տաղերում բանաստեղծական երևակայության խաղերը յուրատիպ տարածականություն ու պատկերային խորք են հաղորդում խոսքին՝ հիշեցնելով պլատոնյան «վերին երկնքի ու երկնակամարի» գաղափարը (տե՛ս «Տաղ Յարութեան, Նարեկայ ոգեալ», որտեղ առկա է երկնային ծովի մի պատկեր, որ հոսում է քառանյութ բխմամբ):

Այստեղ դարձյալ հանդիպում ենք քրիստոնեական պանթեիզմի նարեկացիական տարբերակին՝ բանաստեղծությունը հանդես է գալիս իրեւ փոխակերպությունների շղթա, որն առավել ընդգծում է երևութական աշխարհի միեղենությունը՝ հագեցած աստվածային սիրով: Եվ դարձյալ աստվածային անհաս էությունից ու սուրբ թվից, էությունների հույլերից (գունդ) անցում է կատարվում դեպի տարրացող աշխարհը՝ արտահայտված երկնային գետի «քառանյութ պղպջմամբ» հոսող պատկերով, ապա «փողփողացող անծայրածիր լույս, երկնաշավիդ ճանապարհ, արքունաճեմ քայլք» երկնային ծովի ջրերով՝ ողողված «սիրասնունդ սիրով», այնուհետև անցում անապատի ու խաչելության պատկերին՝ բռնորդագույն պատմուճան, կողից բխող աղբյուր և խորքում՝ բանաստեղծական մի զարմանալի պատկեր, որ հուզական հոսքի մեջ է առնում ողջ քերթվածը և աստվածարյալ բնությունն ու Աստծուն.

Անուն անեղին էին Աստուած է,
է միշտ յէութեան յանհասութեան նոյն.
Նոյն ինքն է նըման, նոյն մի եւ նոյն մի,
Մի ոմն ի յէից անդքէն ի նոյն թիւ.
Թիւ միշտ եռակի եղեռակի փա՛ռք,

Փա՛ռք իմ դիմառից էից գոյից գունդ.
 Գունդ տրամք երամից կայք յանուրեք վայր,
 Վայր համբից բիւրից աւր սահմանեալ գետ.
 Գետ քառանիւթեայք պաղպաջ երկնի փայլ փայլ,
 Փայլք փաղփինատար անծայրենի լոյս.
 Լոյս գերազանցիկ երկնաշաւիդ ուահ,
 Ուահ արքունաձեմ վերայ ծովու քայլ.
 Քայլ վէմ շարժելով տեղիարան նիստ,
 Նիստ արքունաձեմ անապատի տաւթ.
 Տաւթի ծարաւուտ երկրի երկին կոյս,
 Կոյս արդիւնալուր սիրասընունդ սէր.
 Սէր հարկաւորեալ կամից կատար կամ,
 Կամ ժամին հասեալ տէրունական աւր.
 Աւր պարզ եւ թերի, աւր մի յայտնի Տեառն,
 Տեառնագիր հրաման՝ ես բարձրանամ դէտ.
 Դէտ իմ դիտանոց դէմ հարաւոյ ճեմ,
 Ճեմ պատմուճանի բոսորայնոյ գոյն,
 Գոյն ներկեալ արեամբ, աղբեւր բղխեալ կող,
 Կողիմնապատիր պարտեաց յառաջածայն,
 Զայն տուք դստերացդ ի Սիոնի. Զի՞ լայք,
 Զի՞ լայք ու աւաղէք, պըսակ՝ ի գլուխ իմ.
 Իմ վարսս անձրեւով, քաղցրիկ ցաւզով լի,
 Լի եւ լրումնաւրէն զիս պսակեաց մայր իմ...

(«Տաղ Յարութեան, Նարեկայ ոգեալ»)³³⁵

Ինչպես տեսնում ենք, թվի փիլիսոփայությունն՝ իբրև

³³⁵ Տե՛ս ՄՀ ԺԲ, Էջ 647-648:

գոյաբանական-գեղագիտական աստիճանակարգություն, յուրովի պատկերանում, մարմնավորվում է Գրիգոր Նարեկացու տաղերգության ծիրում:

Պյութագորական-նորպլատոնական այդ ավանդույթը՝ շաղախված քրիստոնեական աստվածաբանությամբ, թվերի ու կետերի, գաղափարների մարմնավորումն ու աստիճանակարգությունը՝ դիտված բանաստեղծական-միստիկ էքստազի պատկերաշարքերով՝ տարօրինակ, անսպասելի բառախաղերով, յուրովի է չողարձակում տարբեր դիտանկյուններից:

Կարծես թվային-միստիկական այդ գոյաբանությունը, արեոպագիտույան հիերարխիան անդրադարձվել են բանաստեղծական երեակայությամբ՝ ստեղծելով գունախաղերի, պատկերների և երանգների մի խրախճան, վերելքի, վերառաքման ու վայրէջքի մի աստիճանակարգություն՝ թափանցած ստեղծագործական տարերքի մեջ, ուր իրար են միացած բառը, գույնը, մեղեդին:

Արվեստի գոյաբանական այս տեսությունը յուրովի արտահայտվում է նաև Գրիգոր Նարեկացու տիեզերագիտական հայացքներում, որոնց կանդրադառնանք աշխատության հաջորդ մասում:

Եսական-վերլուծական այս ընթացքը, գիտական միտքն ու քննական ոգին զորեղ լիցքեր հանդիսացան բանաստեղծական դպրոցի համար՝ զգայական-միստիկ փորձին զուգավիղ ստեղծելով բանաստեղծության աննախադեպ, միեղեն մի կառույց, որ հեղաշրջեց հոգեոր բանաստեղծությունը:

ՆՈՐՊԼԱՏՈՆԱԿԱՆ ՏԻԵԶԵՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ ՏԱՂԵՐՈՒՄ

Աշխատության այս մասում անդրադառնալու ենք նորպլատոնական տիեզերագիտության և Գրիգոր Նարեկացու ստեղծագործության աղերսներին՝ արտահայտված առավելապես նրա տաղերգության մեջ:

Այդ մասին խոսվել է թվի փիլիսոփայությանը նվիրված մասում:

Այստեղ խոսք է գնալու Գրիգոր Նարեկացու տաղերից մեկում արտահայտված փիլիսոփայական մի խորհրդավոր հղացքի մասին, որ սկիզբ է առնում անտիկ ակունքներից՝ իր զարգացումն ապրելով Դիոնիսիոս Արեոպագացու երկերում:

Խոսքը բանական մարդու և բանական տիեզերքի կապի ու փոխներթափանցման, մարդու ներքնատիեզերքի խորհրդավոր շարժման և աստվածային ոլորտների, բանական տիեզերքի մեջ ներսուզումների և արտահեղումների մասին է:

Նարեկացու տաղերը, ինչպես բազմիցս նշել ենք, նորպլատոնական գոյաբանության էական գաղափարներից մեկի՝ բանական և զգայական աշխարհների էութենական կապի, «վերընթաց և վայրընթաց» հոգեոր շարժման գեղարվեստական բացառիկ արտահայտություններ են, որոնցում բանաստեղծությունը, գեղագիտությունը, իմացաբանությունն ու գոյաբանությունը միահյուսված են իրար հաճախ մի տողի ու պատկերի, հաճախ էլ՝ շրջապատկերների ու պատկերաշարերի մեջ։ Աստվածաբանությունը «Մատեանում» և տաղերում սերտածած է բանաստեղծական հղացքին՝ ստեղծաբանությանը։ Նրա ներշնչանքը, ներք-

նատեսությունը, տեսիլաշարերը «չըջում» են, «ճամփորդում» են զգայական և իմանալի աշխարհներում, որոնք իրար են հարում, ներհյուսվում են բանաստեղծական կառույցի մեջ: Ինչպես է նա պատկերացնում աստվածային, տիեզերական այդ շարժումը բանական և զգայական աշխարհներում: «Վարդավառի» տաղում կա խորհրդավոր մի հատված, ուր մեծ մտածողն ու բանաստեղծը խոսում է տիեզերական շրջանաձև, բոլորակաձև, գնդաձև շարժման մասին, որով գերագույն աստվածության, նախախնամության ծիրում գոյանում է բանական և զգայական տիեզերք-ների ներդաշնակությունը: Տաղն ամբողջությամբ նույն տիեզերական այդ շարժման, նրա ոգեղենության և միեղենության կատարյալ օրինակ է:

Գոհար վարդըն վառ առեալ
Ի վեհից վարսիցն արփենից.
Ի վեր ի վերայ վարսից
Շաւալէր ծաղիկ ծովային:
Ի համատարած ծովէն
Պղպջէր գոյնըն այն ծաղկին.
Երփին երփնունակ ծաղկին,
Շողշողէր պըտուղն ի ճղին:
Քրքում վակասիր պտուղն,
Մնանէր խուռըն տերեւով,
Տերեւն տաւիդ տուողին,
Զոր երգէր Դաւիթ հրաշալին:

Երկրային և երկնային զարթոնքի, նրանց միեղենության խորհրդավոր կապի մասին է այս տաղը: Երկինքն ու երկիրը ներթափանցված են աստվածային սիրով. Երկրային

ծաղկունքի, ծաղկի, տերևի մեջ Աստծո արարչագործության հրաշքը կա: Այս շրջապտույտ անցումներն են, ահա, բանաստեղծական հղացքի հիմքում: Բնության պատկերների՝ արևաշող հովիտների, քաղցր օդի, շող ու շաղի, ամպ ու արեգակի մեջ բանաստեղծը տեսնում է Աստծո շունչը («Տերեւն տաւիդ տուղին/Զոր երգեր Դավիթ հրաշալին»): Այս խորհրդավոր վերելքի ու վայրէջքի, այս առնչակցության, զգայական և բանական աշխարհների միեղենության մասին է երգում բանաստեղծը, և աստվածային ներշնչանքով նրա միտքը շարժվում է, շրջում է երկու աշխարհներում:

Ի փունջ խուռներամ վարդից
Գոյնզգոյն ծաղկունք ծաղկեցան,
Այդ սաւս ու տաւսախ ծառերդ
Վարդագոյն սստս արձակեցին:
Այդ նոճ ու բողբոջ ասրաւսդ
Զարդ առեալ վարդըն շուշանին.
Շուշանըն շողէր հովտին,
Շողշողէր դէմ արեգականն:
Այն հիւսիսային հաւէն
Հով հարեալ գոհար շուշանին.
Յայն հարաւային լեռնէն
Քաղցր աւդով ցաւդէր շուշանին:
Շուշանըն շաղով լցեալ,
Շող շաղով եւ շար մարգարտով...

Հաջորդ հատվածում բանաստեղծը բնության այդ շրջապտույտին միացնում է նաև երկնքի շարժումը, որն այս դեպքում ողջ զգայական տիեզերքի շարժումն է արտահայտում:

Ծաղկունքդ ամէն շաղ առին,
 Շաղն՝ յամպէն, ամպն՝ յարեգակնէն:
 Աստղունքդ ամէն շուրջ առին
 Դէմ լուսնին՝ գունդ-գունդ բոլորին.
 Գունդ-գունդ խաչաձեւ գնդակ,
 Յաւրինուած երկնից շրջանակ:
 Փա՛ռք Հաւը եւ Որդւոյն յաւէտ,
 Սուրբ Հոգւոյն այժմ եւ յաւիտեանս:

(«Տաղ վարդավառին»)³³⁶

Այս շրջանաձեւ, գնդաձեւ շարժումը, ահա, Աստծո հորինվածքն է, և աստվածային այդ ուղեծրով նրան ներդաշնակ է շարժվում բանաստեղծի ներշնչանքը, որն այդ նմանությամբ հորինում է իր երգը:

Նման տիեզերական շարժման օրինակ է պատկերված նաև «Հարության» տաղում.

Աէր յառաւաւտէ,
 Աէր յառաւաւտէ ճեմեալ
 Իւր անձուկ ծագմամբ:
 Ծագմանն արեւելք,
 Ծագմանն արեւելք անուն
 Այն արուսեկին:

Մի՞թէ յայն վայր ի վայր,
 Մի՞թէ յայն վայր ի վայրի
 Տաւիդ տարածեալ.

³³⁶ Տե՛ս ՄՀ ԺԲ, Էջ 704-705:

Կամ սիրո շըջան,
Կամ սիրո շըջան առեալ,
Աստեղբք բոլորեալ:
(«Տաղ Յարութեան»)³³⁷

Որո՞նք են տիեզերքի կատարելության, նրա ոգեղեցության, համաչափ շարժման և ներդաշնակության տիեզերագիտական այս հղացքի ակունքները:

Այս տեսությունը, որ գարձալ գալիս է Պլատոնից, հանդիպում է նորպլատոնականության հիմնադրի՝ Պլոտինոսի փիլիսոփայական ուսմունքում: Ըստ նրա՝ բանական աշխարհն իր շարժման ձևերով և ուղղություններով ներդաշնակում է զգայական աշխարհը՝ օժտելով նրան իր նմանությամբ, շարժմամբ և կառուցվածքով: Եվ երկինքն իր լուսատուներով՝ իբրև տիեզերքի զգայական լավագույն մասը, հոգեղենացած է, ներթափանցված բանական տիեզերքի մեջ.

«Հանուր Հոգին զգայական աշխարհի լինելության այնպիսի հիմնակազմիկ սկզբունք է, ինչպիսին բանական Հոգին՝ բանական աշխարհի...»

Նա ինքն է պարառում նյութը: Եվ զգայական տիեզերքն այնքան է, որքան նա ծավալվում է [IV, 3, 9, 45]:

Ծավալումն ունի մի քանի աստիճան: Առաջին աստիճանում բանական աշխարհի արեգակը, լուսինը, աստղերը, մոլորակները, աստվածները (= երկինք), բանական մարմնի փոխարեն ձեռք են բերում նյութական մարմին՝ դառնալով

³³⁷ Տե՛ս ՄՀ ԺԲ, Էջ651:

զգայընկալելի. «... այս երկինքը զգայական տիեզերքի լավագույն մասն է, քանզի սահմանակից է Բանականի ծայրագույն հատվածներին» (IV, 3, 17, 1): Այդ պատճառով էլ «... այն առաջինն է հոգեղենանում և մասնակցում [Բանականին]՝ դառնալով նրա վերարտադրությունը [II, 3, 7, 5]: Ուստի երկնքի դիտարկումը... ճանապարհ է հարթում դեպի «այնտեղ»»³³⁸:

Զգայական տիեզերքի տարածական շարժումն ու կառուցվածքը բանական շարժման նյութական արտացոլումն է՝ այն շրջանաձև է և գնդաձև:

«Երկնային մարմիններին արդեն հատուկ է տարածական շարժումը: Այն ընթանում է շրջանի հետագծով. մի կողմից՝ սեփական կենտրոնի շուրջ, մյուս կողմից՝ տիեզերական ամբողջին համընթաց: Այդ շարժումը բանական Շարժումի նյութական արտացոլումն է՝ միտված առ Բարիքը [II, 2, 1, 15; cf. Plato, Tim., 34b]: Ի հետեանս դրա՝ զգայական տիեզերքն ունի կատարյալ (գնդաձև) կառուցվածք, որի ծիրում «...կառավարող մեկը ներդաշնակում է բազումը և վերածում դա կենդանի գոյացության» [II, 3, 4, 20]: Ավելին, հետեւելով պյութագորականներին, Պլատոնին և ստոիկներին՝ Պլոտինոսը համոզված է, որ, բացի մարմնից, տիեզերքն ունի զգայություններ և բանականություն [II, 3, 16, 10]»³³⁹:

³³⁸ Պլոտինոս, էնեադներ, ներածական ուսումնասիրություն, էջ XXVII-XXVIII:

³³⁹ Նույն տեղում, էջ XXVIII:

Հավերժական այդ շարժումը, տիեզերական այդ ընթացքը կապված է զգայական տիեզերքի հոգեղենության հետ:

Հստ Պլոտինոսի՝ հոգեղենացած են երկինքը, արեգակը, աստղերը, մարդիկ, կենդանի արարածները, բույսերը, ողջ զգայական տիեզերքը, և այդ ամբողջը գտնվում է հավերժական շրջապտույտի մեջ, որի ձեերն ու ուղղությունները նա նշում է:

«Ինչպես արեգակի ճառագայթները, լուսավորելով մութ ամպը, ստիպում են նրան շողարձակել և բացել մի ոսկենման տեսիլք, այդպես էլ Հոգին, ներթափանցելով երկնի մարմնի մեջ, դրան հաղորդում է կյանք և անմահություն... Եվ հոգու իմաստուն առաջնորդությամբ երկինքն սկսում է շարժվել հավերժական ընթացքով՝ վերածվելով «երջանիկ էակի»»...

Զի հոգին տրվել է երկնքի զանգվածին... և տարածության յուրաքանչյուր հատված՝ մեծ կամ փոքր, հոգեղենացած է...

Հոգու շնորհիվ է, որ այս տիեզերքն աստված է: Արեգակը նույնպես աստված է, զի հոգեղենացած է, նաև՝ մյուս աստղերը, նաև՝ մենք...

Ինչոր մեկը... եթե նա հիանում և զարմանում է այս զգայական տիեզերքով, ըմբռնում նրա մեծությունը, գեղեցկությունը, հավերժական շրջապտույտի կարգը, ճանաչում դրա ծիրում գտնվող տեսանելի և անտես աստվածներին, ոգիներին, կենդանի արարածներին, բոլոր բույսերը,

ապա թող համբառնի դեպի նրա արքետիպը...»³⁴⁰ (նկատի ունի բանական տիեզերքը, որը գերակա է զգայականից, և որտեղ գտնվում են զգայական աշխարհի նախատիպերը):

Ահա նորպլատոնական տիեզերագիտության այս գաղափարի, դեպի բանական տիեզերք հոգեմտավոր վերընթաց շարժման, բանական և զգայական աշխարհների հավերժական այս շրջապտույտի, զգայական տիեզերքի ոգեղենության գեղարվեստական մարմնավորումներ են Գրիգոր Նարեկացու նշված տաղերը: Ասվածն ավելի հիմնավոր է դառնում Դիոնիսիոս Արեոպագացուն վերագրվող երկերի հետ նշված տաղի համեմատությամբ: Դիοնիսիոս Արեոպագացին, իբրև քրիստոնեական նորպլատոնականության հիմնադիր, հարազատ մնալով իր նախահիմքերին, զարգացրել է այս տեսությունը, որ նրա մոտ ի հայտ է գալիս ավելի խոր ու համակարգված:

Հստ Դիոնիսիոսի՝ աստվածային իմացությունների, բանական տիեզերքի շարժումն ընթանում է երեք ուղղությամբ՝ ելողաբար (ուղղագիծ), շրջագայաբար (շրջանաձև), որը հատուկ է մարդկային բանականությանը, քանի որ այն միացած է գերագույն սկզբին, և գնդաձև, զի աստվածային աշխարհի բոլոր էություններն ու երկույթները, չարժիկելով նախախնամությամբ, անփոփոխաբուն են մնում ամենայն ինչի սկզբնապատճառին:

Այս տեսությունը պյութագորական-պլատոնյան արմատներ ունի և առնչվում է թվի փիլիսոփայության հետ:

³⁴⁰ Նույն տեղում, V.I, Էջ 5-7:

³⁴¹ Տե՛ս Պլոտինոս, Էննեադներ, ծնթ., Էջ 127:

Հստ այդ տեսության՝ այդօրինակ շարժման ձևերը ներհատուկ են նաև մարդուն՝ «փոքր տիեզերքին»։ Նրա շրջանաձև շարժումը կապված է իմանալի, բանական աշխարհի հետ, տրված է նրան իբրև պարգև՝ շրջագայել իմանալի աշխարհում՝ ուր «նրան անմոլորություն է պարգև տրվել մի աստվածային բոլորակի (շրջանի) մեջ»։

Այս շարժումը կատարվում է իմանալի էությունների հետ միեղենաբար, միատեսակ, միացյալ զորությամբ։ Շարժման մյուս ուղղությունը նա անվանում է «բանավորապես և ելողաբար»՝ բնորոշելով այն իբրև «շարախառնություն և փոխանցական ներգործություն», երբ զգալի աշխարհի երևույթներից, իբրև աստվածային խորհրդանիշերից, նա համբառնում և շարժվում է դեպի իմանալի աշխարհ։

«Եւ շարժիլ ասին՝ աստուածայինն իմացութիւնք շրջագայաբար՝ միացեալք սկզբմամբ եւ անվախճանիւք լուսափայլութեամբք ազնուին եւ բարւոյ։ Եւ ըստ ուղղութեան զիարդ եւ իցէ՝ յառաջ գան ի նուաստագունիցն նախախնամութիւն ուղղակի գործելով զամենայն։ Եւ գնդաձեւ՝ զի և նախախնամելով նուաստագունիցն անփոխաբուն մնան ի նոյնութեան յար ի նոյնութեանն պատճառ՝ յազնիւն եւ բարին անդադար պարագայութեամբ։

Իսկ անձին շարժութիւն է շրջագայութեամբ, յինքն մուտն արտաքուստ կուսէ և իմանալեացն նորա տեսութեանց միատեսակք շարամանութիւնք, որպէս ի բոլորակի իմիք անմոլորութիւն պարզեւեալ նմա, եւ ի բազմաց յորոց արտաքուստ՝ դարձուցանել զնա և ժողովել՝ նախ յինքն եւ

ապա որպէս միատեսակ եղեալ միեղինաբար միացելովք զաւրութեամբք, եւ այսպէս յազնիւն եւ ի բարի առաջնորդեալ ի գերագոյնն քան զամենայն էսս, եւ մի եւ նոյն, եւ անսկիզբն եւ անվախճան։ Եւ գնդակաձեւ շարժի անձն՝ ըստ որում ընտանեբար լուսափայլի նմա գիտութիւն աստուածային՝ ոչ ըստ իմանալեաց եւ միեղինաբար, այլ բանաւորապէս եւ ելողաբար, եւ որպէս շարախառնիւք եւ փոխանցականաւք ներգործութեամբք։ Իսկ ըստ ուղղութեան՝ յորժամ ոչ ի յինքն մտեալ և միականաւ իմանալի էութեամբ շարժեալ, քանզի այս է՝ որպէս ասացի՝ ըստ շրջագայութեանն, այլ առ որս մերձ ի յինքն յառաջ ածեալ եւ յորոց արտաքուստ կուսէ՝ որպէս ի նշանակաց ինչ զանազանելոց եւ բազմացելոց ի պարզսն կոյս եւ ի միացեալս տեսութիւնս ելանէ։

Արդ այսոցիկ եւ զգայականացն յայսմ ամենայնի՝ երիցս շարժութեանց, եւ բազում յառաջագոյն իւրաքանչիւր մնացից եւ կայից, եւ սերտութեանց՝ պատճառ եւ շարունական է ազնիւն եւ բարի գերագոյնն քան զամենայն կայս եւ շարժութիւնս. վասն որոյ ամենայն կայք եւ շարժութիւնք, եւ յորմէ եւ որով, եւ յոր, եւ որոյ աղագաւ»³⁴²։

Մարդկային բանականությունը, մտքի շարժումը մասնակցում է տիեզերական շարժմանը, արարչական հոսքերին, իմանալի աշխարհի, աստվածային էությունների մշտնջենական շրջապտույտներին, բոլորակաձև, շրջանաձև, գնդակաձև հարաշարժությանը։

³⁴² Դիոնիսիոս Արեոպագի, «Յաղագս ազնուի», էջ 161-162:

Բանական մարդը՝ «փոքր աշխարհը», միացած է մեծ աշխարհին, համաբնութենակից է նրան, միեղեն է, և իրուներուժ, արարչագործ սկիզբ միախառնված է աստվածային արարչագործ տարերքին: Ընդ որում, ինչպես Դիոնիսիոսն է ասում, մարդուն, մարդկային բանականությանը ևս հատուկ են աստվածային շարժման այդ ձևերը, ուղղությունները, այն է՝ շրջագայաբար և գնդաձև: Թափանցելով աստվածային էությունների աշխարհը՝ նա ճամփորդում է, շրջում է, ասես առնված մի աստվածային «անմոլոր բոլորակի մեջ»:

Աստվածային գերագույն էության նախասկիզբներին՝ Բարուն, Ազնիվին, Գեղեցիկին տրված է կառավարել տիեզերական շարժումը՝ ներդաշնակել այն, և շրջագայաբար, գնդաձև կատարվող այդ շարժումը, տիեզերական այդ հարմոնիան միեղեն է դարձնում երեք աշխարհները՝ իմանալի՝ աստվածային էությունների աշխարհը, մարդկային աշխարհը՝ «փոքր տիեզերքը» և զգայական աշխարհը՝ բնությունը:

Այս տեսությունը սկզբնավորվել ու զարգացում է ապրել հնագույն իմաստասիրական դպրոցներում՝ պյութագորականներ, Պլատոն, ստոիկներ, նորպլատոնականներ: Դրա արձագանքներն ու ազդեցություններն ի հայտ են գալիս միջնադարյան եվրոպական միստիկ ուղղությունների և Վերածննդի նշանավոր ներկայացուցիչների երկերում: Մասնավորապես Վերածննդի նշանավոր մտածող և գիտնական Նիկոլայ Կուզանացին իր «Գիտական անգիտություն» խորագրված տրակտատում զարգացնում է այս տե-

սությունը, որը նրա մոտ վերածեվում է Աստծո շրջանաձևթյան և Աստծո գնդաձևության գաղափարի, որն, ըստ նրա, առաջ են քաշել գերագույն մտքի տեր իմաստասերներն ու սրբազան այրերը³⁴³: Կուզանացին, ըստ էության, նկատի է ունեցել վերոնշյալ աղբյուրները, ինչպես նաև արեոպագիտյան տեքստերի հեղինակին, որոնք, առավելապես վերջինը, նրա փիլիտոփայական համակարգի հիմնական աղբյուրներն են³⁴⁴ (պատահական չէ, որ իր երկերում նա առավել հաճախ հղում է արեոպագիտյան բնագրերին, որոնցից են քաղված նրա տեսության էական գաղափարները, նաև գիտական անգիտության գաղափարը):

Գիտական անգիտության այս գաղափարի շուրջ է հյուսված, ինչպես տեսանք, արեոպագիտյան աստվածաբանության վերջին աստիճանը՝ «խորհրդական (միստիկ, խորհրդապաշտական) աստվածաբանությունը»: Այսպես, «Յաղագս աստուածայնոցն անուանց» աշխատության VII գլխում կարդում ենք. «Վասն որոյ եւ յամենայնի ճանաչի Աստուած, եւ առանց ամենայնի, եւ ի ձեռն գիտութեան ճանաչի, եւ ի ձեռն անգիտութեան... եւ է գարձեալ աստուածային գիտութիւնն Աստուածոյ ի ձեռն անգիտու-

³⁴³ Տե՛ս Հիկոլայ Կոզանսկու, *Сочиненія, М., Том 1, 1979, сс. 66-67:*

³⁴⁴ Այս մասին տե՛ս նույն տեղում, Երկեր, ներածական ուսումնասիրություն (հեղ. Զ. Տաժուրիպինա), էջ 13: Կուզանացու երկերի հրատարակության ծանոթագրությունների հեղինակը (Վ. Բիբիխին) իրեր այս գաղափարի սկզբնաղբյուրներ հղում է նաև միջնադարյան գերմանացի միստիկներին, մասնավորապես Մայստեր Էքչարտին, որն իր հերթին իր գործերում իրեր սկզբնաղբյուր նշում է Հերմես Եռամեծին (տե՛ս նույն տեղում, էջ 466):

թեանն գիտացեալ, ըստ գերագոյն քան զմիտս միութեանն, յորժամ միտք յէիցս ամենայնէ ի բաց կացեալ, եւ ապա եւ զինքն թողեալ միաւորեսցի գերաճաճանչ ճառագայթիցն, անդուստ եւ անդ անքննելի խորութեամբ իմաստութեանն լուսաւորեալ: Որ եւ ամենայնէ, որպէս ասացի, գիտելի է զնա, քանզի նա է՝ ըստ ասացելումն՝ ամենեցունց արարողական... եւ զամենեցունց շնչակցութիւն <եւ յաւդաւորութիւն> գեղեցկագործեալ»³⁴⁵:

Աստված վեր է ամեն ինչից, և մարդկային գիտությունը հասու չէ նրան, բայց նաև ճանաչելի է ամեն ինչի մեջ, քանի որ ամեն ինչ է ստեղծել և գեղեցկագործել, և ամեն ինչ «Հոդակցված և շնչակցված» է նրան:

Արեոպագիտյան բնագրերում ևս հանդիպում է կետի, գծի և շրջանի աշխարհաստեղծ այդ մոդելը: Աստվածն իբրև առաջնամիակ, գտնվում է շրջանի կենտրոնում, և նրանից դուրս եկող բոլոր շառավիղները (էությունները, գոյությունները) նրանից են սկիզբ առնում. «Եւ բեւեռով (կետով.— Հ. Թ.) ամենայն գիծք բոլորակի ըստ միում միաւորութեան շարագոյացան. եւ զամենայնսն ունի նշանն յինքեան զուղղութիւնսն միատեսակապէս միաւորեալս առ միմեանս, եւ առ մի սկիզբն, յորմէ յառաջն եկին...

Այլ եւ բոլոր բնութեան էիցս ամենայն սահմանք որք ըստ իւրաքանչիւր բնութեան շարամանեալ են ընդ միում անշփոթ միութեանն»³⁴⁶:

Այս հղացքը հանդիպում է նաև Պլոտինոսի մոտ, որին այն անցել է Պյութագորասից:

³⁴⁵ Դիոնիսիոս Արեոպագացի, էջ 196-197:

³⁴⁶ Նույն տեղում, էջ 187:

Պլոտինոսը մարդու հոգեմտավոր շարժումը կապում է գծի և շրջանի և մեկի՝ շրջանի կենտրոնի հետ. «Բանականը մեկի պատկերն է... Բանականը, շրջվելով առ նա, հայում է նրան: Եվ հայեցողությունը հենց բանականն է... Ուրիշին ի զորու է ըմբռնել զգայությունը կամ բանականությունը... Զգայությունը գիծ է... Իսկ շրջանն իրու այդպիսին ենթակա չէ տրոհման: Ենթակա չէ տրոհման նաև բանականությունը: Այստեղ՝ զգայական աշխարհում ներկա է նաև Մեկը, որն ամենայն ինչի արարիչ ուժն է: Նա արարիչ է բոլոր նրանց համար, որոնք բխում են այդ ուժից, որոնց մտահայում է բանականը՝ տարամիտվելով [Մեկից]... Բանականն ունի այդ ուժի յուրատեսակ գիտակցությունը և այդու՝ ունակ է արարելու էություն և նախահիմք»³⁴⁷:

³⁴⁷ Տե՛ս Պլոտինոս, Էննեադներ, V. 1, էջ 12: Մեկնաբանելով Պլոտինոսի այն միտքը, որով նա հոգեմտավոր շարժումը համադրում է երկրաչափական ձևերի՝ զգայությունը՝ գծի և բանականությունը՝ շրջանի հետ, ուսումնասիրողը (Ա. Ստեփանյան) գրում է. «Իմաստասերը մեկնարկում է Պյութագորասին վերագրվող հանրահայտ հղացքից, որի ծիրում մարդկային հոգեմտավոր գործառույթները համադրվում էին երկրաչափական ձևերին. զգայությունը՝ ուղիղ գծին, տրամաբանությունը՝ շրջանին, մտահայեցողությունը՝ շրջանի կենտրոնին: Գոյակարգի մակարդակում համադրությունն ուներ հետևյալ դրսեւորումը. Հոգին՝ ուղիղ գիծ, Բանականը՝ շրջան, Մեկը՝ շրջանի կենտրոն: Դրանք համատեղ ներկայացնում էին մի համընդգրկուն մտահոգերոր շարժում՝ մասնակի գոյացություններից մինչև Բացարձակը, Անսահմանն ու անորոշը» (Պլոտինոս, Էննեադներ, ծնթ., էջ 131-132):

Մեկ այլ գեպքում Պլոտինոսը գրում է. «Ինչպես որ շրջանի կենտրոնը գոյություն ունի ըստ ինքյան՝ պարանելով իր մեջ յուրաքանչյուր ճառագայթ... ճիշտ այդպես էլ մեր մեջ առկա [ճառագայթով] մենք առնչվում, աղերսվում և համագոյում ենք [նախագրույնի] հետ: Իսկ մեզանից նրանք, ովքեր միանում են նրան, հաստատվում են այնտեղ՝ բանական աշխարհում (Էննեադներ, V. 1, էջ 17-18):

Կետի՝ իբրև շրջանի կենտրոնի, նախագույնի գաղափարը, որին միացած են բոլոր էռթյուններն ու գոյությունները, արտահայտված է Գրիգոր Նարեկացու «Ի յարութիւն Հազարու» տաղում, որին կանդրադառնանք:

*

Գրիգոր Նարեկացու «Վարդապառի» տաղը՝ իբրև բնության տիեզերական շարժման, շրջապտույտի, ներդաշնակության գաղափարների գեղարվեստական արտահայտություն, լիովին «վերծանվում»՝ իմաստավորվում և մեկնաբանվում է նորպլատոնական տիեզերագիտության ծիրում՝ բանալի դառնալով նաև նրա մյուս տաղերի ներքին հղացքն ըմբռնելու համար:

Գրիգոր Նարեկացին իր մյուս տաղերը, գանձերը ևս՝ իբրև մտքի թոփչք և շարժում, կառուցում է շղթայաձև, օղակաձև, գնդաձև, շրջանաձև, հաճախ ծայրակապելով տաղերը նույն տառերով և բառերով՝ միահյուսելով, շրջանի մեջ առնելով դրանք, հաճախ միահյուսելով դրանք իր անվան սկզբնատառերով՝ իբրև աստվածայինի ծիրում իր բանականության, ստեղծագործական հղացման, արարման բոլորակաձև շարժման արտաքին ձև, կառույց, նշանակ: Պատահական չեն նրա պատկերաշարքերում տարբեր գունավորումներով ու բոնկումներով հայտնվում հրեշտակների գնդերը, որոնք հիշեցնում են արեռպագիտյան երկնային հիերարխիան: Արա հիմքում դարձյալ էռթյունների աշխարհի գնդաձև շարժման գաղափարն է, որը գալիս է արեռպագիտյան ավանդույթից: Հիշենք մի քանի նմուշներ տաղերից:

Մինն էին ել ի նմինն ի յերկուց
 Մի երկակի հանգոյն էից զվարճ միշտ.
 Միշտ անբաւ այսը հրաշունակի բան,
 Բան խորհրդաբեր եւթներգին աղի չափ.
 Չափ վայր ասպարէզ իջեալ ի տեղի տարրայնոյ տարփ,
 Տարփ ի վեր արփային տարփ,
 Տարփ ի վայր նուսխայաւրէն ճեմ,
 Ճեմ կուսինածոց ծաղիկ, վարդ փթթեալ
 ի գիրկս մաւր...

(«Տաղ Քառասնաւրեայ գալստեան Տեառն»)³⁴⁸

Այս հյուսվածքի մեջ Քրիստոսի մարդեղության խոր-
 հուրդը պատկերված է աստվածային սիրո, տարփանքի մի-
 ջոցով բնության գոյանալու հետ առնչակցված: Աստված
 իր մարդեղությամբ իրար է կապում աստվածային աշ-
 խարհն ու բնությունը՝ հնչեցնելով աստվածային «զուարճ,
 հրաշունակ» խոսքն ու մեղեղին: Եվ խորհրդավոր այդ կա-
 պը, վերընթաց և վայրընթաց այդ շարժումը, որով գոյա-
 վորվում և շարժվում են էությունների աշխարհն ու բնութ-
 յունը՝ ենթարկված աստվածային չափին՝ կայանում է աստ-
 վածային էությունների վայրէջքով դեպի տարածությունը
 («վայր ասպարեզ իջեալ ի տեղի»), որի միջոցով կազմավոր-
 վում է, տարրանում է բնությունը («տարրայնոյ տարփ»):

Եվ այս ամենը կատարվում է աստվածային սիրով,
 տարփանքով, որով լի է ողջ բնությունը («Տարփ ի վեր ար-
 փային տարփ, / Տարփ ի վայր նուսխայաւրէն ճեմ...»): Աստ-

³⁴⁸ Տե՛ս ՄՀ ԺԲ, Էջ 635:

վածային սերը աշխարհաստեղծման գործուն սկիզբ էր նոր-պլատոնականների և միջնադարյան միստիկների համար։ Այս գաղափարին, ինչպես տեսանք, մի ամբողջ գլուխ էր նվիրված Դիոնիսիոս Արեոպագացու «Յաղագս Աստուածայնոցն անուանց» երկում։

Ահա ևս մի կատարելատիպ տաղերից, երբ բանաստեղծական կառույցը, Հղացքը, պատկերներն ու ներքին գաղափարը միահյուսվել են։

Էն նորոյ նորին նոյն նիւթ,
Նիւթ էականին, էնն յանէից գոյ.
Գոլն յոչէից եղաւորեալ տիպ,
Տիպ երանութեան ներընդունակ ներ.
Ներ ներբողական նուաստատիպ կերպ,
Կերպ երամաղին եւ ցուցանի շուք.
Շուք տարրաշշոյ զեղ մէջ ասոյ զկէտ,
Կէտ կատարելոց կցորդակցեալ եւ էակցեալ մէտ…

(«Յաղ ի յարութիւն Ղազարու»)³⁴⁹

Այս հատվածում, ինչպես նշել ենք, բանաստեղծը խոսում է էության և նյութի, գերագույն էության՝ անէությունից գոյանալու, այնուհետեւ կերպավորվելու, ձևավորվելու, նյութականանալու, մարմնավորվելու մասին։ Բանաստեղծը այստեղ ևս նկարագրում է աստվածային էությունների շարժումը՝ վայրէջքը դեպի «նվաստատիպ» զգայական աշխարհը, անէությունից առ էություն (որը նրա ներընդունակ տիպն է), էությունից, կերպավորվելու միջո-

³⁴⁹ Տե՛ս ՄՀ ԺԲ, էջ 645։ Մեր կարծիքով, բնագը մի տողը խաթարված է (Շուք տարրաշշոյ զեղ մէջ ասոյ զկէտ…):

ցով՝ առ նյութը։ Անհասկանալի է մնում բնագրում «Շուք տարրաշշոյ զեղ մէջ ասոյ զկէտ» տողը, որն, հավանաբար, աղավաղված է։ Խոսքը գուցե ստեղծված (եղ), տարրացած (տարրաշշոյ) աշխարհի մասին է, որը միացած, կցորդված է կետին։ Այդ է վկայում մեջ բերված հատվածի վերջին տողը, որն ուղղակիորեն համընկնում է Դիոնիսիոսի տեքստերին. այստեղ խոսվում է կետի՝ իբրև աստվածային գերագույն էության, առաջնամիակի և նրանից բխած, նրա ստեղծած էությունների ու գոյությունների միջոցով չափի (մետ) մեջ մտնող, նյութավորվող աշխարհի մասին, որոնք «կցորդակցյալ, էակցյալ» են նրան։ Այս հատվածն առնչվում է կետի, շառավիղի ու շրջանի՝ իբրև աշխարհաստեղծ նախաձեւերի պյութագորյան գաղափարին, որ գարգագրել են նորպլատոնականներն ու Վերածննդի շրջանի մտածողները։

Նմանատիպ մի հատված կա «Հարության» տաղում, ուր արտահայտված է Աստծո՝ իբրև միակի, անեղ, անհաս էության գաղափարը, որից գոյանում են հրեշտակների գնդերը, որոնց շարժումն ու կայությունը կատարվում է «անուրեք վայրում»։ Նրանցից են գոյանում չորս տարերքները. այդ գաղափարը բանաստեղծը մատուցում է քառանյութ գետի պատկերով, որն հոսում է աստվածային անծայրածիր, «գերազանցիկ» լույսի մեջ, երկնաշավիղ արահետներով։

Անուն անեղին էին Աստուած է,
է միշտ յէութեան յանհասութեան նոյն.
Նոյն ինքն է նըման, նոյն մի եւ նոյն մի,

Մի ոմն ի յէից անդրէն ի նոյն թիւ.
 Թիւ միշտ եռակի եզեռակի փա՛ռք,
 Փա՛ռք իմ դիմառից էից գոյից գունդ.
 Գունդ տրամք երամից կայք յանուրեք վայր,
 Վայր համբից բիւրից աւր սահմանեալ գետ.
 Գետ քառանիւթեայք պաղպաջ երկնի փայլ փայլ,
 Փայլք փաղփինատար անծայրենի լոյս.
 Լոյս գերազանցիկ երկնաշաւիդ ուահ...

(«Տաղ Յարութեան, Նարեկայ ոգեալ»)³⁵⁰

³⁵⁰ Տե՛ս ՄՀ ԺԲ, էջ 647: Այստեղ պատկերամտածողության ու պոետիկայի հիմքում ևս զորեղ է արեոպագիտյան խորհրդավոր բնագրերի ազդեցությունը: Ահա նրա «Յաղագս երկնայնոցն քահանայապետութեանց» երկից մի հատված. «Բայց գիտելի է զգեստ ասել եւ անիւս եւ կառս գոյն ընդ երկնայնոցն էութեանց: Քանզի Հրեղէն գետքն նշանակեն զաստուածայինսն բիսմունս եւ առատ եւ աննիազ զհոսումն բաշխելով նոցա եւ կենդանարար ծննդականութեան սնուցիչս» (Դիոնիսիոս Արեոպագացի, էջ 52):

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆ՝ ԻԲՐԵՎ ԱՍՏՎԱԾԱՑԻՆ ՆԵՐՉՆՁԱՆՔ ԵՎ ԽՈՍՔԻ ԶՈՐՈՒԹՅԱՆ ԱՐՎԵՍՏ

Բանաստեղծական խոսքի՝ իբրև աստվածային ներշնչանքի և ներգործուն հոգեւոր սկզբի, և արարչագործության շղթայի մեջ նրա խաղացած դերի նարեկացիական ըմբռնումներին մասսամբ անդրադարձել ենք ուսումնասիրության երկրորդ գլխում («Մատեանի» հղացքը և կառուցվածքային ենթաշերտերը»): Այստեղ ներկայացնում ենք այն արեոպագիտյան ավանդույթի համատեքստում, որ իր հետագա զարգացումն է ապրում նարեկյան դպրոցի աստվածաբանության և բանաստեղծական արվեստի ծիրում:

Դիոնիսիոս Արեոպագացու աստվածաբանական համակարգի բոլոր չորս մակարդակներում շեշտվում է մարդկային խոսքի, իմաստության, հանճարի նշանակությունը՝ աստվածային շնորհներ, որ հաղորդակից են դարձնում խորհրդապաշտ անհատին բանական տիեզերքին, աստվածային էությունների աշխարհին, աստվածային գիտությանն ու իմաստնությանը:

Այս հարցը կապվում է բանական անձի՝ աստվածային արարչագործության շղթայում խաղացած դերի հետ, որ արեոպագիտյան աստվածաբանության էական խնդիրներից է:

Ի՞նչ տեղ է գրավում մարդու իմացական աշխարհը տիեզերական արարչագործության մեջ, եթե նա ի զորութափանցել աստվածային էությունների աշխարհը, «շրջագայել և ճամփորդել» բանական տիեզերքով, ի՞նչ իմաստ և

զորություն ունի նրա ստեղծաբանության ձիրքը, նրա խոսքը, միտքը, հանճարը։ Այս հարցերի բավական խոր և խորհրդավոր մեկնաբանությունները կան արենպագիտյան տեքստերում։ Մարդկային բանականության այդ խտացումները, հոգեոր շարժման ձեերը կարեոր տեղ ունեն արարչագործության միեղեն շղթայի մեջ, նրա մի կապող օղակն են, նրանց միջոցով է մարդը՝ բանական և զգայական աշխարհների հանգույցը, առնչակցվում աստվածային ուլորտներին։ Այս հարցը էական նշանակություն ունի Գրիգոր Նարեկացու բանաստեղծությունը, բանաստեղծական արվեստի նրա ընկալումը հասկանալու համար, քանի որ այն ուղղակիորեն բխում է դիոնիսյան տեքստերից։

Այս խնդիրներին Դիոնիսիոս Արենպագացին անդրադառնում է «Յաղագս Աստուածայնոցն անուանց» երկի³⁵¹ տարբեր գլուխներում, որ, ինչպես ցույց ենք տվել, խորհրդապաշտական (միստիկ) աստվածաբանության բարձրագույն նմուշներ են և ամբողջացնում ու զարգացնում են նախորդ դարերի նորապլատոնական ժառանգությունը։

Նրանցում Դիոնիսիոսն անդրադառնում է աստվածային արարչագործական սկիզբներին՝ Բարուն, Ազնիվին, Գեղեցիկին, Սիրուն, որոնք գոյավորում և ներդաշնակում են տիեզերքը։

«Յաղագս ազնուի» գլխում Դիոնիսիոսը հայտնաբանում է, բացահայտում է բարու, ազնիվի, գեղեցիկի, սիրոգաղափարները, որոնք նրա համար գոյաբանական կատե-

³⁵¹Տե՛ս Դիոնիսիոս Արենպագացի, «Յաղագս Աստուածայնոցն անուանց», I-XIII, էջ 128-223։

գորիաներ, աստվածային սկզբնապատճառներ և շարժիչ ուժեր են: Այդ ուժերն են արարում տիեզերքը աստվածային տարփանքով և աստվածային ներշնչանքով:

«Այս բարիս աւրհնաբանի առ ի սրբազնիցն աստուածաբանիցն եւ որպէս ազնիւ, եւ որպէս գեղեցիկ, եւ որպէս զսէր, եւ որպէս զսիրելի... իսկ զազնիւն և զգեղեցիկն ոչ է անջատելի ի միով զբոլորսն պատճառս <առնլոյ>, քանզի այսոքիկ ի վերայ էիցս ամենայնի ի հաղորդութիւնս եւ ի հաղորդելն որոշին»³⁵²:

Բարին, որպէս պայծառության և գեղեցկահոգության պատճառ, տարածվում է լույսի օրենքով, հաղորդակցվում է իր «աղբյուրեղեն ճառագայթներով»՝ ամենայն ինչին և բոլորին ժողովելով իր ծիրում: Ազնիվն ու բարին արարում են տիեզերքն աստվածային սիրով, ներդաշնակությամբ և գեղեցկությամբ:

«Քանզի պարզ եւ գերաբուն բնութեամբ ամենայն ազնուիցն ամենայն գեղեցկութիւն... ի յազնուէն յայնմանէ գոլ ամենայն էիցս... եւ ամենեցունց յաւդաւորութիւնք եւ սէրք, եւ կցորդութիւնք, եւ աղնուաւն ամենայն ինչ միանայ:

Եւ սկիզբն ամենայնի ազնիւն է, որպէս արարչական պատճառ եւ շարժող բոլորիցս եւ միահամուռ ունող իւրոյն գեղեցկութեան տուփմամբ եւ բովանդակութիւնն է ամենայնի եւ սիրելի որպէս կատարողական պատճառ...»³⁵³:

³⁵² Նույն տեղում, էջ 159:

³⁵³ Նույն տեղում, էջ 159-160:

Արարչական, տիեզերական այդ լուսեղեն աղբյուրներից են սկիզբ առնում, ըխում ամեն էություն, ամեն թիվ, որակ, քանակ, տարերք, տեսակ... ամենայն կենդանություն, ամենայն բնություն, ամեն միտք, ամեն անձ, ամեն զորություն, ամեն գեղեցկություն, ամեն խոսք, իմաստ ու հանճար: Ամեն ինչ նրանցից է սկսվում և դառնում է նրանց:

«Քանզի ի նմանէ եւ ի ձեռն նորա եւ էութիւն, եւ կենդանութիւն ամենայն, եւ մտաց, եւ անձին, եւ ամենայն բնութեան նուազութիւնք... ամենայն միակ եւ բազմութիւն, շաղկապութիւնք մասանցն... կատարելութիւնք բոլորութեանցն, որակն, քանակն... գերունակութիւնք, տարերք, տեսակք, ամենայն էություն, ամենայն զարութիւն, ամենայն ներգործութիւն, ամենայն ունակութիւն... ամենայն բան, ամենայն իմաստ... ամենայն հանճար, ամենայն միաւորութիւն:

Եւ պարզաբար՝ ամենայն գոյ ի յազնուէ եւ ի բարւոյն է, եւ յազնիւն եւ ի բարին դառնայ»³⁵⁴:

Այս նույն գաղափարն ավելի է շեշտվում նշված երկի «Յաղագս իմաստութեան, մտաց, բանի, ճշմարտութեան, հաւատոյ» գլխում:

Մարդկային միտքն իր բնությամբ հասու է տեսանել իմանալի աշխարհը, հպվել բարձրագույն էություններին: Եվ աստվածայինն իմանալի է ոչ ըստ մեզ, այլ ըստ Աստծու, քանի որ ստեղծված ենք Աստծուց:

³⁵⁴ Նույն տեղում, էջ 162:

«Պարտ է տեսանել զմեր զմիտսս ումեմն ունել զաւրութիւն իմանալոյ, որով զիմացականս տեսանէ, իսկ ումեմն միաւորութիւն գերամբարձեալ զմտացն բնութիւն, որով հպի ի բարձրագոյնսն քան զինքն։ Աստ այսմիկ ումեմն իմանալի է զաստուածայինսն ոչ ըստ մեզ, այլ զամենեսին զնոսա ամենեցունց ինքեանց ի զարմացման լինելով եւ զամենեսին Աստուծոյ եղեալս։ Քանզի լաւ է Աստուծոյ լինել եւ ոչ ինքեանց, զի այնպէս եղիցին աստուածայինքն տուեալ այնոցիկ՝ որք ընդ Աստուածոյն լինին»³⁵⁵։ Այս հատվածում նա կրկնում է նախորդ միտքը մարդու աստվածային ձիրքերի մասին։ Աստված է սկիզբը և պատճառը ամենայն մտքի և խոսքի, իմաստության և հանճարի, նրանում են թաքնված իմաստության և գիտության բոլոր գանձերը։

«...Ասասցուք եթէ ամենայն մտաց եւ բանի եւ ամենայն իմաստութեան եւ հանճարոյ է պատճառ, եւ նորա է ամենայն խորհուրդ, եւ ի նմանէ ամենայն գիտութիւն եւ հանճար, եւ ի նմա են թաքուցեալ ամենայն գանձք իմաստութեան եւ գիտության»³⁵⁶։

Մարդկային իմաստությունը, խոսքի զորության, հանճարի ուժի աստվածատուր ձիրքը նա կապում է հրեշտակակերպության, աստվածանմանության իր դավանած գաղափարի հետ, որ գերագույն նպատակ էր նորպլատոնականների և միջնադարյան միստիկ աստվածաբանների համար։ Իմաստուն, խորազգաց այրն՝ իրեն տրված այս աստ-

³⁵⁵ Նույն տեղում, էջ 193։

³⁵⁶ Նույն տեղում։

վածային ձիրքերով՝ խոսքի, մտքի, իմաստության և հանճարի գորությամբ, իր բնության և կարողության սահմաններում կարող է հասնել հրեշտակային իմացության:

«Վասն աստուածայնոյն իմաստութեան եւ անձինք զբանականն ունին ճանապարհորդութեամբ եւ շրջագայարար առ էիցս ճշմարտութիւն չուրջ գնացիւք, եւ բաժանականաւ եւ ամենայնիւ զանազանութեամբ պակասեալք ի միեղինիցն իմացութեանց: Իսկ բազմացն ի մի պատելով եւ հաւասար հրեշտակաց իմացուածովք՝ որքան ինչ ընտանի է անձանց եւ հասանելի՝ արժանի են եղեալ...»³⁵⁷:

Այս ամենին մարդը հասնում է մտքի, խոսքի գորությամբ, աստվածային իմաստությամբ, քանզի «աստվածայինը աստվածավայելչապես է իմանալի»:

«Այլ զի եւ նորին իմաստութեանն եւ ամենայնի, եւ մտաց ամենայնի, եւ բանի, եւ զգայութեան ամենայնի աստուածայինն իմաստութիւն՝ եւ սկիզբն, եւ պատճառ, եւ գոյացուցիչ, եւ կատարումն, եւ պահպանութիւն, եւ բովանդակութիւն ասի...

Այլ որպէս ասացի յոլովակի՝ զաստուածայինսն աստուածավայելչապէս է իմանալի»³⁵⁸:

Ընդ որում, ինչպես նշել ենք, Դիոնիսիոսը էությունների աշխարհը թափանցելու, աստվածային գիտելիքներ ձեռք բերելու երկու ուղի է նշում, երբ սրբազան, «աստվածատեսակ» անձը աստվածային ներգործությամբ, հրեշտակների նման «անաչյա հայեցողությամբ», անմիջաբար

³⁵⁷ Նույն տեղում, էջ 194:

³⁵⁸ Նույն տեղում, էջ 194-195:

է ընկալում անմատույց լույսը՝ «բանական ճանապարհորդությամբ շրջագայելով էությունների աշխարհում», և երկրորդ ուղին, երբ նա այդ գիտելիքը ձեռք է բերում զգալի աշխարհի հայեցողությամբ:

«Պարտ է տեսանել ըստ ուղիղ բանի՝ զի տառից եւ սիրոբէից, եւ բառից, եւ գրոց, եւ բանից հալիմք վասն զգայարանացս։ Որպէս յորժամ անձն մեր՝ իմանալեաւք ներգործութեամբք ի յիմացականսն շարժի՝ աւելորդ են զգալեաւք զգայարանս, որպէս եւ իմանալիքն զաւրութիւնք. յորժամ անձն աստուածատեսակ եղեալ ի ձեռն միատրութեան անգիտելոյ յանմատոյց լուսոյն ճառագայթս ձեռնարկէ անաչեայ ձեռնարկութեամբ։ Իսկ յորժամ միտք ի ձեռն զգալեացս վերաշարժիլ փութայ առ տեսողականս իմացուածս, պատուականագոյն քան զամենայն են յայտնագոյնքն թափանցութիւնք զգայարանացն եւ ստուգագոյնք բանք յստակագոյնք երեւելեացս»³⁵⁹:

Երկրորդ դեպքում, ահա, նա վերհայեցողության, հոգեսոր վերառաքման համար շեշտում է զգալի աշխարհի հայեցողության նշանակությունը՝ ընդգծելով բառի, գրի, խոսքի արժեքը, որոնք զգայական աշխարհի ճանաչողության միջոցով բանական աշխարհի մասին «հայտնագոյն, ստուգագոյն, հստակագոյն» պատկերացում են տալիս «աստուածանման» անձին, եթե նրան իմացությունը չի տրվել իմանալի, բանական աշխարհի ուղղակի ներգործությամբ և անմիջնորդ հայեցողությամբ։

³⁵⁹ Նույն տեղում, էջ 164։

Հստ Դիոնիսիոսի՝ Աստված Բարու, Ազնիվի, Կյանքի, Գեղեցիկի միջոցով լուսեղեն բխումներով հղանում է, ստեղծաբանում է աշխարհը: Նա ընկալում է աստվածային այդ ուժերն՝ իբրև ստեղծագործող սկիզբներ, անվերջ հղացման տարերք, որ շարժման մեջ է դնում մարդու ստեղծագործ ձիրքը, միտքը, խոսքը, հանճարը, գիտելիքներն ու արվեստները:

Աստծո՝ իբրև ստեղծագործողի, գերագույն արվեստագետի այս ընկալման ուղղակի արտահայտություններն ու արձագանքները կան նորպես տոնականության հիմնադրի՝ Պլոտինոսի երկերում: Այսպես, նրա «Էննեադներում» կարդում ենք. «Եվ Պլատոնը... բերում է մեզ համար ավելի ընկալելի օրինակ. նա ստեղծում է Արարիչ-Ճարտարագետի կերպարը և ներկայացնում նրա ստեղծագործությունը: Այդ ճանապարհով նա ձգտում է երևանել, թե որչափ զմայելի է Հարացույցի և գաղափարի գեղեցկությունը»³⁶⁰: Մարդն, ըստ Պլոտինոսի, բանականի տիրույթում հասու է, միախառնվում է աստվածային արարչագործությանը. «Եւ այս նույն բաները տարածելով Հանուրի վրա՝ մարդն ի զորու է [դառնում] ելանել վեր՝ այնտեղ, Բանականի տիրույթ՝ ընդունելով այն իբրև ճշմարիտ արարիչ ու ճարտարագետ»³⁶¹:

³⁶⁰ Պլոտինոս, Էննեադներ, էջ 92:

³⁶¹ Նույն տեղում, էջ 103: Ուսումնասիրողը (Ա. Ստեփանյան)` մեկնելով Պլոտինոսի այս միտքը, գրում է. «Իբրև բանական տիեզերքի բաղադրատարրերի խորեգոս՝ Բացարձակ Զեր վկայում է, որ տիեզերքն արվեստական արարչության միջավայր է՝ հնչյունի, ձայնի և երգի գերակայությամբ» (նույն տեղում, էջ 179): Նույն գաղափարն է ար-

Ազատ պաշտամունքի, քննական ոգու, ազատ ստեղծագործության այս գաղափարները յուրովի ներթափանցել և զարգացել են Գրիգոր Նարեկացու ստեղծագործության ծիրում:

Աշխարհը հղացման, արարման անվերջ շղթա է, այն ամբողջովին ներթափանցված է աստվածային տարերքով։ Մարդկային ստեղծագործությունը ևս միախառնված է այդ տարերքին, աշխարհը լի է ստեղծագործական եռանդով ու ավյունով, որ ներշնչանքի ու հոգեոր զարթոնքի աղբյուրներ են արվեստագետի համար և, վերջապես, Աստվածինքը գերագույն արվեստագետ է³⁶²:

*

Գրիգոր Նարեկացին բացարձակացրել է աղոթքի, իբրև «մերձակա աստվածաբանության», խոսքի, բանաստեղծության, ստեղծաբանության աստվածային էության և գորության մասին նորայլատոնական-արեոպագիտյան տեսությունը։

Խոսքի աստվածային էության, հրաշագործ զորության ու նշանակության մասին նա բազմաթիվ բացահայտումներ է անում «Մատեանում»։

Խոսրով Անձևացու և Անանիա Նարեկացու տեսական հայացքներն ու ստեղծագործական փորձը նա խորացրել ու ծավալել է իր այս երկում, որ տարածվել ու ճյուղավորվել է նախորդների հենքի վրա՝ ձեռք բերելով նաև բոլորովին ծարծվում նաև «Էննեադների» այլ հատվածներում (տե՛ս էջ 87, 113-115 և այլն):

³⁶² Տե՛ս Ա. Լօսեա, Էստետика Возрождения, сс.. 92-95, 609-611:

նոր որակներ ու զարգացումներ, որոնք անհամեմատ, անընդգրկելիորեն մեծացրել են բանաստեղծության հոգևոր տարածքները՝ միահյուսվելով խոսքի, բանարվեստի հզոր տարերքին: Հոգևոր փորձի իր վերաբռնարձումներով, թաքնատեսության վերծանումներով և բանաստեղծության՝ իբրև այդ փորձի պատճառ և գերազույն նպատակ՝ բացարձակացումով, նա փաստորեն ստեղծում է մի միջնաշխարհ մարդու և Աստծու միջև, հոգևոր մի ձեռնարկ, որի միջնորդությամբ հանուր հավատացյալները հասնելու են մաքրագործության ու փրկության:

Աստվածային ներշնչանքով, ներգործությամբ, անընդհատ զորակցությամբ նա ստեղծում է աստվածաշունչ մի մատյան (այս գաղափարը նրա մոտ բազմազան ձևակերպություններ է ստացել), որն այդպես էլ ընկալվել է ժամանակակիցների և հաջորդ սերունդների կողմից:

Գրիգոր Նարեկացին բանաստեղծությունը, ստեղծաբանությունը ընկալում է իբրև աստվածային զորեղ ներշնչանք ու լեզվական տարերք:

Բառերը, պատկերները Գրիգոր Նարեկացու համար խորհրդանշներ են, որ այլ, հոգևոր իմաստ են պարունակում: Արտաշխարհը՝ բնությունը, հարաբերվում է ներաշխարհի՝ ներքին բնության հետ, ինչպես արտաքին մարդը՝ ներքին մարդու հետ: Ներքին բնության հետ հաղորդվելով՝ այն նաև վերերկրային, աստվածային իմաստ է նշում, և այս վերառաքման աստիճանակարգության մեջ մարդկային հոգին միջնորդ է Աստծո և բնության միջև:

Մարդը հարաբերվում է, համարնութենակից, համաշնչակից է բանական տիեզերքի հետ՝ իբրև ներքնատիե-

զերք, «փոքր աշխարհ»: Եվ Նարեկացին իր զորեղ պատկերներով ներքնատիեզերքը մեծ տիեզերքին միանալու, մարդուն աստվածանալու ուղի է նշում: Մարդը հրեշտակակերպ է, իր արարչական ձիրքով համացեղ է Աստծուն: Աստված նրան բանականություն ու խոսք է պարգևել՝ իր բարեմասնությունների մասին խոսելու, Աստծուն տեսանելու և իմաստասիրելու համար: Կրկին հիշենք բանական մարդու նրա հանճարեղ բնութագրումը.

Ահա ի յոտս տանողականս
Կրողաց երկուց միակցորդ խորհրդականաց,
Հստ ձեւոյ հրեշտակի կառուցար,
Իբր ի թռիչս թեւոց կրկնաբարձ բազկաց
վերատանողաց՝

Յաշխարհն հայրենական հայել...
Իբր զճրագ բազմաբերանեան
Ի յաշտանակի մարմնիդ հաստատեցաւ գլխոյդ
բոլորութիւն,
Զի եւ այսու ի յաւրինակէն չնորհէ մի՛ աւտարասցիս
ԶԱստուած տեսանել եւ զմնացականացն
իմաստասիրել:

Բանականութեանն յարգանաւք կրկին ճոխացար,
Զի զյաղթանակ բարեմասնութեանն, որ առ քեզ եղեն,
Անարգել լեզուով խաւսեցիս,
Զգործնականացն տնաւրինել զտնտեսութիւն,
Իբր կցորդ համացեղութեամբ ամենաբաշխ աջոյն

Աստուծոյ՝ աստուած կոչեցար:
(ԽԶ, Բ)

Մարդու՝ Աստծո պատկերով արարման նման մի ներող է ներկայացնում «Մատեան»-ի այլ հատվածը.

Որ արարեր զիս ի քո պատկեր պանծալի՝

ի ձեռն վեհիդ տպաւորութեան

զտկարս աւժանդակելով,

Զարդարեցեր բանիւ, փայլեցուցեր փչմամբ,

Մտաւք ճոխացուցեր, իմաստիւք աճեցուցեր,

Հանճարով հաստատեցեր, ի շնչականացն որոշեցեր,

Հոգւով իմանալեավ խառնեցեր,

Իշխանականին գոյիւ պՃնեցեր...

Անհպիցն եւ անհասանելեացն ընտանեցուցեր,

Զաչս երկրեղէն ի քեզ համարձակեցեր,

Լուսովդ փառաց վերածածկեցեր...

(Ե, Բ)

Ահա այստեղից են մեկնարկում խոսքի՝ իբրև աստվածային ներշնչանքի, բանաստեղծության՝ իբրև արարչագործության, Աստծո և մարդու ստեղծաբանության միախառնության մասին հեղինակի հայացքները:

*

Գրիգոր Նարեկացու ստեղծագործության մեջ, ինչպես նշել ենք, հական է միստիկ կենցաղավարության, հոգեոր մաքրագործության ընթացքում բանաստեղծության՝ իբրև ներքին ծեսի բարձրագույն աստիճանի ըմբռնումը: Այս առումով հատկանշական է ԺԱ գլուխը, որն ընդգծվում է անսպասելի պատկերներով ու բնորոշումներով: Խոսքն այստեղ մեղքի ու փրկության հույսի մասին է՝ «ծառայական կապանքներից՝ երկնավոր ազատության» հասնելու

ճանապարհին, ուր միանգամից, անակնկալ, բանաստեղծական «ներխուժմամբ» ընդգծվում է խոսքի, բանի գերագույն նշանակությունը, որ փրկության «հպավոր նշույլներ», «հրո նշաններ» է բորբոքում մեղավորի սրտի և հոգու մեջ՝ «նախապարզե փառազարդության» հասնելու հույս ներշնչելով նրան.

Քանզի զի՞արդ ոչ արդեւք չքնաղ քան զբան...

Եւ Աստուծով աւժանդակեալ եւ աւգնեալ

սիրտ մեղաւորի,

Որ ընդ մարմնապէս ծիծաղելն՝ առ նմին

Հեծէ հոգեպէս,

Որ թէպէտ եւ յամբարձմանէ բարձրութեան

գերագունիցն կայից

Ստորասուզեալ ծանրութեամբ յանդնդային վհին...

Ունի եւ նշխար նշողից փրկութեան կենաց հպաւոր,

իբր կայծակն լուսոյ՝ պահեցեալ ի միտս եւ յոգի,

Որպէս զհուր նշանաւոր եւ զարմանաւոր թանձրամած,

Հրաշիւք մակարդեալ վեհին հրամանի...

(ԺԱ, Բ)

Այդ «չքնաղ խոսքը» «լույսի կայծակ է բանաստեղծի մտքում և հոգում»: Աստվածային կայծակող խոսքի այս պատկերը հանդիպում է «Մատեանի» նաև այլ հատվածներում:

Այս հատվածը «Մատեանի» հանճարեղ բացահայտումներից է: Բանաստեղծն իր հեծության «չքնաղ, լուսավոր, կայծակող» խոսքն առնչում է աստվածային ներգործության և զորության հետ:

Քանզի եւ յաստուածուստ անդուստ հանդերձի եւ այս
ներգործիլ առ սոյնս,
Վասն զի սա զտուողին զաւրութիւն ամենահնար
աւետարանէ,
Ցոր խունկ հաճութեան մեծապէս հոտոտի Աստուած,
Քան յամենայն բուրումն անուշից...

(ԺԱ, Բ)

Այնուհետև «Մատեանի» այս գլուխն իր ծավալումների մեջ հանգում է աստվածաշնչյան խոսքի բնորոշմանը:
Եւ արարչաւանդ պայմանի
Համբուրեմ հաւատոց շրթամբք զպատկեր բանիս
Եւ ակն ունիմ փառացն չնորհի,
Քանզի արդարեւ յարդարացուցանելն զմեզ Աստուծոյ՝
Ոչ ոք զաւրէ դատապարտ առնել,
Լստ առաքելական բանի սահմանի:

(ԺԱ, Դ)

Այստեղ էական է խոսքի պատկեր հասկացությունը, որը բառ-պատկերի, խոսքի պաշտամունքի յուրահատուկ ըմբռնում է և, ինչպես այլ հատվածներում, խոսքի արժեքի բացարձակացում է նշանակում:

Բանաստեղծը դարձյալ խոսում է Աստծո հետ իր անմիջական կապի, լեզվական հափշտակության, հաղորդակցության մասին՝ դիտելով խոսքը, բանաստեղծությունն իբրև հրաշք՝ հրաշափառ բարեգործություն:

Հրաշափառապէս բարեգործեսցե՛ս, Բանդ կենդանի,
Ինձ խաւսողութիւն անսայթաքելի:

(ԺԱ, Զ)

Այս հատվածում ուղղակիորեն առնչակցվում են աստվածային կենարար խոսքն ու բանաստեղծությունը:

Աստված, որ կենդանի խոսք է, խոսելու շնորհ է պարգևում բանաստեղծին, և խոսքի միջոցով բանաստեղծը ոչ միայն հաղորդվում, այլև միանում է Աստծուն, նրա կենդանի շնչին: Բանաստեղծը խոսքը դիտում է իբրև կենդանություն, շունչ ու զորություն, հարաշարժ գոյություն, փոխարություն իր և Աստծո միջև:

Հետեւենք խոսքի նրա բնութագրումներին և իմաստավորումներին.

Կենդանի խոսք, չքնաղ խոսք, հրաշալի բարբառ, խոսքի պատկեր, խոսքի զորություն, խոսքի լրություն և խոսքի սով, շնորհված ձիրք, անխզելի կապ, անշրջելի պատճառ, բաղձալի աղերս, բարձրության արվեստ, ձայն հրաշավորական, խոսքի զորության արվեստ, վերնական իմաստասիրություն, անչափելի խորություն, մտքի և հոգու լույսի կայծակ, հիացման տեսիլ, շնորհաձիր ազատություն...

Երկի համատեքստում սրանք ընութագրումներ են, որ դառնում են տիպական և խոսքեղրի, եղրաբառի արժեք են ստանում: Այդ բառերը հանգուցվում են ընդհանուր խորքին և կարեոր նիշեր են՝ աղոթասացության ներքին շարժումն ըմբռնելու համար, յուրատեսակ բառ-հասկացություններ, բառ-պատկերներ, բառ-բանալիներ, որ առանձնանում և ընդգծվում են բանաստեղծական կառույցում՝ ընթացք, գաղափար, աստիճանականություն, խորքեր ու նրբերանդներ նշելով բանաստեղծի ներքնագիտության ոլորտում:

Այդ հասկացություններն ու ձեակերպումները բերում են առաջին հայացքից անտեսանելի ներքին զուգորդումների, պատճառականության ու ճյուղավորվող կառույցների:

ԺԱ գլխին համահունչ է, բանաստեղծի խոսքերով, «զուգաշավիղ» և «պատկերակից» է ժԹ գլուխը: Այս հատվածում էլ բանաստեղծը խոսում է մարդու աստվածային էության, աստվածային հրաշակերտության մասին՝ հոգին աստվածային հանգստյան խորան է, բնակության վայր:

Աստված «կենդանի բարբառ» է. բանաստեղծը իր «աստվածային խոսքի լրությունից» զրկվելու, բառային քաղցի, «խոսքի սովի» մատնվելու վտանգը հարաբերում է դժոխքի տանջանքների հետ՝ ընդգծելով խոսքի աստվածային էությունը:

Ստոյգ են հատուցմունք քո...

Թէ զկենդանութիւն շարժմանս բարձցես,

Թէ զբանիս զաւրութիւն ունայնացուցես,

Թէ զաշացս պատուհանս ստուերացուցես...

Թէ ի լրութենէ բանի քոյ սովեցուցես,

Թէ զականջացս դրունս խցցես,

Թէ զշնորհիդ ձիր կտրեսցես...

Եւ թէ այլ ինչ նորոգ արարած տանջանարանաց

կազմեսցես՝

Զոր, քան տարտարոսն

Եւ սաստիկ, քան զգեհենն...

Վկայեմ անձամբ անձին՝ յոյժ պարտական գոլ սոցա:

(ժԹ, Բ)

Իէ. գլուխը ևս կարևորագույններից է և՛ բանաստեղծական արվեստի բարձրացված խնդիրներով, և՛ միստիկ

փորձի արծարծումներով, և՝ վերջապես, բանաստեղծական էքստազի ու մերկ տեսիլի բացարձակացումով՝ իբրև գերադույն հոգեոր փաստ:

Նարեկացին իր երկը կոչում է ողբաձայն բանաստեղծություն, նկարագրում է ստեղծման ընթացքը, բացատրում կառուցվածքը, մեղայական աղոթքի օրինակով բացահայտում ներքին աղոթքի, ստեղծաբանության, բանաստեղծական խոսքի գաղտնիքները, երբ միտքը, բանական տարերքը, զգացմունքը գործում են միասին և, ավելի քան այլ հատվածներում, խոսում է մտքի արագության, մտքի թոփչքի և զգացմունքային էքստազի, հիացման ու տեսիլային հափշտակության՝ իբրև բարձրագույն արվեստի մասին:

Անխզելի կապ, հրաշալի բարբառ,
Անշրջելի պատճառ, բաղձալի աղերս...
Աստուածապաշտից սահման, հեթանոսաց գիրք...
Խտրոց ահաւոր, արուեստ բարձրութեան,
Խորութիւն անչափ, հիացման տեսիլ,
Խորհուրդ կնքեալ, ընդ որ չիք ումեք անցանել,
Եթէ ոչ անըմբոնելի մտաց արագման զսա ծանիցէ:
Զայն բարեպատեհ հրաշաւորական...
Զարդ փառաց մեծութեան,
Որով նոյն ինքն աստուածութիւնն պսակեալ

բարգաւաճի:

(հէ, գ)

Աստված իր զորեղ ներգործությամբ, ներշնչանքով ու արվեստի հրաշքով ազատություն է տալիս բանաստեղծի աստվածային ձիրքերին, հրաշալի բարբարին, բարձրության արվեստին:

Ճանապարհ կենաց,
Որ առաջնորդես քաղցրութեամբ դիմելոյս ի լոյսդ
վերին...

Յուսոյ կերպարան,
ձշմարիտ առհաւատչէիւ աղաչողաց մատանց
յայտնի երեւեալ...
Ազատութիւն շնորհածիր,
Որ տաս լիապէս առանց փոխատրութեան փրկանաց:
(Ղ, Բ)

*

Բանաստեղծական արվեստի բնորոշումների մեջ առանձնանում է մեկը, որն ավելի է ընդգծում նրա լեզվական տարերքը, հղացման ոգին:

Ինչպես արդեն նշել ենք, բանաստեղծն իր արվեստն համարում է լեզվի զորության արվեստ, որ արդեն միանգամայն նոր մոտեցում և նոր գաղափար է:

Մի՛ խզեր զկապ միութեան զընդ քեզ
սիրոյն պնդութեան,
Մի՛ մերժեսցես զարուեստ զաւրութեանն լեզուոյս
յարմարութեան,
Մի՛ զհովիտ հանճարոյս ստուեարական պահեր...
(ՀՀ, Գ)

Ո՞րն է լեզվի զորությունը, նրա ազդեցության ուժը,
ներգործության ի՞նչ լծակներ ունի նրանով կառուցված
խոսքը:

Առաջին հերթին, երկի ստեղծման նախապայմանը բանաստեղծը համարում է զորեղ ներշնչանքը, որ կապող օդակ է իր խոսքի և աստվածային բարբառի միջև:

Քո՛ միայնոյ են այսոքիկ, Տէր,

Ի քէն ազդեցաւ գրել ինձ զսոսին:

(ՀԴ, Գ)

Աստվածային ներշնչանքը մղում է բանաստեղծին խոսել, ստեղծել՝ կանգ չառնելով ոչ մի արգելքի առջե, ընդուրկելով ներտիեզերքն ու համաշխարհը:

Բանաստեղծը դիմում է պատկերավոր օրինակների և հանճարեղ մանրամասների:

Եւ արասցե՛ս լինել դեղ կենաց

Առ հնարս ցաւոց հոգւոց եւ մարմնոց քոց

ստեղծուածոց,

Զայս կարգեալ սահման ողբոց մատենի՝

Սկզբնեցելոյ յանուն քո, բարձրեալ:

Զսկսեալս իմ դու կատարեա՛,

Եղիցի՛ Հոգի քո իսպնեալ ի սա,

Շունչ զաւրութեան մեծիդ միասցի՛.

Ի քո ինձ չնորհեալ ստեղծաբանութիւնս:

(Գ, Ե)

Աստված արարում է բանաստեղծի հետ միասին, բանաստեղծի միջոցով, Աստծո շունչը միախառնված է նրաստեղծաբանությանը:

Գրիգոր Նարեկացին դիմում է առավել անսքող բացահայտումների՝ աստվածային «կայծակող» խոսքի զորու-

թյունն է, որ լուսավորում է մարդկային բանականությունը, որ մղում է բանաստեղծին խոսել, ստեղծագործել:

Արդ, մատո՛, խնամակալ, հզաւը, երկնաւոր, բարի,
Ամենից հաստիչ յոչէից,
Զբանիդ զաւրութեան իմաստից կայծակն
Ի գործի ազդման լեզուիս շարժութեան...

(իԲ, Ե)

Բանաստեղծը հայցում է «աստվածային կայծակող խոսքով վերստին ձուլել» իր աղարտված աստվածային պատկերը.

Բարբառ կենդանի...
Ազդումն խնկելի...
Էռոթիւն փառատրելի, գոյութիւն աւրհնաբանելի...
Լոյս ամենայնի...
Եւ այժմ լուծեալ եւ խորտակեալ հողանիւթ անաւթս
Աստուածաւրէն հրաշակերտութեամբ, աղաչեմ, գթած,
նորոգ հաստատեա՛,

Զքոյին պատկերս մեղաւք հնացեալս
Ի քրայս հալոցաց կայծակամբ բանիդ
Պաղատիմ առ քեզ, վերստին ձուլեա՛...

(ԺԹ, Ա)

Բանաստեղծի խոսքը աստվածային ներշնչանքի արդյունք է, «Մատեանը» գրվում է աստվածային աղդեցությամբ, Աստված անմիջականորեն մասնակցում է նրա ստեղծագործությանը: Այս գաղափարի ուշագրավ արտահայտությունն է, ինչպես նշել ենք, ԶԳ գլուխի առաջին հատվա-

ծըլ³⁶³: Բանաստեղծը դիմում է Աստծուն, որն իրեն խոսելու ձիրք է պարզեցել, հորդորելով, որ նա իր ողբերգության մատյանում, հանուն իր հանդեպ տածած մեծ սիրո, հիշի և ների նաև իր թշնամիներին։ Այսինքն՝ Աստված բանաստեղծի միջոցով ինքն է արարում «Մատեանը»։

Բանաստեղծն ընկալվում է իբրև գործիք, ազդարան՝ աստվածային խոսքը հնչեցնելու համար։

Բարձրեալ անքնին, զաւրութիւն ահեղ...

Ստեղծիչ հրեշտակաց, գոյարան մտաց...

Անդորրութիւն հանգստեան, տեսարան

լուսաւորութեան,

Պայծառութիւն բերկրութեան, ճանապարհ

երանութեան,

Պատճառ կենդանութեան, առիթ բանաւորութեան...

Թիշեա՛ յայսմ ողբերգութեան մատենի բանիս

խոստովանութեան

Եւ զոր ի մարդկային ազնէ թշնամիս մեր՝ ի բարի,

Եւ արա կատարեա՛ նոցին քաւութիւն եւ ողորմութիւն։

Մի՛ բարկասցիս նոցա վասն իմ, Տէր,

Իբրեւ զսուրբս բամբասողաց,

Առ յաճախ սիրոյդ, որ ի յիս...

(ԶԳ, Ա)

«Մատեանի» ստեղծման հոգեոր և աստվածային առընչակցության մասին նույն միտքը կրկնվում է տարբեր ձևակերպումներով։

³⁶³ Տե՛ս նաև վերը՝ «Խորհրդական աստվածաբանությունը Գրիգոր Նարեկացու «Մատեանում»։

Բանաստեղծն աստվածային լույսի անսպառ բխումն
իր էության մեջ փոխակերպում է բանաստեղծության,
որտեղ համահունչ են մարդկային և աստվածային խոսքը.

Քանզի կրկնեալ զլուսոյդ անսպառ բարիսդ
Որ ի քէն առ իմ յամառս թշուառութիւն,
Քոյին աղերսիւ առ քեզ մաղթեցից,
Յարմարեալ դարձեալ ի նիւթս բանից՝
Զտառ ողբերգութեան այսր մատենի
Լցից թախծութեամբք եւ հեծեծանաւք:

(ԾԳ, Բ)

Աստվածային գորությունը, ներչնչանքը բանաստեղծի
գործակիցը, ուղեկիցն են «Մատեանի» ստեղծման ընթաց-
քում: Ստորև մեջբերվող հատվածը, որ երկի վերջին զլուխ-
ներից է, նշում է «Մատեանի» ստեղծման ողջ ընթացքը՝
սկիզբն ու վերջը, այն իրագործվում, ավարտին է հասց-
վում աստվածային ներգործությամբ ու զորակցությամբ:

Ուղղեա՛ հոգւոյդ քոյ իմաստութեամբ
Զյաջողուած ձեռինս գործոյ՝
Հնդ հեծութեան ձայնիս մաղթանաց,
Զաւրացո՛, Տէր, ի հանդէս բարի
Ճգնաւորական արի վաստակոյ,
Կցո՛րդ լեր կարեացս տկարութեան:
Թեթե՛ւս կացո զաշխատութեանս այս սկիզբն,
Արագեա՛, միշտ կարող, զյառաջադրեալ ձեռակերտս,
Դիւրաւո՛րս ընթացո ի յաւարտումն լրմանն,
ի վախճա՞ն իրին բերկրութեան զիս հասո,

Ժաման կացուսցես ի հանդիպումն յուսոյն,
Կցո՞րդ լեռ ուղւոյն ճանապարհիս ընթացից,
Ի թռիչս ամբարձման փութացուսցե՞ս յաւգտակարն:
Ընդ աջմէ՛ իմ լիցիս ի վտանգի ծանրութեանն,
Զձայն քո լուո՞ ի յանձկութեանն պահու,
Զեռամբ քո կեցո՞ ի կորստեանն ժամու,
Մատամբ քո ազդեա՞ ի սահմանին անձկութեան...

(ԶԵ, Ա)

Եվ այստեղ հարկ է կրկին անդրադառնալ բանաստեղ-
ծական խոսքի՝ իբրև զորության արվեստի ձևակերպմանը:
Այն միախառնված է աստվածային լույսի հետ, ներթափանց-
ված է նրանով, արվեստագետը ստեղծագործելով՝ աստվա-
ծային լույսն է բաշխում, որն իր հերթին աստվածային սի-
րո արտահայտությունն է: Արանում է «Հոգեհունչ մատյա-
նի» հավերժական խորհուրդը.

Մի՛ բառնար ի վտանգելոյս զառ ի քէն
պարգեւեալն շնորհ,
Մի՛ կապտեր զփչումն ամէնաւրհնեալդ Հոգւոյ,
Մի՛ լուծաներ զխնկեալ զկնիք արքունական
պատկերիդ...
Մի՛ խզեր զկապ միութեան զընդ քեզ սիրոյն
պնդութեան,
Մի՛ մերժեսցես զարուեստ զաւրութեանն լեզուոյս
յարմարութեան,
Մի՛ պակասեցուցաներ զյաջողուած աջոյս՝
Առ ի զլուսոյդ մասունս բաշխել...

(ՀՀ, Գ)

«Մատեանի» այս հատվածներն առավել ինտիմ ու ներանձնական են և նրա նշանակությունն ու հարակայությունը բացահայտող մասերի և միստիկ փորձի խորհրդավոր քողազերծումների ու բացահայտումների հետ նշում են մի անհատական հոգեոր ուղի, որի նկարագրություններն ու մանրամասները, բառային հանդերձավորումն ու խորապատկերները դուրս են որևէ ավանդույթից ու կանոնից:

Մի այլ հատվածում Գրիգոր Նարեկացին խոսում է իրեն պարզեված աստվածային հրաշապատիկ բարեշնորհությունների, նրանից իրեն «անձրեած» բազում ձիրքերի մասին:

Արդ, այս գումարտակ վերադասեցեալ
բարեշնորհութեան

Քոյդ պարզեւաց առ իմս երախտիս,
Ո՞վ ամենագութ, բարերար, գովեալ եւ ամենազաւր,

Թէ եւ սակաւք շարագրեցան աստանաւր եղեալ,
Այլ արքայազունք են, իշխանականք

ինքնակալութեանց,

Որդիք զաւրութեանց, ծնունդք վեհից,

Մեծափառք, լուսանորոգք եւ հրաշապատիւք:
Յաղթողական վերամբարձութեամք դրաւշիւք

Հոչակեալ՝

Հստ գլխոց գլխոց պսակապաճոյն գեղազարդելոց,
Բերեալ ընդ ինքեանս անթիւ պետութիւնս

աւրհնաբանողաց,

Համբոյրս, հեզս, երջանիկս եւ խաղաղականս

**Աստուածային հարազատութեանց այնոցիկ
նահանգաց...**

**Քանզի եւ զբնաւն այսքանեացս ձրից,
Որ ի բարձրելոյն ինձ անձրեւեցաւ...**

անձառ է ասել:
(Լէ, Ա)

Այդ ձիրքերից է «արտասվաց» աստվածային շնորհը:
Այն բխում է զույգ աղբյուրից՝ աչքերից, որոնք Աստվածինքն է բխեցնում մարդու զգայական եղեմում՝ «բարեգործության աստվածատունկ այդ դրախտը» ոռոգելու համար:
Աստվածային «ամենալույս, բազմազեղուն» արարչությունից, «Հրաշք արվեստներից» են անձրեւում, բխում ստեղծագործ այդ ձիրքերը:

**Այլ թէպէտ եւ այսպէս գրեցի,
Եւ դարձեալ զնոյն վկայեմ...**
**Սակայն ամենալոյս, աննախանձ եւ բազմազեղուն
Գովեալ արարչութեանդ զաւրեղութեան վանեալ են**
կարծրութիւնք

**Արտաքերութեան սրտի բանսարկուին,
Որ քարին առակաւ յուսահատն վհատութեան,
Սպառմամբ խոպանման աղբերացս երկուց,
Որ ի զգայականս եղեմայ բղխեալ պատրաստեաց
տնկողն,**

**Զի ոռոգեալ ծաղկեսցի նովաւ,
Որ ի յիս բարեգործութեան կենսատու դրախտ:
Ահա մի՛ ցամաքութեամբ արտասուացս
Աղանդահնար պատրանաւք չարաչար խորամանկեսցէ**

Վերստին հանել ի փափկութենէ նախնում վիճակին:
Իսկ յորժամ կացցէ Աստուած, համբարձեալ հրաշիւք
արուեստից,

Ի մէջ աստուածոց հաշտարանացն խաղաղութեամբ,
Բարձեալ ընդ ինքեան զշնորհացն կտակ,
Առ որ ամենայն վնասակարութիւնք
խարդախութեանց...
Իբր ընդ վիմեղէն լերին պնդութեան բախեցեալ՝
ցնդին...
(Լէ, Բ)

Իսկ ահա մի գեղեցիկ դրվագ, ուր աստվածային
հրաշքների արվեստն ուղղակի առնչակցվում է «Մատեանի»
նվագների հետ:

Ահա, հզաւը, անքնին, անձառ, բարերար թագաւոր
անմահ,

Առ այս կերպ պատկառանաց ինքնապարսաւս
խոնարհութեան,

Որ ինձէն զանձն մեծաւ ձաղանաւք յոգի դատեցի,
Լի՛ց նուագաւք այսր մատենի

Անարդանաւք ամաւթոյ զդէմսն սատանայի,
Եւ զերեսս կերպի պատկառեցելոյս նշանաւ
խաչիդ զաւրացո՛:

Միասցի՛ կնիքդ լուսոյ ի գեղ տեսակիս,
Ամրութեանդ նշան հաստատեսցի՛ ի տիպ դիտակիս,
Երեւակ կենացդ փայտի ձեւասցի՛ ի պատկեր այտիս,
Արուեստդ հրաշից ի ճակատիս չո՛ւք նշանակեսցի:

(ԿԵ, Բ)

*

Բանաստեղծը լի է աստվածային արվեստների հրաշք-ներով։ Այս արարման ընթացքի, ստեղծագործական միախառնության մեջ բանաստեղծն Աստծուն իր արարչագործության վերին ոլորտներից «իջեցնում» է մինչև երկրային արվեստները և հակառակը՝ երկրային արվեստները կապում է երկնային արարչագործության հետ։ Աստված՝ իբրև «ամենահնար արվեստագետ, արծաթագործ, երկնային ճարտարապետ, բանաստեղծ, վարդապետ», ներգործում է բանաստեղծի վրա, զորություն է տալիս նրա խոսքին։

Եւ արդ, վասն զի ի ձեռն մեծիդ

Եւ ամենահնար արուեստաւորիդ

Իմս եղանութեան Տեառն եւ Աստուծոյ,

Իբր ի քրայս ընտրութեան փութոյ քո սիրոյ՝

Հանապազ եռամ եւ ոչ երբէք մարզիմ,

Միշտ խառնիմ զուգիլ եւ ոչ եւս միանամ,—

Ահա զուր արծաթագործդ, երկնաւոր իմ

Ճարտարապետ,

Ի սնոտիս վաստակեալ առ իս աշխատիս,

Հստ մարգարէին յայտնի առակի,

Եւ չարութիւնս իմ ոչ հալեցաւ։

(ԿԹ, Ա)

... Եթէ արդարացուցանես՝ ամէնարուեստ ես...

Եթէ զանգէտս պարարեսցես՝ վարդապետ ես...

(ՀԶ, Բ)

Աստված անընդհատ արարում, կերտում է բանաստեղծին և այդ ընթացքում արարում է, ստեղծագործում է նրա միջոցով՝ ահա այդ հոգեւոր արարումի մի սքանչելի պատկեր։

Որ ինձէն իսկ զիս՝ զոսկեղէն տախտակս խաւսուն,
Նուիրեալ քումդ պատգամի, զգրեալս մատամբդ

Աստուծոյ:

(Լ.Դ, Ժ)

Բանաստեղծը հաճախ նույն բառերով է բնորոշում
աստվածային ու մարդկային բարբառը. մի դեպքում, ահա,
նա մեղայական աղոթքին հրաշագործ զորություն է վերագրում – «Հրաշալի բարբառ», որ առնչվում է աստվածային «կենդանի բարբառին», նույնանում է կարծես նրա հետ:

Ահա, արդարեւ, աւրինեալ է հատուած բանի

Յուսադրական սրտի այսր Մեղայի...

Անխզելի կապ, հրաշալի բարբառ,

Անշրջելի պատճառ, բաղձալի աղերս...

Խտրոց ահաւոր, արուեստ բարձրութեան...

(Ի.Է, Գ)

Բանաստեղծությունն, առնչվելով, միախառնվելով
աստվածային նախաստեղծ տարերքի հետ, դառնում է գոյաբանական սկիզբ, արարիչ ուժ:

Գրիգոր Նարեկացու այս հատվածների հետ համահունչ և հարազատ է նրա ժամանակակից մի այլ հանճարեղ բանաստեղծի՝ Վարդան Անեցու «Վասն կառացն աստուածութեան» ներբողը, որ խոր աղերսներ ունի Գրիգոր Նարեկացու ստեղծագործության հետ և գալիս է նույն ակունքներից: Այս հարցն առանձին քննարկման նյութ է, այստեղ բավարարվենք մեկ-երկու հղումով: Վարդան Անեցին աստվածային կառքի կերպավորումներից Մարդուն՝ իբրև աստվածություն, բանական մարդու նախատիպ և

կատարելատիպ, վերագրում է համատիեզերական դերակատարություն՝ տարփողելով աստվածացման ձգտող մարդկային հանճառը:

Բերկրական բարբառ եւ աւետաբեր տաւիղ.

Ի լեզուս պարուց աստեղացն ազգեցութեանն՝ զրոյց...

Հրաշաբեր եւ կաթնաբուխ բանին՝ ստինք՝

Ի շրթունս աշակերտելոց երկնաւոր մատենագրին...

(«Վասն կառացն աստուածութեանն ներբող»)³⁶⁴

Աստվածային Մարդը «Երկնային աստղապարի» երգիչն ու ավետաբեր տավիղն է, երկնավոր մատենագիրը, որը աստվածային գրչի ոսկե մելանով «աշխարհագրում» է, մատենագրում է մարդկանց և աստվածային արարչագործությունը, համընդհանուր մարդեղացած լինելությունը:

Ինչպես տեսնում ենք՝ միազբյուր և միեղեն են երկու բանաստեղծների և՛ հղացումը, և՛ պատկերամտածողությունը:

Գրիգոր Նարեկացին իր ստեղծագործության ծիրում զարգացրել և բացարձակացրել է խոսքի աստվածային գորության, աստվածային էության մասին արեոպագիտյան միստիկ տեսությունը՝ ստեղծելով մի երկ, որտեղ խոսքը, բանաստեղծությունը, ինչպես և բազմածավալ ողջ քերթվածը թափանցել է աստվածայինի ոլորտները, «էակցվել» է նրան, դառել Աստծո առաջ «մշտնջենավոր ձայնարկու»:

Նա այդ գաղափարը հասցնում է մոնումենտալության՝ կոթողայնության՝ խոսքի զորության արվեստը՝ ըստ մարդկային կարողության, մերձեցնելով աստվածային կատարելության՝ ստեղծելով աստվածախոս մի մատյան, որով պիտի բարբառեն բոլոր սերունդների աղոթողների շուրջերը:

³⁶⁴ Տե՛ս ՄՀ Ժ, էջ 776-778:

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ (ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ)

Կան խորհրդավոր բնագրեր, որ մարդկային հիշողության սրբազան տաճարների արժեք ունեն, քանի որ խտացնում են ողջ մարդկության հոգեոր պատմությունը։ Այդպիսի խորհրդավոր գրքերից է Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» երկը, և, ընդհանրապես, Գրիգոր Նարեկացու ողջ ստեղծագործությունը։

Նման բնագրերի գաղտնիքը նրանց հարաշարժության, մշտատեղության մեջ է – նրանք փոխվում, վերամարմնավորվում են ժամանակի հետ, ամեն սերունդ յուրովի է վերընթերցում, ներապրում և վերաիմաստավորում այդ երկերը – նրանց առաքելությունն է միշտ վերարթնացնել սերունդների հոգեոր կապը, այդ կապի մեջ փնտրել տիեզերական ներդաշնության բանալին, նորոգել նրանց հավերժական ուխտն Աստծո հետ, հոգեոր հեռանկար բացել նրանց համար գալիքում։

Այդպիսի մի երկ է «Մատեանը», որն իր մեջ խտացրել, բյուրեղացրել է ոչ միայն հայ ժողովրդի, այլև համայն մարդկության հոգեոր պատմությունը, պատմություն, որի կիզակետում բանական մարդն է՝ աստվածացման իր գերագույն գաղափարով, որն իր ստեղծագործ ձիրքով, «անգուգական հրաշակերտությամբ» «էակից է» Աստծուն։

Դեռ վաղ միջնադարից Նարեկացու մեկնիչներն անդրադարձել են «Մատեանի» հավերժության խորհրդին։

Ո՞րն է «Մատեանի» հարակայության գաղտնիքը։ Նարեկացին բանալիներ է թողել իր խորհրդավոր բնագրերի մեջ թափանցելու համար։

Գրիգոր Նարեկացին «Մատեանում» խոսում է Աստծո հետ իր անմիջական կապի, նրա արարչագործության ծիրի և իր ստեղծագործության միախառնության մասին, իր աստվածային խորհրդավոր տեսիլների մասին, որոնք լուսավորել են նրա հոգեոր կյանքը:

Ոչ պակաս խորհրդավոր են նրա ներապրումները, ներգգացողություններն իր երկի հարակայության մասին: Նաշատ է խոսում իր և իր ապագա ընթերցողների խորհրդավոր կապի մասին – նա հավատացած է, որ իր երկի, հոգեշունչունչ «Մատեանի» ամեն ընթերցման հետ նա՝ իբրև մշտնջենավոր ձայնարկու, բարբառելու է, քանի որ «Մատեանն» արարել է Աստծո հետ «Համաշնչապես»...

Գրիգոր Նարեկացին իր այդ սրբազան գաղտնիքին անդրադառնում է բազում անգամներ: Սրանում է նա տեսնում «Մատեանի» և ընդհանրապես ստեղծագործության գերագույն իմաստը:

Նա բազմիցս արծարծում է իր և իր ընթերցողների այս կապի գաղափարը, որ ժամանակի հոգեոր շրջանակներից և վանական միջավայրից տարածվում է ողջ քրիստոնեական համայնքի վրա՝ աղեղ կապելով սերունդների ու ժողովուրդների վրայով:

Գրիգոր Նարեկացին ոչ միայն որոշակի ընթերցողի, ունկնդրի ու լսարանի զգացողություն ունի, այլև կարծես ստեղծագործում է նրանց հետ այս կենդանի կապի ազդեցությամբ:

Եվ նա, այս հոլովույթում, իբրև գոյաբանական գործոն, հարակայության առեղծված, ընդգծում է գալիք ըն-

թերցողի կերպարը: Իր «Մատեանի» ամեն մի ընթերցման հետ, հոգևոր առնչակցության պահին, բանաստեղծը վերակենդանալու է, և իբրև կենդանի ձայն խառնվելու է ընթերցողի աղերսներին և օրհնաբանություններին:

Եվ նա իր և իր «Մատեանի» հարակայության գաղտնիքը տեսնում է Աստծո, բանաստեղծի և ընթերցողի այս եռամիասնության մեջ:

Սրանով նա ընթերցողի համար հոգևոր ինքնակատարելագործման, մաքրագործման և «աստվածացման» ուղի է նշում, որն անցնում է «Մատեանի» երկնուշեղ շավիղներով, «բազմաստեղնեան դրուագ»-ներով։ Այն ստեղծված է «ի հրաշակերտութիւն միագոյ իրի», որն, իր «Մատեանից» բացի, խորհրդանշում է նաև բանական, աստվածակերպ մարդուն, և այստեղ միանում են իր չնչավոր «Մատեան»՝ իբրև կառույց, և բոլոր ժամանակների հոգևոր մարդն՝ իբրև հոգեկերտվածք։ «Մատեանը» այն կառույցն է, այն «ներքին եկեղեցին», ուր իր պաշտամունքն է մատուցում «ներքին մարդը»։

*

Համադրելու համար այս հավերժական հեռանկարը մարդկային կյանքի անցողիկության հետ նարեկացին դիմում է առարկայական, թանձրախիտ պատկերների։ Գոյության այս երկու բևեռների հարաբերությունը Գրիգոր Նարեկացին ծայրահեղորեն կոնկրետացնում է՝ վերածելով այն իր մահկանացու անձի և իր ստեղծած հավերժական «Մատեանի» ճակատագրական կապի։ Նա ծավալում է մարդկային ողբերգության պատկերը և դրա հետ միասին տալիս

Է «Հոգեոր մահից» խուսափելու մի հեռանկար, որ համընդհանուր է բոլորի համար, բայց վերացարկված գաղափար չէ բնավ։ Այդ հեռանկարը իր ձեռնարկն է, ողբերգությունների մատյանը, որ կենսական, ճակատագրական հանգույց է երկրայինի և երկնայինի, անցողիկի ու հավիտենականի միջև։ Բանաստեղծն իր անձի մեջ է կենտրոնացնում համաքրիստոնեական մեղքերը։ Սակայն նրա հայցքն ավելի հեռուն է թափանցում՝ գծելով իր և գալիք սերունդների խորհրդավոր ներթափանցումների հոգեոր կյանքի մի հեռանկար։ Եվ այդ գաղափարը նրա համար ոչ թե բանաստեղծական երևակայության արդյունք է, այլ ստույգ հավատ և գիտելիք։

«Մատեանը» աստվածային, բուժիչ զորություն ունի, որը պահպանելու է հարակայորեն՝ իրենից հետո եկողների համար։

Արդ, որ ոք եւ առցէ զայս դեղ մաղթանաց
Այսր մատենի պարկեշտականի՝ պաղատիլ սովաւ,
Եթէ ի մեղաւորաց իցէ մատուցեալն,
Եղէ՛ց եւ ես իմովս բանիւ կցորդեալ նմա,
Իսկ եթէ յարդարոց գուցէ յառաջեալն,
Գտա՛յց եւ ես սովիմբ ընդ նմին ողորմեալ նովաւ։
Ապա թէ երջանկասցի այնպիսին ինքեամբ՝
Ինձ միայնոյ գրեալ զեղկութիւնն,
Եւ ես ինձէ՛ն վկայեմ այսմիկ։

(ԿԶ, Ա)

«Մատեանի» ողբաձայն երգերը մշտնջենական, մշտամատույց աղոթքներ են առ Աստված։

Գրեսցե՛ս աղաւթս մշտամատոյցս
 Ձայս նորընծայ տառ ողորմաղերս՝
 Թախծագին ձայնի ողբերգարկութեան այսր մատենի,
 Հա՛ն ի խորոց մահուս անդնոց՝
 Զքնաղ ապրեցեալ ընդ մարգարէին փրկելոյ,
 Հնկա՛լ զխոստովանութիւն անձնադատ բանիս
 ի հոտ անուշից...
 (ՀԱ, Ե)

Մի այլ հատվածում, խոսելով «Մատեանի» գերբնական գորության մասին, բանաստեղծը դարձյալ խտացնում է գույները: «Մատեանը» հավերժական, փորագրյալ արձան է, որով բանաստեղծն աղաղակելու է նաև մահից հետո: Բանաստեղծն իր ողբերգությունը տարածում է հավիտենության հեռանկարին: Արան հետևում է մի այլ ազգեցիկ, ցնցող պատկեր՝ այդ պաղատանքները պիտի վերառաքեն անգամ հողում լուծված նրա մարմինը, քայքայված ուկորները, հողապատ շիրիմը՝ «անազգելի», «անլուր» բարբառով:

Այլ առցէ՛ զայս կշտամբութիւն մաքուրն՝
 Նիւթ պսակաց՝
 Առ ի չիջանել անընտրողաբար յանձեռնհասն
 բարձրութենէ,
 Եւ պատժապարտն՝ առիթ ազատութեան,
 Որով ամբարձեալ ի կործանմանէ
 Հոգեւորական մահուն՝ ապրեսցի՛ յուսով:
 Իսկ ինձ եղիցի՛ պատգամս այս բանի
 Արձան փորագրեալ՝ ամենեւին անեղծանելի,
 Որ փոխանակ իմոյ եղկելոյս անձին մահացուի՝

Անդադար հնչմամբ հեծութեան լալոյ
Առանց լոելոյ միշտ աղաղակէ:
Լիցի՛ եւ ոսկերացս քակտեցելոց
Ի հողապատեան շիրիմ վերարկուին
Անմռունչ ձայնիւ զայս խոստովանել,
Հասցէ՛ եւ մարմնոյս ի հող լուծելոյ
Բարբառով իմն անազգելեաւ ծածկատեսիդ
զսոյն պաղատիլ:
(ԿԶ, Ա)

Եվ, ինչպես այլ դրվագներում, նախապես հիշատակված պատկերը բացվում, ծավալվում է հետագա մասերում՝ ստեղծելով պատկերային-շղթայական կառույց: Այս առումով զորեղ խտացումներից է ՀԳ գլուխը:

Բանաստեղծն առավել ծավալում է մահվան այդ ահ-ոելի պատկերը՝ ներառելով հոգեվարքը նկարագրող մանրամասներ:

Ողորմեա՛ց, Տէր, մահու մեղապարտիս,
Յաւուր արձակման շնչոյս կենդանութեան,
Մինչ աչացս ողորմագին հայեցուածս ի
բարձունս կողկողիցի՝
Զբազմարկածեան ուղւոյն զանզերծ ընթացիցն
Զանփախչելին ճանապարհ յաչս բերելով՝
Մտացս տեսմամբ ամենայնիւ վտանգեալ:
Եւ ի յերդ բնակութեան յարկիս նկատեալ
յելիցն շաւիդ,
Թշուառացեալ կիսամեռութեամբ, դիմաւք
այլայլութեան,

Տատանմամբ մատանցս, կարկամ հառաչմամբ,
Նուազ հեծութեամբ, նրբական ձայնիւ,
Յոգի թախծութեան յոգնամասնեայ տարակուսանաց՝
Ի խորոցս աներեւութից զգործեցելոցս ողբալով
Հառաչեմ...

Եւ զոր յայնմ ժամու ոչ ժամանեցից պաղատիլ,
Այսա՛ւր ընկալցիս մարդասիրապէս,
Մ՛վ երկայնամիտ, բազմաշնորհ, ամենակեցոյց:

(ՀԳ, Բ)

Զգացմունքը, ողբերգական լարումը գնալով ահագնա-
նում են, վախճանի, մահվան տեսիլը, մոայլ երևակայու-
թյունը, պատկերները հաջորդում են մեկը մյուսին՝ խոռվե-
լով հոգու խորքերը, համակելով ահագնացող հանգուցա-
լուծման ակնկալիքով.

Ցորժամ, որ այժմս բանապաճոյճ,
Խրոխտաձայն, սիգացող, բարձրապարանոց,
Անկեալ դնիմ դի անկենդան, կարկեալ ի խաւսից,
Կաշկանդեալ ձեռաւք, լքեալ անդամաւք,
Խփեալ շրթամբք, կափուցեալ աչաւք...
Արձան անզգայ, պատկեր անբարբառ,
Գոյութիւն անշունչ...

Դատարկ կոկորդ, խոպանացեալ սիրտ...

(ՀԳ, Գ)

Ներաշխարհում, բանաստեղծի մտապատկերում և երևա-
կայության խորքերում բեմականացված այս ողբերգությու-
նը մոտենում է իր կիզակետին և ապա՝ հանգուցալուծմանը:

Մարդու անկման, ոչնչացման տեսարաններին դարձյալ հաջորդում է «Մատեանի» միջոցով հավիտենությանը նաև ետմահու հարաբերվելու գաղափարը։ Կրկին բանաստեղծի բեմականացված խոսքը հասնում է մաքրագործության, փրկության կայանին, հանգրվանում է երկնային ուրոտներում։

Կարաւտեալ այլոց մաղթանաց,
Որք գհաւատոց թշուառիս ձայնիւ նուագեալ
աղերս հառաչման
Յաւղով արտասուաց բարերարիդ գթութեան
Ի բարձունս տարածանեն:
Զառ քեզ դարձն յեղանակեն արգահատելով,
զոր աւրհնեմ,
Զնշան խաչիդ փրկութեան՝ զոր երկրպագեմ,
Զյարութեանն ճշմարտութիւն՝ որում հաւատամ,
Զփառացդ քո յայտնութիւն՝ զոր փառաւորեմ,
Զդատատանիդ ահաւորութիւն՝ զոր խոստովանիմ,
Զբանիցդ յանդիմանութիւն՝ յորմէ զարհուրիմ,
ԶՀոգւոյդ Արբոյ ինձ ուղեկցութիւն՝ զոր պաշտեմ,
Զաւծմանդ տեառնագրութիւն՝ զոր եւ համբուրեմ,
Զթագաւորելն ընդ քեզ, տէր Թիսուս, որում պաղատիմ:
Արդ, լքաւ, մերժեցաւ, բարձաւ, տրոհեցաւ, փախեաւ,
սրացաւ,
Տեղի ետ կցորդութիւն զուգութեան կենցաղոյս
կենդանութեան,
Եւ յոյսդ, որ ի քէն պարգեւ,
Մնացական եւ անջնջական յիշատակարան պահեցաւ:

Այս դլուիսը «Մատեանի» գերլարված, զգայացունց հաստվածներից է, ուր խոսքի հանճարը սանձել է երևակայության տարերքը՝ առնելով այն ողբերգության կաղապարի մեջ:

«Մատեանի» ամեն տառը, ամեն ողբը ներշնչված է աստվածային խոսքով, այն արարիչ ուժով, որով ստեղծվել է տիեզերքը: Եվ նրանով աղերսողներն ու մաղթողները բոլոր ժամանակներում բժշկվելու են մեղքերից:

«Մատեանի» բուն խորհրդի մասին բանաստեղծը խոսում է երկի սկզբում և վերջում. սկզբում նա բացում է նախագաղափարի գաղտնիքը, նախանշում է նրա հղացման ընթացքը, հոգեսոր ուղղվածությունը և խորհրդի մեծությունը. «Մատեանով» աղոթողները ոգեկոչում են բանաստեղծին, նրա հոգին միախառնվում է նրանց «մշտամատույց» աղոթքներին.

Եւ արասցե՛ս զսոյն ընթերցողացն ի սիրտս յստակս՝
Բժշկութիւն հոգւոց և մաքրութիւն յանցանաց,
Թողութիւն պարտուց և արձակումն մեղաց կապանաց:
Եղիցի՛ բղխումն արտասուաց սովաւ վարժելոցն,
Եւ պարգեւեալ տացի՛ ի ձեռն սորին ապաշաւ ըղձից:
Ծնորհեսցի՛, Տէր, եւ ինձ ընդ նոսին առ ի քէն

զղջումն կամաց,
Եւ նոցա իմովս ձայնիւ՝ շունչս բարեհամբոյրս,
Նուիրեսցի՛ վասն իմ այսու մատենիւ պաղատանք
նոցին

Եւ բանիւ այսու հեծութիւնն նոցին ընդ իմ խնկեսցի,
Հնդ համբոյր ճաշակման այսր ողբերգութեան՝
Ծնո՛րհ լուսոյ քոյ մտեալ բնակիցէ:

Եթէ ելցեն ինձ բարեպարիշտք ընծայիլ սովաւ,
Ընկա՛լ կենդանեաւք վասն քո, գթած, եւ զիս
ընդ նոսա...

Եթէ հեծութիւնս աստուածահաճոյս
ի ձեռն այսը բանի ի գաղտնեաց ուրուք
յառաջ եկեսցէ,

Աւգտեցա՛յց քեւ, բարձրեալ, եւ ես ընդ նոսա:
Եթէ ձեռն մաքուր, խնկով հանդերձեալ, առ քեզ
համբարձցի,

Հասցէ՛ միասցի ընդ իմս ձայնի
եւ աղաչողացն աղերս՝ յառաջ մատուցեալ:
Եթէ պաղատանս բազմապիսիս ընդ իմս երկնեսցի,
Լիցի՛ եւ ինձ քեւ վասն սորին կրկին նուիրեալ:
Եթէ յարգեսցի այս անձին բանի պատարագ՝ քեզ
ի հաճութիւն,

Նախայլոցն ընդ իս քեւ ընծայեսցի:

(Գ, Գ)

Եվ, վերջապես, վերջին գլուխներից մեկում նա խորաց-
նում, հանրագումարի է բերում իր ասելիքը: Ի՞նչ է «Մա-
տեանը», ի՞նչ աստվածային իմաստ կա նրա ողբաձայն
նվագների մեջ, ո՞րն է նրա հղացման գաղափարը և ո՞ւմ
համար է նա բարբառում: Ամփոփելով անցած ուղին, հոգեոր
հսկա փորձը՝ բանաստեղծն արժեորում է «Մատեանը».

Եւ արդ, ընկա՛լ զայս հիւսուած բանի աղիողորմ
հեծեծանաց,
Եւ հոտոտեսցի՛ս յայս նուէր բանի անարիւն զոհի,
թագաւոր երկնի,

Եւ աւրհնեալ սրբեա՛ զտառ մատենի այսր
ողբերգութեան,
Եւ գրեալ դրոշմեսցե՛ս յարձան յաւիտեան
Հնդ հաճոյականացն սպասաւորութիւնս:
Կացցէ՛ առաջի քո մշտնջենաւոր
Եւ յիշատակեսցի՛ ի լսելիսդ քո հանապազ,
Բարբառեսցի՛ շրթամբք ընտրելոց քոց
Եւ խաւսեսցի՛ բերանովք հրեշտակաց քոց,
Տարածեսցի՛ հանդէպ աթոռոյ քոյ,
Եւ ընծայեսցի՛ ի սրահ սրբութեան քոյ,
Խնկեսցի՛ ի տաճար անուան քոյ
Եւ բուրեսցի՛ ի սեղան փառաց քոց,
Պահեսցի՛ ի գանձարանի քում
Եւ համբարեսցի՛ ի ստացուածս քո,
Պատմեսցի՛ ի յականջս ազգաց
Եւ քարոզեսցի՛ ի լուր ժողովրդոց,
Նկարեսցի՛ ի դրունս իմաստից
Եւ տպաւորեսցի՛ ի սեամս զգայութեանց,
Իբր կենդանեաւք զի՛մս պատմեսցէ
Խոստովանեալ զանաւրէնութիւն:
Եւ թէպէտ վախճան ընկալայց իբր զմահացու,
Այլ յարակայութեամբ բանի այսր սովերի
Գրեցա՛յց կենդանի:

(ՁՀ, Բ)

Այս է ողբերգության վերջին դրվագը, բանաստեղծը
մեռնում է, իսկ «Մատեանը» մնում է անմահ:

Բանաստեղծի անձը տարրալուծվում է իր ստեղծագործության և գալիք սերունդների մեջ՝ նրանցից ոգեկոչվելու հույսով, նա ապագային է հղում իր «Մատեանը»՝ իբրև հոգեոր անօթ, որն ամփոփում է նրա կենդանի բարբառը, ձայնը, պատկերը, հարակա շունչը, մի սափոր, որ պահպանում է նրա խոր հեծեծանքները:

Բոլոր գալիք սերունդների, «Մատեանով» աղոթողների հետ պետք է խոսեն նաև իր շրթունքները, համբառնան իր ձեռքերը, միախառնվի իր ձայնը:

*

Ժամանակների հոլովույթում վերժամանակյա նման բնագրերը խորքային և տարածական նորանոր ոլորտներ են թափանցում՝ ապրելով բոլոր սերունդների մեջ՝ ձևավորելով նրանց հոգեկերտվածքը:

Եվ այստեղ Գրիգոր Նարեկացին բացում է ընթերցողի առաջ իր գաղտնիքներից ևս մեկը:

Այդ հարակայող բնագրերը միանում են աստվածային ոլորտներում «վերանկարված» Մայր բնագրին՝ դառնալով մարդկային հոգեոր պատմության այն հայելին, որի անդրադարձները ներառում են, բյուրեղացնում են կյանքի ցուլարձակումները:

*

Գրիգոր Նարեկացին իր բանաստեղծական արվեստով բարեշրջել և բարեփոխել է ժամանակի հոգեոր արվեստների և գրականության ողջ համակարգը՝ այն ներմուծելով աստվածաբանության մեջ իբրև միատիկ աշխարհընկալման, աստվածային ներշնչանքի, ինքնարարման մի հացք:

Բանաստեղծն օժտված է աստվածատուր ձիրքով, նա կոչված է աղոթելու և օրհնաբանելու ոչ միայն համայն մարդկության, այլև բոլոր արարածների անունից՝ որպես տիեզերաքարոզ վարդապետ, և նրա լսարանը, հանդիսարանը դառնում է ոչ միայն համաքրիստոնեական համայնքը, այլև համաշխարհը, որը ոգեղենացած, անձնավորված, «բարանաբար» մասնակցում է նրա «Հոգեշունչ» աղոթասացությանը:

Բանաստեղծը, որ ստացել է Աստծո բոլոր արարածների անունից խոսելու աստվածային պարգել, կոչված է գոհաբանական, «Հոգեշունչ» աղոթք կարդալու և օրհնաբանելու աստվածային արարչագործությունը՝ երկնային «լուսաշարժ եւ բարեբուղիս» էություններից մինչև աստվածարյալ բնության հետին արարածները:

«Այլ ի լսելիս եւ ի շրթունս, եւ ի տեսիլ աչաց, եւ ի բազուկս բառնալով զգիրս աստուածաշունչս՝ Հոգեշունչ լինել յուսացայ…

Թաղագս որոյ ընդ իս առեալ զբոլոր գոյսս… տալով բնաւիցն խաւսուն լեզուս՝ եւ ամենեքումք գոհանամք զնմանէ, որ ետ ինձ ի վայելս զայս ամենայն:

Եւ ի կատարման այս յոտն կալ պարգեւեաց ինձ առաջի աստուածարկու եւ քրիստոսածողով հարանց եւ հարազատից երբարց՝ առնուլ զաղաւթս եւ զաւրհնութիւն աղէկիզեալ սիրալի եւ աստուածագութ ինամոցն»³⁶⁵:

Անցած ու գալիք ժամանակները, համաշխարհն ու համայն մարդկությունն է նրա հանդիսարանը, որի առջև նա

³⁶⁵ Տե՛ս «Ճառ սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ ասացեալ», ՄՀ Ժ, էջ 1042:

աղոթում ու փառաբանում է Աստծուն բոլոր արարածների անունից՝ իրրև տիեզերաքարոզ, տիեզերալույս վարդապետ:

Տիեզերաքարոզ վարդապետի և տիեզերական հանդիսարանի այդ զգացողությունն ընկած է «Մատեանի» հիմքում:

«Իսկ յանդիմանութիւնս գրաբանականս, ի կոյտս բազմութեան ազգաց եւ թարգմանութիւնս ժողովրդոց, զայս արդահատութիւնս մաղթողականս նուիրեցի, զոր ներքնաշարեալքդ սահմանադրեն գոհաբանութիւնք»:

(ԼԴ, Ա)

«Արդ, զայս գոչումն ծածուկ խորհրդոց կերպաւորելոց յայսմ մատենի, ամենալուր ականջաց մեծիդ Աստուծոյ ընծայեցուցի սովիմբ սպառազինեալ, եւ ապա մտի ի հանդէսն...»:

(ԼԴ, Ժ)

Ողորմելի հեծութեամբ թախծեալ ի հոգի,
Անաչափ խայտառականաւք հրապարակաւ
ի յեկեղեցիս բազմութեան ազգաց վերապատմեցից՝
Բարձր ձայնիւ, բարբառով մեծաւ աղաղակելով:

(ԼԹ, Ա)

Եւ քանզի առ ամենայն հասարակ տնկեցեալ
յերկրի ազգ բանականաց
Այս պատուէր նկարագրական
Նորող մատենի ողբոց նուազի,
Որ զամենեցունց կրից պատահմանց
նշաւակեալ յիւրում պատկերի,
իբր կցորդ մեծգիտակական կարեաց համայնից՝

Առ բոլոր գումարս բազմահոլով

տիեզերակոյտ քրիստոնէից...

Առ դէմս աղաւթից այսու մատենիւ մատակարարեսցի,

Զեռնարկեալ Հոգւոյդ զաւրութեամբ...

(Ք, Բ)

Կացցէ՛ առաջի քո մշտնջենաւոր

Եւ յիշատակեսցի՛ ի լսելիսդ քո հանապազ,

Բարբառեսցի՛ շրթամբք ընտրելոց քոց

Եւ խաւսեսցի՛ բերանովք հրեշտակաց քոց...

Պատմեսցի՛ ի յականջս ազգաց

Եվ քարոզեսցի՛ ի լուր ժողովրդոց...

(ԶԼ, Բ)

*

Եվ այդ տիեզերական արարողությունը, հոգեշունչ աղոթասացությունը կառավարում է «Ներքին մարդը»: Ներքին մարդն է կառավարում նրա ներանձնական աշխարհը, նրանով է մարդը գոյափորվում և կայանում իբրև Աստծո պատկեր և ստեղծագործելու իր ձիրքով միանում նրան:

Եվ այստեղ է «Մատեանի» հոգեոր կիզակետերից մեկը: Ներքին մարդն, ահա, մտնելով իր ստեղծագործ ծիրի մեջ, թափանցում է կենսագործունեության բազմաշերտ մի ոլորտ՝ ներառելով նաև արտաքին մարդու տիրույթը, հոգեոր խոր ներընկալումներն ու ներապրումները, իբրև հոգեոր կենսոլորտ, արտածելով արտաքին աշխարհ, ուր ներքին մարդու շնորհիվ անձնավորում է ամեն ինչ: Եվ մարդկության բոլոր ներքին ցնցումները, հեղաբեկումները, փլուզումները, աղետալի անցքերը՝ իբրև ողբերգու-

թյուն, անձնական վերապրում, անցնում են ներքին մարդու տիրույթով՝ ապաքինվելով, զտվելով և մաքրագործվելով այնտեղ։ Ներքին մարդն է՝ իբրև տիեզերական փորձանոթ, մաքրագործում համաշխարհը. այս խորին խորհուրդն ու ողբերգական ընկալումն իր ապոթեոզին է հասնում Գրիգոր Նարեկացու «Մատեանում», ուր արտաքին աշխարհն ու ներաշխարհը միանում են տիեզերական համաբնագրում։

*

Ներքին մարդը դառնում է մարդ-ընթացք, շարժում գեպի կատարելատիպը, ինքնակատարելագործման հոգեոր ուղի, որն աղերսվում է՝ իբրև ամբողջություն, իր արտերեւույթի, արտաքին մարդու տիրույթի հետ՝ իբրև վարք ու բարքի ամբողջություն, գործնական փիլիսոփայության արտահայտություն։

Ինչպես էր ներքին մարդը պատկերանում միջնադարյան միստիկին... բնականաբար իբրև հոգեոր կյանքի վերամարմնավորում... բայց նաև ներքին կյանքի ինքնակերպավորումների, խորհրդավոր բանական և հուզական հոսքերի անձնավորումների մի խորհրդավոր աշխարհ, ներանձնության կենդանի զգացողություն։ մարդը կարծես գոյում է զուգահեռ աշխարհներում, որոնք ներդաշնակում են իրար՝ արտաքին մարդուն զուգադրվում է ներքին մարդը, աղոթքին՝ ներքին աղոթքը, մենախոսությանը՝ ներքին մենախոսությունը և անգամ արտասանության բուն արարողությունը վերածվում է ներքին ծեսի՝ աղոթողի արտաքին շարժումներին, դիմախաղերին, հուզական դրսեորում-

Ներքին համապատասխան և համաժամանակ ներազրում և աղոթում է ներքին մարդը:

Ներքին մարդու այդ կենսական զգացողությունը ոչ միայն զորեղ ներշնչանքի աղբյուր և ազդակ էր ստեղծագործողի համար, այլև ճանապարհի ուղենիշ աստվածամերձ ոլորտներում և, ի վերջո, աստվածացման ճանապարհ:

Ավելին, ներքին մարդն էր՝ իբրև միստիկի հոգեոր կերպի անձնավորում ներազրում մարդկային ողջ պատմությունն իբրև ներանձնական խորագույն ողբերգություն, նա համամասնակից էր դառնում այդ պատմությանը՝ այնտեղից քաղելով իր բանաստեղծական խոսքի, իր աղոթքի բանական և հուզական խոռվքները...

Այսպես, ահա, բանաստեղծը բացվում էր այդ հսկա աշխարհի առջև, և հոգեոր ներսուզումների ընթացքում իր մեջ էր ներառում համաշխարհը...

*

Ներքին և արտաքին մարդու փոխառնչությունները, հոգեոր ունակությունների և կարողությունների ներընթաց շարժում էին ենթադրում, որի նպատակը հոգեոր կյանքի, ներաշխարհի ոչ միայն զգացողությունը, ներազրումը, այլև յուրատեսակ վերամարմնավորումը, կերպավորումն էր՝ մի յուրատեսակ փոխներթափանցում, հակադարձ շարժում արտաքին մարդուց դեպի ներքին մարդ և հակառակը, որի արդյունքում մարդու արտաքին կյանքը, վարքն ու բարքը ներառվում էր նրա հոգեոր կերպարի մեջ, այն կառավարում էր «ներքին մարդը», որն «Աստծո պատկերն» էր, և որի երկրային նմանակը արտաքին մարդն էր:

Եվ ստացվում էր այնպես, որ մարդն իր աստվածային էության մասին դատում էր նաև իր «երևելի պատկերով»՝ արտաքին մարդով։

Մարդն, անգամ արտաքին կենցաղավարությամբ, մտնում էր մի սրբազն արարողակարգի մեջ, որի գլխավոր օրենքը համամասնությունն ու ներդաշնությունն էր— ամեն ինչ այդ արարողակարգի մեջ այլ իմաստ էր ստանում, և ծիսականացման կենտրոնում աղոթասացությունն էր, որն ամբողջացնում էր սրբակենցաղ վարքն ու մաքրագործության ընթացքը։

«Ներքին մարդու» հոգեֆիզիկական գգացողության շնորհիվ մարդը նոր, հոգեոր դեմք էր ստանում, և ձգտում էր ներդաշնակել և նույնացնել նրան իր արտաքին կերպը։

Դա զարգացնում էր նրա ինքնակերպավորման ձիրքը, որ բոլորովին նոր ընկալում էր ստեղծաբանության մեջ և զարկ էր տալիս ընդհանրապես նրա կերպավորման արվեստին։

Նա ընության երևույթների, Արարչի և նրա արարածների հետ խոսում էր «բարառնաբար», «դիմառնաբար», այսինքն կերպավորելով և դիմելով նրանց, բայց այս «բարդ ու պարզ» խաղում հաճախ ինքն էր հայտնվում իր դիմաց՝ ներքին մարդն ու արտաքին մարդը երկխոսում էին իրարհետ։ Նման խորհրդավոր տեղիներ կան «Մատեանում»։

*

Աստված ոչ միայն ընկալվում է իբրև «անընդմիջելի մերձաւոր», իբրև ներկայություն մարդկային հոգիներում, այլև այդ ներկայությամբ նույնանում է մարդու էության՝

«ներքին մարդու» հետ, և ստացվում է այնպես, որ զգաց-
մունքային էքստազի խորհրդավոր պահերին բանաստեղծը՝
դիմելով Աստծուն, դիմում է ասես ինքն իրեն, հայտնվում
է իր աստվածային էռթյան՝ «ներքին մարդու» առջե, որը
դեմք ու կերպարանք ունի.

Իսկ եթէ, ամենիցդ Աստուած անքնին,
իմովս վասն իմ առ իմ փրկութիւն, ի դէմս իմ,
իբր թէ ընդ քոյդ էռթեան ես իցեմ
Մարմնով պարունակողիդ կցորդ միացեալ...
Եւ դու, բարերար, յաղագս իմ ի յիմս կերպի...
Որպէս թէ կամաւ ընդ քեզ ես կրիցեմ...
Աստուածապէս նուիրեալ եւ ի մասունս
անհատս բաշխեալ:
(ԾԳ, Գ)

Բանաստեղծը հայում է ինքն իրեն, և հաճախ նրա
փոխարեն ներքին մարդն է բարբառում՝ բարառնաբար դի-
մելով Աստծուն՝ «գերագույն արվեստագետին»: Նա ձեռք
է բերում ներքին տարածք, ներքին շարժում, ներքին դեմք
ու կերպարանք, վերագտնում, վերահայտնաբերում է իր
աստվածային ես-ը, սրբազնագործում է իր ներքին կյանքը
և ստեղծագործության ընթացքը՝ անխզելիորեն կապվելով
և միախառնվելով աստվածային արարչությանը:

Ստեղծագործության և աստվածային ներշնչանքի այս
փոխներթափանցման, միեղենության ընթացքը ներկայաց-
վում է «Մատեանի» բազում տեղիներում.

Եղիցի՝ ողորմութիւն ստեղծողիդ ընդ իս

Եւ շունչ ոգւոյս իմ ընդ քեզ՝
Անբաժանաւրէն կապաւ միացեալ ի մի:

(Ն, Ե)

Ահա այս խորհրդավոր «Հանդիպումից», առեղծվածային «Համընկնումից» հետո լիովին այլ տեսադաշտ, զգայապատկեր, ներքին աղերս ու բովանդակություն են ձեռքբերում Աստծո գերանունությունների շարքերը, որոնք շղթաներ ու սանդղաշարեր են կապում գեպի երկինք վերառաքվող աղոթքներում։ Աստված կրկին դառնում է անհասանելի՝ սակայն «ներքին մարդու» տիրույթում, որը չունի տարածական ու ժամանակային սահմանափակումներ, այլ գոյում է աստվածամերձ ոլորտներում՝ մերձենալով և հպվելով նրան, բայց հաղորդվելով նաև անսահման հեռավորությունից։

Ո՞չ ձեռինդ միայն ձգմամբ հպաւորութեան,
Ո՞վ բարեգութ Աստուած մերձաւոր,
Այլ ի բացեայ գոլով միջոցաւ մեծաւ՝
Ակն ունիմ զաւրել քո բանիդ առ իմ բժշկութիւն...
Այլ ի վերինն երկնի բազմելով՝
Եւ ի ստորինս երկրի բովանդակ,
Առ հրաշիցն սքանչելութիւն՝ ոչ ունիմ հատուցանել։

(ԺԷ, Գ)

Աստվածային խոսքն է բանաստեղծի «բժշկության» աղբյուրը, որին շաղախված է, միախառնված է, «Համահունչ և համաշունչ» է բանաստեղծի խոսքը. խոսքը, բառը, դառնում է աստվածային այդ աստիճանակարգության, Աստծո և մարդու անխղելի կապի խորհրդավոր հանգույցը,

գոյաբանական, աստվածաբանական արժեք լինելուց զատ այն դառնում է կենդանի աստվածագիտացողության, աստվածահաղորդության կենսական բանաձև՝ հանապազ, հարաժամ աղոթասացություն և աստվածաբանություն:

«Անընդմիջելի մերձավորության», «Հպավորության» գաղտնիքը խտանում է բառի մեջ, որը ձեռք է բերում ներքին ձգողականություն, կենդանի, աստվածային իմաստ և կենսական թրթիռ, բանաստեղծությունը դառնում է էաբանություն, գոյութենաբանություն, բանաստեղծն այն ընկալում է իբրև «աստվածային լույս», ամենասփյուռ ճառագայթ», իսկ բանաստեղծը դառնում է աստվածային լույսի բաշխող:

Ա՛յս իղձք խորհրդոց խոստովանեալդ քո տենչանաց,

Ա՛յս նշոյլք լուսոյ ամենասփիւռդ ճառագայթից,

Ա՛յս ախորժութիւն ճաշակաց բարեբանեալդ

քո քաղցրութեան:

(ՀԴ, Բ)

Եւ փոխանակ զի ես ոչ խնդրեցի հետեւել լուսոյդ՝

Դո՛ւ ելցես ինձ յայց, ճառագայթ ծագման

հայրենի կերպիդ:

(ՀԸ, Բ)

Մի՛ խզեր զկապ միութեան ընդ քեզ

սիրոյն պնդութեան,

Մի՛ մերժեսցես զարուեստ զաւրութեանն

լեզուոյս յարմարութեան,

Առ ի լուսոյդ մասունս բաշխեալ:

(ՀԸ, Դ)

Բառերը, բանաստեղծությունը դառնում են այն հարբուխ, համասվյուռ, ճառագայթող աղբյուրը, որոնք ներքին լույս ու տեսողություն են պարզեցում բանաստեղծին, որոնցով նա միանում է ներքին մարդուն և նրա միջոցով՝ Աստծուն:

Բանաստեղծն աստվածային լուսեղ բխումները, ամենասվյուռ լույսը փոխակերպում է բանաստեղծության և կրկին վերառաքում Աստծուն. բանաստեղծությունը դառնում է տիեզերական շրջապտույտ.

Քանզի կրկնեալ զլուսոյդ անսպառ բարիսդ
Որ ի քէն առ իս յամառս թշուառութիւն,
Քոյին աղերսիւ առ քեզ մաղթեցից,
Յարմարեալ դարձեալ ի նիւթս բանից՝
Զտառ ողբերգութեան այսր մատենի
Լցից թախծութեամբք եւ հեծեծանաւք:

(ԾԳ, Բ)

*

Այսպես ներքին մարդու միջոցով բանաստեղծը կապվում է Աստծո և համաշխարհի հետ, կապվում է «հոգեշունչ» բառի, խոսքի միջոցով: Այս գաղափարը գերիշող է նրա «Ճառում»:

«Այլ ի լսելիս եւ ի շրթունս, եւ տեսիլ աչաց, և ի բազուկս բառնալով զգիրս աստուածաշունչս՝ հոգեշունչ լինել յուսացայ…

Յաղագս որոյ ընդ իս առեալ զբոլոր գոյսս ի մասունս բաժանելով եւ ի ստիքս կոտորելով, քան զկիտուածս մանրութեան հատոյ մանանխոյ, տալով բնաւիցն խաւսուն լե-

զուս՝ եւ ամենեքումբք գոհանամք զնմանէ, որ ետ ինձ վայելս զայս ամենայն։ Եւ ի կատարման աստ՝ յոտն կալ պարզեւեաց ինձ առաջի աստուածարկու եւ քրիստոսաժողով հարանց եւ հարազատից եղբարց՝ առնուլ զաղաւթս եւ զաւրհնութիւն աղէկիզեալ սիրալի եւ աստուածատուր խնամոցն»³⁶⁶:

Ահա այսպես ներքին հայեցողությունը նույնանում է աղոթքի և օրհնության հետ՝ իր մեջ ներառելով ողջ տիեզերքը, համաշխարհը, որոնց փոխարեն բարբառում է բանաստեղծը:

Այս հայեցողության և օրհնաբանության ընթացքում մարդու հոգին՝ ներքին մարդը, միանում է Սուրբ Հոգուն, և բացվում է հոգեոր տեսողությունը՝ «աչքերի աչքը»։ Եվ տիեզերական այդ հանդիսարանում բոլոր բանական մարդիկ ասպարեզում են՝ իբրև հանդիսականներ։ Մարդը հայում է իրեն՝ իբրև հայելի՝ միանալով աստվածային արտացոլանքներին և հասնելով «վերնական և իմանալի» իմաստությանը։

«Հոգին Սուրբ բոլորից է ստեղծող և խնամարկու… եւ ընդ ամենեսեան խաւսի, որոց տուեալ է միտս եւ բանականութիւն… զի որքան աստ են՝ յասպարիսի են. եւ ի տեղւոջն հանդիսական…»³⁶⁷:

«Եթէ հայելովն ի մեզ կրկին իմաստք են երեւելի եւ

³⁶⁶ «Ճառ սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ ասացեալ», ՄՀ Ժ, Էջ 1042: Ստիք բառը, ի թիվս այլ իմաստների, բնության տարր և տարերք է նշանակում (տե՛ս Նոր բառդիրք հայկագեան լեզուի, հ. Բ, Էջ 746):

³⁶⁷ «Ճառ սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ ասացեալ», ՄՀ Ժ, Էջ 1042, Էջ 1045:

աներեւոյթ աչաց պարզեւելոց մեզ ի Տեառնէ, ապա քննելի է, թէ որոց աչաց է հրամանս հայել յինքն... յայտ է, թէ մտացն է կարելի այս, որ ակն է հոգւոջն տեսաւղ եւ իմացաւղ, որով գիտէ հոգին մարդոյն իբրեւ զատուածայինսն Հոգին Սուրբ...

Մեք հայեմք ի մեզ յաճախ՝ իբրեւ ի հայելիս, եւ հստակեմք զակն հոգւոյ մերո՝ մաքրելով յախտից... որք առնեն զաշս հոգւոյն շամանդաղ. յայնժամ կարեմք տեսանել զական ականան... թեւաւքն վերացեալ ի ստորոտ երկրէ ի վերնական եւ յիմանալի»³⁶⁸:

Ներքին մարդու այս խորազգացությունը բերում է նոր բացահայտումների, նորովի ինքնահայեցողության և աշխարհնկալման՝ «պայծառացնելով» իր մեջ նրա պատկերը՝ նա կենդանի է պահում իր մեջ «Աստծո ճառագայթը»՝ նմանվելով հոգեոր մարմնի գլուխ Քրիստոսին, սկզբնատիպին:

«Որքան արտաքին մարդս մեր ապականի եւ չարչարի, այնքան ներքինն մեր նորոգի եւ պայծառացեալ գեղեցկանայ» (Հմմտ. Բ. Կորնթ. Դ, 16), քանզի հակառակ են միմեանց. մինն ի վեր ջանայ ելանել առ Աստուած սրբութեամք, եւ միւսն ի վայր բերի ի յախտս եւ յապականութիւնս...

«Հայեա՛ց ի քեզ» (Հմմտ. Բ. Օր. ԺԵ, 9). տե՛ս, թէ առողջ ես եւ անմեղ հոգւոց եւ զպատկերն Աստուծոյ անարատ ունիս՝ երանելի ես եւ ցանկալի Հոգւոյն Սրբոյ... փափաքելի հրեշտակաց, զի ճառագայթ Աստուծոյ փայլատա-

³⁶⁸ Նույն տեղում, էջ 1049-1050:

կէ ի քեզ, եւ գեղեցիկ լինիս տեսանելով, քան զամենայն որդիս մարդկան, նման գլխոյն մերոյ Քրիստոսի եւ սկզբնատպին քրիստոնէից³⁶⁹... Թէ կին մարդ է, թող հայի յինքն, զի եւ նա ներքին մարդովն՝ այսինքն՝ հոգւովն, Առտուծոյ պատկեր է»³⁷⁰:

Ներքին և արտաքին մարդը, սակայն, ամբողջական են՝ նրանով մարդը չի երկատվում, և սրանում է որդեգրության բուն խորհուրդը. նրանց միջոցով իրար են միանում երկրայինը և երկնայինը, մարդու զգալի և իմանալի զորությունները, և երկրայինով է երկնային վերին թագավորության ճշմարտությունը հայտնվում.

«Մի երկաքանչիւրոց գոյութեանց մերոց իրաւամբք կշտամբութիւն, զի մի՛ կիսամասնեայ առ մարդն ներքին եւ առ արտաքին՝ չարի կամ բարւոյ փոխատրութիւնն կարծեսցի՝ յանմահ զաւրութիւն արքայական որդեգրութեանն, զի ընտելութեամբ երկրայնովս առաւելութիւն վերնումն թագաւորութեան յայտնապէս ճշմարտեսցի» (ՀԵ, Է):

Այսպես՝ որպես մեկ հոգեոր մարմին աղոթասացությանն ու հայեցողությանը մասնակցում են ներքին ու արտաքին մարդը³⁷¹:

*

Գրիգոր Նարեկացու գաղտնիքներից մեկը նրա ստեղծագործության հարաշարժությունն ու ժամանակի մեջ վերամարմնավորման, վերաիմաստավորման զորությունն է:

³⁶⁹ Նույն տեղում, էջ 1051-1052:

³⁷⁰ Նույն տեղում, էջ 1055:

³⁷¹ Նույն տեղում, էջ 1084-1085:

Այն դարերի հոլովույթում ձեավորել է հայ մշակույթի, հայ բանաստեղծության ձգողական դաշտը, որն իր տիրույթում է պահում մինչև դրա նորագույն դրսեորումները։ Ավելին, նույն այս ձգողականության տիրույթում է պահում նաև անցյալի գրական ավանդույթը՝ վերահայտնաբերելով և վերաիմաստավորելով այն «ի պատկերի յիւրում»։

Եվ վերամարմնավորման, ներքին շարժման ու հարակայության այդ խոր հղացքը ընկած է նրա ստեղծագործության հիմքում, որ կայանում է ներքին մարդու տիրույթում, «իմանալի» աշխարհում՝ աներբ ու անժամանակ, վերամարմնավորելով ընթերցողների հոգիներում, հարակայելով սերունդների հերթափոխում։ Եվ նրա բառաշխարհը, նրա բառերը, որ հանգույցներ են երկրի ու երկնքի, զգալի և իմանալի աշխարհների միջև, կենդանի են պահում նրա շունչը, պատկերը, նրա հոգու մանվածքը, որն անընդհատ վերահյուսվում է խաղացկուն բառ-զարդանախշերի արտացոլքերի մեջ։ Եվ ստեղծագործության այդ խորապատկերում նրանց հայելում բանաստեղծի կենդանի կերպարն է՝ ներքին մարդը, հավերժական ուղևորը, որը մարդեղանում ու վերամարմնավորվում է ամեն սերնդի հետ։ Վերամարմնավորման ու վերակերպավորման այդ արվեստը, որ իր բանաստեղծությունն է, հոգեստ հեռանկար է բացում նրա համար գալիքում, և սա նրա գլխավոր գաղտնիքներից է, որ նա բացում է իր ընթերցողների առջև։

«Մատեանը» կենդանի բարբառ է, հարակայող խոսք,

նրա ամեն տառը՝ բանաստեղծի մարմնի, իսկ բառը՝ հոգու փոխարեն, թախանձելու են Աստծուն՝ իբրև «մշտնջենավոր ձայնարկու», նրանով բոլոր աղոթողների և ընթերցողների հետ, և նրանց աղերսների հետ հնչելու է իր «անեղծական» ձայնը.

Եւ քանզի անդառնալի ուղւոյն յիշատակ
Աստեացս պարտեաց զայս կտակ թողի՝
որոց ընթեռնուն,

Իմովս բանիւ առ Աստուած կարդալ
Հանապազաւրդութեամբ, —

Այս կացցէս սահման յանձնառական խոստովանութեան
Մշտնջենաւոր ձայնարկու առաջի քո, Ամենակալ,
Զոր գիրդ՝ ընդ մարմնոյս, եւ բանդ՝ ընդ հոգւոյս
Զանսահմանելիս միշտ թախանձեսցէ,
Իբր յանեղծական մաղթողէ ընկալեալ աղերս

ի յիմոյս ձայնէ,
Բարեգութ, մարդասէր, աւրհնեա՛լ յաւիտեանս:
Ամէն:

(ԾԴ, 6)

«Մատեանը» միջնորդ է ոչ միայն Աստծո և մարդկանց, այլև բանաստեղծի և ընթերցողների, բանաստեղծի և սերունդների միջւ։ Ընթերցմանը, աղոթասացությանը տրվում է ծիսական նշանակություն։ Այդ անմիջական, հարակայող կապի, այդ մշտատես հաղորդակցության շնորհիվ բանաստեղծի ձայնը, չունչը վերակենդանանալու է, նա վերամարմնավորվելու, վերապատկերվելու, «վերանկարվե-

լու է վերին, երկնային Մատեանում՝ կրկին միախառն-վելով Աստծո արարչագործ տարերքին («Մատեան», Գ, Գ):

Սա է նրա «Հավերժ վերադարձի», «Հարակայության» գաղտնիքը: Նա բացարձակացնում է նաև ընթերցողի գերը, որը կենդանի կապ է պահպանում բանաստեղծի հետ, վերամարմնավորում, վերակենդանացնում է նրան և աղոթում նրա հետ «Համաշնչապես»՝ մտնելով «մշտնջենական» աղոթի սրբազան ծիսակարգի մեջ: Բանաստեղծն ու ընթերցողը կարծես փոխում են տեղերը, և ընթերցողն է յուրատեսակ միջնորդ դառնում Աստծո և բանաստեղծի միջև: Եվ այս խորհրդավոր եռանկյունին ընկած է նրա հավիտենաբանության հիմքում: Իսկ հիմքերի հիմքում «աստվածաշունչ» խոսքի զորության արվեստն է, որ կենարար է բոլոր ժամանակների, բոլոր ազգերի ու ժողովուրդների, բոլոր ընթերցողների ու «Մատեանով» աղոթողների համար:

Պատմեսցի՛ ի յականջս ազգաց

Եւ քարոզեսցի՛ ի լուր ժողովրդոց,

Նկարեսցի՛ ի դրունս իմաստից

Եւ տպաւորեսցի ի սեամս զգայարանաց,

Իբր կենդանեաւք զիմս պատմեսցէ...

Զի թէպէտ վախճան ընկալայց իբր զմահացու,

Այլ յարակայութեամբ բանի այսր սովերի

Գրեցա՛յց կենդանի:

(ԶԼ, Բ)

*

Այնուամենայնիվ՝ ժամանակակից մարդու համար գաղտնիք է մնում՝ ինչպե՞ս կարող է բանաստեղծը անցյա-

Ար վերակենդանացնել իր ներաշխարհում, տեսողություն
տալ ներքին մարդուն, ներապրել լինելության շղթան, սե-
րունդների փոխկանչը, ոգեկոչել, զգալ գալիքը, ապագա
ընթերցողներին, ներհյուսել նրանց ողբամատյանի զգայա-
ցունց նվագներին և այդ հոգեպարար համանվագը լսելի
դարձնել Աստծուն՝ մարդկային պատմության ցնցումների,
հեղաքեկումների, ալեկոծումների մեջ չխորտակելով հո-
գին, որն իր մեջ է ներառել համայնը, համընդհանուրը, որ
բարբառում է համայն մարդկության, Աստծո բոլոր արա-
րածների և տիեզերքի անունից, վերառաքման պարունակ-
ներում մաքրագործել և պայծառացնել աշխարհն այնպես,
որ շողա նրա վերերկրային իմաստը, աստվածային խորհրդա-
նշանը, զարդանախչը, ինչպե՞ս կարող է «հոգիանալ» և
միախառնվել Սուլրը Հոգու մշտաշարժ, «մշտագյուտ»
արարչագործությանը, որ բանաստեղծն իր ստեղծագործող
«մատների շառավիղով» միանա Արարչի աջին՝ իբրև նրան
«համացեղ» էություն, և, վերջապես, ինչպե՞ս կարող է նա
գոյության ահեղ հանգույցն արձակելուց հետո, այն նորից
հանգուցել գալիքին հղված իր «Ողբամատեանով»՝
պահպանելով ինքնությունը, դեմքը, կերպարը, բարբառը,
շնորհը, հոգեսոր ծիրն այնտեղ, ուր միանում են բոլոր
ծիրելը...

Ընթերցողն անվերապահորեն հավատում և տրվում է
Նարեկացուն: Եվ նրա խորհրդավոր ընթերցման իմաստը
հենց այդ գաղտնիքներին հաղորդվելու մեջ է:

Գրիգոր Նարեկացին իր ահեղ հարցումներով, որոնք ահագնանում են նրա ճյուղավորվող խոսքի ալեբախումների հետ՝ միանում է իր մեծ նախորդներին՝ «մշտնջենավոր ձայնարկուներին»՝ Հոբին, Սողոմոնին, Սաղմոսողին, մարգարեներին, հարասելով նրանց, ուժգնացնելով նրանց խռովքներն ու ահազանգերը:

Եվ, այնուամենայնիվ, ո՞րն է նրա հարակայության գաղտնիքը, որտե՞ղ է ամփոփված՝ աստվածայինի կենդանի զգացողությա՞ն, նեշնչանքի ուժգնությա՞ն, հոգեոր հեռանկարի համապատկերի՞՝, աստվածայինին միախառնված ստեղծաբանությա՞ն, ներքին զողանջների ու արձագանքների մե՞ջ, որ սփոռում են աշխարհի ծագերին նրա ողբերն ու ներբողները, ավետելով «նորասացիկ բանաստեղծութեան» ծնունդը, որի «բազմաստեղնեան դրուագ»-ները ի մի են բերվում նրա անպարագիծ, աստվածային «Մատեանի» մեջ՝ իբրև «հրաշակերտութիւն միագոյ իրի», որի ամեն նվագին Աստծո շունչն է խառնված:

Բոլոր այս հարցումները պատասխան չունեն, քանի որ առնչվում են գոյության առեղծվածներին, որոնք հավերժորեն տանջել են մեծ մտածողներին:

Բայց Նարեկացին ընթերցողին ներշնչում, համակում, հափշտակում, զմայլում է իր «խոսքի զորության արվեստով», որի ակունքը, սկզբնաղբյուրը հոգեկիր բառն է, բառն՝ իբրև հոգեոր մարմին, իբրև աստվածային էություն, վերառաքման շղթայում զնդուն, զողանջող մի օղակ, բառ-հրեշտակ, բառ-աստվածություն: «Ի՞նչ կա ավելի չքնաղ, քան խոսքը», – ասում է բանաստեղծը.

Քանզի զիա՞րդ ոչ արդեւք չքնաղ քան զբան...

Իբր կայծակն լուսոյ՝ պահցեալ ի միտս եւ յոգի,

Որպէս զհուր նշանաւոր եւ զարմանաւոր

թանձրամած...

(ԺԱ, Բ)

Աստված բանաստեղծի համար ամենից առաջ «կենդանի բարբառ» է (ԺԹ, Ա), որ խոսքի շնորհ է տվել իրեն։ Այսպես բանաստեղծությունը դառնում է գերագույն աստվածաբանություն, բանաստեղծը՝ Աստծո պատգամախոս։

Նրա բառաշխարհը բոլորովին նոր է, հանկարծագյուտ են նրա բառերը, որոնք բառ-բանաստեղծության արժեք ունեն։ Նրանց մեջ հոգեսոր հսկա ներուժ է խտացած, որ նրանք արտածում են լուսեղեն բխումներով։ Ահա այդ ճառագայթման, այդ հարաշարժության ու ներթափանցման բացառիկ ուժի մեջ է նաև նրա գաղտնիքը, ահեղ հարցումների պատասխանը, հակառակ գեպքում այն կմնար անթափանց քողածածկույթի տակ, մինչդեռ արտահայտվել է հոգեսոր մաքրամաքուր բխմամբ, պայծառ շիթարձակումով։

Եվ խոսքն այստեղ նոր բառաշխարհի, հազարավոր նորաբանությունների ու նորակազմությունների մասին չէ միայն, այլ հոգեսոր նոր տարածքների, ներտիեզերքի մասին, ուր ոտք է դնում բանական մարդը, և որը նա շնչավորում է աստվածարյալ, կենարար խոսքով։

Բանական լույսի այս պաշտամունքն, ահա, ծնում է նոր խոսք, նոր ներմարդություն՝ իր մեջ առնելով համաշխարհը՝ դառնալով սերունդների հավերժական ուղեկիցը։

Եվ դարձյալ հարկ ենք համարում շեշտել նրա ստեղ-

ծագործության գլխավոր հղացքներից մեկը, որով նա առանձնանում է բոլոր ժամանակների բանաստեղծներից՝ «Երկրային, մարմնավոր» պատկերներով թափանցելով աստվածային նվիրապետության, «Երկնային քահանայապետության» ոլորտները՝ իրար շաղկապելով դրանք և միեղեն դարձնելով այդ լուսավոր բխումները:

Նա իր բառաշխարհը մտցնում է գոյաբանական շրջապտույտի մեջ, միջնաշխարհ ստեղծելով աստվածային ոլորտների և մարդու միջեւ:

Եվ այս տիեզերական շրջապտույտի մեջ նա հատուկ սահմանում է ոչ միայն Բանաստեղծի, ոչ միայն նրա համաքրիստոնեկան, համատիեզերական լսարանի, այլև առանձին վերցրած ամեն ներանձնացյալ աղոթողի, ընթերցողի դերը, որը ժամանակային սահմանափակումներ չի ճանաչում: Ընթերցողը դառնում է նրա ստեղծագործության համամասնակիցը, ոչ միայն «ի խորոց սրտի» վերապրելով այն, ոչ միայն կենսադաշտ ստեղծելով նրա հարակայության համար, այլև կենդանացնելով նրա կերպարը, միախառնվելով նրա արարող շնչին, ինչպես բանաստեղծն էր ստեղծագործում Աստծո հետ «Համաշնչապես»:

Եվ այս եռամիասնությունը, այս հանճարեղ հղացքն է ընկած Գրիգոր Նարեկացու ստեղծագործության, հատկապես նրա «Մատեանի» հիմքում:

Աստծուն և գալիք սերունդներին ուղղված վերժամանակյա նրա խոսքը անմիջական կապի մեջ է յուրաքանչյուր ընթերցողի հետ, ուղղված է հենց նրան, և, թերևս, սա է նրա բանաստեղծության գերագույն գաղտնիքը:

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

- Աբեղյան Մ. – 21, 32, 177, 217
Աբրահամ – 146
Աբուսահլ Համազասպ – 28
Աթենաս – 313
Անանիա Մոկացի – 19, 23-25, 175
Անանիա Նարեկացի – 3, 9, 12, 18, 21-26, 36-46, 48, 55, 56, 77, 80, 92, 97-102, 107, 109, 113, 122, 125, 131, 134-136, 139, 140, 143-145, 147-149, 151, 152, 154, 158, 175, 176, 196, 206-209, 233, 298, 309-314, 327, 365
Անի – 178
Անձևացյաց գավառ – 19, 27
Անձևացյաց թեմ – 19
Աշոտ-Սահակ Արծրունի – 29
Ապարանից Ս. Խաչ – 21, 28, 53, 54, 105, 107, 108
Ապարանք գյուղ – 28
Ս. Աստվածածին Եկեղեցի – 29
Ս. Աստվածածին վանք – 19
Առտեր կղզի – 92
Առքանազ – 193
Ավգուստինուս – 133
Ավետիքյան Գ. 47, 91, 92, 167
Արարատ – 78, 79
Արիստոտել – 205, 206, 296, 297, 324
Արծկե – 44
Արշարունյաց գավառ – 23
Արևշատյան Ս. 141, 205, 297
- Բ**զնունյաց գավառ – 44
Բիբիխին Վ. – 349
- Գ**աղախ (Ներքին Գաղախ, Գաղոխ) գյուղ – 44, 45
Գրիգոր Լուսավորիչ – 133, 192, 193

- Գրիգոր Խլաթեցի** – 24, 32
Գրիգոր Ծերենց – 19, 41
Գրիգոր Նարեկացի – 3, 4, 5, 6, 7, 9-13, 17-44, 46-48, 50-56, 58, 59, 61-66, 68, 69, 72, 75, 76, 79, 82, 85-87, 91, 92, 96, 98, 101-109, 113, 114, 119, 122, 125, 126, 131, 135, 136, 138-140, 143-145, 148, 149, 151, 152, 158, 167, 171, 173, 175-178, 192-200, 209, 210, 214, 215, 217, 218, 226, 227, 229, 233, 238, 239, 240, 242-245, 251, 253, 255, 259, 260, 273, 275, 276, 279, 284, 289, 292, 293, 298-300, 303, 304, 309-312, 314, 315, 321, 323, 328, 330, 331, 333, 334-338, 345, 352, 356, 358, 365-368, 373, 375, 377, 380, 384, 386-389, 398, 402, 411, 415, 416, 418
Գրիգոր Տաթևացի – 178
Գրիգոր Տղա – 178
Գուրգեն-Խաչիկ Արծրունի – 27-29
- Դավիթ Անհաղթ (Դաւիթ Անյաղթ)** – 51, 102, 141-143, 145-149, 178, 185, 205, 206, 297, 311-313, 322, 324
Դավիթ մարդարե (Դաւիթ) – 115, 116, 122, 216, 217, 199, 339, 340
Դիռնիսիոս Արեոպագացի – 4, 6, 7, 12, 18, 51, 103, 138, 141, 144, 167, 171, 174, 175, 176, 178, 179, 180, 181-185, 190, 192, 194, 199, 201, 202, 204, 212-214, 218, 220, 222, 224-231, 233, 234, 236, 237, 239, 241, 242, 244-246, 255, 260-264, 266-270, 273, 276, 293-295, 303, 304, 311, 315, 316, 323, 325, 338, 345, 347, 348, 350, 354, 355-357, 358, 362, 364
Դիռնիսիոս Թրակացի – 45, 103
Դուրյան Ե. – 32
Դերիկյան Վ. – 45
- Եսայի Նշեցի** – 178
Եսայի մարդարե – 239, 275
Երեմիա մարդարե – 113
- Զամինյան Ա.** – 32
ԶարբՀանալյանԳ. – 32

Թամրապյան Հ. – 3, 4, 10, 11, 17, 18, 19, 21, 23, 24, 27, 31, 32, 35, 36, 39, 42, 43, 44, 48, 52, 96, 97, 98, 99, 101, 102, 105, 108, 113, 130, 133, 138, 140, 142, 144, 146, 148, 174, 175, 188, 190, 196, 206, 207, 208, 224, 237, 242, 293 297, 299, 303, 309, 311, 312, 326, 330

Թավմանտ³⁷² – 296

Թեետետոս – 141, 296

Թեոդորոս – 141

Թորգոմ – 191

Ժողովող – 112

Իրիդա³⁷³ – 296

Իսահակ – 145

Իսրայել – 118, 120, 274

Լիբանան – 78, 79

Խաչատրյան Պ. – 17, 19, 21, 22, 24, 31, 32, 44, 47, 82, 92, 166, 167

Խաչիկ Արշարունի, Խաչիկ Ա. Արշարունի կաթողիկոս – 23, 24

Խոսրով Անձեւացի (Խոսրով, Խոսրով Անձեւացի) – 3, 9, 12, 19-22, 24, 25, 27, 28, 36, 41, 114, 122, 123, 134, 140, 158, 159, 175, 189-191, 193, 225, 365

Ս. Կարապետ Եկեղեցի – 28, 29

Կիլիկիա – 178

Կճավա վանք – 36-40

Կոստանդին կայսր – 29

Կոստանդնուպոլիս – 174

Հակոբ Մծբնեցի – 62, 105, 194, 195, 329, 330

Հակոբ Պատկանց – 43

³⁷² Հին Հունական թավմաս աստվածն է:

³⁷³ Հին Հունական իրիս աստվածուհին է:

Հակոբոս Տեառնեղբայր – 227
Համամ Արևելցի – 178
Հայաստան – 23, 35, 193
Հավնունյաց գավառ – 23
Հեղիսս – 314
Հեռոթեռս, Ռեթեռս – 227, 228, 231, 303
Հերմես Եռամեծ – 349
Հոք (Յոք) – 88, 112, 113, 239, 242, 416
Հովհաննես Ավետարանիչ – 275
Հովհաննես Երզնկացի (Պլուզ) – 178
Հովհաննես Իմաստասեր – 178
Հովհաննես Նարեկացի – 21, 23, 25, 41, 46, 47, 48, 55, 56

Ղազարոս – 332, 352, 354,
Ղաղինյան Ա. – 22, 75, 82, 92, 167
Ղանալանյան Ա. – 44, 92

Մայստեր Էքհարտ – 349
Մարիամ Աստվածամայր – 92
Մաքսիմոս Խոստովանող – 228
Մեսրոպ Մաշտոց – 133
Մխիթար Այրիվանեցի – 24
Մկրյան Մ. – 32
Մոկաց գավառ – 19, 28
Մոկաց լեռ – 55
Մովսես Քերթող 103
Մովսես մարգարե – 275
Մուշեղ գիտնական – 37

Յակոբ – 146
Յամբէս – 37
Յանէս – 37
Յորդանիս³⁷⁴ – 314

³⁷⁴ Հորդանան գետն է:

- Նալյան Հ.** – 91
- Նարեկա վանք – 22, 25, 27, 32, 34, 47, 91
- Ներսես Լամբըռնացի – 22, 32, 33, 34, 178
- Ներսես Շնորհալի – 178
- Նիկոլայ Կուզանացի – 348, 349
- Ս. Նշան, Ս. Աստվածածին, Խոսրովային Ս. Նշան – 19
- Պլատոն (Պղատոն)** – 132, 141, 142, 144, 185, 296, 297, 309-311, 327, 342, 343, 348, 364
- Պլոտինոս** – 132, 144, 204, 205, 223, 224, 296-298, 312, 322, 323, 342-345, 350, 351, 364
- Պյութագորաս** – 311, 312, 350, 351
- Պողոս առաքյալ** – 133, 174
- Ռշտունյաց գավառ** – 19, 92
- Սահակ Նարեկացի** – 20, 21, 24, 25
- Ս. Սանդուխտ Եկեղեցի – 32
- Սենեկարիմ-Հովհաննես Արծրունի – 29
- Սիոն – 191, 193, 254, 336
- Սոֆիայի տաճար – 29
- Սողոմոն – 27, 28, 416
- Ստեփանյան Ա. – 132, 144, 298, 351, 364
- Ստեփանոս Մոկաց Եպիսկոպոս – 29, 30, 46, 55, 56
- Ստեփանոս Նախավկայի Եկեղեցի – 29
- Ստեփանոս Սյունեցի – 175, 178
- Վահրամ Բաբունի** – 178
- Վանական Վարդապետ – 78
- Վասիլ կայսր – 29
- Վասպուրական – 19, 22, 28
- Վարդ Սկլերոս – 29
- Վարդ Փոկաս – 29

- Պետրոս առաքյալ** – 227
Պետրոս վարդապետ – 25
- Տաժուրիզինա Զ.** – 349
Տեր-ՄկրտչյանԳ. – 19, 25, 40
Տիմոթեոս – 227, 230, 273
- ՈՒխտանես պատմիչ** – 42, 196
- Փիլոն Ալեքսանդրացի** – 144-146, 205, 309, 311-313, 327
- Քիպարյան Կ.** – 32
- Ֆեդոն** – 142
- Dionysius the Areopagite – 138, 144, 180
- Plato – 133, 144, 296, 343
- Thomson R. – 138, 144, 180
- Августин – 133
- Бычков – 177, 260, 261
- Дионисий Ареопагот – 174, 232
- Каждан А. – 173
- Лосев А. – 177, 310, 365
- Лосский Вл. – 174
- Максим Исповедник – 174, 232
- Минин П. – 173
- Прохоров Г. – 174
- Филон Александрийский – 310

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք	3
Առաջաբան	9
Սուրբ Գրիգոր Նարեկացու կյանքը	15
«Մատեանի» Հղացքը և կառուցվածքային ենթաշերտերը	
«Մատեանի» պատկերային համակարգը, տեսիլքները, բառաստեղծության շերտերը	75
Բանաստեղծական արվեստի տեսությունը. «Ընտրութեան արուեստ» եւ «Դատումն ընտրութեան»	98
Հոգևոր կենցաղավարությունը Նարեկյան դպրոցում և նրա արտացոլումը «Մատեանում»	
Ներքին մարդու փիլիսոփայությունը Գրիգոր Նարեկացու «Մատեանում». Աստվածայման ուղին	131
Աղոթքը՝ որպես Հոգեֆիզիկական միասնական գործողու- թյուն, ներանձնական ծես և բառային տեսիլք	151
Դիոնիսիոս Արեոպագացու էքստատիկ աստվածաբանու- թյունը Գրիգոր Նարեկացու երկերում	
Դիոնիսիոս Արեոպագացուն վերագրվող երկերի ազդե- ցությունը Հայ միջնադարում	171
Աստվածանմանության տեսությունը	179
«Պատկերագրությունն»՝ պատկերի տեսությունն՝ իբրև «նշանական աստվածաբանություն»	201
Աղոթքն՝ իբրև «մերձակա աստվածաբանություն». օրհ- նաբանությունն՝ իբրև Դիոնիսիոսի երկերի խորքային Հղացք	220
Տարփողական աստվածաբանությունը և Գրիգոր Նարե- կացու տաղերը	244
«Խորհրդական» աստվածաբանությունը Գրիգոր Նարեկա- ցու «Մատեանում»	261

Զարմանքի և հիացման հասկացությունները արենպագիտյան էքստատիկ աստվածաբանության և Գրիգոր Նարեկացու ստեղծագործության մեջ 294
Նորազատոնական գոյաբանությունը Գրիգոր Նարեկացու երկերում 309
Նորազատոնական թվի փիլիսոփայությունը և արվեստի գոյաբանական տեսությունը. միակը, գիծը, շրջանը, գունդը՝ իրեւ աշխարհաստեղծման նախաձևեր 338
Նորազատոնական տիեզերագիտությունը Գրիգոր Նարեկացու տաղերում 357
Բանաստեղծությունն՝ իրեւ աստվածային ներշնչանք և խոսքի զորության արվեստ 387
Բանաստեղծության հարակայության խորհուրդը (վերջաբանի փոխարեն) 419

**ՀՐԱԶՑԱ ԹԱՄՐԱԶՑԱՆ
ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻՆ ԵՎ ՆԱՐԵԿՅԱՆ ԴՊՐՈՑԸ
ԳԻՐՔ Գ**

**РАЧЬЯ ТАМРАЗЯН
ГРИГОР НАРЕКАЦИ И НАРЕКСКАЯ ШКОЛА
Книга III**

Եշաղբումը և համակարգչային ձեւավորումը՝ Շողիկ Զաղոյանի

Շապիկի վրա՝ Սուրբն Գրիգոր ճդնաւոր, ՄՄ ձեռ. 1568,
թերթ 120թ: